

28

f-93



12003



Handwritten text on a small, rectangular, yellowish-brown paper fragment, possibly a label or note, attached to the main document. The text is illegible due to the fragment's size and the image's resolution.

2000  
[Stamp]

Upramul p...  
[Illegible]

Monday, 19-12-1973

Drop...  
[Illegible]

23-8-1973

Envelope of Guy

GR

[Signature]

28  
p-93


1624-49 5124

ՔՐԻՍՏՈՆԵԿԱԿԱՆ

# ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՈՐ


ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲԸ  
ՀԱՄԱՌՕՏԱԲԱՐ ԿԸՍՈՐՎԵՑՈՒՆԵ  
ՔՐԻՍՏՈՆԵՅՑ  
ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ :



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԷՆ ՍՐԵՂԻՐՈՒԵԾ  
ԵՒ

ԵՒԵԼԻ ԸՆԴԵՐՉԵԿՈՒԵԾ



Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԵԿԼՄՈՍ ԿՐԻՑԻԹԻ

1846

5124 և. 2

---

Դուն մանկութենէդ սուրբ Վիրքերը գիտես, որոնք կրնան  
խմաստուն ընել քեզ փրկուելու՝ Վրխասոս Յիսուսի վրայ եղած  
հաւատքովը: Ան ամեն գիրքերը Աստուծոյ շունչն են, և շա-  
հաւոր սորվեցունելու համար, յանդիմանելու համար, շտկելու  
համար, ու արդարութեան խրատելու համար. որ Աստուծոյ  
մարդը կատարեալ ըլլայ՝ ամեն բարի գործքերու մէջ հա-  
տաստուած: ք Տիմ. գ. 15—17:

---



522-74



# Յ Ե Ռ Ե Ջ Ե Ի Ե Ե Ո Ւ Թ Ի Ի Ե

## Ե Բ Կ Բ Ո Բ Գ Ի Տ Պ Ա Գ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն ։

Վրիստոնէական ճշմարիտ հաւատոյ մի միայն հաստատ հիմք՝ ու Վրիստոնէի մը լուսաշաւիղ ճամբան առաջնորդողը՝ միայն Սուրբ Վերքը ըլլալը՝ ինչպէս որ ամէն Վրիստոնէայ ազգ կը վկայէ, ասանկ ալ՝ ան անխախտելի հիման վրայ հաստատուած և անոր վկայութեամբը ճոխացած գիրքերը կարող են առաջնորդել միզի դէպի ան ուղիղ ճամբան երթալու, և անոր ընտին ալ հաղորդ ըլլալու։ Աւտի աս գրքիս նպատակն ալ ուրիշ բան չէ՝ բայց միայն ան լուսաշաւիղ ճամբային ուղղել ամենուն գիտաւորութիւնը՝ որ անով լուսաւորին. ու (ինչպէս որ Մոսարեայը կրնէ) թող տան խաւարին գործքերը։ Ես իրաւացի պատճառներէս ստիպուելով՝ և մանաւանդ ամանց Հայազգի ընթերցասիրաց ստեպ ստեպ թախանձանքներէն՝ որոնք առջի տպագրութենէն մեծ օգուտ քաղելով՝ կրփափարին անոնց ամէն մէկերնին աս պիտանի գրքէս ունենալ թէ՛ իրենց և թէ՛ զուկրներնուն լուսաւորութեանը համար, և առջի տպուածներուն թիւը չբաւականանալով յիշեալ ընթերցասիրաց փափաքը լեցունելու՝ ձեռք գարկինք անոր երկրորդ տպագրութեանը, այսուամենայնիւ որչափ որ կարելի էր նէ՛ ջանացինք կատարելագործել զանիկայ, աւելցունելով քանի մը հարկաւոր գլուխներ, և դիւրութեան համար Սուրբ Վրոց վկայութիւններէն ալ մեծ մասը ամբողջ գնելով; աւելորդները վերցունելով, և վերջապէս օգտակար և շահաւէտ և Վրիստոսական անսուտ բերանոյն փրկարար խօսքերովը ճոխացուցինք, որչափ որ գրքիս փորձութիւնը կրտանէր, և առհասարակ ամէն մարդու՝ և մանաւանդ տղայոց ալ դիւրիմաց ըլլալուն համար՝ բոլորովին պարզ ու անզարդ բառեր գործածեցինք, չնայելով բնաւ Հայոց լեզուին ընդարձակ ճոխարանութեանը՝ որով զուցէ ամենահարկաւոր գիտելիքները շատերուն մ'թին պիտի մնային։ Մննուհետև

աշխարհաբառ լեզուով Հին Ատակարաննիս տակաւին 'ի լոյս  
ընծայուած չըլլալով ըստ համարեցինք աւելի Երբայական բը-  
նագրին համեմատ պահել Հին Ատակարանէն առնուած վկայու-  
թիւններուն մեծ մասը , քան թէ եօթանասնից թարգմանու-  
թեանը : Աւստի ստիկայ' թէև փոքրիկ Գիրք մըն է , այսու  
ամենայնիւ մեծ օգուտներ կընայ ընծայել որ և իցէ հասակի  
մարդոց . մանաւանդ որ իր պարզութեամբը՝ ուամիկ մարդիկ և  
դեռահաս տղայքն անգամ՝ ճշմարտութեան սկզբունքները կըր-  
նան համառօտաբար քաղել ասկից , աս պատճառով է որ Գրք-  
քիս սկիզբը դրինք Տերունական Եղօթքը և 'Նիկիական Հան-  
գանակը՝ դրաբառ ու աշխարհաբառ լեզուով , աւելցունելով  
նաև քանի մը համառօտ Երգեր և Հարցմունքներ ալ՝ որոնք  
դիւրին են բերան սորվելու : Իսկ ամէն մէկ յօդուածին սկիզբը  
դրուած գլուխները՝ նոյն յօդուածին իմաստին վերաբերելուն  
համար՝ կարգացողը երբոր անոնց հանդիպի , կընայ բանալ  
Մտտուած առնչք և նոյն գլուխը կարդալ :

Երգ՝ կըլլուսանք որ ողեսէր վարժապետները իրենց ձեռնա-  
սուն աշակերտացր , և բարեպաշտ ծնողք իրենց դեռարողքոջ  
ղակըններուն մտքին մէջ բարեպաշտութեան ոգին մշտարժարծ  
վատելու համար՝ պիտի փափագին կարգացունել անոնց՝ աս  
ՎԲԻՍՏՈՒՆԵԱՍՆԵՐ , և թէ որ կարելի է նէ՝ սերտել տալ .  
որպէս զի անոնք մանկութեան ժամանակէն կրթուելով հոգևոր  
գիտութեան մէջ՝ մեծցած ժամանակին սպցին բարեկարգու-  
թեանը՝ և մանաւանդ քրիստոնէութիւնը օրէ օր աւելի ծաղկե-  
ցունելու հոգ տանին , իրենց քրիստոնէայ անուններուն համեմատ՝  
քրիստոնէավայել վարքով ալ ծաղկելով 'ի փառս Վրիստո-  
սի յուսոյն մերոյ :

# ՀԱՐԿ ԵՒ ՈՐ ՈՒՒ ԿՒՒՐԱԼՈՒՐ

## ԿՒՏԵԼԻՓՆԵՐ



### ԱՂՕԹՔ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ

Կրթութիւն :

Ըշխարհութիւն :

Հայր մեր որ յերկինս՝  
սո՛ւրբ եղիցի անուն քո .  
եկեցէ՛ արքայութիւն  
քո . եղիցին կամք քո որ-  
պէս յերկինս և յերկրի .  
զՏաց մեր հանապազորդ՝  
սո՛ւր մեզ այսօր . և թո՛ղ  
մեզ զպարտիս մեր . որ-  
պէս և մէք թողու՛ք մե-  
րոց պարտապանաց . և  
մի՛ տանիր զմեզ ՚ի փոր-  
ձու թիւն . այլ փրկեա՛  
զմեզ ՚ի չարէն . զի քո  
է արքայութիւն և զօ-  
րութիւն և փառք յա-  
ւիտեանս . ամէն :

Ո՛վ հայր մեր՝ որ եր-  
կինքն ևս , քու անունդ  
սուրբ ըլլայ : Քու թա-  
գաւորութիւնդ գայ ,  
քու կամքդ ըլլայ , ինչ-  
պէս որ երկինքը՝ անանկ  
ալ երկրիս վրայ : Մեր  
ամէն աւուր հացը՝ ասօր  
մեզի տուր : Եւ մեզի  
ներէ՛ մեր պարտքերը  
ինչպէս որ մենք ալ կը  
ներենք մեր պարտա-  
կաններուն : Ու մեզ  
փորձու թեան մի՛ տա-  
նիր . հապա՛ չարէն մեզ  
ազատէ , ինչու որ քուկդ  
է թագաւորութիւնը և  
զօրութիւնը , ու փառ-  
քը յաւիտեանս . ամէն :

Թո՛ղ Հայրն Աստուած և իր Արդին  
Եւ Սուրբ Հոգին երկրպագուին :

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ն Ի Կ Ի Ա Կ Ա Ն

Վարձատու :

Ընդհանրաբար :

Հաւատաւք 'ի մի  
 Լստուած հայրն ամե-  
 նակալ . յարարիչն  
 երկնի և երկրի . երևե-  
 լեաց և աներևութից :  
 Եւ 'ի մի տէր Յիսուս  
 Վրիստոս Արդին Լս-  
 տուծոյ ծնեալն յԼս-  
 տուծոյ հօրէ միածին .  
 այսինքն յէութենէ  
 հօր : Լստուած յԼս-  
 տուծոյ . լոյս 'ի լուսոյ :  
 Լստուած ճշմարիտ  
 յԼստուծոյ ճշմարտէ .  
 Օնունդ և ո՛չ արա-  
 բած : Նոյն ինքն 'ի  
 բնութենէ հօր . որով  
 ամենայն ինչ եղև յեր-  
 կինս և 'ի վերայ երկրի .  
 երևելիք և աներևոյթ :  
 Ար յաղագս մեր մարդ-  
 կան և վասն մերոյ  
 փրկութեան՝ իջեալ 'ի  
 յերկնից , մարմնացաւ ,  
 մարդացաւ , ծնաւ կա-  
 տարեւապէս 'ի Մարի-  
 ամայ սրբոյ կուսէն  
 Հոգւովն Արբով : Արով  
 էառ զմարմին , զհոգի ,  
 և զմտ , և զամենայն որ

կըհաւատանք մի  
 Լստուած ամենակալ  
 Հօրը , երկինքին ու  
 երկրի , երևցածն երուն  
 ու աներևոյթն երուն  
 Ստեղծողին : Եւ մի  
 Տէր Յիսուս Վրիս-  
 տոս Լստուծոյ Արդի-  
 ին . Հօր Լստուծմէ  
 ծնած միածնին . այսին-  
 քն հօրը էութենէն :  
 Լստուծմէ Լստուած .  
 լուսէն լոյս . ճշմարիտ  
 Լստուծմէ՝ ճշմարիտ  
 Լստուած . Օնունդ ու  
 չէ՛ թէ արարած : Ըն  
 ինքը Հօրը բնութենէն  
 է , որ անով եղաւ ամէն  
 բան երկինքին մէջ ու  
 երկրի վրայ , երևցած-  
 ները ու աներևոյթնե-  
 րը : Ար ինքը մեզ մար-  
 դիկներուս համար և  
 մեր փրկութեանը հա-  
 մար՝ Երկինքէն իջեա-  
 լով մարմին առաւ , մարդ  
 եղաւ , սուրբ կոյս Մա-  
 րիամէն Սուրբ Հոգիով  
 կատարեւապէս ծնաւ :  
 Արով առաւ մարմին՝  
 հոգի ու միտք՝ և մար-  
 դու վրայ եղած ան ա-  
 մէն Հանգումաննէրը՝  
 ճշմարտապէս ու չէ՛ թէ



Գ Ո Վ Լ Ե Ի Է Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Է Ո

Ս Ո Ւ Բ Բ Ե Բ Բ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գտփարանեցէ՛ք փառաւորեալը ,  
Ա՛լ զո՛ք ստեղծուածք աս երկրիս մէջը .  
Գտփարանեցէ՛ք և զու՛ք երկնաւորք ,  
Հայրը ու Արդին Ի՛ր Սուրբ Հոգւովը :

Գու՛ք երկնային Տրեշտակնե՛ր  
Եւ զո՛ք երկրի բոլո՛ր սուրբեր ,  
Հօրն ու Արդւոյն և Սուրբ Հոգւոյն  
Ս՛ատուցէ՛ք փստք ու գոհութիւն :

Ե Բ Գ Է Ո Է Ի Օ Տ Ե Է Ն

Է՛ս ատու որ կարթննամ՝ ,  
Գուն էիր Տէր իս պահող .  
Է՛սօր կեանքէս որ ելլամ՝ ,  
Գուն բլլաս իս ընդունող :

Ե Բ Գ Ե Բ Ե Կ Ո Յ Ե Է Ն

Ես որ հիմա կըննջեմ՝ ,  
Լ՛կր Տէր անձիս պահապան .  
Թէ՛քնոյս մէջ մեռանիմ՝ ,  
Ընկա՛լ զիս քոյդ յօթեան :

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Հ Ե Ր Յ Մ ՈՒՆՔՆԵՐ :

Հ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ ԷՐ ՎԵՐԱՅԻՆ ՄԻՐՈՒՄ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ ԷՐ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆ :

Հ . ՈՒՆՔՆԵՐ ԷՐ ՎԵՐԱՅԻՆ ԿԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ :

Հ . ՈՒՆՔՆԵՐ ԷՐ ՎԵՐԱՅԻՆ ՄԻՐՈՒՄ ԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ :

Հ . ՈՒՆՔՆԵՐ ԷՐ ՎԵՐԱՅԻՆ ՄԻՐՈՒՄ ԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ :

Հ . ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ :

Հ . ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ :

---

Հ . ՈՒՆՔՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆ ՄԻՐՈՒՄ ԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Հ . ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ , ՎԵՐԱՅԻՆ , ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Հ . ՈՒՆՔՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆ ՄԻՐՈՒՄ ԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Հ . ՈՒՆՔՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆ ՄԻՐՈՒՄ ԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Պ . Մ . Ր . Յ . ՈՒՆՔՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

Հ . ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ ԵՐ ՎԵՐԱՅԻՆՆԵՐ :

- Պ . Պ ովա՞ ու իր երկու աղ ջիկները :  
 շ . Ո՞վ էր՝ որ արձան աղի դարձաւ :  
 Պ . Պ ովտին կնիկը :  
 շ . Քանի՞ որդի ունէր Յակոբ Նահապետ :  
 Պ . Տասներկու :  
 շ . Ո՞վ ծախու եցաւ իր եղբայրներէն :  
 Պ . Յովսէփ գեղեցիկը :



- շ . Ո՞վ էր ամենահեղ մարդը :  
 Պ . Ս ովսէս մարգարէն :  
 շ . Ո՞վ տարաւ Իսրայէլացւոց որդիքը Եւե-  
 տեաց երկիրը :  
 Պ . Յեսու :  
 շ . Ո՞վ հրամայեց Երեզակին ու Լուսինին  
 որ կայնին :  
 Պ . Յեսու :  
 շ . Ո՞վ էր խիստ ուժեղ մարդը :  
 Պ . Սամիսոն :  
 շ . Ո՞վ Գողիաթը մեռցուց :  
 Պ . Դաւիթ :  
 շ . Ո՞վ էր խիստ իմաստուն մարդը :  
 Պ . Սողոմոն իմաստուն :  
 շ . Ո՞վ վերացաւ Երկինքը հրեղէն կառքով :  
 Պ . Եղիա :  
 շ . Ո՞վ ձգու եցաւ Երիւծներու գուրը :  
 Պ . Գանիէլ մարգարէն :  
 շ . Որո՞նք էին ան իրեք տղաքը՝ որ սաստիկ  
 բարբոքած Հնոցը ձգու եցան :  
 Պ . Սեղրաբ , Սիսաբ , ու Երեզնագով :



Ն . Ո՞վ էր Կէր ձուկին փորը իրեք օր իրեք  
 քիչեր ողջ մնացողը :

Պ . Յովնան մարգարէն :

Ն . Ո՞վ է Վրիստոսի կարապետը (խլաւուզը) :

Պ . Յօհաննէս մկրտիչը :

Ն . Որո՞նք էին չորս Լւետարանիչները :

Պ . Մատթէոս , Մարկոս , Գլուկաս , ու Յօ-  
 չաննէսը :

Ն . Ո՞վ էր Վրիստոսի սիրած աշակերտը :

Պ . Յօհաննէս :

Ն . Ո՞վ էր Յիսուսի մայրը :

Պ . Կոյս Մարիամ :

Ն . Ո՞վ ուզեց մեռցունել Յիսուսը՝ երբոր  
 ինքը պզտիկ տղայ մըն էր :

Պ . Հերովդէս թաղաւորը :

Ն . Ո՞վ էր ան չորս օրուան թաղուածը՝ որ  
 Վրիստոս յարուց :

Պ . Գլաղարոս :

Ն . Ո՞վ մատնեց իր Տէրը :

Պ . Յուդա Իսկարիովտացին :

Ն . Ո՞վ ուրացաւ իր Տէրը :

Պ . Պետրոս :

Ն . Ո՞վ մեր Փրկիչը խաչուելու դատապարտեց :

Պ . Պոնտացի Պիղատոսը :

Հ. Որո՞նք էին սուտ մը զուրցելնուն համար մեանողները :

Պ. Լնանիան ու իր կնիկը Սափիրան :

Հ. Ո՞վ թաղուեցաւ՝ ու իրեք օրէն ետքը նորէն յարութիւն առաւ :

Պ. Յիսուս Վրիստոս :

Հ. Ո՞վ է Յիսուս Վրիստոս :

Պ. Լստուծոյ Որդի, Փրկիչ աշխարհի :

Հ. Ո՞վ էր առաջին Վրիստոնեայ մարտիրոսը :

Պ. Ստեփաննոս :

Հ. Ո՞վ էր Հեթանոսներուն մեծ քարոզիչը :

Պ. Պողոս առաքեալ :

Հ. Ո՞վ գրեց Լստուածաշունչին առաջին գիրքը :

Պ. Սոլսէս մարգարէն :

Հ. Ո՞վ գրեց Լստուածաշունչին վերջին գիրքը :

Պ. Յովհաննէս աստուածաբան աւետարանիչը :



ԲՐԻՍՏՈՆԷԿԵՆ  
ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ . Ա : ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԵՅ

Թ . Երեսնամյ ինչ ըլլալուն , ե Տե՛նք ինչպէ՛ս  
Իրէն Երկրպագող-Լի-ն ընէ-լնուս զԵս :

Ն . Ի՞նչ է Եստուած :

Պ . Եստուած չորդի է :

ԶԵ՛նիկայ մարդիկներէն մէկը տեսնելու կարող չէ :  
Թ . Տ՛ի . Դ . 16 :

Ն . Ս՛ենք ի՞նչպէս Երկրպագութիւն ընել  
լու ենք Եստուծոյ :

Պ . « չորդիով ու ճշմարտութիւնով » : Յօ .  
Դ . 23 , 24 :

Ն . Օրը քանի՞ անգամ Եստուծոյ Երկրը  
պագութիւն ընելու ենք :

Պ . Գոնէ ամէն աւտու ու իրիկուն :

Իրիկուն՝ աւտուանց ու կէս օրուան մէջը գան-  
դատ պիտի ընեմ՝ ու հառաչեմ , և ան պիտի լսէ իմ  
ձայնս : Սուրբ . ԺԵ . 17 :

Հ . Մատուցոյ Հոգի ըլլալուն վրայով ի՞նչ կրսէ Մատուածաշունչը :

Պ . «Մատուած Հոգի է . ու իրեն երկըրպազողներն ալ պէտք է որ Հոգիով և ճըշմարտութեամբ երկըրպազութիւն ընեն» :

Յովն . 7 . 24 :

Հ . Ի՞նչ բանի համար ստեղծուեցանք :

Պ . Տէրոջը երկըրպազութիւն ընելու և իրեն ծառայելու համար :

Ինչու որ ամէն բաները անկէջ՝ ու սեռով , և անոր համար են . իրեն փառք յաւիտեանս ամէն : Հովն . 4 . 36 : Մոր՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ ալ որ ընէք , ամէն բան Մատուցոյ փառքին համար ըրէք : Ի Վրն՝ 7 . 31 :

Ղառք հիմայ գիտէք Մատուցոյ ինչ ըլլալը : Մենք միս ու արուն ունեցող մարմիններ ունինք . բայց Մատուած մեզի պէս չէ . Ինքը Հոգի է . Ինքը ամէն տեղ ներկայ է . բայց մենք չենք կրնար տեսնել զինքը :

Հիմայ գիտէք թէ ինչպէս երկըրպազութիւն ընելու էք Մատուցոյ . «Հոգիով» . այսինքն Հոգիի մը պէս Թ . և ձեր հոգիովը , ձեր սրտովը իրեն ա-

Թ . Ղառն քեզի կուռք չպիտի շինես ո՛չ ալ վերը երկինքին մէջ , կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած Բանէրուն բնաւ մէկ նմանութիւնը . Մենց երկըրպազութիւն չպիտի ընես , ու զանոնք չպիտի պաշտես . ինչու որ ես Տէրը

ղօթելով ու մեղքերնիդ խոստովանելով, զինքը օրհնելով՝ սիրելով՝ և ձեր բոլոր սրտովը իրեն ծառայելով : «Պէտք է երկրպագութիւն ընէք ճշմարտութիւնով ալ՝, յի առանց կեղծաւորութեան, անկեղծ սրտով :

Ը. Ըստուած կըսիրէ ու կըհասնի միայն անոնց՝ որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն կընեն իրեն : ( ) գուշացէք ուրեմն որ Ըստուծոյ երկրպագութիւն ըրած ասաննիդ հոգիով ու ճշմարտութիւնով ընէք :

Ի. Ըմէն մարդիկ՝ ծեր ու պատանի, երկրպագութիւն ընելու են Ըստուծոյ, հրապարակաւ ու առանձին : Հրապարակաւ՝ եկեղեցիին մէջ, և ընտանեաց մէջ. Ըռանձին՝ գոնէ օրը երկու անգամ՝, առտու ու իրիկուն մէկ մասնաւոր տեղ մը՝ ուր որ մէկը չկրնար տեսնել կամ ըսել բայց միայն Ըստուած ւ :

քու Ըստուածդ՝ նախանձոտ Ըստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն մեղքը որդւոցը վրայ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ցեղը՝ որ կատեն զիս. Եւ կողորմիմ անոնց մինչև հաղար ցեղը՝ որ կըսիրեն զիս ու իմ պատուիրանքներս կըպահեն : Երկրորդ Պատմութիւնք. Եւր. Ի. 4—6 : Արովհետև Ըստուծոյ ցեղէն ենք նէ՛ պէտք չէ որ անանկ սեպենք, թէ Ըստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի, որ մարդուս վարպետութիւնովը և նարքովը փորուած շինուած է : Վարձ. Ժէ. 29 : Եւ թէ՛ Արի՞ կընմանցունէք զԸստուած, և ի՞նչ նմանութեան կընմանցունէք զինքը : Եսայ. Ի. 18 :

ւ. Սիրք քու սենեակդ ու գոցէ՛ զըններդ : Պատմ. Գ. 6 :

Ոմանք երկրպագութիւն կրնեն Մատուծոյ՝ օրը իրեք անգամ, առառ, ցորեկը, ու գիշերը:

Գ. Մատուած մեզ իրեն համար ստեղծեց, որ միշտ իրեն երկրպագութիւն ընենք ու իրեն ծառայենք: Ուստի թէ որ կուզէք որ Մատուած սիրէ ձեզ ու ձեզի բարի ընէ, թէ որ կուզէք երջանիկ ըլլալ աս աշխարհիս մէջ ու դալու աշխարհին մէջն ալ, երկրպագութիւն ըրէք Մատուծոյ “Հոգիով ու ճշմարտութիւնով”: ԽՏՏ. Դ. 8, 9: “Մատուծոյ մօտիկցէք ու ինքն ալ ձեզի պիտի մօտենայ”: ԵՍՏ. Դ. 8:



Ը. Մատուծոյ յարմար-լինանէրուն զուայ:

1. Մատուած անմահ է:

Հ. Ո՞վ ստեղծեց ու ո՞վ կրխնամէ ամէն բաները:

Պ. Մատուած: ՄՆԿ. Խ. 1:

Հ. Մատուած ինքը ստեղծուած է:

Պ. Չէ: ԵՍՏ. Խ. 6:

Հ. Հայր ունի՞:

Պ. Չէ. ինքը հայր չունի: ԵՍՏ. Խ. 6:

Հ. Ուրեմն թէ որ Մատուած ստեղծուած է ու հայր ալ չունի, ո՞վ իրեն կեանք կուտայ:

Պ. Մէկը չտար:

Հ. Ուրեմն հայր Մատուած ի՞նչպէս ունի իր կեանքը:

Պ. Հայրը իր անձին մէջը ունի կեանք: ԵՍՏ. Խ. 26:

շ . Ըստուած սկիզբ ունեցա՞ւ :

Պ . Չէ :

շ . Ըստուած փոփոխութիւն կամ վերջ ունի՞ :

Պ . Չէ : Օ՞ննդ . ի՞նչ . 33 : Սող . 7 . 2 :

շ . Մեր ու ամէնուն կեանքը ո՞վ կուտայ :

Պ . Ըստուած . քանզի «Իրմով կապրինք ու կըշարժինք և կանք» : Գործ . ԺԷ . 28 :

շ . Յաւիտեանս յաւիտենից պիտի ապրինք :

Պ . Մեր մարմինները պիտի մեռնին , բայց հոգիներնիս պիտի ապրին :

շ . շապա մեր մարմինները պիտի յարութիւն չառնե՞ն վերջին օրը նորէն ապրելու համար :

Պ . Ը, յի՛ , «Ըրգարներուն և մեղաւորներուն յարութիւն առնել պիտի ըլլայ» : Գործ . ի՞նչ . 15 :

Ըստուած անմահ է . ինքը բնաւ սկիզբ չունեցաւ , բնաւ վերջ ալ պիտի չունենայ : Ինքը շփոփիր . ինքը նոյն է երեկ , այսօր , և յաւիտեան :

Ը . Ինքն է յաւիտենական շայրը , ինքն է կենաց Ըղբիւրը ու ամէն բաներուն մեզի Տուողը : «Իրմով կապրինք ու կըշարժինք , ու կանք» : շայրերնիս և մայրերնիս ու բարեկամներնիս աս աշխարհիս մէջ կըմեռնին , ու մեզ մինակ կըձգեն .

բայց մեր երկնաւոր Հայրը ասոնցմէ աւելի մեծ է, և անմահ: Ինքը անմահ է ու կրնայ հոգ տանիլ մեզի՝ մեր տղայութենէն մինչև գերեզմանը: Սաղմ. ճք. 1—5:

Գ. Եւ քանզի ինքը կենդանի է, մենք ալ կենդանի պիտի ըլլանք: Սենք անմահ ենք, մեր մարմինները կը մեռնին, բայց Աստուած նորէն պիտի յարուցանէ անոնք, մենք հոգիով ու մարմինով պիտի ապրինք յաւիտեան, աս է ճշմարտութիւնը: Ք. Տի. Թ. 9, 10:

Գ. Եւ աս բերկրալի ճշմարտութիւն մըն է մեզի՝ թէ որ մենք արդար ենք: Ի՞նչ որ մենք արդար ենք, Աստուծոյ հետ երկինքին մէջը պիտի ըլլանք յաւիտեան: Բայց ազէտալի ճշմարտութիւն մըն է, թէ որ մենք չար ենք, քանզի սատանաներուն հետ պիտի բնակինք դժոխքին մէջը յաւիտեան: Սաղմ. ին. 46:

Գ. Ինչպէս Տէրն է որ աս ներկայ կեանքերնիս կուտայ մեզի՝ անանկ ալ Տէրն է, որ անիկայ կառնէ մեզմէ: Ուրեմն ջանանք անանկ ապրիլ աս ներկայ կեանքերնուս մէջ, որ երբ Աստուած անիկայ առնելու ըլլայ, մենք կարենանք պատրաստ գրտնուիլ իր դէմը ելլելու, ու իր հետը փառքի մէջ բնակելու՝ դալու կեանքով Թ:

Թ. Գուք ալ պատրաստ եղիք, ինչու որ չկարծած ատեննիդ Որդին մարդոյ կուգայ: Ղ. Թ. Ժ. 40:





Հ. Աստուած ամէն տեղ ներկայ է, ու ամէն բան զիտէ :

Հ. Աստուած ո՛ր է :

Պ. Աստուած ամէն տեղ է :

Սէկը գաղտուկ տեղեր կրնա՞յ պահուիլ՝ որ ես չտեսնեմ, կրսէ Տէրը . երկինք ու երկիրը լեցունողը ես չեմ մի, կրսէ Տէրը : Երբէ՞ . ի՞նչ . 24 :

Հ. Ինքը ի՞նչ կրտեսնայ ու զիտէ :

Պ. Ամէն բաները : Գալթ . ԺԷ . 18 :

Հ. Ի՞նչ կրսէ Սուրբ Գիւրքը «Տէրօջը աչքերուն» վրայով :

Պ. «Տէրօջը աչքերը ամէն տեղ են բարին ու չարը նկատելու համար» : Առաջ . ԺԷ . 3 : Ի՞նչ . ԺԷ . 9 : Երբէ՞ . ԼԻ . 19 :

Հ. Ինչաւ ինքզինքնիս կրնա՞նք Աստուծմէ գաղտուկ տեղմը պահել :

Պ. Չէ . ոչ ցորեկ և ոչ գիշեր : Երբէ՞ . ի՞նչ . 24 : Սուրբ . ՃԼԺ . 10, 12 : Յոբ . ԼԹ . 4 : Եբր . Դ . 13 :

Հ. Ի՞նչ էր ան անունը՝ որն որ Հազար Աստուծոյ տրուաւ :

Պ. «Օհա տեսնող Աստուած» : Նոնի . ԺԷ . 13 : Առաջ . Ե . 21 :

Հ. Թէ որ մեզմէ մէկը իմաստութեան կարօտինէ, որմէ՞ խնդրելու է :

Պ. Աստուծմէ . քանզի բոլոր զիտութեան և բոլոր իմաստութեան Տէրը Աստուած է :

Թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակաս ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամէնուն առատապէս կուտայ՝ ու չնախատեր, և պիտի տրուի իրեն : Սուրբ . ԴԴ . 10 : Սուրբ . ՃԼԺ . 5 : Աստ . Խ . 28 : Յոբ . Կ . 5 :

շ . Ըստուած ի՞նչ տուաւ Սողոմոնին :

Պ . «Եւ Ըստուած տուաւ Սողոմոնին իմաստութիւն և խիստ շատ հանճար» : Դ թագ . Գ . 29 :

շ . Ըմէն մարդու ներսիղին ի՞նչ է ան՝ որն որ Ըստուած միայն կատարելապէս գիտէ :

Պ . Սիրտը :

Քանզի դու՝ միայն դու գիտես ամենայն որդւոց մարդկան սիրտերը : Դ թագ . Ը . 39 : Սողմ . ԽԳ . 21 : շողմ . Խ . 16 : Թ իրն . Գ . 5 :

շ . Ի՞նչ կըսվի սրտին խաբեբայութեանը ու չարութեանը վրայով :

Պ . «Սիրտը ամէն բաներէն աւելի խաբեբայ ու խիստ չար է» : Լքէ . Ժ . 9 : Ննդ . Գ . 5 : Ը . 21 : շողմ . Գ . 10—19 : Լքէ . Բ . 3 : Տե . Գ . 3 :

շ . Ինչո՞ւ համար Ըստուած բոլոր մարդոց սիրտերը կը քննէ :

Պ . Ըմէն մէկուն իր զործքերուն պէս հատուցանելու համար : Թ Սո . ԽԳ . 9 : Սողմ . ԺԹ . 23, 24 : Լքէ . Ժ . 10 : Տե . Բ . 23 :

Տէրը կը ւնայունէ երկինքը ու երկիրը . ինքը ներկայ է ամէն տեղ , և կը տեսնայ ու գիտէ ամէն բաները :

Ը . Ուստի թէ որ պատկինք թէ որ ելլանք , կամ թէ որ դուրս երթանք , և կամ ներս գանք . ուր որ ըլլանք , ինչ որ ընելու ըլլանք , Ըստուած մեր բո-

լորտիքն է : Մենք կրնանք մարդոցմէ պահուիլ , բայց Մատուծմէ բնաւ չենք կրնար : Յորեկը ու գիշերը մէկ է անոր . միշտ յիշենք ան անունը՝ որն որ Հագար Մատուծոյ տըաւ . “Օհ տեսնող Մատուածը” . և վարուինք իբր թէ իր ներկայ ըլլալը զգալով . վախնանք գողնալէն , կամ սուտ խօսելէն , կամ անիծելէն , կամ ո՛ր և իցէ չար բան մը ընելէն . քանզի ամէն բան Մատուած կըտեսնէ ու գիտէ :

Բ. Ինքը նաև կըտեսնէ չէ թէ միայն մեր չար գործքերը , հապա բարի գործքերնիս ալ : Աստի եկէք քաջալերինք բարի ընել . Մատուած կըտեսնէ , և ներկայ է մեզի հետ , ու պիտի օրհնէ մեզ . մենք չպիտի կորսընցունենք մեր վարձքը : Մալ . 7 . 18 :

Գ. Միայն Մատուած գիտէ սիրտը . ինքը չէ թէ միայն մեր գործքերը կըտեսնէ , հապա մեր սիրտերուն պինտ գաղտուկ խորհուրդներն ալ : Ինքը մեզմէ աղէկ գիտէ մեզ . մենք կրնանք մարդ խաբել , բայց Մատուած չենք կրնար խաբել : Ինքը կը գրէ ու պիտի դատէ ամէն սիրտի ամէն գաղտուկ խորհուրդները : Եղաչենք Մատուծոյ Վրիստոսի անունովը որ գայ ու իշխէ մեր սիրտերուն մէջ և փոխէ ու սրբէ զանոնք , և անանկ մեզ երկինքին համար պատրաստ ընէ :

Դ. Բոլոր իմաստութեան Տէրը Մատուած է . և բարի կերպով կընայի ամէն բաները : Մենք փափաքելու ենք որ Մատուած մեզի համար՝ անանկ ընէ , ճիշդ ինչպէս որ իրեն աղէկ կըթուի . և մենք հաճելու ենք ինչ որ ինքը ընէ . և երբոր իմաստ

տուժեան կարօտինք , երբոր ուղենք գիտնալ թէ  
ինչ պարտինք ընել կամ չընել , Աստուծմէ խընդ-  
րելու ենք որ ինքը մեզի սորվեցունէ :



3 . Աստուած ամենակարող է :

շ . Աստուած իր ամենակարող զօրութիւ-  
նը ցուցընելու համար ի՞նչ ըրաւ :

Պ . Աշխարհը՝ արեգակը՝ լուսինը՝ և աստ-  
ղերը ստեղծեց ու կրկառավարէ անոնք :  
Օ՛հնդ . Թ . 1 : Յօ՞ք . ինչ . 7 : Աստուծ . Թ . 26 : Կող .  
Թ . 15 , 16 : Աբր . Թ . 2 , 3 , 10 :

շ . Աստուած ի՞նչպէս ստեղծեց անոնք :

Պ . Իր կարող խօսքովը : Օ՛հնդ . Թ . 3 :  
Սող . Թ . 6—9 : Աբր . Թ . 3 :

շ . Մէկը կրնայ արգիլել զինքը՝ իր ու-  
ղածը ընելէն :

Պ . Չէ : Աստուծ . Թ . 13 : Գառն . Թ . 3 :

շ . Ամենակարող Աստուածը մեր Աստ-  
ուածը ու մեր զրկիչը ունենալնուս համար  
ի՞նչ պիտի ընենք :

Պ . Պարտինք մեծասպէս ուրախանալ :

շ . Կրնանք մեղքի մէջ ամուր պահել  
ինքզինքնիս Ամենակարող Աստուծոյ դէմ ու  
յաջողութիւն ալ գտնալ :

Պ . Չէ :

Ինքը իմաստուն է սրտով , ու կարող զօրութիւ-  
նով . Ո՞վ խտտացաւ անոր դէմ , ու յաջողութիւն  
գտաւ : Յօ՞ք . Թ . 4 : Մեղաւորները դժօխքը պիտի

դառնան և ան ամէն ազգերը որ զՄատուած կըմոռնան : Սող. Թ. 17 : կիլ . 7 :

Ն . Որուն ձեռքը իյնալը սոսկալի բան է :  
Պ . Կենդանի Մատուծոյ ձեռքը :

Մհա՛ իմացէք ասիկայ՝ ո՛վ դուք զՄատուած մոռցողներ , որ չըլլայ թէ ձեզ պատուեմ , ու փրկող մըն ալ չըլլայ : Սող. Ծ . 22 : Դուն ահաւոր ես՝ և ո՛վ կրնայ կայնիլ քու առջևդ՝ բարիութեանդ ատենը : Սող. Տիլ . 7 : Բորբոքած կրակով վրէժ առնելու անսնցմէ՝ որոնք Մատուած չեն ճանչնար , և որ մեր Տէր Յիսուս Վրիստոսի Մետաբանին չեն հնազանդիր . որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն : ք թ. Ե. Թ . 8 , 9 :



Մատուած ամենակարող է . ամէն բաները ինքը ստեղծեց ու ինքը կըպահէ իր կարող խօսքովը : “Ինքը բար , ու եղաւ” . Մատուծոյ առջին դժուարին բան մը չկայ . դուք կրնաք արգիլել մարդը , բայց ո՛չ զՄատուած : Լըլ . 1 ք . 27 :

Մ . Ինքը կարող է փրկելու . ուստի մինակ իր յաւիտենական զօրութեանը ապաւինելու ենք : Ինքը կարող է բոլոր մեզի պէտք եղածը տալու , մեզ ամէն վտանգներէն ազատելու և մեզ ամէն փորձութիւններուն մէջէն ապահով տանելու : ք Լորն . Ժք . 9 : Ո՛չ մարդու՝ ո՛չ ալ Սատանային զօրութիւնը կրնայ մնասել մեզի՝ թէ որ Մատուած մեզի հետ ըլլայ : ք Տիլ . 7 . 17 , 18 : Նոգիին փր-

կութիւնը ապահով է երկրի վրայ . թող ուրախանան իր ժողովուրդները<sup>ա</sup> :

Բ . Ինքը կորսընցունելու ալ կարող է . մէկը չկրնար կայնիլ իր առջևը , ոչ ալ շատ զօրաւոր մեղաւորները : Ինքը կրնայ կտոր կտոր ջարդել անոնք , ու մէկը չկրնար ազատել անոնք : Իր բարկութիւնը ահագին է :

“Սոսկալի բան է Կենդանի Մատուծոյ ձեռքը իյնալը” . Եբր . Ժ . 31 : Մատուծոյ զօրութիւնը չարերուն դէմ կը դառնայ , անոր համար թող չարերը վախնան , և ապաշխարեն ու Յիսուս Քրիստոսի միջնորդութիւնովը Մատուծոյ դառնան :



#### 4 . Մատուած սուրբ է :

Ձ . Երբոր Եսայի մարդարէն Տէրը իր աթուին վրայ նստած՝ ու հրեշտակներուն իրեն երկրպագութիւն ընելը տեսաւ նէ , անոնք ի՞նչ կը կանչէին մէկըմէկու :

Պ . «Սուրբ , սուրբ , սուրբ է Օջորութեանց Տէրը , լեցուն է իր փառքովը բոլոր երկիրը” : Եսայ . Դ . 1—4 : Յայտ . Դ . 8 :

Ձ . Ընիրաւութիւն մը կայ Մատուծոյ քով :

Պ . Չէ . ոչ մեղք , ոչ անօրէնութիւն և

—  
 ա Մատուծոյ զօրութիւնովը պահուած էք հաւատքով ան փրկութեանը համար՝ որ պատրաստուած է ետքի ժամանակները յայտնուելու , որ անով ուրախ պիտի ըլլաք : ա Պէր . ա . 5 :

նչ անիրաւութիւն : Սող. ճժ. 9 : Նսոյ. խ. 15 : Վար. 7. 14 : Յով. 13—17 : Նսոյ. խ. 14 : Թ. 5 :

Ն. Ի՞նչ տեսակ տեղ մըն է երկինքը՝ ուր որ Նստուած կրբնակի :

Պ. Սուրբ տեղ մըն է : Յայ. ին. 10, 27 : խ. 14, 15 :

Նս բարձր ու սուրբ տեղը կրբնակիմ : Նսոյ. ճ. 15 :

Ն. Ի՞նչ կրնէ Նստուած չարերը :

Պ. Կատէ զանոնք : Սող. Ե. 4, 5 : ճ. 5, 7 : Ն. 16 : Յ. 14—16 :

Ն. Ի՞նչ կրնէ Նստուած արդարները :

Պ. Կըսիրէ զանոնք : Սող. ճ. 7 :

Ն. Թէ որ մենք սուրբ չըլլանք, Նստուած մեզ երկինքը պիտի ընդունէ՞ :

Պ. Ըէ :

Նս հոն չմտնար ան ամէնը՝ որ կամքերնին չար է, ու պիղծ ու սուտը ուց են : Յայ. ին. 27 :

Ն. Նստուած մեր սուրբ ըլլալուն վրայով ի՞նչ կըսէ մեզի :

Պ. «Սուրբ եղիք դուք, ինչու որ ես սուրբ եմ» : Թ. 15, 16 : Վար. ճ. 2 : 1

Ն. Ի՞նչ բանի պարտինք հետեւիլ՝ թէ որ Տէրը տեսնել ուզենք :

Պ. «Սրբութեան» :

Իսաղաղութեան ետեւ եղիք ամէնուն հետը՝ և սրբութեան. որ առանց ասոր մէկը չկրնար տեսնել Տէրը : Ն. 14 : Ինչպէս որ ձեր անդամները անօրէնութեան պատրաստեցիք պղծութեան

բեմն հայհոյիչները՝ տակաւին իրենց հայհոյութիւնը չլմնցուցած՝ Մատուած յանկարծ պատժեց զանոնք՝ ու իսկոյն մեռան : Ըն մեծաշուք ու ահագին օրը հասնելու վրայ է , որ մենք հաշիւ պիտի տանք ամէն դատարկ խօսքերնուս համար :

Չորրորդ Պատուիրանքը :

Լսոյ . թը . 13 , 14 :

ձ . Ի՞նչ է Չորրորդ Պատուիրանքը :

Պ . “ Հանգստութեան օրը Ռիպոզ է՛ր անկիայ սուրբ պահելու համար . լէց օր պիտի ալիապիս , սուրբ գործեր ընես , բայց եօթներորդ օրը Տէրուց + սուրբ հանգստութեան օրն է . ան օրը գործ չը շարունակես , ո՛չ դռնն ո՛չ + սուրբերն ո՛չ + սուրբաբանն ուրիշն ուրիշն ո՛չ + սուրբաբանն ո՛չ ալ + սուրբաբանն ինչ եղած օրարարանն . + անդէ Տէրը լէց օրն ինչ ըրան երկնքն ու երկրը և ծովն ու անոնց ինչ բոլոր եղածները , և եօթներորդ օրը հանգստացան : Ընոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը , սուրբեց ան ” :

ձ . Ի՞նչ նշանակել կուզէ Մատուածը



5. Մտուած բարի ու ողորմած է :

Հ . Միայն ո՞վ բարի է :

Պ . Մտուած միայն կատարելապէս բարի է ինքիրմէն , և բարի կընէ մեզի ու ամէն աւրարածներուն : Սաղ . ՃԺԺ . 68 : Սաղ . ԺԺ . 17 : ԹՊՊ . ԺԳ . 34 : Եւր . ԼԳ . 6 :

Հ . Ի՞նչ ինծի Մտուածոյ քեզի ըրած բարիքներուն մէկ քանին :

Պ . Մտուած ինքը կուտայ մեզի հայր ու մայր , ուտելիք ու խմելիք , և հազներու լաթեր , և երբոր մենք հիւանդ ըլլանք՝ ինքը մեզ կառողջացունէ :

Հ . Մտնցմէ ևս մեծազոյն բարութիւններն ալ չընէ՞ր Մտուած :

Պ . Ե՛ր . Մեծաբանը տարածուած երկրի մէջ մեզ կը բնակեցունէ , և մեզի իր սուրբ պատգամը կուտայ :

Հ . Մտուածոյ մեզի ըրած բարերարութիւններուն մենք արժանի ենք մի :

Պ . Ե՛նչ :

Սաղ . ՃԹ . 10—12 : Բայց անոնք որ զինքը ընդունեցին՝ անոնց իշխանութիւն տուաւ Մտուածոյ որդիներ ըլլալու , որոնք որ կը հաւատան իր անունին . որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինին կամքէն՝ ոչ ալ մարդոյ կամքէն , հապա Մտուածմէ ծնած են : Եւր . ԹԳ . 12 , 13 : Իր՝ ուղեւորը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը՝ որ մենք իր ստացուածքներուն առջի պտուղը ըլլանք : Եւր . ԹԳ . 18 :

Հ . Ինչո՞ւ համար :

Պ . Ինչու որ իրեն դէմ մեղանչեցինք :

Հ . Մեզի մեղաւորներու համար Մատուած ի՞նչ ամենամեծ բան ըրաւ՝ որ կրցուցրնէ թէ ինքը ոչ միայն բարի է այլ նաև ողորմած :

Պ . Ինքը իր Արդին մեզի համար մեռնելու խրկեց : ԹՅՕԿ . Դ . 9 , 10 :

Հ . Մատուած՝ որ մեզի հետ բարի ու ողորմած կերպով վարուեցաւ նէ՛ս ի՞նչպէս կը պատուիրէ մեզի իրարու հետ վարուիլ :

Պ . Մենք ալ իրարու հետ բարի ու ողորմած կերպով վարուելու ենք : Մատ. Ե . 44 :

Գթած եղիք, ինչպէս որ ձեր Հայրն ալ գթած է : Գ . Գ . Դ . 36 : Արեմն դուք կատարեալ եղիք՝ ինչպէս որ ձեր Երկնաւոր Հայրն ալ կատարեալ է : Մատ. Ե . 48 :

Հ . Մտուածոյ բարութիւնը ու ողորմութիւնը մեզ ի՞նչ բանի կառաջնորդէ :

Պ . «Վաղաշխարութեան» :

Թէ որ ան անչափ քաղցրութիւնը՝ և ներելը՝ ու համբերութիւնը կանարգես, չե՞ս մի գիտեր՝ որ Մտուածոյ անուշութիւնը քեզ դէպի ապաշխարութիւն կառաջնորդէ : Հատ. Դ . Դ . 4 :

Մտուած բարի է, և բարի կրնէ, երկինքը ու երկիրը լեցուն են իր բարութիւնովը . ամէն կենդանիները կը վայելեն իր բարութիւնը : Թողունները, անասունները, ձուկերը, ճճիները, սողուն-

ները իր առատալից ձեռքովը կրկերակրին : Ինքը  
քաղցր խնամքով Հոգ կրտանի անոնց ամէնուն <sup>մ</sup> :  
Սուրբ. ճի. 19—30 : Հոգ. 1Ը. 41 :

Սենք զՍտուած բարկացուցինք մեր վրայ՝ իրեն  
դէմ մեղք գործելովնիս, անանկ որ արժանի չենք  
իր բարութեանը : Աստի մեզի ըրած բոլոր իր բա-  
րութիւնները ողորմութիւն է, իր ողորմութիւնն է  
որ մենք կապրինք ու կըտեսնենք արեգակին և լու-  
սինին զուարճալի լոյսը, և կըվայելենք գարունը՝  
երբոր ծառերը ու խոտերը կրկանանչին, ամառը՝  
երբոր կուտենք գեղեցիկ պտուղներ, աշունը՝ երբոր  
կըժողունք ցորենը, և ձմեռը՝ երբոր կըտաքնանք  
կրակին ջերմութիւնովը : Իր ողորմութիւնն է որ  
մենք հայր ու մայր ունինք, ուտելիք ու խմելիք,  
մէջը բնակելու համար տուններ՝ և հագնելու լաթեր :

Իր ողորմութիւնն է որ մենք հիւանդ ըլլանք նէ,  
ինքը մեզ կառողջացունէ, և երբոր մենք վնասուե-  
լու կամ սպանուելու վտանգին մէջն ըլլանք, ինքը  
մեզ կազատէ :

Ըմէն բանէն աւելի իր ողորմութիւնն է որ իր  
Որդին մեզի համար մեռնելու խրկեց, և որ մենք կը  
բնակինք անանկ երկրի մը մէջ՝ ուր որ Հիսուս  
Վրիստոսի Ըւետարանը գիտցուած է ու կըքա-  
րողուի, քանզի տակաւին միլիոնաւոր մարդիկ կան  
որ Ըւետարանը չունին և չեն գիտեր : Բայց մենք

<sup>մ</sup> . Ըմէնուն աչքերը քեզի կըսպասեն, ու ժամա-  
նակին անոնց կերակուրք իրենց կուտաս : Վու  
ձեռքդ կըբանաս, ու ամէն կենդանի բարութիւնով  
կըկշտացունես : Սուրբ. ճի. 15, 16 :



ունինք Մատուածաշունչը, եկեղեցիներ, կիրակին, Վրիստոնէական դիքքեր, և բոլոր ան բաները որ հարկաւոր են մեր հոգիներուն փրկութեանը համար:

Լ. Պէտք է մեզի որ զգանք մեր մեղանչականութիւնը ու անարժանութիւնը, և փառաբանենք զՄատուած մեզի ցուցուցած բոլոր իր ողորմութիւններուն համար: (Իւր որ Մատուծոյ ողորմութիւնը չըլլար, չէինք կրնար ապրիլ՝ աշխարհն ալ չէր կենար: Սաղմ. ԺԳ. 4:

Բ. Եւ պէտք է որ իր ողորմութիւնը մեզ ապաշխարութեան առաջնորդէ: Զոսիմ. Թ. 5:

Բայց մենք մեր կենացը մէջ որչափ ատեն Մատուծոյ ողորմութիւնը չարաչար գործածեցինք ու իր Որդին անարգեցինք: Մասնկ կենցաղավարութիւն ունենալէն աւելի ուրիշ ի՞նչ բան կրնայ ցուցընել մեր սիրտերուն խորին չարութիւնը:

Չար կերպով գործածուած ողորմութիւնը աւելի ահարկու բարկութիւն կը բերէ մեր վրայ: Սաղմ. ԺԹ. 21—24: Ուրեմն արագ ապաշխարութիւնով Մատուծոյ հետ հաշտութիւն խնդրելու ենք իր Որդիին միջնորդութիւնովը:

Գ. Մենք պարտինք ողորմած ըլլալ, ինչպէս որ Մատուած ողորմած է իր ամէն արարածներուն:

Մենք պարտինք սնուցանել և հոգ տանիլ մեր բոլորտիքը եղած բոլոր արարածներուն. մեղք է բուն մեր զուարճութեանը համար անոնք մեռցունել, անօթի կամ ցուրտ պահելով սատկեցունել, ծեծել, չարչրկել, չափէն աւելի աշխատցունել,

կամ անոնցմէ մէկը տանջել : Ըստուած ստեղծեց զանոնք, և մեզի պէս անոնք ալ զգացում ունին<sup>2</sup> :

Եւ պարտինք իրարու ողորմած ըլլալ, մեզի դէմ եղած անիրաւութիւնները ներելով, անիծողը օրհնելով, ատելութեան փոխարէն սէր՝ չարին փոխարէն բարի հատուցանելով, ամէնուն բարերար ըլլալով և մանաւանդ խեղճերուն, հիւանդներուն, անօգնականներուն, տառապեալներուն : Ստոր. Ե. 7 : Հռոմ. ԺԶ, 17—21 : Ստոր. Ե. 43—47 : Հայ. Ժ. 13—16 :



6. Ըստուած արդար է :

Օտնոյ. ԺԺ. 1—28 :

Հ. Երբոր արդարները մեռնին նէ <sup>ճ</sup>ը կերթան :

Պ. Երկինքը :

Հ. Իսկ չարերը <sup>ճ</sup>ը կերթան :

Պ. Գժոխքը :

Հ. Ո՞վ կըխրկէ զանոնք հոն :

Պ. Ըստուած :

Հ. Ըստուած ամէնուն Գատաւորն է<sup>3</sup>, և միշտ ինչ որ իրաւ ու արդար է նէ՝ ան պիտի ընէ<sup>3</sup> մի :

Պ. Հրամարես :

Ս. Երդարը իր անասուններուն կենացը հոգ կը տանի, բայց ամբարիշտներուն աղիքը անողորմ է : Ըստ. ԺԶ, 10 :

Վաւ լիցի քեզի ասանկ բան մը ընել , որ արդարը ամբարշտին հետ սպաննես , ու արդարը ամբարշտին պէս ըլլայ . քաւ լիցի քեզ . բոլոր երկրին Վատաւորը արդարութիւն չպիտի ընէ : Սանտ . ժԹ . 25 : Ինչու որ ան կուգայ երկիրը դատելու . աշխարհքը արդարութիւնով , ու ժողովուրդը իր ճշմարտութիւնովը պիտի դատէ : Սող . զի . 13 :

Ն . Բստուծոյ ամէն մարդը վարձատրելուն վրայով ի՞նչպէս կըսէ սուրբ Վերբը :

Պ . « Բ՛նէն մէկուն իր գործքերուն փոխարէն հատուցում պիտի ընէ » : Սող . ժի . 27 : Իսկ . ի . 8 : Իսկ . ժի . 7 :

Ն . Ի՞նչ ըրաւ Բստուած ան հրեշտակներուն՝ որ մեղանչեցին երկիրքին մէջը :

Պ . Վժոխքը ձգեց զանոնք :

Վասն զի թէ որ Բստուած յանցանք գործող հրեշտակներուն չինայեց , հապա խաւար կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահել տուաւ : Իսկ . ի . 4 :

Ն . Ի՞նչ ըրաւ Բստուած հին աշխարհի մեղաւորներուն :

Պ . Տըհեղեղով խղճեց զանոնք : Սանտ . ժի . 5 : Իսկ . ի . 4 :

Ն . Ի՞նչ ըրաւ Սողոմ Վոմոր չար քաղաքները :

Պ . Կրակով ու ծծմբով էրեց զանոնք : Սանտ . ժի :

Ն . Ի՞նչ կըսորվինք աս ամէն բաներէն :

Պ . Բստուած անշուշտ պիտի պատժէ չարերը :

Յեղէ 'ի ցեղ չարը անպատիժ չպիտի մնայ : Լուսմ. Ժմ . 21 :

՝ . Լստուած ո՞ր մարդը փրկեց տապալանով երբոր հին աշխարհը կորսընցուց :

Պ . Լրդար 'Նոյը :

՝ . Լստուած ո՞ր մարդը փրկեց երբոր Սոգոմ ու Գոմոր քաղաքները էրեց :

Պ . Լրդար Գլտը :

՝ . Ի՞նչ կըսորվինք ասկէց :

Պ . Լոկէց կըսորվինք թէ ինքը անշուշտ պիտի փրկէ արդարները :

՝ . Կրնայի՞նք մի զԼստուած սիրել ու իրեն ասլաւինիլ թէ որ ինքը ամէն բան իրաւունքով ու արդարութեամբ չընէր :

Պ . Չէ :

՝ . Թէ որ Լստուած՝ միշտ ինչ որ իրաւ ու արդար է՝ կընէ , մեզմէ ալ ի՞նչ ընել կը պահանջէ :

Պ . Ինչ որ իրաւ՝ ու արդար է :

Եւստի ամէն բան՝ որ կուզէք թէ մարդիկ ձեզի ընեն , դուք ալ անոնց անսանկ ըրէք . ինչու որ՝ աս է օրէնքը ու մարգարէութիւնները : Սոս. Է . 12 :

՝ . Թէ որ մէկը անիրաւութեամբ վարուի մեզի հետ ու զրկանք մը ընէ , որո՞նն նայելու ենք , եւ մեզի օղնելու համար ո՞վ կանչելու ենք :

Պ . Լստուածոյ դիմելու ենք :

Իսցց ինձի ասիկայ ոչինչ բան մըն է , որ ձեզմէ դատուիմ՝ կամ թէ բնաւ մէկ մարդէ մը , մանաւ-

ւանդ որ ես ալ իմ անձս չեմ քններ, (վասն զի ես իմ անձիս մէկ բանը չեմ գիտեր, բայց չէ թէ ասով ես կարդարանամ .) ինչու որ զիս քննողը Տէրն է : Լսանկ է նէ ժամանակէն առաջ դատողութիւն մի՛ ընէք, մինչև որ գայ Տէրը՝ որ խաւարին գաղտուկ բաները կը լուսաւորէ, ու սրտերուն խորհուրդները յայտնի կընէ . և անատենը ամէն գովութիւնը Լստուծմէ պիտի ըլլայ : Թ Կորն. 7. 3—5 : Ար կը բամբասուէր, և փոխարէնը չէր բամբասէր, կը շարձարուէր՝ ու սպառնալիք չէր ընէր . հապա ինչպէս իրաւունք ունեցող Կատաւորին կը յանձնէր : Թ Գլ. 23 : Կէշութեան փոխարէն մէկուն գէշութիւն մի՛ ընէք . ամէն մարդու աղէկ սեպած բաները մտմտացէք : Թէ որ կարելի է նէ ձեզի՛ ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէք : Արեւիք վրէժխնդրութիւն մի՛ ընէք ձեր անձին համար . հապա բարկութեան տեղ տուէք, ինչու որ գրուած է . Արե՛ժխնդրութիւնը իմն է, ու ես պիտի հատուցանեմ՝ կըսէ Տէրը : Հապա թէ որ քութիւնամիդ անօթեցեր է, հայտուր անոր, և թէ որ ծարաւ է՝ ջուր տուր անոր, աս ընելով՝ կրակի կայծերը անոր գլխուն վրայ կը գիզես : Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ չարին : Հ. 17—21 :

Հ . Ի՞նչպէս պէտք է սիրել զԼստուած :

Պ . Ա՛նք պարտինք սիրել զԼստուած մեր բոլոր սրտովը, միտքովը և զօրութիւնովը :

Հ . Ի՞նչպէս պէտք է սիրել մեր ընկերը :

Պ . Պարտինք սիրել մեր ընկերը մեր անձին պէս :



Լստուած արդար է . անկարելի է որ Լստուած անանկ բան մը ըսէ կամ ընէ որ իրաւ ու արդար չըլլայ : Իր արարածները կատարեալ արդարութեամբ կը դատէ : Ինքը մէկ մեղք մը չպիտի ձգէ առանց դատելու . ինքը մէկու մը աշատութիւն չպիտի ընէ . ոչ պղտիկի , ոչ մեծի , ոչ արուի ոչ ալ էգի , ոչ հարուստի ոչ ալ աղքատի , ոչ ծառայի ոչ ալ ազատի , ոչ իմաստունի ոչ ալ յիմարի , ոչ հրեշտակի ոչ ալ մարդու : Ինքը պիտի քննէ և յայտնէ ամէն սրտերուն գաղտնիքները , ու պիտի վարձատրէ ամէն մարդուն իր գործքերուն պէս : Լմէն մարդուն պիտի ըլլայ անաշտ քննութիւն և արդար դատաստան :

Լ. Ռեախացէք Լստուծոյ արդարութեանը համար , քանզի ամէն բան ուղիղ պիտի երթայ վերջը : Լրդարները պիտի վարձատրուին և չարերը պիտի պատժուին : Սող. հի. : Լուս. Ժ. 21 : ք. Պէր. 4—9 : Լու երբ որ խստութեամբ ու անիրաւութեամբ վարուելու ըլլան մեզի հետ , մեր պարտքը Լստուծոյ արդար դատաւորին նայիլն է մեզ պաշտպանելու համար , և ինքը անշուշտ պնդէս պիտի ընէ ւ :

Լ. Սենք պէտք է որ դողանք արդար Լստուծոյ առջևը . մենք ամէնքս մեզաւոր չենք . մեր մեղքերը արդարապէս պատժուելու արժանի չեն . ինչպէս պիտի ազատինք անկէց . միայն Յիսուս

ւ . Լու ան սեղանէն լսեցի՝ որ կըսէր , Լու՞ն՝ Լմե՛նակալ Տէր Լստուած , քու դատաստաններդ արդար ու ճշմարիտ են : Յայր . Ժ. 7 :

Վրիստոսով : Ինքը կը վճարէ Լստուծոյ մեր մեղքերուն համար, ու Լստուած կը ներէ մեզի իրեն համար : Իայց թէ որ մենք չհաւատանք Հիսուսին՝ թէպէտ կարելի է որ անպատիժ մնանք աս աշխարհիս մէջ, բայց անշուշտ պիտի պատժուինք գալու աշխարհին մէջ : Հռոմ. 20—26 : Ին 306 : Ին 9 : Ի Կոր. 3, 4 :

Վ. Ինչպէս որ Լստուած արդար է, մեղմէ ալ անանկ արդար ըլլալ կը պահանջէ : Պէտք է որ արդար ըլլանք առ Լստուած, իր սուրբ անունին արժան եղած փառքը տալով, սիրելով ու պաշտելով զինքը բոլոր սրտով, միտքով ու զօրութիւնով : Պէտք է որ արդար ըլլանք առ մարդիկ ամէնուն մեր պարտաւորութիւնը կատարելով : Սիրէք առ ընկերդ քու անձիդ պէս : Ի Կոր. 12 : Հռոմ. 8—10 : Ի Կոր. 8—10 : Եւ պէտք է որ արդար ըլլանք զէպի մեր անձին : Լուաջ մեր խիստ լաւ օգուտը խնդրելով այսինքն մեր անմահ հոգիներուն փրկութիւնը Ի :



Ի. Պինտ առաջ Լստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք և ա՛նոր արդարութիւնը, ու ամէն աս բաները ձեզի կեւելնայ : Ի Կոր. 33 : Ինչու որ մարմինին վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց աստուածապաշտութիւնը ամէն բանի օգտակար է, և կենաց խոստմունքը ունի՝ հիմակուանին ու գալիքին : Ի Տիմ. 8 :

7. Բատուած ճշմարտութեան Բատուած է :

Պարթ. Է. 1—10 :

Հ. Բատուած ճշմարտութեան Բատուած է ու միշտ ճշմարտութիւնը կը խօսի :

Պ. Հրամարեա : Ի ( ) Են . ԼԻ . 4 : Սուր . ձի . 15 :

Հ. Ի՞նչ կը սուր Բատուածոյ անսուտ ըլլալուն վրայով :

Պ. « Ինկարելի է Բատուածոյ սուտ զրուցել » :

Որ ան երկու անփոփոխելի բաներով՝ որոնցմով անկարելի է Բատուածոյ սուտ զրուցել, մենք որ ապաւինեցանք, հաստատուն մտիթարութիւն ունենանք ան հանդերձեալ յոյսը ամուր բռնելու : ԵԷԲ . ի . 18 : Յաւատենական կենաց յուսովը, որ ինքը անսուտ Բատուածը խօսք տուաւ յաւատենական դարերէն առաջ : ՏԷԲ . ան . 2 : Սակայն Բատուած ճշմարտութող ըլլայ, և բոլոր մարդիկ սուտ . ինչպէս որ գրուած է, Որ քու խօսքերուդ մէջ արդար ըլլաս, և դատաստան ընելու առենդ դուն յալթես : ԵԷԷ . ի . 4 :

Հ. Ի՞նչ է ան սլատուիրանքը որ մեզի կը սէ, « Սէկ զի ձգեցէք ստութիւնը » :

Պ. « Սլատի ստութիւնը մէկ զի ձգեցէք ճշմարտութիւնը խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ » : ԵԷԷ . ի . 25 : ի . 14 : ԵԷԷ . ի . 9 :

Հ. Ի՞նչ կը սուր սուտ խօսող շրթունքներուն վրայով :

Պ. « Սուտ խօսող շրթունքները սիւղծ են Տէրջը առջևը » : ԵԷԷ . ի . 22 :

Հ. Եւ ի՞նչ կըսուի սուտ խօսող լեզուին վրայով :

Պ. «Տէրը կատէ սուտ խօսող լեզուն» :  
Բար. 16, 17 : Ժբ. 22 :

Հ. Որո՞նք էին մահով պատժուողները սուտ մը զուրյե ընուն համար :

Պ. Ենանիան ու իր կնիկը Սափիրան :  
Գործ. 5. 1—10 :

Հ. Կրնա՞նք սուտ մը զուրյեւ ու Եստուած չգիտնայ զանիկայ :

Պ. Չէ :

Հ. Ի՞նչ սուտ խօսողները , իրենց բաժի-  
նը ո՞ւր պիտի ունենան :

Պ. «Կրակով ու ծծումբով վառած լճին մէջը» : Հայտ. իս. 8—27 : Իբ. 15 :

Եստուած ճշմարտութեան Եստուած է . անկարելի է իրեն որ սուտ խօսի . հիմա ինքը չխօսիր մեզի երկինքէն : Եւ աջուց կըխօսէր , և իր մեզի ըսելու ամէն բաները . այսինքն իր պատգամները , պատուիրանքները , խոստմունքները , սպաննալիքները Եստուածաշունչին մէջը կըգանենք , այսինքն՝ Եստուծոյ Գիրքին մէջ , որն որ բոլոր ուրիշ գրքերէն գերի վերոյ է , և է Գիրք Ճշմարտութեան :

Եւ Մենք բնականաբար հակամիտեալ ենք Եստուծոյ չհաւատալու , և թէպէտ կըսենք որ կըհաւատանք իրեն , բայց անանկ կըշարժինք՝ որպէս թէ իր ըսածը սուտ էր . աս է զԵստուած սուտ զրուց ընելը և իր բարկութիւնը մեր վրայ բերելը :

Բ. Մենք սգալու ենք մեր թերահաւատութեանը վրայ, և աղաչելու ենք Մտուծոյ որ տայ մեզի հաւատացող սիրտ մը, որ լսենք ու Հնազանդինք իր ձայնին: Իր խօսքերուն ապաւինելու ենք. եթէ ինքքը ըսէ որ երկինք ու դժոխք կան, կան ուրեմն երկինք ու դժոխք. եթէ ինքքը ըսէ մեզի, թէ՛ անոնք որ կապաշխարեն ու կը հաւատան՝ պիտի փրկուին, և անոնք որ չեն ապաշխարեր ու չեն հաւատար՝ պիտի կորսուին, անանկ պիտի ըլլայ. վերջապէս ինչ որ ըսէ ինքքը՝ ճշմարիտ է. ուրեմն մեր պարտքը ու մեր օգուտն է մտիկ ընել ու Հնազանդիլ իր խօսքին:

Գ. Մտուած կը պահանջէ մեզմէ ճշմարիտ ըլլալ խօսքի ու գործքի մէջ՝ ինչպէս որ ինքքը անանկ է:

Վ. Ի՞նչ ճշմարիտ ըլլալ մեր երկրպագութեանը և Մտուծոյ պաշտօնին մէջ: Արբոր մենք իր պաշտօնին մէջ ճշմարիտ ըլլանք, ինքքը կուրախանայ մեր վրայ, և մենք կրնանք ինքզինքնիս իր հաւատարիմ՝ պահպանութեանը յանձնել<sup>iii</sup>:

Արբոր ճշմարիտ չըլլանք, ինքքը մեզի ստախօսներու և կեղծաւորներու ու անհաւատներու պէս կընայի՝ որ լիճին մէջը պատժուելու համար պատրաստուած են ք:

<sup>iii</sup>. Տէրը բոլոր զինքը կանչողներուն՝ բոլոր զինքը ճշմարտութիւնով կանչողներուն մօտ է: Սաղ. Ժ/Ե. 18: Ստի անոնք՝ որ Մտուծոյ կամքին պէս կը շարձարուին, իրենց հոգիները հաւատարիմ Ստեղծողին թող յանձնեն բարիք գործելով: ԹՊԿ. 77. 19:

ք. Միշտ դուն ճշմարտութիւն կուզես երկա-

Երկրորդ՝ մեր բոլորտիքը եղած ամենուն հետ ճշմարիտ ըլլալու ենք . ստախօսք գէշ անձ է՝ որ անիկայ Աստուած ալ կատէ , մարգն ալ : Սուտղութուցին վերջը միշտ գէշ է : Սատանան է սուտը և ստութեան հայրը ք : Ետ ապահով ու լաւ է ձեզի որ միշտ ճշմարիտ խօսիք ամէն բանի մէջ ք : Թէ որ յանցանք մը ընես կամ ուրիշներուն յանցանք ընելը տեսնաս , անոր վրայով շիտակը ըսէ : Թէ որ բան մը խոստանաս , կատարէ անիկայ . Թէ որ բան մը պարտք ունիս , վճարէ անիկայ . Թէ որ մէկէն բան մը կուզես , խնդրէ անկէց . ուղիղ լեզուի պէս ուղիղ ձեռք ունեցիր . Սուտ զրուցները Աստուծոյ

մունքին մէջը , ու ծածուկ րեղը իմաստութիւն պիտի գիտցունես ինծի : Սող. ծմ . 6 : Թէ որ ըսենք որ՝ Անոր հետը հաղորդութիւն ունինք , ու խաւարի մէջ պտրտինք , սուտ կըզուրցենք՝ և ճշմարտութիւն չենք ընել : Ի՞նչ . Ինչ . 6 : Ան որ կըսէ Թէ Աստուծոյ անիկայ ճանչցայ , ու անոր պատուիրանքները չպահէ նէ՝ սուտ է , և անոր մէջը ճշմարտութիւն չկայ : Ի՞նչ . ք . 4 :

4. Գուք ձեր հօրմէն Սատանայէն էք , ու ձեր հօրը բաղձանքը կուղէք ընել . որ ինքը սկիզբէն հետէ մարդասպան էր , և ճշմարտութեան մէջ չկեցաւ , ինչու որ՝ անոր ներսիդին ճշմարտութիւն չկայ . երբոր անիկայ սուտ մը կըխօսի , բուն իրենններէն կըխօսի . պատճառն որ ինքը սուտ է՝ և անոր հայրը : Ի՞նչ . ք . 44 :

4. Իբաւ չթուծելու հաստատ կըմնայ միշտ . բայց սուտ խօսող լեզուն աչք գոցել բանալու չափ : Սող . Ժք . 19 :

արքայութիւնը չեն կրնար մանեւ . անոնք թշուառաբար պիտի կորսուին :



7. Սուրբ Երրորդական շաբաթ :

Սուրբ . իր . 1—20 :

Ն . Վանի՞ն՝ Մատուած կայ :

Պ . Կայ միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Մատուած մը : ի՞նչ . 4 : Եւայ . ինչ . 6 , 8 :  
 Ի՞նչ . իր . 4 :

Ն . Վանի՞ն՝ անձինք կան Մատուածութեան մէջ :

Պ . Իրեք :

Ն . Ի՞նչ են անոնց անունները :

Պ . Նայր Որդի և Սուրբ Նոզի : Սուրբ . իր . 19 : ի՞նչ . իր . 13 :

Ն . Եւ իրեք անձինքը միայն մէկ Մատուած են :

Պ . Նրամերես . միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Մատուած են :

Ն . Ի՞նչպէս ստուգիւ զիտենք ասիկայ :

Պ . Մատուածաշունչը ասանկ կըսէ մեզի :

Ն . Մեր փրկիչը ի՞նչպէս մկրտել պատուիրեց Մաքեալներուն , և անոնցմէ ետքը եղած բոլոր պաշտօնեաներուն :

Պ . «Յանուն Նօր , և Որդւոյ , և Նոզւոյն Սրբոյ» :

Հ . Ինչո՞ւ աս անուններով մկրտուելու ենք ,  
ու անոնց երկրպագութիւն և սրաշուն մատու-  
ցանելու ենք :

Պ . Քանզի ան իրեք անձինքը միայն մէկ  
կենդանի ու ճշմարիտ Աստուած են : ԹՅՈՒՆ .  
Ե . 7 :

Հ . Մեր Երկնաւոր Հայրը ի՞նչ բրաւ մե-  
զի համար :

Պ . Իր Որդին մեզի համար մեռնելու խըր-  
կեց :

Հ . Որդին ի՞նչ բրաւ :

Պ . Որդին՝ մեռնելով խաչին վրայ մեր  
մեղքերուն հատուցումը բրաւ , և հիմա իր  
Հօրը աջ կողմը նստած անդադար բարեխօ-  
սութիւն կրնէ մեզի համար :

Հ . Սուրբ Հոգին մեզի համար ի՞նչ կրնէ :

Պ . Մեր սիրտերը կրփօխէ , և մեզ եր-  
կինքին համար կրպատրաստէ :

---

Այս միայն մէկ Աստուած Ստեղծիչ երկնի և  
երկրի . և Աստուածութեան մէջ իրեք անձինք կան  
Հայրը , Որդին և Սուրբ Հոգին . աս իրեքը մէկ  
Աստուած են . “նոյն են էութեամբ , հաւասար են  
զօրութեամբ և փառօք” : Ասկէց զատ ուրիշ Աս-  
տուած մը՝ չկայ : Ասիկայ գիտենք , ինչու որ բուն  
Աստուծոյ խօսքէն ասանկ կըսորվինք :

Ա . Անոնք որ Աստուծոյ Ռանը չունին՝ իրենց



տգիտութեամբը և չարութեամբը կրկարծեն որ շատ աստուածներ կան , և իրենք կուռքեր կը շինեն ու անոնց երկրպագութիւն կընեն : Ընդ-  
 թեմք Մատուծոյ որ խրկէ անոնց Մատուածաշունչը ,  
 որ մէկ դի ձգեն իրենց սուտ աստուածները , և սի-  
 րեն ու պաշտեն ճշմարիտ Մատուածը :

Բ . Կան ոմանք ալ որ Մատուծոյ Խօսքերը ու-  
 նին , բայց շիտակ չեն հասկընար և չեն ուղեր շի-  
 տակ հասկընալ . անոնք կըսեն թէ Մատուածու-  
 թեան մէջ իրեք անձինք չկան : Ընդք կործանեալ  
 սխալի մէջ են , և մենք աղօթելու ենք Մատուծոյ որ իր  
 Բանը լսելու լաւագոյն իմացողութիւն տայ անոնց :

Գ . Որովհետեւ միայն մէկ Մատուած կայ , պար-  
 տինք երկրպագութիւն չընել և չծառայել ուրիշ  
 մէկու մը Մատուծոյ պէս . և Մատուծոյ անզը՝ հրեշ-  
 տակի մը՝ կամ մարդու մը՝ և կամ ուրիշ ստեղծ-  
 ուածի մը երկրպագութիւն ընելը , կամ աղօթելը ,  
 կամ նազանդիլը , դատապարտելի մեղք մըն է :

Դ . Մենք պարտինք երկրպագութիւն ընել և  
 պատուել Հայրը և Որդին և Սուրբ Հոգին իբրև  
 Մատուած , որ արժանի են հաւասար սիրոյ և օրհնու-  
 թեան և փառաց : Ըսկէց զատ ուրիշ կերպով չենք  
 կրնար հաճոյական երկրպագութիւն մատուցանել  
 Մատուծոյ . բաց 'ի ասկէց բոլոր ուրիշ երկրպա-  
 գութիւնները և բոլոր կրօնքները սուտ և դատարկ  
 են :

Ե . Մատուածաշունչը կըսորվեցունէ մեզի՝ թէ  
 միայն մէկ Մատուած մը կայ , և թէ՛ Մատուածութե  
 մէջ իրեք անձինք կան : Մենք բաւական չենք գի-  
 տեր աս ինչպէս ըլլալը իմանալու կամ զրուցելու .

մենք տկար ու տգէտ արարածներս որ ինքզինքնիս անգամ չենք գիտեր, այսինքն մեր հոգիներուն և մեր մարմիններուն ինչպէս մէկ տեղ միաւորած ըլլալը, արգեօք կրնանք խմանալ Մատուածոյ էութիւնը կատարելապէս: «Մհա Մտուած մեծ է և մենք զինքը չենք գիտեր»: ( )րնեալ ըլլայ իր սուրբ անունը, որ իր բնութեամբը և փառքովը բարձրացեալ է բոլոր իր արարածներուն գիտութենէն զեր 'ի վերոյ, և ինքը անոնց Մտուածը ըլլալուն համար պէտք է որ ասանկ ըլլայ:

Օ, Արքոր մենք կըզգանք մեր տգէտ՝ մեղաւոր ու կորսուած արարածներ ըլլալը, որ կըբնակինք փորձութեան՝ ձախորդութեան՝ չարչարանաց ու մահուան աշխարհին մէջը, ան ատենը կիմանանք թէ մեր Մտուածը ճիշդ անանկ Մտուած մըն է որուն որ մենք կըկարօտինք:

Մենք Արկինքը Հայր մը ունինք որ հոգ կըտանի, և գութ ունի մեր վրայ՝ մեր ողորմելի վիճակին մէջը: Մենք Մենակարող Փրկիչ մը ունինք որ հաճեցաւ չարչարուելու ու մեռնելու, Արդարը անարգարներուն համար: Այլ մենք Արեշնորհ Սուրբ Հոգի մը ունինք որ անոր գործը մեզ մեղքէն մաքրել է, մեզ կեանքի մէջ քաջալերել ու մխիթարել է, և մեզ մահուան՝ գատաստանին՝ և երկինքին համար պատրաստել է: Այլ ինչ բանի կը կարօտինք: Ինքն է հոգին հատուցանող բաժինը:

Մյապէս մենք Սուրբ Վիրքերէն կըսորվինք որ Մտուած Հոգի է, անմահ, ամէն տեղ ներկայ և ամէն բաները գիտցող, ամենակարող զօրութիւն ունի, մէկը չկրնար արգիլել զինքը իր կամքին բո-

ըր ուզածները ընելէն . որ ինքը բարի ու ողորմած  
 Մատուած է , արդար ու ճշմարիտ բոլոր իր խօսքե-  
 րուն ու գործքերուն և ճամբաներուն մէջը՝ և որ  
 Տէրը մէկ Մատուած մըն է , բայց իրեք անձինք ըլ-  
 լալով Հայր , Արդի , և Սուրբ Հօգի , նոյն են էու-  
 թեամբ , հաւասար զօրութեամբ և փառքով . և  
 աս իրեքը մէկ Մատուած են :



Ի ՄԵՍՆ՝ Բ : ՀՐԵՇՆՍԵՎՆԵՐՈՒՆ ՎՐԵՅ

ի . Բարի հրեշտակներն շոյ :

Ղ աւ . ԺԵ . 1—10 :

Հ . Ի՞նչ են բարի հրեշտակները :

Պ . Փառաւորեալ ու սուրբ էակներ :

Հ . Ո՞վ ստեղծեց զանոնք :

Պ . Մատուած ստեղծեց : Վաղ . Ի . 15 , 16 :

Հ . Ո՞րչափ բարի հրեշտակներ կան :

Պ . Ինթիւ բաղմուտիւն են : Ղ աւ . Ժ . 9 ,

10 : Գ թ . Ի . 19 : Սաղ . ԿԸ . 17 : Հայր . Ե . 11 :

Եր . ԺԸ . 22 : Սաղ . ԻԿ . 53 : Ղ աւ . Ժ . 13 :

Հ . Ո՞ւր տեղ է անոնց բնակարանը :

Պ . Երկինքը : Սաղ . ԻԹ . 30 : Սաղ . ԺԸ . 25 : Գ թ . Ի . 7 :

Հ . Ի՞նչ կրնեն Երկինքին մէջը :

Պ . Ղ Մատուած կրփառաբանեն և իր կամ-  
 քը կրկատարեն : Սաղ . ԺԶ . 20 , 21 : Սաղ . ԿԸ . 10 : Ղ աւ . Ժ . 13 , 14 : Հայր . Ե . 11—13 :

շ . Լստուած երբեմն անոնք աս երկիրը կը խրկէ :

Պ . շրամերես , մանաւանդ հին ատենները շատ անգամ անոնց ձեռօքը կը խրկէր իր պատգամները հին ատենի սուրբ մարդոցը :

շ . Ի՞նչ դիտաւորութեան համար :

Պ . Բարի ընել անոնց որ զԼստուած կը սիրեն : Եբր . ան . 1 : Ապ . զան . 11 , 12 : Ապ . ժր . 10 :

շ . Ի՞նչ էր ան հրեշտակին անունը՝ որն որ Լստուած կոչս Արիամին խրկեց Յիսուսի ծննդեան աւետիսը տալու անոր :

Պ . Գաբրիէլ : Գ . ան . ան . 11—38 :

շ . Լստուած ուրիշ ի՞նչ բանի համար երբեմն բարի հրեշտակները աշխարհ խրկեց :

Պ . Չար մարդիկները պատժելու ու կորսնցունելու համար : Ան . ժր . 1 : Գ . ժր . 35 :

շ . Ի՞նչ է ան չար թագաւորին անունը՝ որն որ Տէրօջը հրեշտակը զարկաւ , անանկ որ որդնալից եղաւ ու մեռաւ :

Պ . շերովդէս : Գ . ժր . 21—23 :

շ . Բարի հրեշտակները մեր փրկութեանը հոգ տանելուն համար ի՞նչ կըսէ Սուրբ Գիւրքը :

Պ . «Լստուծոյ հրեշտակներուն առջևը ուրախութիւն կը լայ մէկ մեղաւորի մը վրայ , որ կապաշխարէ» : Գ . ժր . 10 : ան . ան . 10—12 : Եբր . ան . 10 :

շ . Երբոր բարի մարդ մը մեռնի , ո՞վ անոր հոգին երկինքը կը տանի :

Պ . Բարի հրեշտակները :

շ . « Ե՛ն աղքատին անունը ի՞նչ էր որ մեռաւ ու հրեշտակներուն ձեռքովը Լքրահամին գիրկը տարուեցաւ » :

Պ . Գ աղարոս : Գ Գ . 1 . Ժ 22 :

շ . Պէ՞տք է մի հրեշտակներուն աղօթել ու անոնց երկրպագութիւն ընել ինչ և իցէ կերպով :

Պ . Չէ՛ . քանզի մեծ մեղք է :

Եւ ես Յօհաննէս լսեցի՝ և աս ամէնը տեսայ . և երբ լսեցի ու տեսայ՝ ինկայ ու երկրպագութիւն ըրի ան հրեշտակին՝ որ աս ամէնը ինծի կըցուցընէր : Եւ ըսաւ ինծի , Իմ առջև մի՛ իյնար ու երկրպագութիւն ըներ . ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ ու քու եղբայրներուդ , որ աս քրքին մարգարէութեան խօսքը կը պահեն : Յայր . իբ . 8 , 9 : Եւ ալ անոր ոտքին առջևը ինկայ . երկրպագութիւն ըրի անոր , ու ըսաւ ինծի . Ստիկ ըրէ՛ իմ առջիս մի՛ իյնար . ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ՝ ու քու եղբայրներուդ , որոնք որ Յիսուս Քրիստոսի վկայութիւնը ունին . միայն Տէր Լստուծոյ երկրպագութիւն ըրէ : Յայր . ԺԺ . 10 :

շ . Բարի հրեշտակները պիտի գան Քրիստոսի հետ՝ Գաստաստանին մեծ օրը :

Պ . շրամներես : Սաթ . ին . 31 : ք թիւ . 10 . 7 , 8 : ք թիւ . 7 . 15 : Յայր . 14 :

շ . շրեշտակները մարմին ունին :

Պ . Չէ՛ . քանզի անոնք հոգիներ են , անտե-

սանե լի և անմահ : Վ Դ . ի Գ . 39 : Վ Դ . Թ . 16 :  
Ս Գ . Ժ Բ . 24 , 25 : Վ Դ . ի . 35 , 36 :

Ն . Պիտի տեսնե՞նք ու զխոնանք և պիտի  
սիրե՞նք բարի հրեշտակները՝ թէ որ երկինքը  
երթանք :

Պ . Նրամերես : Ն Բ . Ժ Բ . 22 : Վ Դ . Ժ Դ . 22 :  
Տ Գ . Է . 9—17 :

Ն . Բարի հրեշտակներուն քանի՞ն անուն  
ները զխոնանք , և ո՞վ են անոնք :

Պ . Երկուքին , Վարբիէ լի և Սիբայէ լի :  
Վ Դ . ի Գ . 16 : Թ . 21 : Վ Դ . Թ . 19 , 26 : Տ Գ .  
Ժ Բ . 7 :

Սարգոյմէ զատ ուրիշ իմաստուն և համարատու  
Մատուծոյ ստեղծուածները կան , հրեշտակները :  
Բայց Մատուծոյ Խօսքը չըլարնէ , բնաւ մենք բան  
մը պիտի չգիտնայինք անոնց վրայով . ինչու որ  
մենք զանոնք ոչ կրնանք տեսնել , ոչ կրնանք լսել ,  
ոչ ալ կրնանք զգալ , որովհետեւ անոնք մարմին ու  
արիւն չունին մեզի պէս , հասլա միայն հողինն են :

Մենց վրայով ըսուած Մատուծոյ Խօսքին նայի-  
լով , բարի հրեշտակները պէտք է որ ըլլան , լե-  
զուի պատմել կրցածէն աւելի լուսափայլ ու գե-  
ղեցիկ՝ փառաւորեալ ու երջանիկ : Մենք սուրբ  
են , անոնք բնաւ չմեղանչեցին , և բնաւ պիտի չմե-  
ղանչեն : Մատուած անոնք սուրբ վիճակի մէջ հաս-  
տատեց : Թ Գ . Է . 21 : Մենց բաղմութիւնը ան-  
թիւ է . անոնց բնակարանը Երկինքն է . անոնց գոր-

ծը զՄատուած փառաբանել և իր կամքը ընել է :  
 Մնոնք Մատուծոյ հրամանովը երկինքէն կիջնան  
 մարդոց ողորմութիւն կամ վրէժխնդրութիւն ընելու  
 համար, և հոգի կամ փայլակի պէս շուտով կը  
 շարժին : Մնոնք շատ հոգ տանելով մեր փրկութիւնը  
 կուզեն, և երկիրպագութիւն կընեն Տէր  
 Հիսուսին իր զարմանալի սիրոյն համար : Արբոր  
 մէկ մեղաւոր մը ապաշխարէ, երկինքը կըլեցուի  
 անոնց ուրախութիւնովը : Ուրախութեամբ օգնութիւն  
 կըհասնին Վրիստոսի աշակերտներուն, և  
 անոնց բոլորտիքը կըհսկեն բարի ընելու համար, և  
 երբոր մեռնին՝ հրեշտակները երկինքը կըտանին զանոնք  
 ցնծութեան ձայներով : Այլ վերջին մեծ օրը  
 անոնք պիտի գան Տէր Հիսուսին հետը իր փառքովը,  
 և աշխարհի գատաստանին վերջին սարսափելի  
 գործին ներկայ պիտի գտնուին :

Մ. Բայց մէկը թող չկարծէ որ մենք բարի հըրեշտակներուն աղօթելու կամ երկիրպագութիւն ընելու ենք :  
 Մսկայ հոգին կորսընցունող մեզք մը կըլլայ ետքը, անոնք բնութեամբ Մատուածներ չեն  
 այլ մեզի պէս արարածներ, թէպէտև աւելի փառաւոր :  
 Մատուած ստեղծեց զանոնք, և ինքն է որ զանոնք  
 կենդանի կըպահէ, և սուրբ ու երջանիկ վիճակի  
 մէջ դրած է, և անոնք բան մը չեն կրնար ընել  
 իրենց կամ մեզի համար առանց Մատուծոյ օգնելուն :

Բայց մենք պատուելու ենք անոնց սուրբ վարքերնին,  
 և գոհ ըլլալու ենք անոնցմէ՝ իրենց մեզի ցուցուցած  
 բարեկամութեանը և մարդասիրու-

Թեանը համար : Ինչու որ անոնք կօգնեն Վրիստոսի ծառաներուն աս աշխարհիս մէջ , թէև մենք չենք կրնար տեսնել կամ զգալ զանոնք :
Երկինքին համար մեր պատրաստութեանը  
վրայով :

Պ . Սուրբ Հոգիին :

Սեր փրկիչը կըսէ , «Թէ որ մէկը նորէն չծընի՝ չկրնար Լստուծոյ թաղաւորութիւնը տեսնալ» . «Եւր պարտիք նորէն ծնանիլ» :

Ը . Ըսանց սրտի փոփոխութեան մէնք բնաւ Լքրկինքը չենք կրնար մտնալ : Լստուած՝ Սրբութեան Լստուած է . ուրեմն չարերը պիտի վաճնուէ իր ներկայութենէն . ինքը ՂԶմարտութեան ու Լրդարութեան Լստուած է . ուրեմն պիտի պատժէ չարերը յաւիտեան դժոխքին մէջը . Լքրկինքը Սրբութեան՝ ու Լստուծոյ հետ հաղորդութեան տեղ է . ուրեմն հարկաւոր է Սրբութիւնը ան ամէնուն՝ որոնք որ հոն պիտի երթան : Սեղաւորը չկրնար Լստուծոյ հետ հաղորդութիւն ունենալ , ոչ ալ սուրբերուն ու հրեշտակներուն հետ . ու թէ որ Լքրկինքը գտնուելու ըլլայ նէ , հոն ուրախ և հանգիստ պիտի չըլլայ , ինչու որ ան սուրբ տեղոյն համար սրտի պատրաստութիւն պիտի չունենայ . պիտի զգայ թէ Լքրկինքը իր սեփհական տեղը չէ : Եւ ատերը առանց սրտի փոփոխութեան՝ կուզեն որ մեռնենէն ետքը Լքրկինքը երթան , չէ թէ Լքրկինքը կըսիրեն ու անիկայ վայելելու յարմարութիւն ունին , հապա Վժոխքէն ազատելու կըփափաքին : Եւ այց թէ որ Լքրկինքը մանալու վճռուած ըլլային ալ

նէ , թշուառական պիտի ըլլային հոն՝ իրենց մեղսալից ու անհաւատութեան հին սիրտերուն պատճառաւ ։

Բ . Թող աս աղէկ մտմտան անոնք որ տակաւին նորոգուած չեն . թէ որ ասանկ վիճակի մը մէջ մնալով մեռնին նէ , պիտի իջնան անոնք բուն իրենց սեփական տեղը , այսինքն՝ Վժոխքը ։

Յիշեցէ՛ք որ եթէ աս աշխարհիս մէջ շնորոգուիք նէ , բնաւ ամենեւին ալ նորոգուելու չէք ։ Յայտ . իբ . 11 : Վուրջ չէ՛ք գիտեր թէ երկար առան ապրելու էք՝ թէ կարճ . ուրեմն իմաստուն եղիք ու շուտով սկսեցէ՛ք և ինքզինքնիդ անհոգ մի՛ թողուք , մինչև որ ան մեծ ու երջանիկ փոփոխութիւնը ստանաք ։

Վ . Ըս փոփոխութիւնը ճշմարտապէս մեծ ու երջանիկ է ։ Վանգի մեղաւորին ունեցած խաւարը լոյսի կը փոխուի , անոր ատելութիւնը՝ սիրոյ , անոր մեղքը՝ սրբութեան ։ Եւ ինքը Սատանայէն հեռանալով՝ կը մօտենայ Ըստուծոյ , Վժոխքէն կը փրկուի՝ դէպի Երկինքը կառաջնորդուի ։ Եւ արդարև երիցս երանելի է ան մեղաւորը , ինչու որ Ըստուծոյ որդին կը ըլլայ անիկայ՝ Յիսուս Վերիստոսի հաւատքովը ։

Վ . Ըս սրտի ճշմարիտ նորոգութեան նշանը՝ վարքի փոփոխութիւն մըն է ։ Նոր սիրտը նոր վարքի մը կառաջնորդէ , մեղաւորը՝ չէ՛ թէ ինչ որ առաջ էր , անանկ կը մնայ , հապա նոր արարած մը կը ըլլայ , մեղքին ու յիմարութեան բոլոր հին ճամբայները մէկ դի կը ձգէ , և անոնց տեղը

կըստանայ աղօթքը՝ օրհնութիւնը՝ հաւատքը՝ և սէրը՝ ու սուրբ հնազանդութիւնը՝ որ նոր բաներ են : Այլ անիկայ որչափ որ փորձութիւններ քաշելու ըլլայ , Աստուծոյ Հոգիին օգնութիւնովը այնչափ աւելի աղէկ կերպով կը յառաջանայ . իր շաւիղին լոյսը քիչ քիչ աւելնալով պայծառ կը լուսափայլէ մինչև որ կատարեալ կը ըլլայ կէս օրուան լուսին պէս , երբոր պիտի տեսնայ զԱստուած փառքով : Այլ ո՛վ որ աս կերպով չյառաջանար առաքինութեան ճամբուն մէջ՝ անոր նորոգութիւնը ճշմարիտ չէ :

Ե . Վրիստոնեայները բնաւ մոռնալու չեն որ միայն Սուրբ Հոգիին շնորհքովը և օգնութեամբը կրնան յառաջանալ դէպի երկինք երթալու ճամբուն մէջ . նոյն շնորհածիր ու կարող Հոգին՝ որ բարի գործը կը սկսի յառաջ տանիլ մեր մէջը , պէտք է որ ինքը յառաջ տանի ու կատարէ ան : Օգուշանանք ուրեմն Սուրբ Հոգիին դէմ հակառակելէն ու զինքը փտացունելէն . քանզի թէ որ ինքը հեռանայ մեզմէ , ամէն բան կը ըլլայ մեզի՝ խաւար ու մեղք , թշուառութիւն ու մահ :

3. Սուրբ Հոգին կը խօսի մեզի Աստուածաշունչով :

Ս-Ն՝ . ԺԹ . 1—14 :

Հ . Ո՞ր գիրքին մէջ Սուրբ Հոգին կը խօսի մեզի :

Պ . Սուրբ Աստուածաշունչին մէջ :

Ն . Գլխաւորապէս Սուրբ Հոգին ի՞նչ կըսէ մեզի աս Գլխին մէջ :

Պ . Գլխաւորապէս մեզի կը ծանուցանէ թէ մենք մեղաւոր ենք , և թէ Արկիներ ու դժոխք կայ , և թէ Վրիստոս մեռաւ մեզ փրկելու համար , և թէ մենք պարտինք նոր սիրտ ունենալ , չէ՛ նէ՛ Արկիները չենք կրնար մանալ :

Ն . Ինչաւ կրնայի՞նք մի գիտնալ աս մեծ ճշմարտութիւններուն մէկը , թէ որ Աստուածաշունչը չունենայինք նէ :

Պ . Չէ՛ :

Ան նոյն ժամուն Յիսուս Հոգւով Սրբով ուրախացաւ՝ և ըսաւ . « Նորհակալ եմ՝ քեզմէ ով չայր , Արկիների ու Արկրի Տէրը , որ աս բաները իմաստուններէն և գիտուններէն ծածուկ պահեցիր , ու տղայոց յայտնեցիր ասոնք . այո՛ չայր , ինչու որ՝ քու առջևդ ասանկ աղէկ երեցաւ :

Վ . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 : Ս . 21 :

Իմաստութիւնովը աշխարհ չճանչցաւ զԱստուած իմաստութիւնով , Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցունել : ա . 11 . 21 . ա . 21 :

Ն . Որի՞ն խօսքն է Սուրբ Գլխը . մարդո՞յ թէ Աստուծոյ :

Պ . Աստուծոյ . « Ան ամէն գիրքերը Աս-

տուճոյ շունչն են , և շահաւոր սորվեցունելու համար , յանդիմանելու համար , շքակելու համար , ու արդարութեան խրատելու համար” : ԲՏԺ . Գ . 16 :

Ն . Պօղոս ի՞նչ կրսէ Տիմոթէոսին՝ Սուրբ Գիրքին վրայով :

Պ . “Վուն մանկութենէ Սուրբ Գիրքերը գիտես , որոնք կրնան քեզ իմաստուն ընել փրկուելու՝ Վրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը” : ԲՏԺ . Գ . 15 :

Ն . Պետրոս ի՞նչ կրսէ Լստուածաշունչը գրողներուն վրայով :

Պ . “Վնչու որ չէ թէ բնաւ մարգարէութիւնը մարդոց կամքին պէս արուեցաւ . հաստատ Սուրբ շողիէն շարժուած Լստուածմէ եղած մարդիկները խօսեցան” : ԲՊԵԿ . ա . 21 :

Ն . Ի՞նչ կերպով խօսեցան :

Պ . Սուրբ շողին ըսաւ անոնց ինչ գրելնին ու ինչ խօսելնին , և միշտ անոնց հետ էր՝ անոնք սխալ ընելէն պահելու համար :

Եւ ալ շօրը կաղաչեմ՝ և ուրիշ մտիթարիչ մը կը խրկէ ձեզի , որ յաւիտեան ձեզի հետ բռնակի . Ճշմարտութեան շողին որ աս աշխարհս անիկայ չկրնար ընդունիլ , ինչու որ չտեսնար անիկայ ու չճանչնար անիկայ . բայց դուք կը ճանչ-

նաք անիկայ , ինչու որ ձեր քովը պիտի բնակի ,  
 և ձեր հետը պիտի ըլլայ : Հօն . Ժդ . 16 , 17 :  
 Լայց Սիսիթարիչ Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ  
 անունովս պիտի խրկէ , անիկայ ձեզի բոլորը պի-  
 տի սորվեցունէ . և բոլոր ինչ որ ձեզի ըսի նէ՝  
 միտքերնիդ պիտի բերէ : Հօն . Ժդ . 26 :

Հ . Փրկուելու ուրիշ ճամբայ մը կայ մի՛  
 ան ճամբայէն զատ , որն որ Սուրբ Հոգին կի-  
 մացունէ մեզի Մատուածաշունչին մէջը :

Պ . Ըէ :

Վիրքերը քննեցէք . ինչու որ դուք անոնցմով  
 կըսեսպէք յաւիտենական կեանքը ունենալ . և  
 բուն անոնք են որ ինծի համար կըվկայեն , որոնց-  
 մով որ կըսեսպէք կեանք ունենալ : Հօն . Ե .  
 39 : Լու ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ . ին-  
 չու որ՝ անկէ զատ ուրիշ անուն մը չկայ Լորկին-  
 քի տակը մարդուս տրուած , որ անով կարող  
 ըլլանք փրկուիլ : Վորժ . դ . 12 :

Հ . Մատուածաշունչը կարդալէն զատ ի՞նչ  
 ուրիշ միջոց սահմանած է Մատուած որ  
 մարդիկ սորվին Սուրբ Վիրքին վարդապե-  
 տութիւնները և փրկութեան ճամբան :

Պ . Եւետարանին քարոզութիւնը որ յա-  
 տուկ պաշտօն մըն է և Սուրբ Հոգիէն կան-  
 չուած մասնաւոր մարդոց կը յանձնուի :

Օգուշացէք ինքզինքներնուդ և բոլոր հօտին ,  
 որ Հոգին Սուրբ ձեզ անոնց վրայ նայող դրաւ՝



Տէրոջը ժողովուրդը հովուելու , որ իր արիւնովը  
 խալըսեց : Վարձ . ի . 28 : Աստուծոյ հօտը որ  
 ձեր մէջն է՝ արածեցէք , վերակացու ըլլալով՝ չէ  
 թէ ա կամայ՝ հապա կամաւ Աստուծոյ ուղածին  
 պէս . չէ թէ կաշառակրծու թեամբ , հապա յօ-  
 ժարութիւնով , չէ թէ վիճակներուն վրայ տիրե-  
 լով , հապա հօտին օրինակ ըլլալով . Ար շովուա-  
 պետին երեցած ատենը անթառամ փառքին պը-  
 սակը ընդունիք : ա Պէր . ե . 2 , 3 , 4 : Վուն  
 ալ խօսքը քարոզես . վրայ հասիր ատենին ու ա-  
 տենէ դուրս , յանդիմանէ , չեխէ , մխիթարէ ա-  
 մէն կերպ համբերութիւնով ու վարդապետու-  
 թիւնով : Վայց դուն ամէն բանի մէջ արթուն  
 կեցիր , ջանք ըրէ , աւետարանիչի գործ գործէ .  
 քու պաշտօնդ կատարեալ բունէ : բ Տէ . դ .  
 2 , 5 : Ալ ինքը ապսպրեց մեզն՝ որ ժողովուր-  
 դին քարոզենք ու վկայութիւն տանք , թէ՛ Մնի-  
 կայ է Աստուծոյ սահմանած կենդանիներուն և  
 մեռելներուն դատաւորը : Վարձ . ժ . 42 : Մենք  
 կը քարոզենք խաչեալ Վրիստոսը՝ շրէաներուն  
 գայթակղութիւն , ու շեթանոսներուն յիմարու-  
 թիւն . բայց անոնց՝ որ կանչուած են , շրէա-  
 ներուն ու շեթանոսներուն Վրիստոսը՝ Աստու-  
 ծոյ զօրութիւն , և Աստուծոյ իմաստութիւն : ա  
 Կարն . ա . 23 , 24 :

Շ . Ուստի յատուկ քարոզիչներէն զատ՝  
 հասարակ մարդիկ չէ՞ն կրնար աւետարանը  
 քարոզել իրենց խօսակցութեանը մէջ :

Պ . Կրնան քարոզել . քանզի հիմա պէտք է որ ամէն մարդ սորվեցունէ իր քաղաքացիին . ու իր եղբօրը՝ Տէրը ճանչնալու ճամբան : Եւր . 11 :

Եւ ան օրը մեծ հալածում եղաւ եկեղեցիին վրայ Երուսաղէմին մէջ , և ամէնքն ալ ցիրուցան եղան շրէաստանի գեղերը ու Սամարիա՝ առաքեալներէն զատ : Եւ ան ցիրուցան եղածները կը պտըտէին՝ ու խօսքը կը քարոզէին : Գործ . 1 , 4 : Եւ ան որ կը լսէ՝ թող ըսէ թէ Եկոր : Յոս . իբ . 17 : Տեւ և Գործ . 19 , 20 , 21 : Մարտ . Ե . 19 : Գործ . 19 . 2 , 3 , 24—26 : Եւր . 19 . 3 , 12 :

Շ . Մեր փրկուելուն համար յոյս մը կայ մի՛ թէ որ անարդենք Աստուածաշունչ կարդալը ու քարոզ լսելը :

Պ . 2է :

Ու ըսաւ Աբրահամ . Իրենք Մովսէս ու Մարգարէներ ունին , անոնց թող մտիկ ընեն : Ինքն ալ ըսաւ . 2է՛ հայր Աբրահամ , հապա թէ որ մեռելներէն մէկը երթայ անոնց՝ ալ կապաշխարեն : Եւ ան ըսաւ անոր . թէ որ Մովսէսին ու մարգարէներուն չեն լսեր , ոչ ալ մեռելներէն մէկը ողջ ըննայ նէ՛ միտքերնին պիտի պառկի : Գործ . 19 . 29—31 : Մէկը թէ որ Մովսէսին օրէնքը անարգէր , առանց ողորմութիւնի երկու կամ իրենք վկայներով կը մեռնէր , ալ ո՞րչափ սաստիկ պատիժի արժանի կը սեպէք անիկայ , որ Աստու-

Տոյ Որդին ոտքի տակ առաւ . ու նոր դաշինքին տրիւնը խառնակ սեպեց , որ անով ինքը սրբուեցաւ , և շնորհքին շողին անարգեց : Աքբ . Ժ . 28 , 29 :

շ . Արբոր մեր հողիին փրկուելու ճամբան գիտենք , ի՞նչ պարտինք ընել :

Պ . Պէտք է որ ուրախութեամբ և մեր բոլոր ջանքովք անոր փրկութեանը ջանանք :

շ . Արբոր գիտենք թէ Սուրբ շողի մը կայ՝ որ կրնայ առաջ տանիլ մեզ փրկութեան մեծ ու երևելի դործին մէջը , ի՞նչ պէտք է որ ընենք :

Պ . Պէտք է որ շնորհակալութեամբ ջանանք և աղաչենք զՄատուած Սուրբ շողիին համար՝ որ մեր սիրտերը փոխէ ու մեզ Վերիստոսի տանի , չէ՛ նէ պիտի կորսուինք յաւիտեան : Առաջ . ա . 24—27 :

շ . Արբոր մէկը քրիստոնեայ կը ըսայ Սուրբ շողիին նորոգելովք , անատենն ալ օգուտ ունի՞ իրեն Մատուածաշունչը :

Պ . շրամերես . քանզի Մատուածաշունչին միջոցովք Սուրբ շողին կը քաջալերէ զանիկայ ու կը սորվեցունէ անոր բոլոր իր պարտաւորութիւնները :

Տերօջը օրէնքը կատարեալ է՝ հողին կը նորոգէ , Տերօջը վկայութիւնը ճշմարիտ է , ազէտք

իմաստուն կրնէ : Տէրոջը կանոնները շիտակ են՝ սիրտը կուրախացունեն . Տէրոջը պատուիրանքները պայծառ են , աչքերուն լոյս կուտան : Տէրոջը վախը սուրբ է՝ յաւիտեան կըմնայ . Տէրոջը դատաստանները ճշմարիտ են , բոլորովին արդար են : Հանկալի են անոնք ոսկիէն ու շատ փորձուած ոսկիէն . մեղրէն ու քամուած մեղրէն անուշ են ,<sup>1</sup> Սաւ քու ծառագ անոնցմով խրատուեցաւ , ու անոնք պահելէն շատ վարձք կայ : Սող . ԺԹ . 7 — 11 :

Հ . Ուրեմն ի՞նչպէս պարտինք գործածել Մատուածաշունչը :

Պ . Մենք պարտինք սիրել անիկայ և սորվել , ու հնազանդիլ անոր՝ բոլոր մեր կենացը մէջ :

Մ. օրէնքին գիրքը քու բերնէդ չզատուի . հապա ցորեկ ու գիշեր անոր վրայ պիտի խորհիս , որ անոր մէջը բոլոր գրուածին պէս ընելու հոգ տանիս . վասնզի անատենը քու ճամբագ յաջող կը լլայ , և անատենը օրհնեալ պիտի ըլլաս : Հե . ա . 8 : Արանի՛ ան մարդուն՝ որ ամբարիշտներուն խորհուրդը չերթար , ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար , ու ծաղը ընողներուն նստած տեղը չնստիր : Հապա անոր կամքը Մատուծոյ օրէնքին մէջն է . ու գիշեր ցորեկ անոր օրէնքին վրայ կըմտածէ : Աւ պիտի ըլլայ անիկայ ջուրերուն գնացքները տնկուած ծառի մը պէս , որ ժամանակին իր պտուղը կուտայ . ու

անոր տերևը չպիտի չորնայ, և ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողուի : Սաղ . ա . 1—3 :

Հ . Եւ մեր բոլոր կենացը մէջ ո՞ր Հոգիին կրկարօտինք՝ որ մեզի սիրել տայ Լստուածաշունչը ու սորվեցունէ, և հնազանդեցունէ անոր :

Պ . Սուրբ Հոգիին :

Ի այց մենք չէ թէ աս աշխարհիս հոգին առինք, հապա ան հոգին՝ որ Լստուածմէն է . որ մենք ճանչնանք ան բաները՝ որ Լստուածմէ տրուեցաւ մեզի : Եւ ան բաները որ կրխօսինք՝ չէ թէ մարդու սորվեցուցած վարպետաբան խօսքերովը, հապա Հոգիին վարպետութիւնովը հոգևոր բաները հոգևորի հետ կը յարմարենք : Վասնզի մարմնաւոր շունչ ունեցող մարդը Լստուծոյ Հոգիին բաները չընդունիր . ինչու որ ան իրեն յիմարութիւն մըն է . ու չկրնար ալ գիտնալ՝ որ հոգևոր կերպով պիտի քննուի : Ի այց ան որ հոգևոր է՝ ամէն բան կը քննէ, ու ինքը մէկէ մը չքննուիր : Աւստի՝ ո՞վ գիտցաւ Տէրօջը միտքը, որ անոր խրատ տուող ալ ըլլայ . բայց մենք Վրիստոսի միտքը ունինք : ա Վորնի . բ . 12—16 :

Սուրբ Հոգին մեզի հետ կը խօսի Լստուածաշունչով, որն որ Իրմէն ընտրուած սուրբ մար-

դիկներէն գրուեցաւ . ու անոնք իրմէն այնչափ սորված և օգնութիւն ընդունած էին ան գրելու համար՝ որ Մատուածաշունչը Սուրբ Հոգիին ճիշդ ուղածին պէս եղաւ : Ըն կատարեալ է . ան է միայն ու ամենաբաւական կանոնը հաւատքին . ան՝ հաւտալու և ընելու բաները մեզի կը սորվեցունէ . ան Մատուծոյ խօսքն է :

Ը . Սենք ամենէն աւելի պատուելու ենք Մատուածաշունչը . որ ամենագեղարանց Վիրք մըն է . ամէն ուրիշ գիրքերը՝ մարդոցմէ եղած գիրքեր են , բայց աս Վիրքը Մատուծմէ եղած է . որն որ զՄատուած ու Յաւիտենականութիւնը աչքի առջև կը բերէ : Ըն կը սորվեցունէ մեզի բուն մեր անմահութիւնը և մեր փրկուելու ճամբան , ան է կենաց Վիրքը : Ուր որ Մատուածաշունչը ճանչցուած է և կրկարդացուի ու կը քարոզուի , և կը հաւատան ու կը հնազանդին անոր , հոն կայ դիտութիւն ու սրբութիւն , խաղաղութիւն ու յաջողութիւն : Եւ ուր որ չկայնէ , հոն կայ սգիտութիւն ու մոլութիւն , խռովութիւն ու կործանումն : Աւտի Մատուածաշունչը շատ հարկաւոր է մեզի :

Բ . Սենք պարտինք ընդունել Մատուածաշունչը մեր միմիայն ու ամենաբաւական հաւատոյ ու վարքի կանոնին պէս . ամէն ինչ որ Սուրբ Հոգիին աս Վիրքին մէջը մեզի կը հրամայէ հաւտալ՝ մենք պարտինք հաւտալ . ամէն ինչ որ աս Վիրքին մէջը մեզի կը պատուիրէ ընել՝ մենք պարտինք ընել անիկայ : Թէ որ մէկը Մատուածա-

շունչին հակառակ հաւատք ունենայ կամ սորվեցունէ կամ քարոզէ կամ գործէ նէ, անիկայ սրտալ կը հաւատայ և կը սորվեցունէ ու կը քարոզէ և կը գործէ : Եւ ամէն մէկ զգացումներուն և գործքերուն ուղիղ կամ սխալ ըլլալը Աստուածաշունչով պիտի քննուի :

Վ. Իսոյց ի՞նչ օգուտ պիտի ընէ մեզի աս Վիճակը, թէ որ մենք զգուշութեամբ անոր չհետեւինք ու անկից ընդունելու խրատներուն պատեհութիւնները անհոգութեամբ կորսնցունենք : «Իննեցէք Վիճակը» կը պատուիրէ մեզի Փրկիչը : Փրկութեան ճամբան թէպէտև այնչափ դիւրին ու պայծառ է Աստուածաշունչին մէջը՝ որ պզտի տղաքներն ալ կրնան սորվիլ, բայց Աստուածաշունչը իր բարձրութիւնովը ու խորունկութիւնովը բոլոր գիտութիւններէն գերազանց է : Թէ որ մարդիկ բոլոր իրենց կեանքերնուն մէջը անոր հետեւին, թէ որ մինչև վերջին կէտը անոր պարապին, տակաւին անոր մէջը սորվելու բաներ կը մնան : Եւ Վիճակը Աստուծոյ Վիճակն է :

Իսոյց աս Սուրբ Վիճակը կարդալու ժամանակնիս՝ պէտք է որ խոնարհութեամբ և հեզութեամբ ընդունինք ինչ որ մեզի կը սորվեցունէ, թէ չէ՝ անօգուտ կը լլայ մեր կարդալը :

Վ. ՂԶմարիտ Վրիստոնեայները որչափ որ կապրին՝ այնչափ ալ իրենց սէրը կաւելնայ Աստուածաշունչին վրայ : Սուրբ ԾԺԺ . 97—104 և այլն : Եւ որչափ երկար որ ապրին, այնչափ աւելի կը զգան իրենց ունէցած Սուրբ Հո-

գիին կարօտութիւնը որ կարող ըլլան Սուրբ  
Վիւրքը իմանալու ու անոր հնազանդելու :

Ե . Եւ գիտնալով հիմա՝ որ կորսուած մար-  
գիկը միայն Մատուածաշունչով Փրկութիւն կը-  
գտնան , կրփափաքին որ ամէն մարդիկ ան կե-  
նաց Վիւրքը ունենան , ու կըջանան որ անիկայ  
ամէն ազգաց մէջ տարածեն :

Ընտեք՝ որ իրենց նմանակից եղբայրները Մա-  
տուածաշունչ կարգալէն կըլըկեն , Մատուծոյ ու  
մարդոց թշնամիներն են . քանզի Մատուածա-  
շունչը իրաւամբ ամէն մարդու կըվերաբերի . ու  
բոլոր աշխարհի համար գրուեցաւ :

Օ . Ընտեք որ Մատուածաշունչը Մատուծոյ  
խօսքը ըլլալ չեն ընդուներ , այլ ծաղր կընեն  
զանիկայ , և չեն պարապիր անոր ընթերցմանը ,  
չեն հաւատար , չեն հնազանդիր անոր , ամէն ա-  
ստեք՝ թէ որ աս ըրածներնուն վրայ չապաշխա-  
րեն՝ պիտի կորսուին յաւիտեան :

ճ . Սուրբ Հոգին ո՛վ ըլլալը :

Յօ՛ւ . ԺԴ . 15—31 :

ձ . Ո՛վ է Սուրբ Հոգին :

Պ . Ենիկայ Մատուած է . ինչպէս որ կը-  
խոստովանինք Մենաստուրբ Արրորդութիւնը ,  
ձայր՝ Արդի՛ և Սուրբ Հոգի՛ , իրեք անձն ու



մէկ Մատուած :

շ . Ի՞նչպէս գիտէք թէ ինքը Մատուած է :

Պ . Մատուած աշունչին մէջը անիկայ Մատուած կրկնուի : Գ . Խժ . Ե . 3 , 4 : Բ ՏԷՏ . Գ . 16 :

շ . Քրիստոնէական մկրտութիւնը որո՞ւ անունով կրկատարուի :

Պ . Ինչպէս շօրը ու Որդիին անունովը՝ անանկ ալ Սուրբ շողիին անունովը : Ս . Խժ . Իր . 19 :

շ . Ժողովուրդը եկեղեցիէն արձակուելուն ի՞նչ կրտուի իրենց :

Պ . “()րհնեալք եղերուք ՚ի շնորհաց Սուրբ շողոյն , երթայք ՚ի խաղաղութիւն , և Տէր Հիսուս եղեցի ընդ ձեզ ընդ ամենեւին , ամէն” :

շ . Մատուած միայն գիտէ ամէն բաները , Սուրբ շողին ալ գիտէ՞ մի ամէն բաները :

Պ . շրամերես . “շողին ամէն բանը կրքննէ , Մատուածոյ խորունկ բաներն ալ” : Կ . Խժ . Բ . 10 :

շ . Մատուած միայն գիտէ գալու բաները , Սուրբ շողին ալ գիտէ՞ մի :

Պ . Հրամարես :

Երբ որ ինքը ճշմարտութեան Հոգին գայ՝ ամենը ճշմարտութեամբ կառաջնորդէ ձեզի . ինչու որ չէ թէ ինքիրմէն բան մը պիտի խօսի , հապա ինչ որ լսէ նէ՝ անիկայ պիտի խօսի , ու գալիքները պիտի պատմէ : Հօն . Ժզ . 13 : Եւր . խզ . 9 , 10 :

Հ . Ըստուած միայն ներկայ է ամէն տեղ , Սուրբ Հոգին ալ ամէն տեղ ներկայ է :

Պ . Հրամարես :

Սուր երթամ քու հոգիէդ , և քու երեսէդ սուր փախչիմ : Ի՞նչ որ երկինքը ելլեմ , դուն հոն ես . ու թէ որ գոյքը անկողինս ընեմ , ահա դուն հոն ես : Ի՞նչ որ արշալուսին թեւերը առնեմ , ու ծովին ծարերուն մէջը բնակիմ , հոն ալ քու ձեռքդ ինծի պիտի առաջնորդէ , ու քու աջ ձեռքդ իս պիտի բռնէ : Սուր . Ճլթ . 7—10 :

Հ . Ըստուած միայն Ըմենակարող զօրութիւն ունի , Սուրբ Հոգին ալ Ըմենակարող զօրութիւն ունի :

Պ . Հրամարես . քանզի Ըռաքեալները անոր զօրութիւնովը ամէն տեսակ հրաշագործութիւնները ըրին : ա Կորնթ . Ժբ . 8—11 : Եբր . բ . 4 : Գործ . բ . 4 , և այլն :

Հ . Սրն է ան մեղքը որն որ Ըստուած բնաւ չպիտի ներէ ոչ աս աշխարհիս մէջ և ոչ գալու աշխարհին մէջը :

Պ . Սուրբ Հոգին գէմ կղած հայհոյութիւնը : Սասն . ժբ . 24—32 : Գ . 1 . ժբ . 10 : Սասն . գ . 22—30 :

Սուրբ Հոգին՝ որ կը փոխէ մեր սիրտերը՝ մեզ Վրիստոսին կը քաշէ, ու Լորինքին համար կը պատրաստէ՝ ճշմարիտ Մատուած է, երկրպագելի Լորորդութեան երրորդ անձը :

Ե . Ուստի մենք վասնալու՝ սիրելու՝ երկրպագութիւն ընելու ու ծառայելու ենք Իրեն Մատուծոյ պէս : Ինքն է Մատուծոյ Գիրքին հեղինակը, ու ինքը աս Գիրքին մէջը մեզի յայտնեց ամէն կղածները ու գալիքները մինչև աս աշխարհիս վերջը, ան ամէն բաները՝ որ մենք պարտինք հաւատալ ու ընել մեր փրկութեանը համար : Ինքն է որ Սարգարէներուն ու Լաքեալներուն ձեռքովը զօրաւոր հրաշքներ գործեց : Ինքն է որ աշխարհի ամէն կողմերը ներկայ է մի և նոյն բուպէին՝ մարդոց մեղքերը յանդիմանելով, անոնց սիրտերը փոխելով, անոնք դէպի Վրիստոս առաջնորդելով, Վրիստոնեայներուն սիրտին մէջը բնակելով ու զանոնք սրբելով, Պաշտօնեայներ որոշելով ու անոնց խօսել տալով, և եկեղեցիներուն հոգ տանելով :

Բ . Իր սեփհական գործն է մարդոց սիրտերը փոխել ու սրբել : Ս՝ ենք չենք կրնար փոխել

բուն մեր սիրտերը , ինչու որ բոլորովին մենք չաբենք , ու մեր սիրտերը միշտ չարութիւն ընելու պատրաստ են : Մենք զգալով մեր տկարութիւնը ու չարութիւնը՝ պարտինք Խրեն երթալ ճիշդ աս դիտաւորութեամբ : Աշխարհիս դէպի Քրիստոս դառնալու բոլոր յոյսերը՝ Աստուծոյ Հոգիին շնորհքէն կախում ունի :

Գ . Մենք ամէն պէտք եղածը ընելու ենք Սուրբ Հոգին հրաւիրելու , որ գայ մեր սիրտը բնակի , միանգամայն հեռու կենալով ան ամէն բաներէն՝ որ զինքը մեզմէ կը հեռացունեն : Արեւի է որ ինքը իր սրբազան ներգործութիւնը մեր սիրտերէն դադրեցունէ , կարելի է որ ինքը վըշտանայ ու մեզմէ մէկ դի քաշուի յաւիտեան : Ուրեմն չուրանանք իր Աստուածութիւնը ու իր Ամենակարող զօրութիւնը , երգում չընենք իր Սրբազնասուրբ անունովը , չանարգենք իր սուրբ Խօսքը՝ իր պաշտօնեայները և իր ժողովուրդը : Իր կամքին դէմ եղածը չընենք , ինչու որ չկրնար բնաւ մէկ կերպով մը մեղքին հետ հաղորդութիւն ունենալ :

Գ . Ինքը բարեգութ ու երկայնամիտ է առ ամենայն մարդիկ : Թէ որ ինքը մարդասէր ու երկայնամիտ չըլլար , բնաւ չէր բնակեր աս գէշ աշխարհիս մէջը , բնաւ չէր բնակեր մարդոց սըրտին պէս ապականեալ տեղ մը : Այլ երբոր ինքը շնորհաց գործ մը սկսէ մեր մէջը՝ թէպէտև մենք շատ անգամ անոր կամքին դէմ կը կենանք , այսու ամենայնիւ կը համբերէ և իր սկսած գործը չդադ-

բեցունելով՝ շարունակ յառաջ կըտանի մինչև վերջին կէտը : Ինքը Շնորհաց շոգի է . ճիշդ անանկ շոգի՝ որուն մեղաւորները կըկարօտին :

Ե . Ղշմարիտ Վրիստոնեան ինչպէս զօրաւոր և ինչպէս երջանիկ է : Ընոր շայրը՝ Ըստուած է . անոր փրկիչը՝ Ըստուած է . և անոր Սրբարարն ալ՝ Ըստուած է . «Թէ որ Ըստուած մեր հետը ըլլայ նէ , ո՞վ կրնայ մեզի դէմ կենալ» :

Օ . Բայց չարերը ու անզեղները՝ անզօր ու թշուառական են . անոնք ոչ Լըրկնաւոր շայր ունին , ոչ պատուական փրկիչ , ոչ ալ բարեգութ Սրբարար : Ընոնք՝ շօր և Որդւոյ և շոգւոյն Սրբոյ հակառակ են . և շայրը՝ Որդին՝ և Պուրբ շոգին ալ անոնց հակառակ է : Ըստուած մէ մեզի համար նախապատրաստուած մեծ փրկուածնէն անոնք մասն ու բաժին չունին :



Ը . Ստուած շայր :

1 . Մարմինն մեռնելուն վրայ :

Յ . Ժա . 1—44 :

Շ . Ինչ է պատճառը՝ որ մենք ամէնքս կըմեռնինք :

Պ . Վանզի մենք ամէնքս ալ մեղաւոր

Կնք : Օ՛րհնդ . բ . 17 : Սաղմ . ձԹ . 48 :  
 Հաղմ . Կ . 12 :

Հ . Թէ որ բնաւ մեղք մը չըլար աշխարհի մէջ , մահ պիտի ըլլա՞ր մի :

Պ . Չէ :

Պատճառն որ մեղաց հատուցումը մահ է . բայց Աստուծոյ շնորհքը յաւիտենական կեանք է՝ Եսուս Քրիստոս մեր Տէրօջը ձեռքովը : Հաղմ . զ . 23 :

Հ . Վիտէ՞ք որ ատեն պիտի մեռնիք :

Պ . Չէ . միայն Աստուած գիտէ ան ատենը :

Տէրն է որ կը մեռցունէ ու կը յարուցանէ , գերեզմանը կիջեցունէ ու վեր կը վերցունէ :

Սաղմ . բ . 6 : Անոր ձեռքն է ամէն կենդանիին հոգին և ամէն մարդոյ շունչը : Յաղմ . ժբ . 10 : Արծած կես քու երեսդ ու կը խոսովին . կառնես անոնց հոգին ու կը մեռնին , և իրենց հոգը կը դառնան : Սաղ . ճդ . 29 :

Հ . Վիտէ՞ք արդեօք թէ ինչ կերպով մեռնելու էք դուք :

Պ . Չէ , միայն Աստուած գիտէ ան :

Հ . Սենք ընդհանրապէս աս աշխարհիս մէջ շատ կապրինք՝ թէ քիչ :

Պ . Քիչ ժամանակ :

Ինտո՞ր բան է ձեր կեանքը . ինչու որ շոգիի նման էք , որ քիչ մը ատեն կերևայ՝ և կոչնչա-

ճայ : Զ-ի . Դ . 14 , 15 : Սանդի ամեն մար-  
մին խոտի պէս է , և մարդուն բոլոր փառաւո-  
րութիւնը խոտի ծաղիկի պէս . խոտը կը ցամքի ,  
ու ծաղիկը կը թափթըփի : Ե ՊԵՊ . Կ . 24 :  
Զ-ի . ԺԴ . 1 , 2 : Ս-ւ՛ . Դ . 5 . ԸԹ . 5 :

՝ . Սեր տեսած ամենածեր անձինքը  
քանի՞ տարեկանի չափ կան :

Պ . Եթեանասուն կամ ութսուն տարե-  
կանի չափ :

Սեր տարիներուն օրերը եթեանասուն տարի  
են . ու թէ որ զօրութիւնով ութսուն տարի ըլ-  
լալու ըլլան , տակաւին անոնց փառքը աշխա-  
տանք ու ցաւ է . ինչու որ՝ անոնք շուտով կանց-  
նին՝ ու մենք կը թռչինք : Ս-ւ՛ . Դ . 10 :

՝ . Գրհեղեղէն առաջ մարդիկ քանի՞  
տարի կապրէին :

Պ . Ութը կամ ինը հարիւր տարի :

՝ . Եստուածաշունչին մէջ ըստած ա-  
մենածեր մարդը ո՞վ էր :

Պ . Սթուսաղայ : Օ-նն . Ե . 1—32 :

՝ . Ինչո՞ւ Եստուած կարճեցուց մարդ-  
կային կեանքը :

Պ . Սարդոց մեղքին համար :

՝ . Երկու բարի մարդիկ կային , որոնք  
բնաւ չմեռան , Եստուած անոնք աշխարհքէն  
դուրս հանեց և Երկինքը տարաւ : Ի՞նչ էին

անոնց անունները :

Պ . Ենովք և Եղիա : Նանք . Ե . 24 :  
Եբր . Ժա . 5 : Բ Թափ . Բ . 11 :

Հ . Երբ մարդ մը մեռնի նէ , ի՞նչ կը-  
նենք անոր մարմինը :

Պ . Հողին մէջը կը թաղենք անիկայ :

Հ . Ետքը ի՞նչ կը լայ ան մարմինը :

Պ . Հող կը դառնայ :

Հ . Եղամ մեղանչելէն ետե՛ւ Ըստուած  
ի՞նչ քսաւ :

Պ . “Հող էիր և հող պիտի դառնաս” :  
Նանք . Դ . 19 :

Հ . Սոսկալի բան մըն է մեռնիլը , ո՞վ  
կրնայ մխիթարել մեզ խաղաղութեամբ մեռ-  
նելու :

Պ . Ըստուած :

Ո՛ր է ո՞վ մահ քու յաղթութիւնդ . ո՛ր է  
ո՞վ գերեզման քու կճելդ : Ի՛նչ գոհութիւն  
Ըստուծոյ , որ մեզի յաղթութիւն տուաւ մեր  
Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը : ա Կորնթ .  
Ժե . 55 , 57 : Նոնկան վրայ եկաւ և բարձր  
ձայնով կանչեց , Տէր՝ ասիկայ անոնց մեղք մի  
սեպեր . ու երբոր աս ըսաւ՝ քնացաւ : Գործ .  
է . 60 : Եւ թէ որ երթամ՝ ու ձեզի տեղ պատ-  
րաստեմ , նորէն կուգամ և ձեզ քովս կառնեմ .  
որ ես ո՛ր տեղ եմ՝ նէ՛ դուք ալ հոն ըլլաք :  
Յոն . Ժդ . 3 :



շ . Ի՞նչ կերպ մահով մեռնելու պարտինք փափաքիլ :

Պ . “Ո՞վ կրնայ Յակոբին աւազը համբերել , ու Խարայէլին քառորդը հաշուել . հոգիս հաւատարիմներուն մահուամբը մեռնի , ու իմ վերջս անոր վերջին պէս ըլլայ” : ԹԻՄՈՅ . իդ . 10 :

շ . Որովհետեւ մեր մեռնելուն ժամանակը կամ ինչ կերպով մեռնելնիս չենք գիտեր , միշտ ի՞նչպէս ապրիլ պարտինք :

Պ . Սիշտ մահուան պատրաստ ըլլալով :

շ . Ի՞նչ կրտէ Յիսուս Փրկիչը ասոր վերայով :

Պ . “Ղուք ալ պատրաստ եղիք . ինչու որ չկարծած ատեննիդ Որդին մարդոյ կուգայ” : ՂԵՒ . ժբ . 40 :

Ըս աշխարհիս մէջի բոլոր կենդանիները մահուան ենթակայ են , և բուն աշխարհն ալ իր վախճանին կրմտանայ : Սահը թագաւորեց մարդոց վրայ Ըդամէն մինչև աս օրըս , և պիտի թագաւորէ մինչև վերջին օրն ալ :

Ը . Ըս բաներէն կըսորվինք թէ ինչ գէշ ու

ընդի բան մըն է մեղքը , մահը և բոլոր վայերը անիկայ բերաւ մեր ամեննուս վրայ . թէ որ մեղք չըլլար , մահ ալ պիտի չըլլար , մեղքը ու մահը իրարու հետ կապուած են :

Բ . Գուք մեռնելու համար ծնած էք : “ Հող էիր և 'ի հող դարձցիս ” կըսէ Մենակարողը : Աւրեմն մի հպարտանաք ձեր անձին գեղեցկութեանը կամ զօրութեանը կամ առողջութեանը վրայ : Մի հնազանդիք ատ մարմինին ցանկութիւններուն : Սարմինը ուրիշ բան չէ՝ բայց միայն հող . խոնարհ և խորհրդածու եղի՛ք մահուան վրայ :

Գ . Չէք գիտեր թէ երբ պիտի մեռնիք . կարելի է մահը ձեզ յափշտակէ տարիէ մը ետքը , կամ թէ ամիսէ մը ետքը , կամ թէ գալ շարթու , կամ վաղը և կամ գուցէ այսօր : Ասրելի է որ մեծութեան հասակնուդ հասնիք , և կամ տղայութեան ժամանակնիդ մեռնիք : Գացէ՛ք գերեզմանատունը , ու հոն պիտի գտնէք պզտի թղայոց գերեզմաններ՝ ինտրո նաև պատանեաց՝ և մեծ մարդոց գերեզմաններ : Աեանքէն աւելի փոփոխական բան մը չկայ : Աշողուան վրայ դուք ձեզմէ մի պարծիք , ըսելով թէ՛ վաղը աս կամ ան բանը ընենք , գալ տարի հոս կամ հոն պիտի երթանք : ( Յով . դ . 13 , 14 : Գուք միշտ զգալու և ըսելու էք , “ Աթէ Տէրը կամենայ՝ ապրինք ու ընենք աս կամ ան բանը ” :

Գ . Չէք ալ գիտեր թէ ինչ կերպով պիտի մեռնիք : Հազար կերպ ճամբաներ կան մեռնելու .

մահը մեր բոլորտիքը և մեր մէջն է . միշտ միտքերնիդ բերէք որ ձեր կեանքը Աստուծոյ ձեռքն է , և ինքը կրնայ երկնցունել կամ կարճացունել անիկայ , որ ատեն կամ ի՛նչ կերպով որ ինքը հաճի նէ :

Ե . Աւրեմն թող ձեր կեանքին մեծ գործը ըլլայ մահուան համար պատրաստ ըլլալը : Վանգի ձեր մահուան ատենը պիտի չսեպէք թէ ձեր բրած պատրաստութիւնները շատ է : Եւ թէ որ առաջուց սկսած չէք նէ , հիմա սկսեցէք պատրաստուիլ : Միտքերնիդ բերէք ան ժամերը՝ որ արդէն կորսընցուցած էք . և ան վտանգը՝ որուն ձեր հոգիները մինչև հիմա ենթակայ եղած են : Եւ զարմանք չէ՞ մի որ դուք մինչև հիմա մահուանէ ազատ մնացեր էք , ու յաւիտենական թշուառութեանը չէք խրկուեր : Աւրեմն ձեր հոգիին փրկութիւնը մահուան օրին մի թողուք , ինչու որ ասանկ ընելը մեծագոյն չարութիւն և յիմարութիւն է : Չեր ամենէն աղէկ ժամանակը ամենալաւ բաներու հետեւելով անցուցէք : Եւ թէ որ միամիտ սրտիւ ապաշխարէք ու Հիսուսին հաւատաք և իրեն ծառայելու համար ապրիք նէ , դուք պիտի պատրաստ ըլլաք մահուան համար , և Աստուծոյ շնորհքովը մահը ձեզ պիտի չկրնայ վախցունել :

2 . Հոգին ի՞նչ կըլայ երբոր Մարմինը մեռնի :

Ղ 1-4 . Ժզ . 19 — 31 :

Հ . Երբոր մարմինը մեռնի՝ ի՞նչ կըլայ հոգին :

Պ . Ըստ Աստուած կերթայ :

Հ . Ինչո՞ւ առ Աստուած կերթայ :

Պ . Որ Աստուած անոր դործքերուն համեմատ դատէ զանիկայ , կամ Երկինքը ընդունելով , և կամ Գոթոխքը խրկելով :

Հ . Ուրեմն բարի մարդը մեռածին պէս Երջանիկ կըլայ՞ արդեօք Երկնից մէջը :

Պ . Հրամերես :

Հ . Գուք ի՞նչպէս դիտէք աս :

Պ . Աստուածաշունչէն :

Եւ եղաւ որ ան աղքատը մեռաւ , ու հրեշտակները Արքահամին գոգը տարին անիկայ . մեծատունն ալ մեռաւ ու թաղուեցաւ : Ղ 1-4 . Ժզ . 22 : Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան . հապա թէ չէ՞ ես ձեզի կըսէի , որ կերթամ ու ձեզի տեղ կըլատրաստեմ : Եւ թէոր երթամ՝ ու ձեզի տեղ պատրաստեմ , նորէն կուգամ և ձեզ քոյս կանենմ . որ ես ուր տեղ եմ նէ՞ դուք ալ հոն ըլլաք : Հօն . Ժզ . 2 , 3 :

Հ . Մեր Փրկիչը խաչին վրայ ի՞նչ ըսաւ աւաղակին :

Պ . “Գուռն այսօր իմ հետս Գրախաին մէջը պիտի ըլլաս” : Գ Կ-ի . իգ . 43 : Գ Կ-ի . 58 :

Ն . Գէշ մարդ մը մեռածին պէս ո՞ւր կերթայ :

Պ . Գժոխքը :

Ն . Սեծատունը մեռնելէն և թաղուելէն ետքը տանջանքի մէջ ըլլալով՝ ո՞ւր բացաւ իր աչքերը :

Պ . Գժոխքին մէջը : Գ Կ-ի . ժղ . 23 :

Ն . Յուդան ինքզինքը կախելէն ետքը ո՞ւր դնաց :

Պ . “Գուռն իր տեղը” : Գ Կ-ի . ա . 25 : ՅԵԿ . ժէ . 12 :

Ն . Ուրեմն մենք մեռածնուս պէս , մեր հոգիները ո՞ւր պիտի դանուին :

Պ . Կամ՝ Լըրկիները , կամ՝ Գժոխքին մէջը :

---

Սահով՝ հոգին մարմինէն բաժանուած կըմնայ մինչև Յարութեան օրը : Մարմինը երկրի մէջ կըթաղուի և հող կըգառնայ . և հոգին առ Աստուած կերթայ ու կըդատուի . և անոր վարքին

Համեմատ կամ Արկինից մէջ կընդունուի , կամ  
Պատկար կը խրկուի :

Ե . Ես ներկայ կեանքն է միայն Շնորհաց  
օրը : Թէ որ չապաշխարենք և Յիսուս Վրիս-  
տոսի չհաւատանք քանի որ աս աշխարհիս վրայ  
ենք , մենք յաւիտեան կորսուած ենք : Հոգին  
փրկելու համար պատեհութիւն չկայ մէկալ աշ-  
խարհին մէջ : Մահէն ետե դատաստանը կու-  
գայ : «Ե, յօր թէ որ անոր ձայնը լսելու ըլլաք՝  
ձեր սիրտերը մի խստացունէք» : Եհով ու դո-  
ղով աղէկ մամտացէ՛ք մահին վրայ՝ ու անոր  
համար պէտք եղած պատրաստութիւնը տեսէք :  
Երբ՝ ո՞րչափ պատուական է աս ժամանակաւոր  
կեանքս , որ անոր աղէկ գործածուելէն կախում  
ունի մեր յաւիտենական երջանկութիւնը :

Բ . Երդարները շատ մօտ են Արկինքին և  
բոլոր անոր Արջանկութիւններուն մէջը մտնալու :  
Ինչու որ իսկոյն իրենց մեռած կէտին՝ Վրիստոսի  
հետը կը լան Արկինքը : Ո՛հ , անոնք ի՛նչ մեծ  
իրաւունք ունին ուրախանալու : Վանդի մահն է  
ճշմարիտ հաւատացեալներուն մեծ շահը : Փիլ. 1 .  
ա . 21 : Պէտք է որ անոնք հաւատարմութեամբ  
բարի ընեն բոլոր մարդոց՝ ինչպէս որ պատեհու-  
թիւն ունին , և որ յօժարութեամբ համբերեն  
աս կեանքին նեղութիւններուն , փորձութիւն-  
ներուն , վիշտերուն և աշխատութիւններուն՝ գիտ-  
նալով թէ իրենց ժամանակը կարճ է , և թէ  
մահը շատ չանցած իրենց վարձքին և իրենց հան-  
գըստութեանը պիտի հասցունէ : Ղ . 1 . Ժբ .  
35—40 :

Գ . Չարերը շատ մօտ են Գ.Ժոխքին և բոլոր անոր տանջանքներուն մէջը մտնալու : (Թ)է որ անոնք այսօր մեռնելու ըլլային նէ , այսօր անոնք իրենց աչքերը տանջանքներուն մէջը պիտի բանային : Ս՛հ , ի՞նչ մեծ իրաւունք ունին շարերը իրենց վիճակին մէջը դողալու , իրենց մեղքերը և յիմարութիւնները մէկ դի ձգելու և ինքզինքնին ապաշխարութեան և աղօթքի տալու , որ գուցէ Մատուած ներէ անոնց Հիսուսի համար . քանզի ոչ այլ ինչ , բայց միայն Մատուծոյ ողորմութիւնը կրնայ պահել անոնք կորտեան անդունդէն :

Թ . Յարութեան վրայ :

ա Կրօն . Ժե . 1—58 :

Հ . Սեր մարմինները՝ որ իրենց գերեզմաններուն մէջը հող կրդառնան , հոն մնալո՞ւ են . և բնաւ մէյմըն ալ տեսնալու կամ լսելու չե՞ն մի :

Պ . Չէ՛ . Ընտնք նորէն ապրելու համար յարութիւն պիտի առնեն :

Հ . Ի՞նչպէս գիտենք աս բանը :

Պ . Քանզի այսպէս կը կարգանք Մատուածաշունչին մէջը , զորօրինակ՝ ա Կրօն . Ժե . և ա (Թ)է . դ Գլուխ :

Հ . Սեր մարմինները ե՞րբ յարութիւն պիտի առնեն :

Պ . Գատաստանին օրը :

Հ . Ո՞վ պիտի յարուցանէ անոնք :

Պ . Տէր Յիսուս Վրիստոս : Յօհ . Ժա . 25 :

Հ . Ի՞նչ կրսէ Սուրբ Գիրքը յարութեան վրայով :

Պ . “Դնչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմանի մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն , ու դուրս պիտի գան . անոնք որ բարեգործութիւն ըրեր են՝ կենաց յարութեան համար , և անոնք որ չարագործութիւն ըրեր են՝ դատապարտութեան յարութեան համար” : Յօհ . ե . 28 , 29 :

Հ . Ո՞վ ամենէն առաջ մեռելներէն յարութիւն առաւ ու նորէն չմեռաւ :

Պ . Տէր Յիսուս Վրիստոս :

Հ . Ընոր մեռելներէն յարութիւն առնելը մեզի ալ վկայութիւն կուտայ՝ արդեօք՝ թէ մենք ալ յարութիւն պիտի առնենք :

Պ . Ե, յո՛ . քանզի Սուրբ Գիրքը կրսէ :

Եւ թէ որ Վրիստոս յարութիւն չէ առեր նէ՛ մեր քարոզութիւնը պարապ է , ու ձեր հաւատքն ալ դատարկ է . և մենք ալ Եստուծոյ սուտ վեկայները գանուած կը լանք . որովհետեւ Եստու-



ծոյ համար մկայութիւն տուինք , թէ՛ Լնքը մե-  
 ուելներէն յարուց Վրիստոսը . որ իրաւ չյարուց  
 անիկայ , թէ որ մեուելները յարութիւն չառնեն .  
 ինչու որ մեուելները յարութիւն չառնեն նէ , ու-  
 րեմն Վրիստոս ալ յարութիւն առած չէ : Լը  
 թէ որ Վրիստոս յարութիւն առած չէ՞ ձեր հա-  
 ւատքը պարապ է , ու տակաւին ան մեղքերուն  
 մէջն էք : ա Կորնթ . Ժե , 14—17 :

Ն . Բայց մեր մարմինները ճիշդ մեր հի-  
 մակուան միս ու արիւն ունեցող մարմիննե-  
 րուն պէ՞ս մի պիտի ըլլան , որ ուտելու և  
 խմելու և հանդերձի կրկարօտին , և որ կը-  
 հիւրնդնան և կը չարչարուին ու կը մեռնին :

Պ . Չէ . անոնք պիտի փոխուին փառա-  
 ւոր ու սքանչելի կերպով մը :

Ինչու որ երբ մեուելներէն յարութիւն առնեն ,  
 ոչ էրիկ մարդիկ կնիկ կառնեն , և ոչ կնիկները  
 էրիկ կառնեն . հապա երկինքի հրեշտակներուն  
 պէս են : Մորէ . Ժբ . 25 : Արովհետեւ մեանիլ  
 ալ չեն կրնար . ինչու որ հրեշտակներուն հաւա-  
 սար են՝ ու Լստուծոյ զաւակները , պատճառն որ  
 յարութեան որդիք են : Գլ . Ի . 36 : Լսանկ  
 ալ մեուելներուն յարութիւնը . ապականութիւ-  
 նով կը ցանուի , ու առանց ապականութեան յա-  
 րութիւն կառնէ . անարգութիւնով կը ցանուի ,  
 ու փառքով յարութիւն կառնէ . տկարութիւնով  
 կը ցանուի , ու զօրութիւնով յարութիւն կառ-  
 նէ , կը ցանուի շնչաւոր մարմին , և յարութիւն

կառնէ հոգևոր մարմին . թէ որ շնչաւոր մարմին կայ նէ՝ հոգևոր ալ կայ : Այսան զի պէտք է որ աս ապականացու մարմիննիս անապականութիւն հազնի , ու աս մահկանացուս անմահութիւն հազնի : ա Վրնն . ժե . 42—44 , 53 :

՝ . Սեր յարութիւն առած մարմինները որո՞ւն մարմինին պիտի նմանին :

Պ . Վրիստոսի փառաւորեալ մարմինին :

Այլի մարդը երկիրէն է՝ հողեղէն . բայց երկրորդ մարդը՝ Տէր է՝ երկիրէն : Ալ ինտոր հողեղէնին կերպարանքը որ հագեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ պիտի հազնինք : ա Վրնն . ժե . 47 , 49 : Որ պիտի նորցունէ մեր խոնարհ մարմինը իր փառաւոր մարմինին կերպարանքին պէս ըլլալու , ան զօրութիւնովը՝ որ կարող է իր տակը ամէնը հնազանդեցունելու : Փիլիպ . Գ . 21 : Տէր նալ Սրնն . ժե . 1 , 2 : Յայտ . ա . 12—16 :

՝ . Սուրբ Հոգւոյն ազդեցութեամբը ի՞նչպէս կրպատմէ Պօղոս կենդանիներուն փոխուիլը և մեռելներուն յարութիւն առնելը :

Պ . “Ուստի խորհուրդ մը զըուցեմ ձեզի . Ամէնքնիս չպիտի ննջենք , բայց ամէնքնիս ալ պիտի նորոգուինք , յանկարծակի աչք դոցել բանալու մէջ՝ վերջին փողին չալելու ատենը . որովհետև փողը կը չալուի ,

ու մեռեալները յարութիւն պիտի առնեն առաւել ապականութեան . և մենք ալ կրնորողութիւնք : Վասնզի պէտք է որ աս ապականացու մարմիննիս անապականութիւն հաղնի , ու աս մահականացուս անմահութիւն հաղնի” : ա Կորնթ . Ժե . 51 , 52 , 53 :

Հ . Ի՞նչ կրսէ նաև թեասաղոնիկեցւոց թղթոյն մէջ :

Պ . “(Թէ որ կրհաստանք որ Յիսուսը մեռաւ ու յարութիւն առաւ . անանկ ալ Մատուած՝ Յիսուսով ննջեցեալները պիտի բերէ անոր հետ : Իայց աս կրզրուցենք Տէրոջը խօսքովը , թէ մենք որ ողջ մնացած ենք Տէրոջը դալուն ատենը ննջեցեալներուն չենք հասնիր : Ինչու որ ինքը Տէրը հրամանով հրեշտակապետին ձայնովը ու Մատուծոյ փողովը երկինքէն պիտի իջնայ , և Քրիստոսով մեռեալները առաջ յարութիւն պիտի առնեն : Ատքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկ տեղ պիտի յափշտակինք ամպով Տէրոջը առջևը օդին մէջը . և անանկ ամէն իժիր Տէրոջը հետ պիտի ըլլանք : Ուստի մէկզմէկ մտիթարեցէք աս խօսքերովը” : ա թե . Դ . 13—17 :

Թէպէտև մեր մարմինները կը մեռնին և հող կը դառնան , բայց վերջին մեծ օրը նորէն յարութիւն պիտի առնեն Տէր Հիսուս Վրիստոս մեր լ'մենակարող Փրկիչով : Եւ ինչպէս որ ինքը մեռելներէն յարութիւն առաւ , այնպէս ալ մենք պիտի առնենք :

Ե . Լ . ս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեզի , որ մեր Մարմինները Տէրօջն են . և թէ անոնք թանկագին են . մենք անոնք սուրբ պահելու ենք իրեն ծառայելու համար : Մեր պարտքն է անոնց առողջութեանը ու զօրութեանը և մաքրութեանը համար հոգ տանիլ . և միշտ մեր հանդերձն ալ մաքուր պահել որչափ որ կրնանք : Մեր պարտքն է մեր անձը միշտ մաքուր պահել պոռնըկութենէն , շուտութենէն , որկրամոլութենէն , գինովութենէն և ամէն մեղքերէն : ա Կորնթ . զ . 9—20 : ա Թեա . զ . 7 : “Վուր սուղ գինով ծախու առնուեցաք . փառաւորեցէք զԼ'ստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջը որ Լ'ստուածէ է” : ա Կորնթ . զ . 20 :

Բ . Լ . ս վարդապետութիւնը կը վերցունէ մահուան երկիւղը և տրտմութիւնը : Թէպէտ մենք կը մեռնինք , բայց պիտի ապրինք , թէպէտ մեր մարմիններէն կը հրաժարինք , բայց ոչ յաւիտեան : Հովբ . ժթ . 25 , 26 : Լ'նոնք որ ապականութեամբ սերմանուած են , անապականութեամբ յարութիւն պիտի առնեն . անպատուութեամբ սերմանուած են , փառքի մէջ յարութիւն պիտի առնեն . տկարութեամբ սերմանուած են ,

զօրութեամբ յարութիւն պիտի առնեն : Ընոնք շնչաւոր մարմիններով սերմանուած են , յարութիւն պիտի առնեն հոգւոր մարմիններով : Վրբիստոսի փառաւոր մարմինին նմանած պիտի փոխուին :

Վ . Ըս վարդապետութիւնը կը մխիթարէ մեզ մեր քրիստոնեայ աղքականներուն ու բարեկամներուն մահուանը վրայով : Մեր հօրը կամ մօրը , մեր էրկանը կամ մեր կնկանը , մեր տղուն կամ մեր աղջկանը , մեր եղբօրը կամ մեր քրոջը թաղման ատենը՝ անոնց ետեւէն մինչև գերեզմանը երթալով՝ կրնանք մոմտալ ու ըսել , շիմա ափկայ որ Վրբիստոսի կը հաւատար՝ ուրեմն յաւիտեան երկինքին մէջը պիտի տեսնանք և սիրով պիտի գրկենք զանիկայ նոյն մարմինով՝ աւելի գեղեցիկ ու փառաւոր եղած , որն որ այնքան շատ կը սիրէինք երբօր երկրի վրայ էր . թէպէտ հիմա կը բաժնուինք անկից , բայց նորէն պիտի միաւորուինք . անանկ միաւորութեամբ՝ որ յաւիտեան անբաժանելի է :

Վ . Ըս վարդապետութիւնը կը օրովեցունէ մեզի թէ շարերուն մարմինները յարութիւն պիտի առնեն , միայն ասոր համար որ հոգիով ու մարմինով Վժոխքը ձգուին յաւիտեան : Ընոնց մէկը զմէկ տեսնելը՝ տրամութեան աշխարհին մէջ պիտի ըլլայ ու չէ թէ ուրախութեան : Ընոնք հոգիով ու մարմինով աս երկրիս մէջը մեղքին ծառայեցին , Ըստուծոյ դէմ ապստամբելով : Ուրեմն ասկից ետքը անոնք հոգիով ու մարմինով

իրենց մեղքին ու ապստամբութեան պատիժը պիտի քաշեն, ինտոր ան հարուստը որ առաջ իր կեանքը բազմաձախ հանդէսով կանցունէր ամէն օր՝ ետքը իր պապակեալ լեզուն զովացունելու համար կաթիլ մը ջուր կը լինդրէր :

Եւ Վս վարդապետութիւնը կը սորվեցունէ մեղի որ Հիսուս Վրիստոս մեր Տէրը ամէնուն բաւական Վմենակարող Փրկիչ մըն է : Ի՞նչ սոսկալի, և ի՞նչ սարսափելի կերպով իր հրամանովը ծովը ու ցամաքը իրենց խորունկութիւնովը դողալով՝ իսկոյն իրենց մէջը եղած մեռելները դուրս կուտան : Ի՞նչ հիանալի տեսարան՝ ուր երկիրը անթիւ բազմութիւնով ծածկուած՝ ամէն մարդիկ աչքերնին շիտակ դէպի ան մեծ լուսափայլ Վթոռին կը վերցունեն՝ ուր որ Հիսուս փառաց թաղաւորը մեծ յաղթութիւնով կը նստի : Վնատենը ո՞վ պիտի տարակուսի իր Վստուած ըլլալուն վրայով : Սարդուն վերջին թշնամին որ պիտի խափանի՝ Սահն է, Հողին ու Սարմինը երկուքն ալ Վրիստոս ինքը կը փրկէ : Սենք իր մէջը բովանդակեալ ենք, Ինքը կը յաղթէ մեղքին, մահուան և Գժոխքին, երանի անոնց՝ որ իրենց յոյսը Վնոր վրայ կը դնեն :



Ժ . Ղարաբաղի լրաց :

Սարգ . իե . 31—46 :

Հ . Ղատաստանի համար սահմանուած յատուկ օր կայ մի :

Պ . Հրամարես :

Ինչու որ ինքը (Ըստուած) մէկ օր մը դրաւ , որ ան ատենը աշխարհս արդարութիւնով պիտի դատէ՝ ան մարդուն (Վրիստոսի) ձեռքովը :

Ղարձ . Ժէ . 31 :

Հ . Ո՛վ Վրիստոսի ատեանը պիտի ելլայ :

Պ . «Ղան զի ամէնքնիս ալ Վրիստոսի ատեանին առջևը պիտի կայնինք» : Հոով՛ջ . Ժդ . 10 :

Հ . Ղատաստանի օրուան երբ դալը ո՛վ դիտէ :

Պ . Սիայն Ըստուած դիտէ :

Իայց ան օրուանը և ան ժամին համար՝ մէկը չգիտեր , ոչ երկնից հրեշտակները , և ոչ Որդին , հապա մինակ Հայր : Սարգ . իդ . 36 :

Հ . Ըն օրը դալուն վրայով Սուրբ Ղիրքը ի՞նչպէս կրտէ :

Պ . «Ղողի պէս կուգայ» : Բ Պեդ . դ . 10 : Ղարձ . ա . 11 :

շ . Արբոր աս օրը գայ նէ , աշխարհը որ ի՞նչ գալը պիտի տեսնայ ամպերուն մէջ մեծ զօրութիւնով ու փառքով և Սուրբ շրեշտակները իրեն հետ :

Պ . Տէր Յիսուս Քրիստոսի գալը : Սաղմ . իե . 31 : Սաղմ . ը . 38 : Բ թէս . ա . 7 : Յուր . 14 :

շ . Տէրը ի՞նչպէս պիտի իջնայ Արկինքէն :

Պ . “Ինչու որ ինքը Տէրը հրամանով՝ շրեշտակապետին ձայնովը , ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնայ” : ա թէս . գ . 15 :

շ . Արբոր փողը հնչուի՝ մեռեալները ու կենդանիները ի՞նչ պիտի ըլլան :

Պ . Մեռեալները յարութիւն պիտի առնեն և կենդանիները պիտի փոխուին : Յուր . ե . 27—29 : ա Արքմբ . ժե . 51 , 52 :

շ . Յարութեան օրը ի՞նչ պիտի ըլլայ աս երկրիս :

Պ . “Տարերքները կրակով էրված պիտի հալին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կրդանուին նէ” : Բ Պէտ . գ . 10 : Յայտ . ի . 11 :

շ . Արեւն ըսէ նայիմ , թէ Տէրոջը գա-



լը ի՞նչպէս պիտի ըլլայ :

Պ . “Միայն թէ Տէրօջը օրը գողի պէս կուգայ . որ ան ատենը Արկինքը ահռելի կերպով պիտի անցնի , ու տարերքները կրակով էրված պիտի հալին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին նէ” : Բողեո . գ . 10 :

շ . Բրիստոս ի՞նչ տեսակ Աթոռի վրայ պիտի նստի աշխարհը դատելու համար :

Պ . “Սեծ և լուսափայլ աթոռի մը վրայ” : Յայտ . ի . 11 : Սապի . իե . 31 :

շ . Ո՞վ պիտի ժողովուի իր առջևը :

Պ . “Բոլոր ազգերը” : Սապի . իե . 32 :

Յայտ . ի . 12 :

շ . Ըն ատենը ի՞նչ պիտի բացուի :

Պ . “Վիրքերը” :

շ . Եւ ամէն մարդիկ ի՞նչպէս պիտի դատուին :

Պ . Ըմէն մէկը իր գործքերուն համեմատ :

Շարժ . բ . 16 : ա Արքի . գ . 5 : Բ Արքի . ե . 10 : Յայտ . ի . 12 :

շ . Բրիստոս Արդարները ո՞ր կողմը պիտի նստեցունէ .

Պ . Իր աջ կողմը : Սապի . իե . 32 ,

33 :

շ . Եւ չարերը ո՞ր կողմը պիտի նստեցունէ :

Պ . Չախ կողմը :

շ . Գեներնալ հոն պիտի ըլլա՞ն , և պիտի դատուի՞ն մի :

Պ . Հրամեքես :

Սանդի թէ որ Մատուած յանցանք գործող հրեշտակներուն չինայեց , հապա խաւար կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահել տուաւ , և այլն : Բ ՊԵՊ . Բ . 4 :

շ . Տիտուս ի՞նչ պիտի ըսէ Արդարներուն :

Պ . “Աղէք իմ շօրս օրհնածները , աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած Թագաւորութիւնը ժառանգեցէք” : ՍՊՊԷ . ԻԵ . 34 :

շ . Եւ ի՞նչ պիտի ըսէ չարերուն :

Պ . “Մէկ դի գացէք ինձ մէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը , որ պատրաստուած է Սատանային և իր Հրեշտակներուն” : ՍՊՊԷ . ԻԵ . 41 :

շ . Երբոր դատաստանը լրջնայ , բոլոր աշխարհ ի՞նչ պիտի ընէ :

Պ . Փառք պիտի տայ իմաստուն՝ սուրբ՝

արդար և բարի Մատուցոյն : Յայտ . է .  
9--12 :

Մատուած օր հաստատեց՝ որն որ մէկը չգիտեր ,  
բայց միայն ինքը , որ ան օրը արդարութեամբ  
Յիսուս Քրիստոսի ձեռքով պիտի դատէ աշ-  
խարհը . ինչու որ ինքը բոլոր դատաստանը Ար-  
դիին յանձնեց :

Մ . Ղատաստանին օրը Մատուծոյ սահմա-  
նած օրն է , երբոր ինքը բոլոր տիեզերքին  
առջևը յայտնի պիտի դատէ մարդկային սեռը  
արդարութեամբ , իր փառքին օրհնութեանը հա-  
մար :

Ս իլիոնաւոր մարդիկ արդէն դատուած են՝ Ար-  
կինքը կամ Ղաժոխքը երթալու , դատաստանին  
օրը չեկած . և միլիոնաւոր մարդիկ ալ դատաս-  
տանին օրը պիտի դատուին Արկինքը կամ Ղաժ-  
ոխքը երթալու : Մձեքն ալ հոն պիտի ներ-  
կայանան , և Մատուած պիտի ցուցնէ՝ թէ իր  
դատաստանը ամէն մարդոյ վրայ արդար եղաւ ,  
և արդար է : Ղատաստանին օրը հանդիսաւոր  
օր մը պիտի ըլլայ ( Հով . ք . 5 : ) բոլոր  
աշխարհի հանձարեղ արարածներուն ցուցնելու  
համար որ աս աշխարհիս վերաբերեալ՝ Մատու-  
ծոյ ըրած բոլոր բաները , և իր բոլոր դատաստան-  
ները , իր բոլոր վարձքերը , ու իր պատիժները ,

կատարելապէս արդար ու իրաւունքով են: Ինչքը իր բոլոր ճամբաներուն մէջ փառաւորեալ պիտի յայտնուի իբրև Արարիչ՝ Պահպանիչ՝ Փրկիչ և Ղաատաւոր: Անատենը միաբան պիտի ըսեն բոլոր ներկայ գտնուողները, «Շնորհակալ ենք քեզմէ ո՞վ Տէր Ամենակարող Աստուած որ դուն ես՝ և էիր՝ ու գալու ես, ինչու որ մեծ զօրութիւնը դուն ունիս և դուն թագաւորեցիր» . բարձրացիր ո՞վ Աստուած յաւիտեանս յաւիտենից, Ալէլուիա Տէր Աստուած ամենակալ թագաւորին:

Բ. Ղաատաստանին օրը՝ Վրիստոսի բարձրութեան ու փառքին օրը պիտի ըլլայ. ամէն աչքերը պիտի տեսնան զինքը . ամէն ծունկ իրեն պիտի խոնարհի . և ամէն լեզու զինքը պիտի խոստովանի: Ան օրը մեր Փրկիչը պիտի երևնայ թէ ինքը մեծն Աստուած է անբաւ զօրութիւնով՝ բարութիւնով և ճշմարտութիւնով . իր բարեկամներուն զարմանք, վստահութիւն և փառք պիտի ըլլայ, և իր թշնամիներուն՝ սոսկում, խըռովութիւն և կործանում:

Գ. Ղաատաստանը՝ աշխարհի և անոր մէջը եղած բոլոր բաներուն վախճանը պիտի ըլլայ: Աւրեմն ինչո՞ւ սիրենք աշխարհքը և անոր ամէն բաները, քանզի շուտով պիտի մեռնինք . և մեր բոլոր սիրած բաները ետենիս պիտի ձգենք, որ անոնք վերջապէս պիտի էրին: Աշխարհիս ամէն բանը ունայնութիւն է . ուրեմն եկէ՛ք պատրաստուինք ան խիտ լուսապայծառ և յաւիտենական աշխարհին համար, ուր որ Վրիստոս գնաց և

ձւր որ զինքը սիրողներուն ամէնքն ալ երջանիկ պիտի ըլլան յաւիտեան :

Գ . Գառաստանին օրը՝ վերջին վարձատրութեան օրը պիտի ըլլայ ամէն մարդուն իր գործքերուն համեմատ : Բոլոր սիրտերուն գաղտնիքները , բոլոր անձանց գործքերը պիտի յայտնուին : Աստուած մէկու մը աչառութիւն պիտի չքնէ , հապա ամէն մէկը իր արդար վարձքը պիտի ընդունէ իր ըրածին պէս՝ թէ բարի ըլլայ՝ և թէ չար :

Ե . Յոյսէն զրկուելու և բաժնուելու , ողբի ու վայերու սոսկալի օր մը պիտի ըլլայ դատաստանին օրը : Անոնք որ իրենց յոյսը միայն Վրիստոսի վրայ դրած չեն նէ , պիտի ողբան ան օրը : Կեղծաւորները պիտի ըսեն , “Տէր Տէր” . բայց Ինքը պիտի պատասխանէ թէ՛ “ես բնաւ ձեզ չէի ճանչնար . մէկ զի գացէք քովէս ամէնքդ՝ որ անօրէնութիւն կը գործէիք” : Ատքը ան օրը Վահանայները ու Դողովուրդը , Արժապետները ու Աշակերտները , Լըրիկները ու Կնիկները , Օնողքները ու Տղաքները , Լղբայրները ու Վոյբերը , Բարեկամները ու Օանօթները պիտի բաժնուին՝ ու մէյմըն ալ իրարու պիտի չհանդիպին :

Երբօր չարերը Աստուծմէ և Վրիստոսէն բաժնուին , ու Սատանային և իր հրեշտակներուն հետ դուրս յաւիտենական թշուառութեան և յուսահատութեան մէջ ձգուին , հոն պիտի ըլլայ լալ ու ակռայ կը ճոցունել :

Օ . Ըմէն մէկին պարտքն է տպաշխարութիւնով ու Տէր Հիսուս Քրիստոսի հաւատալով , բարի ընթացքով , պարկեշտութիւնով , զգաստութիւնով և աղօթքով՝ դատաստանի համար պատրաստ ըլլալ . “Որ անբիծ և անարատ գրանուիք (կրսէ) անոր առջին խաղաղութիւնով” : ԲՊԷԹ . Դ . 11—14 : Ո՛վ կարդացող այսպէս պատրաստ ես Ըստուծոյ դէմը ելլալու :

Տա . Երկնի շէնք :

Հայր . իա , իբ :

Ն . Ղատաստանը լումննալէն ետքը՝ Երգարները ո՞ւր կերթան :

Պ . Երկինքը :

Ն . Ի՞նչպէս տեղ մըն է Երկինքը :

Պ . Ըմենափառաւոր ու երջանիկ տեղ մը :

Սաղ . ԺԳ . 11 : Սաղ . իե . 21 :

Հայր . 24 : Հայր . իա , իբ :

Ն . Ո՞վ կրնակի Երկինքին մէջը :

Պ . Ըստուած ու բարի շրջտակները :

Ն . Նոն մենք դէմ առ դէմ զԸստուած պիտի տեսնենք մի :

Պ . Նրամերես :

Երանի անոնց՝ որ սրտովին սուրբ են, ինչու որ անոնք պիտի տեսնեն զՄատուած : Ստուգ. ե . 8 : Գիտենք որ երբ անիկայ յայտնուի նէ՝ անոր պէս պիտի ըլլանք . վասնզի զանիկայ պիտի տեսնանք՝ ինչպէս որ է նէ : ա Յօ . գ . 2 :

Ն . Երկինքին մէջը մեր ժամանակը ի՞նչ պէս պիտի անցունենք :

Պ . Մատուած օրհնելով և իր կամքը կատարելով :

Եւ ասկէ ետքը տեսայ՝ և ահա շատ ժողովուրդներ որոնց համբանքը չկար, բոլոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն և բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդներէն, որոնք աթոռին առջև ու դառնուկին առջև կեցեր էին՝ վրանին ճերմակ լաթեր ձգած, և ձեռքերնին արմաւենիներ, մեծ ձայնով կրկանչէին՝ ու կըսէին, Քրիստոթիւնը մեր Մատուծոյ՝ որ աթոռին վրայ կընստի, և ան դառնուկին : Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն և չորս կենդանիներուն բոլորաիքը կեցեր էին, և երեսնուն վրայ աթոռին առջև կիյնային՝ ու Մատուծոյ երկրպագութիւն կընէին, ըսելով, Մէն, օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն՝ և պատիւ ու զօրութիւն և շնորհակալութիւն մեր Տէր Մատուծոյն՝ յաւիտեանս յաւիտեանից . Մէն : Յօ . է . 9—12 : Ժե . 3 : Իբ . 3 :

Ն . Յիսուս մեր փրկիչը պիտի տեսնենք Երկինքը :

Պ . Հրամարեա , պիտի տեսնենք զանկայ , և դոհութիւն պիտի տանք անոր , և պիտի օրհնենք զինքը բոլոր Իր սիրոյն և փրկութեանը համար : Յօ . Ժէ . 4 : Կող . Դ . 3 , 4 : Յայտ . Դ . 4 , 5 : Ե . 9—14 :

Հ . Ի՞նչ պիտի դրուի մեր դիտուն վրայ :  
 Պ . Կենաց պսակը :

Երանելի է ան մարդը որ փորձութիւններու կը համարէ . ինչու որ եթէ անով փորձուած ընտիր գանուի՝ կենաց թագը պիտի առնէ , որ անկայ Տէրը իր սիրելիներուն խոստացաւ : Յօ . Կ . 12 : Որ Հովուապետին երեցած ատենը անթառամ փառքին պսակը ընդունիք : ա Պէտ . Ե . 4 : Բ Տէ . Դ . 8 : Յայտ . Բ . 10 : Դ . 4—11 :

Հ . Ի՞նչպէս պիտի զգեստաւորուինք :

Պ . Երդարութեան սպիտակ պատմութեանով : Յայտ . Է . 2—14 : ԺԹ . 8 :

Հ . Ուրեմն ի՞նչպէս փառաւորեալ պիտի ըլլանք , և մեր Հօրը թաղաւորութեանը մէջ լուսաւորուինք :

Պ . “ Երեգակին պէս ” : Ապր . ԺԴ . 43 : ա Կորնթ . ԺԵ . 49 :

Հ . Երկինքին մէջ արդարները մէյմըն ալ նեղութիւն պիտի քաշե՞ն :

Պ . Չէ . “ Ոչ կանօթեանն՝ ու ոչ կը ծա-



բուին . և մէկը չմնասեր անոնց . ոչ արևը՝  
 ոչ ալ տաքը : Եւ ան աթոռին մէջը եղած  
 գառնուկը անոնք կը հոսուէ , ու անոնց կեն-  
 դանի ջուրին կենացը աղբիւրը կառաջնորդէ .  
 որովհետեւ Մատուած բոլոր արցունքները ա-  
 նոնց երեսէն սրբեց” : Յայտ . է . 16 , 17 :

շ . Ի՞նչ կըսէ Սուրբ Գիրքը իրենց ար-  
 ցունքներուն վրայով :

Պ . “ Եւ Մատուած պիտի սրբէ անոնց  
 աչքերէն բոլոր արցունքները , և մահ ալ  
 չկայ , ոչ սուգ՝ և ոչ աղաղակ , ոչ ցաւեր և  
 ոչ աշխատանք՝ ալ մէյմըն ալ չկայ . ինչու-  
 որ ան առջինը անցաւ” : Յայտ . իա . 4 :

շ . Երգարները գիտուած իւնով , և սրբ-  
 բութ իւնով ու երջանկութիւնով պիտի ա-  
 ճի՞ն յաւիտեանս յաւիտենից :

Պ . Հրամարես , քանզի Երկինքը իրենց  
 յաւիտենական բնակարանը պիտի ըլլայ և  
 միշտ պիտի աճին ամէն բարիքներով : Մատ .  
 իե . 46 : Յօհ . ժդ . 2 , 3 :

շ . Ի՞նչպէս ուրիշ տեղերէն աւելի՞ ո՞ր  
 տեղը երթալու պարտինք փափաքիլ ու ջա-  
 նալ :

Պ . Երկինքը : Մատ . զ . 33 :

շ . Ո՞վ ստացաւ Երկինքը մեզի համար ,

և պիտի ցուցնէ մեզի հոն երթալու ճամբան :

Պ . Տէր Հիսուսը :

Ուստի եղբայրներ՝ համարձակութիւն ունինք սուրբ տեղը մտնալու Հիսուսի արիւնովը, ան նոր ու կենդանի ճամբովը՝ որ նոր բացաւ մեզի վարագուրին ձեռքովը՝ այսինքն իր մարմնովը : Եբր . Ժ . 19 , 20 : Հօ . Ժդ . 1—6 : Ժ . 27 , 30 : Ժէ . 2 :

Հ . Ո՞ր մարդիկները յաւիտեան Աստուծոյ թագաւորութիւնը չպիտի ժառանգեն :

Պ “ Ո՛չ պոռնիկները՝ ո՛չ կռապաշաները՝ ո՛չ շնացողները , ո՛չ իգացեալները՝ ո՛չ արուսագէտները՝ ո՛չ դողերը՝ ո՛չ ազահները՝ ո՛չ դիւնովները՝ ո՛չ բամբաստողները՝ ու ո՛չ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը չեն ժառանգեր : ա Աբրն . զ . 9 :

Ղատաստանէն ետքը՝ Արդարները Լըրկինքը կըմտնան :

Ը . Ըն թագաւորութիւնը՝ որն որ Աստուած աշխարհիս սկիզբէն պատրաստեց անոնց համար , Լըրկինքն է , որ հոն հաստատեց իր Աթոռը : Ըն է ատ մեծ ու գեղեցիկ Վաղաքը , որ Լըրուսա-

դէմը , որուն շինողը և ստեղծողը Մատուած է , և որ յաւիտենական հիմեր ունի : Զոն՝ Որդւոյն Մատուածոյ Զօրը տանը մէջը հանգստութեան շատ բնակարաններ կան , որոնք որ հիսուս ինքը պատրաստեց անոնց համար՝ որ զինքը կը սիրեն : “Ըն Քաղաքը Ըրեի կարօտութիւն չունի , ոչ ալ Լուսինի՝ որ լուսաւորէ անիկայ . քանզի Մատուածոյ փառքը կը լուսաւորէ զանի . և անոր լոյսը Վառն է” : Մատուածոյ խիստ փափկութեան դրախտը Երկինքն է , ուր որ ինքը կը բնակի և իր փառքը կը յայտնէ , և կը հաղորդակցի դէմ առ դէմ՝ օրհնեալ բնակիչներուն հետ . իր “Երեսին առջին լեցուն ուրախութիւն կայ . զիր աջ կողմը միշտ հաճութիւններ կան” : Ընք չտեսաւ , ականջ չլսեց , ոչ ալ մարդու սիրտ ինկաւ աս տեղին յաւիտենական փառքերը :

Բ . Մատուածոյ ժողովուրդին համար մնայուն հանգստութիւն մը կայ Երկինքին մէջը : Պէտք չէ որ աշխարհը սիրենք : Պէտք չէ որ միշտ հոս բնակելու փափագինք . ինչու որ ասանկ շատ աշխարհք կարժէ Երկինքը : Զոն դիզենք մեր գանձերը . հոն հաստատենք մեր յօժարութիւնները ւ :

---

ւ . Սի սիրէք աշխարհս , ոչ ալ ան որ աշխարհիս մէջ է : Թէ որ մէկը աշխարհը սիրէ , անոր մէջը Զօրը սէրը չկայ . ինչու որ ան ամէն բաները որ աշխարհի մէջ է՝ մարմնոյ ցանկութիւն է , ու աչքի ցանկութիւն է : ւ հօհ . բ . 15 , 16 :

Սեր աչքերը աս աշխարհիս վրայ հաստատել-  
նուս համար, Երկիրը կը կորսընցունենք : Պէտք  
չէ որ մեր ճամբուն վրայէն մինչև հոն մեր քաշած  
նախատինքը, հալածանքը և տառապանքը մեծ  
բան մը սեպենք : « Ինչու որ աս ժամանակիս  
չարչարանքները արժանի չեն բողբոստուելու՝  
գալու փառքերուն հետ, որ մեզի պիտի յայտ-  
նուին » : Հով . 17, 18 : Սա . 10—12 : Բ . 16—18 : Եբ . 24—27 :

Պէտք չէ որ տրտմինք աս աշխարհիս մէջ աշ-  
խատութիւն, յուսահատութիւն, նեղութիւն,  
լաց ու մահ ունենալնուս համար . ինչու որ բոլոր  
աշխատութիւնները պիտի դադարին ան լուսա-  
պայծառ աշխարհքին մէջ՝ ուր որ մենք կեր-  
թանք . մահը չկրնար մանալ հոն . տրամութիւ-  
նը և հառաչանքը հեռու պիտի մնան անկից, և  
յաւիտենական օւրախութիւնը պիտի ըլլայ մեր  
բաժինը : Հով . 14—17 : Իա . 3, 4 :  
Հոգ չէ թէ որ քիչ մը ատեն կը հառաչենք կերպ  
կերպ փորձութիւններով . ինչու որ մենք պիտի  
պտըտինք պայծառութեան մէջ Լստուծոյ Պա-  
ռին հետ, և սուրբ պիտի ըլլանք ինչպէս որ Ինքը  
սուրբ է . և անոնք միայն պիտի մտնան քաղա-

---

Հապա ձեզի համար գանձ երկիրքը զիլեցէք,  
ուր որ ոչ ցեցը և ոչ ժանկը կապականէ, ու ոչ  
դողերը գետնին տակէն կը ծակեն և կը գողնան :  
Սա . 7 . 20 :

քին գոնեքէն՝ որոնք որ իր պատուիրանքները կը կատարեն : Ուրեմն աշխատինք հանգստութեան մէջ մտնալու . մեր բոլոր ցաւերուն և նեղութիւններուն արժէքը Արկինքն է : Արկինքին յոյսը մեր ուրախութիւնը և մխիթարութիւնն է ասկէց ետև . հոն պիտի զարգանանք մենք յաւիտենական սրբութեան ու երջանկութեան մէջ :

Գ . Յիսուս Վրիստոս ստացաւ Արկինքը մեզի համար . մենք Արկինքը կը մտնանք իր արժանաւորութեանը պատճառաւ , Որուն ըլլայ բոլոր փառքերը : Յոյր . 4 . 5 , 12 , 21 : Ե . 9—14 : Իա . 27 :

Դ . Թէ որ պատրաստ ենք Արկինքին համար , պէտք է որ մեռնելէն վախնանք . եւ երբոր արդարները մեռնին՝ թէ ծեր ըլլան անոնք՝ թէ պատանի , մենք պէտք է որ լանք այնպէս՝ իբր թէ մահը մնաս մը եղաւ անոնց , վասն զի մահը՝ իրենց մէկ մեծ ստացուած մըն է : Ո՛չ ալ անոնց վրայ տրամեղով ըսենք , երանի՜ թէ չմեռնէին . անոնք մեծապէս երջանիկ են , ինչու որ Վրիստոսի հետ Արկինքին մէջն են :

Ե . Արկինքը սուրբ տեղ մըն է , և Մատուծոյ բնակարանը . անոր համար մէկը չկրնար վայելել Արկինքը բաց 'ի անոնցմէ՝ որոնք որ սուրբ են՝ ու Մատուծով կուրախանան » : Չարերը

---

» . Խաղաղութեան ետևէ եղէք ամենուն հետը՝ և սրբութեան . որ առանց ասոր մէկը չկրնար տեսնալ Տէրը : Աբր . Ժբ . 14 :

յաւիտեան դուրս ձգուած են : Սուրբ . Ե . 4 ,  
5 : [Ժող առէն մէկը քննէ ինքզինքը թէ արդեօք  
Երկինքին համար պատրաստ է , թէ չէ ։

Ժբ . Գժոխքին շարք :

Ղ Գ . Ժգ . 19 — 31 :

Ն . Չարերը ո՞ւր պիտի ձգուին :

Պ . Գժոխքը :

Սեղաւորները Գժոխքը պիտի դառնան և ա-  
մէն ազգերը՝ որ զՄատուած կըմտնան : Սուրբ .  
Թ . 17 : Յոյս . Իա . 8 :

Ն . Ինչպէս տեղ մըն է Գժոխքը :

Պ . Եհագին տանջանքներու տեղ մըն է :

Սուրբ . Թ . 43 — 48 : Սարգիս . Ժգ . 40  
— 42 :

Ն . Ինչո՞վ պիտի վառի :

Պ . Տաւիտենական կրակով : Սարգիս .

---

ա . Փորձեցէք ձեր անձը՝ թէ ան հաւատքին  
մէջն էք մի . քննեցէք անձերնիդ . շէք մի դի-  
տեր ինքզինքնիդ , որ Վրիստոս Յիսուս ձեր մէջն  
է . միայն թէ անպիտան որ չըլլաք : Ե Սուրբ .  
Ժգ . 5 :

Իե . 41 : Սարգի . Թ . 43—48 : Ղ Կ—Է .  
Դ . 17 : Յ Գ—Դ . 7 :

ձ . Չարերէն զատ որո՞նք Ղ Ժոխքը պիտի ձգուին :

Պ . Սատանան և իր հրեշտակները :

Մէկ դի գացէք ինձմէ անիծեալներ՝ յաւիտեանական կրակին մէջը , որ պատրաստուած է Սատանային՝ և իր հրեշտակներուն : Սարգի . Իե . 41 : Վասն զի Թէ որ Մտտուած յանցանք գործող հրեշտակներուն չինայեց , հապա խաւար կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահել տուաւ , և այլն : Բ ՊԵԳ . Բ . 4 :

ձ . Ղ Ժոխքին տանջանքները ի՞նչ ընել պիտի տայ չարերուն :

Պ . Վալ ու հեծել և իրենց ակռայները կճրուցունել : Սարգի . Ը . 12 : ԺԴ . 40—42 : ԻԲ . 13 :

ձ . Ի՞նչ խնդրեց մեծատունը երբոր տանջանքներուն բոցովը կըտանջուէր :

Պ . Իր լեզուն զովացունելու համար կաթիլ մը ջուր : Ղ Կ—Է . ԺԳ . 24 :

ձ . Չարերը Ղ Ժոխքին մէջը օգնութիւն կամ մխիթարութիւն պիտի ունենան :

Պ . Չէ :

Վա անոնք պիտի երթան յաւիտեանական տանջանքին , ու արդարները՝ յաւիտեանական կեանքին : Սարգի . Իե . 46 : Սարգի . Թ . 43—48 :

Հ : Ինչպէս անոնք Վժռիքէն դուրս պիտի ելլան մի :

Պ . Եւմենեին չպիտի ելլան , հասցա Եստուծոյ բարկութիւնը անոնց վրայ պիտի մնայ : Յօհ . դ . 36 :

Հ . Սէկը կրնայ Նրկինքէն Վժռիքը երթալ կամ Վժռիքէն Նրկինքը :

Պ . Չէ , քանզի Նրկինքին ու Վժռիքին մէջ տեղը մեծ անդունդ մը հաստատուած կայ : Ղ . 26 :

Ի . Վժռիքին մէջը չարերուն քաշած պատիժը ի՞նչ կրկոչուի :

Պ . Յաւիտենական պատիժ :

Հ . Ես պատիժը զո՞ջալ ու ապաշխարել կուտայ անոնց :

Պ . Չէ :

Ե՛ն որ ամբարշտութիւն կրնէ՝ թող ամբարիշտ ըլլայ , ու ան որ աղտոտ է՝ թող աղտոտ մնայ : Յօհ . իբ . 11 :

Հ . Պօղոս Եռաքեալ ի՞նչ կրսէ ասոր վրայով :

Պ . “ Խիստ վախնալու բան է կենդանի Եստուծոյ ձեռքը իյնալը ” : Լեբ . ժ . 31 :

Հ . Եստուած չարերուն ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . “ Մաշող կրակ ” : Լեբ . ժբ . 29 :



Հ . Ըմէն ուրիշ բաներէն աւելի՛ ո՞ւր-  
կից վախնալու ենք՝ և փախչելու ջանալու  
ենք :

Պ . Գժոխքէն : Մատթ . Ժ . 28 :

Հ . Եստուած կուզէ՞ մի որ մեզմէ մէկը  
թշուառաբար կորսուի յաւիտեան՝ Գժոխքին  
մէջը :

Պ . Զէ :

Ես կենդանի եմ կըսէ Տէր Եստուած , ու  
չեմ ուզեր չարին մահը , հապա չարին դառնա-  
լունն ու ապրելունն կըհաճիմ : Եւջէ . Լգ . 11 :  
Տէրը չուշացուններ իր խոստմունքը . ինտոր ու-  
մանք ուշ կըսեպեն , հապա ձեզի երկայնամիտ  
կըլլայ . ինչու որ չուզեր որ մէկը կորսուի , հապա  
որ ամէնը ապաշխարանքի դան : Բ Պետ . Գ . 9 :

Հ . Ենանկէ նէ ինչո՞ւ հոն կըխրկուին  
չատերը :

Պ . Վանդի կըմեղանչեն իրեն դէմ և  
կարհամարհեն Տէր Յիսուսը : Մատթ . ԺԳ .  
16 : Հատկ . Բ . 4—10 : Բ Թեո . ա .  
6—9 :



Գատաստանէն ետքը չարերը Գժոխքը պիտի  
երթան :

Ե . Գժոխքը՝ Երկինքին խիստ հակառակ

տեղ մըն է . անոր ու Լորկինքին մէջ տեղը մեծ անդունդ մը կայ հաստատուած , որուն վրայէն մէկը շիրնար անցնիլ : Գժոխքը Լնդնդային Փոսն է , ուր մ'թուլիւնը և խաւարը ու սոսկումը կը թագաւորէ : Կրակի ու ծծումբի լիճ մըն է յաւիտեան վառած . հոն ձգուած են ամէն կերպ չարերը , և հոն յաւիտենական անարգանքով ծածկուած կըմաշին . հոն բարկութեան տակ ինկած պիտի կորսուին և պիտի անիծուին Լստուծմէ և պիտի լան ու հեծեն և կըճոցունեն իրենց ակռայները տանջանքով յաւիտեանս յաւիտենից՝ րնաւ մխիթարութիւն մը չգտնալով :

Բ . Լստուած իր անհուն արդարութիւնովը պատրաստեց ան տեղը , մինչև վերջը անզեղջ մնացողներուն համար , թէ ծեր ըլլան անոնք՝ թէ պատանի : Ինչպէս որ ինքը արդարները կը վարձատրէ , անանկ ալ չարերը կըպատժէ : Մէկին վարձքը և մէկալին պատիժը՝ երկուքն ալ յաւիտենական պիտի ըլլան : Մարդոց լեզուն չիրնար պատմել յաւիտենական կորուստին վայերը և տաղնապները . Լստուած հուր ծախիչ է իր թշնամիներուն :

Գ . Լս սոսկալի տանջանքներուն տեղը կը ցուցնէ Լստուծոյ մեղքին դէմ բարկանալը , և մեղքը Լստուծմէ ինչ պատիժի արժանաւոր ըլլալը : Մեղքը Լստուծոյ անհուն կարողութեանը և մեծութեանը դէմ յանցանք մըն է : Ինքը կատէ մեղքը . Մղքը խաղալիք չէ : Լնիկայ՝ որ կըբարկացունէ զԼստուած՝ մեծապէս անարգ ու

անպիտան է : Մեղաւորները թէև հիմա թե-  
թեու թեամբ մեղք կը գործեն , բայց աս պատ-  
ճառով ետքը պիտի վառին Վիճին մէջը և պիտի  
լան ու հեծնն յաւիտեան , թէ որ շապաշխարեն :

Դ . Թէ որ Վժոխքը պիտի ըլլայ վայերուն  
տեղը և չարերուն բաժինը , ուրեմն ձեր մեղքին  
մէջը մնալով ու այնպէս մեռնելով՝ մեծ անիրա-  
ւութիւն ու մեծ չարութիւն կընէք ձեր անձին .  
ինչու որ ձեր հոգին կը կորսուի և կորուստն ալ  
յաւիտենական է :

Ե . Ուրեմն ի՞նչ յիմարութիւն ու անխել-  
քութիւն կայ Մեղքին մէջը : Ինչո՞ւ մեղքի մէջ  
չարունակենք , որ բարի անունը կապականէ և  
հոգին կը կորսնցունէ , և վերջապէս անոր թողա-  
կը մահն է : Ի՞նչպէս վաղանցիկ է անոր հեշ-  
տութիւնները և ի՞նչպէս անանց է անոր վիշ-  
տերը : Մարտ . Ժբ . 8 :

Զ . Ըստուած ողորմածութեամբ զգուշացուց  
չարերը իրենց սոսկալի վախճանէն : Ինքը չու-  
զեր որ անոնք կորսուին , հապա որ ապաշխարեն  
և իր Որդիին հաւատան ու ապրին : Ընոր հա-  
մար ինքը շատ երկայնամիտ կը ըլլայ անոնց : Ուս-  
տի թող չարերը դառնան իրենց չար ճամբայէն  
ու ապրին : Թէ որ անոնք կորսուին , յանցանքը  
Պայն իրենցն է :

Է . Որովհետև չարերը ասանկ յաւիտենա-  
կան կործանման վտանգին մէջն են , բոլոր Վա-  
հանայներուն , Արժապետներուն և Նորդք-

ներուն կկնայ իրենց յողովուրդը , Եւակերտը  
և Տղաքները ստիպել , և անոնք թախանձել , որ  
փնտրուն Տէրը քանի որ կրնան գտնալ զանի-  
կայ : Պէտք է որ աս վախճանին համար իրենց  
բոլոր զօրութիւնովը աշխատին , և աղօթեն  
Սուրբ Հոգիին որ յաջողէ իրենց աշխատանքը :

Ը . Պէտք է որ միշտ գթութեամբ յիշենք աս  
աշխարհի մէջ մեր միլիոնաւոր ընկերները , որոնք  
փրկութեան ճամբուն վրայով տեղեկութիւն չու-  
նին , ու անհոգ ըլլալով ատ բանին վրայ՝ կը-  
մենին ամէն օր ու Գժոխքը կիջնան : Խորկենք  
անոնց սուրբ Եւետարանը , և աղօթենք Տէրօջք  
որ իր հաւատարիմ պաշտօնեայները խրկէ աս  
Եւետարանը անոնց քարոզելու , որ փրկուին :



ՄԵԱՆ Դ . ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ՎՐԱՅ :

ա . ()րէնք որոնք լինոյ :

Եւէն . ԺԹ և ի Ղլուխ :

ձ . Եստուած ինչ յատուկ ()րէնքներ  
կամ Պատուիրանքներ տուաւ՝ մեր պարտա-  
ւորութիւնը մեզի սորվեցունելու համար :

Պ . Տասը Պատուիրանքները :

Ու աս տախտակներուն վրայ՝ առջի գրուածքին  
պէս՝ ան տասը խօսքը գրեց , որն որ Տէրը ձեզի

լեռան վրայ կրակին մէջէն զրուցեց ժողովքին օրը : Բ ( ) շէն . Ժ . 4 :

շ . Մ՛վ էր ան երևելի ու բարի մարդը որ ընդունեց աս Տասը Պատուիրանքները Եստուածոյ ձեռքէն :

Պ . Մովսէս :

շ . Եստուած ի՞նչ բանի վրայ գրեց զանոնք :

Պ . “ Երկու Վարեղէն Տախտակի վրայ ” : Եւջ . Լա . 18 :

շ . Ըն Տախտակները ինչի՞ մէջ պահել պատուիրեց Եստուած Մովսէսին :

Պ . Տապանի կամ Ստուկի մէջ : Եւջ . Իե . 10—22 :

շ . Տէրը ո՞ր ժողովուրդին տուաւ աս Պատուիրանքները , որ իրենց ու մեզի՞ և ամէն մարդոց համար պահուին :

Պ . Հրէայներուն :

շ . Երբոր Եստուած՝ աս Պատուիրանքները գրեց ու Մովսէսին տուաւ , Ինքը Լեռան վրայ որ իջաւ , ի՞նչ էր ան Լեռանը անունը :

Պ . Սինայ : Եւջ . ԺԺ . 9—20 :

շ . Հրէից ժողովուրդը ո՞ր կայնեցան :

Պ . Լեռանը տակը : Եւջ . ԺԺ . 17 :

Հ . Երբոր Տէրը Սինայ լեռանը գագաթը իջաւ՝ ի՞նչ եղաւ :

Պ . “Որտառմն և փայլակն՝ խիստ բարձրագոյն փողին ձայնը՝ ու թանձր ամպերը կային լեռանը վրայ . և լեռը կրվառէր , և մուխը բարձրացաւ ու լեռը շարժեցաւ ” :

Եւն . ԺԺ . 18 : Ի . 18 :

Հ . Երբոր Մովսէս տեսաւ առ սոսկալի տեսարանը՝ ի՞նչ ըսաւ :

Պ . Ըսաւ թէ՛ “Սաստիկ կրվախնամ ու կրդողամ” : Եւն . ԺԲ . 21 :

Հ . Եւ ժողովուրդը ո՞ւր գնաց :

Պ . Ընտնք հեռու տեղ մը գացին կայնեցան :

Հ . Մովսէս դէպի թանձր խաւարին մէջը գնաց մի , ուր որ Ըստուած էր :

Պ . Հրամարես : Եւն . Ի . 21 :

Հ . Որչափ ատեն լեռը սարսեց որ Տէրոջմէն Տասը Պատուիրանքները և ուրիշ պատուէրներ ընդունի :

Պ . “Քառսուն օր և քառսուն գիշեր” : Եւն . Իդ . 18 :

Հ . Ըսչափ ատենին մէջ բնաւ բան մը կերաւ կամ խմեց մի :

Պ . Չէ : Բ (Օրին . Ժ . 9 :

Հ . Ո՞վ ողջ առողջ պահեց անիկայ :

Պ . Լստուած :

Գրուած է որ , չէ թէ հացով միայն մարդ կապրի . հապա՛ ան բոլոր խօսքերովը որ Լստուածոյ բերնէն կելլայ : Բ ( ) Եֆ . Ը . 3 : Ս . Գ . 7 . 4 :

Հ . Երբոր անիկայ լեռնէն վար իջաւ , ի՞նչպէս էր իր երեսը :

Պ . Կըլուսափայլէր : Եֆ . Ը . 29 — 35 :

Հ . Սովսէս ի՞նչ կրճդէր իր երեսին վրայ ան լոյսին պատճառովը :

Պ . Օ՛ածկոց մը : Բ Կորնթ . Գ . 13 :

Հ . Վանի՞ տարի առաջ աս Պատուիրանքները Սովսէսին տրուեցան :

Պ . Փրկչին թուականէն հազար հինգ հարիւր տարիի չափ առաջ :

Լստուած իր ողորմութիւնովը չթողուց մեզ որ ինքնիրեննիս քննելով սորվինք մեր պարտաւորութիւնը . քանզի մարդս իր տգիտութեանը և մեղքին մէջը՝ չկրնար և չուզի ընել աս բանը : Ուստի Լստուած մեզի յայտնեց իր կամքը՝ տալով մեզի Տասը Պատուիրանքը որ շատ կարճ են ,

անանկ որ՝ մենք կարենանք զիւրութեալք միտքերնիս բերել անոնք . և բոլորովին կատարեալ են . որ եթէ մենք զգուշութեամբ հետեինք և ուղղութեամբ հասկընանք անոնք՝ պիտի գիտնանք մեր բոլոր պարտաւորութիւնները թէ Մատուծոյ և թէ մարդոց վերաբերեալ :

Ը . Բոլոր աշխարհի Ստեղծիչը և Տէրը՝ Մատուած է : Ինքը գերագոյն իշխանութիւն ունի իր բոլոր իմաստուն արարածներուն վրայ : Ինքն է օրէնսդիրը , և մենք պարտաւոր ենք միշտ զինքը սիրելու և իրեն հնազանդելու :

Բ . Իր Պատուիրանքները տուաւ ան երեւելի ու ահագին կերպովը , որ ամէնքն ալ վախնան ու միտք դնեն և հնազանդին անոնց :

Գ . Թէ որ ()րէնքը տալու համար՝ իր վար իջնալուն միայն տեսնելը և լսելը այսչափ ահագին էր և առանկ վախով լեցուց ժողովուրդը , ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ մեզի թէ որ ատ ()րէնքը չպահենք , ու Մատուած իջնայ մեզ պատժելու :

Դ . Սարգոյս պարտաւորութեան միայն կատարեալ կանոնը՝ Մատուծոյ օրէնքն է : Արկրի վրայ եղած ամէն մարդ և ամէն ազգ՝ Մատուծոյ ()րէնքին կրկարօտին , որ գիտնան թէ ո՞րն է շիտակ և ո՞րն է սխալ : Իր ()րէնքը Սուրբ է՝ արդար ու ճշմարիտ . բռնենք անիկայ մեր պարտաւորութեան կանոնին պէս և աղօթենք շնորհք ընդունելու համար , որով կարենանք սիրել ու հնազանդիլ անոր : Աշխարհիս վրայ ամենէն և



ընկել ու փառաւոր մարդը անիկայ է, որ աւելի  
կըմտանայ կատարելապէս ()ըէնքին հնազանդե-  
լու սրտով և վարքով :



Բ . Տ՝ը Պատուիրանքն էրոյ :

Առաջին պատուիրանքը :

7 թուի . Ժը . 1—10 :

Հ . Ո՞րն է Առաջին Պատուիրանքը :

Պ . “Իմ առջևս սրիշ աստուածներ չպիտի  
ունենաս” :

Հ . Վրանի՞ Մատուածներ կան :

Պ . Աննդանի ու ճշմարիտ միայն մէկ Աս-  
տուած մը կայ :

Հ . Ի՞նչ ըսել կուզէ մեր Տէր Աստուա-  
ծը, երբոր կըսէ մեզի, որ “Իմ առջևս ու-  
րիշ Աստուածներ չպիտի ունենաս” :

Պ . Ըսել կուզէ որ մեզի Աստուած՝ զին-  
քը ու միայն զինքը պիտի ընդունինք :

Հ . Օ՞րինքը ի՞նչպէս սիրել կըպահանջէ  
մեզմէ :

Պ . “Պիտի սիրես քու Տէր Աստուածդ  
քու բոլոր սրտովդ ու քու բոլոր հոգիովդ՝ և

քու բոլոր զօրութիւնովդ” : Բ ( ) Ը՛՛՛ . Ղ . 4 , 5 : Սաղմ . իբ . 35—38 :

շ . Ի՞նչ կրսէ ասոր վրայով Սուրբ Գիրքը :

Պ . “ Ի՞նչ Տէր Աստուծոյդ երկիրսպազութիւն ընես , ու միայն Անիկայ պաշտես ” :

Բ ( ) Ը՛՛՛ . Ղ . 13 : Սաղմ . զ . 10 :

շ . Որի՞ն յուսալու ենք :

Պ . “ Տէրոջը ապաւինէ քու բոլոր սրբտովդ ” : Ասկ . զ . 5 , 6 : Սաղմ . լա . 19 :

շ . Գիցուք թէ մենք Աստուծմէ աւելի ինքզինքնիս սիրենք ու ինքզինքնուս ապաւինինք , կամ ուրիշ մարդու մը , կամ հարրատութեան , կամ մարմնական բերկրութեան , կամ ինչ և իցէ բանի մը . աս պատուիրանքը չե՞նք մի անարդեր :

Պ . Հրամարես :

Ալ է Տէրոջը յուսալ՝ քան թէ մարդոց ապաւինիլ : Ալ է Տէրոջը յուսալ՝ քան թէ իշխաններուն ապաւինիլ : Սաղմ . ճԺբ . 8 , 9 : Աս աշխարհիս մէջ եղած հարուստներուն պատուէր տուր՝ որ չհպարտանան , և փուճ մեծութեան վրայ յոյսերնին չդնեն . հապա Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի առատօրէն կուտայ վայելելու : ա ՏԷ՛ . զ . 13 : Տէրը այսպէս կրսէ . Անիծեալ ըլլայ անիկայ որ մարդու կապաւինի ,

և միտք իրեն թե՛ թիկունք կընէ, ու իր սիրտը  
 Մատուծմէ կը հեռանայ : Երեմ . Ժ . 5 :

Ն . Ի՞նչ կրտէ Քրիստոս, Մատուծոյ աւ  
 մամոնայի ծառայութիւնն ընելու վրայով :

Պ . “ Սարդ մը չկրնար երկու տէրոջ ծա-  
 ռայութիւնն ընել . ինչու որ կամ՝ մէկը պիտի  
 ատէ, և մէկալը պիտի սիրէ . կամ՝ մէկը պի-  
 տի պատուէ, և մէկալը անարգէ . չէ՞ք կրնար  
 ծառայել Մատուծոյ ու մամոնայի” : Մատթ .  
 Դ . 24 : Ժ . 37—39 :

Ն . Ի՞նչ կերպով ծառայութիւնն ընելու  
 է Մատուծոյ :

Պ . “ Երդ թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ  
 դործ ալ որ ընէք, ամէն բան Մատուծոյ  
 փառքին համար ըրէք” : ա Կորնթ . Ժ . 31 :  
 Կոր . Գ . 17 : ա Պետ . Դ . 11 :

Ն . Մատուծոյ ծառայութիւնն ընելու վը-  
 րայով ի՞նչ հաստատուն միտք ունէր Հե-  
 սու :

Պ . “ Բայց ես և իմ տունս Տէրը պիտի  
 պաշտենք” : Հե . ԻԴ . 15 :

Ն . Ի՞նչ ըսաւ Վաւիթ իր Սողոմոն որ-  
 դիին՝ Տէրը խնդրելուն վրայով :

Պ . “ Թէ որ խնդրես զինքը՝ պիտի գըտ-  
 նես, և թէ որ թողուս զանիկայ, ինքն ալ

յաւիտեան քեզ մէկ դի պիտի ձգէ" : ւ  
Ս՛նայ . իը . 9 :

Առաջին Պատուիրանքը կիմացունէ մեզի՝ թէ միայն մէկ կենդանի ու ճշմարիտ Աստուած կայ . և կը պահանջէ մեզմէ՝ որ զինքը ճանչնանք , և միայն զինքը մեզի Աստուած ընդունինք : Աս պատուիրանքէն կը կախուի բոլոր մեկաբներուն հաստատութիւնը :

Ե . Ենոր համար աս պատուիրանքը կը պահանջէ մեզմէ գիտնալ թէ ինչ՝ և ո՞վ է Աստուած , և ինչ ըրաւ մեզի համար : Աս գիտութիւնը մենք յատկապէս Սուրբ Վիրքէն կը ստանանք . նաև կը պահանջէ մեզմէ Օջինքը սիրել բոլոր սրտով և մտքով և զօրութիւնով , և հնազանդիլ իրեն՝ խօսքով ալ՝ գործքով ալ , առանց կեղծաւորութեան կամ ամբնալու , ամէն բանի մէջ , ամէն տեղ , և ամէն ժամանակ , և ամէն պարագայներու մէջ : Մենք պարտինք Օջինքը ընտրել մեզի՝ և մեր տանը համար Աստուած , ինչպէս որ Յեսու ըրաւ : Մեր գլխաւոր երջանկութիւնը իրեն երկրպագութեան և իր պաշտօնին մէջ պարտինք գտնալ : Աստուած պիտի ըլլայ մեզի մեր ամէնը , և մեր Հոգիներուն բաժինը հիմա՝ և յաւիտեանս յաւիտենից :

Բ . Անոնք աս Պատուիրանքը չեն պահեր .

'Աստ' որ կըսեն թէ Մատուած չկայ : Արկրորդ՝  
 որ անհոգ են ու Մատուծոյ վրայով չեն ուզեր  
 տեղեկանալ : Արկրորդ՝ որ կըճանչնան զՄա-  
 տուած , բայց չեն սիրեր զինքը , ոչ ալ իրեն  
 Մատուծոյ պէս կըծառայեն : Մս կերպով է որ  
 քրիստոնէից մէջը շատ մարդիկ թէ ծեր՝ ու թէ  
 պատանի՝ կանարգեն աս Պատուիրանքը և ինք-  
 զինքնին յախտենական բարկութեան տակը կը  
 ձգեն : Չորրորդ՝ որ ուրիշ Մատուած մը իրենց  
 կըձևացընեն թէ հեթանոսներուն պէս կուռք մը  
 շինելով , և թէ իրենց մտքին մէջը անմահ գա-  
 ղափար ունենալով Մատուծոյ վրայ՝ որն որ Սուրբ  
 Գիրքը չսորվեցուներ : Հինգերորդ՝ որ Հրեշ-  
 տակներուն , Սուրբերուն կամ Գևերուն կապա-  
 լինին ու կաղօթեն : Վեցերորդ՝ մահկանացու  
 մարդիկներուն , ինչպէս Սոգերուն՝ Կախարդնե-  
 րուն՝ Արագ մեկնողներուն ու Նաղդ նայողներուն  
 կըհաւատան ու կապալինին՝ Մատուծոյ գիտու-  
 թիւնը և զօրութիւնը ունեցողներու պէս . և  
 կերթան անոնց՝ որ գալու բաները իրենց իմա-  
 ցունեն , կամ գեղատուութիւն ընեն իրենց՝ չա-  
 րի կամ բարիի համար , և ուրիշ ասոր նման  
 բաներ : Այլ վերջապէս՝ որ կըսիրեն ինչ և իցէ  
 բան մը , և կըծառայեն ո՛ր և իցէ բանի մը Մա-  
 տուծմէ աւելի : Այլ . իբ . 18 : ԳԼ . Ի .  
 27 : աս թուի . իբ Գլուխ :

Գ . թող ամէն մէկերնիս իր սիրտը քննէ ու  
 հարցունէ թէ՛ Աէհովայ ճշմարիտ Մատուծմէ  
 'իզատ ուրիշ Մատուածներ ունի՞ . իբ բոլոր սըր-

տու վը , մտքովը ու զօրութիւնովը զԱնիկայ կը սիրէ՞ . ճշմարտապէս կը փափաքի ու ժրութեամբ կաշխատի՞ անոր փառքին համար ապրելու և զԱնիկայ վայելելու՝ թէ՛ աս աշխարհիս մէջ և թէ՛ հանգերձեալին : ԲՆԱՅ . ԺԵ . 2 :

Երկրորդ Պատուիրանքը :

ՊԱՆԻՔԷԼ . Գ . 1—30 :

2 . Ո՛րն է Երկրորդ Պատուիրանքը :

Պ . “Պանն + եղև ժորոսած կուստ շարիտ շինեա , ոչ ալ վերը երկնին մեջ կամ վարը երկրէ վայ կամ երկրին աստի ջորերուն մեջ եղած Բաներուն Բնասման մէջ նմանութիւնը . Ընոնց երկրայագոսնիւն շարիտ շինեա , ս զանոնք շարիտ ուսշարեա . Ինչոս որ ես Տերը սոս Ըստոսածոք՝ նասխանյոս Ըստոսած եմ՝ որ կը հաստոսցանեմ հայրերուն մեղքը որոսոցը վայ՝ Տինչև անոնց երբորոս ոս շարիտ շեղը՝ որ կաստեմ զեա . և կորորոս մեմ անոնց Տինչև հաստար շեղը՝ որ կը սիրեմ զեա ոս եմ ուստոսիրանեմերոս կը պահեմ ” :

2 . Ընաւ մէկը զԱստուած տեսած է մի :

Պ . 2Է :

Եւ Տերը խօսեցաւ ձեզի կրակին մէջէն . գուք

խօսքերուն ձայնը շեցիք , բայց ձայնէն զատ երևոյթ մը չտեսաք : Եւ խիստ զգուշացէ՛ք ձեր հոգիներուն , ինչու որ Տէրը ձեզի Վորեր լեռանը վրայ կրակին մէջէն խօսած օրը՝ բնաւ երևոյթ մը չտեսաք : Բ ( ) ԴԷ . 7 . 12 , 15 : Մէկը բնաւ չտեսաւ զՄատուած , բայց միածին Արդին որ շօրը ծոցն է , անիկայ պատմեց : Հօգ . ա , 18 :

Հ . Աւրեմն կրնանք գիտնալ թէ Մատուած ինչ կերպարանք ունի , կամ կրնանք մի փայտէն՝ քարէն՝ ոսկիէն և արծաթէն բան մը շինել իրեն նմանութեամբ :

Պ . Չէ :

Աւստի՝ որովհետեւ Մատուածոյ ցեղէն ենք նե՛ պէտք չէ որ անանկ սեպենք , թէ Մատուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս վարպետութիւնովը և հնարքովը փորուած շինուած է : Վ . ԴԷ . Ժէ . 29 : Եւայ . խ . 1 — 31 :

Հ . Աւրեմն աս Պատուիրանքով Մատուած ի՞նչ կարգիլէ :

Պ . Եւրոբովին մեզ կարգիլէ մէկ բան մը շինելէն՝ Մատուածոյ նմանութիւնով :

Հ . Եւ անկէց զատ ի՞նչ բան կարգիլէ Մատուած Արկրորդ Պատուիրանքին մէջ :

Պ . Կարգիլէ երկինքին՝ կամ երկրի՝ և կամ ջուրի մէջ եղած արարածներուն մէ-

կին նման բան մը շինելը , ու անոր առջին  
երկրպագութիւն ընելը՝ Աստուծոյ երկրպա-  
գութիւն ընելու պէս :

Հ . Ուստի պատկերներուն ու արձան-  
ներուն երկրպագութիւն ընելը՝ աս Պատուի-  
րանքը կարգիլէ՞ մի :

Պ . Հրամարես , անշուշտ կարգիլէ :

Հ . Աս Պատուիրանքը արդեօք մեզի չը-  
ստ<sup>ո</sup>րվեցրնէր որ մենք Աստուծոյ երկրպագու-  
թիւն ընելու ենք , պարզ՝ անզարդ ու  
հոգևոր կերպով մը՝ ինչպէս որ կրվայլէ մէկ  
Հոգիի մը՝ որ մենք չենք տեսնար , և միայն  
աս գիտենք որ մեծ ու բարի է , ու ամէն  
տեղ ներկայ է :

Պ . Հրամարես , և միայն անանկ մէկ եր-  
կրպագութիւն մը կրվայլէ մեզի որ ընենք  
Աստուծոյ՝ ու անոր ալ կրվայլէ որ ընդունի  
մեզմէ :

Հ . Ի՞նչ կրկոչուին ան մարդիկը՝ որ ճշ-  
մարիտ Աստուածը չեն ճանչնար , ու երկնից՝  
երկրի՝ կամ ջուրին մէջ եղած բաներուն նը-  
մանութիւնը կը շինեն , ու անոնց երկրպա-  
գութիւն կրնեն և կը ծառայեն՝ իրենց Աս-  
տուածներուն պէս :

Պ . Անոնք Հեթանոս կըսուին : Հոռով .



՝ . 21—32 :

՝ . Եշխարհիս մէջ շատ հեթանոս աղ-  
գեր կա՞ն մի :

Պ . Ե, յո՛, անոնց թիւը կը հասնի ինչուան  
վեց հարիւր հազար միլիոնի :

՝ . Սուրբ Գիրքը ի՞նչ անուն կուտայ՝  
անոնց փայտեղէն ու քարեղէն չաստուածներ-  
րուն :

Պ . Կուռք կանուանէ :

՝ . Եւ Կուռքերուն պաշտօն մատուցա-  
նողին ի՞նչ անուն կուտայ :

Պ . Կռապաշտ :

՝ . Կռապաշտները կրնա՞ն Երկիրը եր-  
թալ :

Պ . Չէ :

Չէ՞ք մի գիտեր որ , . . . ոչ կռապաշտները՝  
ոչ շնացողները , ոչ իգացեալները՝ ոչ արուա-  
գէտները՝ ոչ գողերը՝ ոչ ագահները՝ ոչ գինով-  
ները՝ ոչ բամբասողները՝ ու ոչ յափշտակողնե-  
րը՝ Եստուծոյ թագաւորութիւնը չեն ժառան-  
գեր : ա Կորնթ . զ . 9—10 : Եւ ծոյլերուն ու  
անհաւատներուն՝ սպանողներուն ու պոռնիկնե-  
րուն և կախարդներուն ու կռապաշտներուն՝ ու  
գեղ տուողներուն՝ և բոլոր սուտղրուց ամբա-  
րիշտներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով  
էքուած ան լիճին մէջն է . որ է երկրորդ մահը :  
( )-յո . իա . 8 :

Հ . Թէ որ մարդիկ աս Պատուիրանքը չպահեն , Աստուած որի՞ն վրայ պիտի հաստուցանէ իրենց անօրէնութիւնը :

Պ . Իրենց վրայ և իրենց օրդւոցը վրայ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ցեղը :


Հ . Եւ ի՞նչ պիտի ցուցնէ Աստուած անոնց մինչև հաղար ցեղը , որ զինքը կրտիրեն և իր Պատուիրանքները կրպահեն :

Պ . “ Ողորմութիւն ” :

Հ . Ես Պատուիրանքին մէջ Տէրը ի՞նչ ըսել կուզէ , երբոր կրսէ թէ՛ “ Ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած մին եմ ” :

Պ . Ըն ըսել կուզէ որ ինքը պիտի չթողու մեզ որ իրմէն զատ ուրիշ Աստուած մը ունենանք :

Ես եմ Տէրը , աս է իմ անունս , և իմ պատիւս ուրիշին , ու իմ փառքս կուռքերուն չեմ տար : Եւայ . խբ . 8 : խբ . 11 :



Ե . Ես պատուիրանքը կը սորվեցունէ մեզի թէ որն է Աստուծոյ մեր ընելու ճշմարիտ երկրպագութիւնը , և ինչ ձևով կը լսայ ատ երկրպագութիւնը : Սենք երկրպագութիւն ընելու ենք Աստուծոյ անկեղծութեամբ , յարգութեամբ և

խոնարհութեամբ իրբև Հոգիի մը՝ որ մեր մարմնաւոր աչքին անտեսանելի է . բայց մեծ ու բարի է և ամէն տեղ ներկայ է :

Ի . Սենք կանարգենք աս Պատուիրանքը : «Ե,ախ՝ երբոր Մատուծոյ նմանութիւնը կը ձևացընենք , կամ աներևոյթ կերպով մեր երևակայութեանը մէջ , և կամ արտաքին կերպով ձեռագործ բաներու մէջ : Լըկրորդ՝ երբոր կը շինենք վերը Լըկինքին մէջ , կամ վարը Լըկրի մէջ , կամ Լըկրի տակը ջուրի մէջ եղող ո՛ր և իցէ արարածի մը նմանութիւնը կամ պատկերը , կամ անոր երկրպագութիւն ընելու համար և կամ անոր միջոցովը Մատուծոյ երկրպագութիւն ընելու : Մատուած Հոգի ըլլալով անոր պաշտօնին նուիրուած շէնքերը պէտք է որ աս տեսակ բաներէն բոլորովին ազատ ըլլայ : Եւ թէ ներսի կողմը , և թէ դուրսի կողմը՝ անոնց գեղեցկութիւնն ալ պէտք է որ պարզ ու անզարդ ըլլայ :

Գ . Սէրը և հնազանդութիւնը իրարու հետ կապուած են , թէ որ մենք զՄատուած սիրենք նէ՛ պիտի պահենք իր Պատուիրանքները = :

Դ . Մենք կատեն զՄատուած , որ կուռքերու երկրպագութիւն կընեն , և ճշմարիտ Մատուածը ճանչնալ չուղելով , սուտ Մատուածներ կը շինեն

= . Ի՞նչ որ իս կը սիրէք՝ իմ պատուիրանքներս պահեցէք : (Յօ . Ժգ . 15 : Դուք իմ բարեկամներս էք , թէ որ ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ : (Յօ . Ժե . 14 :

իրենց : Սրտի վատթարութիւնը Առապաշտու-  
թեան մայրն է : Տէ՛ւ շնորհք . ա . Վլուխը :

Ե . Սեր միլիոնաւոր ընկերներուն վիճակը ,  
որոնք որ շեթանոս և Առապաշտ են՝ խիստ սաս-  
տիկ ու ողբալի վիճակ է : Ենոնք թաղուած են  
իրենց տգիտութեանը և մեղքին մէջ , ամենացած  
և զգուելի մեղքերուն մէջը ընկզմած են : Ենոնք  
Առատունները չարութեան տաճարներ են : Ենոնք  
տառապանքներու և թշուառութեան ենթակայ  
են , ու ասանկ ապականեալ և մէկզմէկ ապակա-  
նող պիտի ապրին մինչև աշխարհիս վերջը՝ թէ  
որ Եստուածաշունչը՝ փրկութեան Եւետարանը  
անոնց չխրկուինէ : Երանի՛ թէ Եստուած հա-  
ճէր կանչել մեզմէ մէկ քանինները՝ որ Եւետա-  
րանը տանէինք անոնց : Իայց թէ որ աս արտո-  
նութիւնը մեզի չարութիւննէ՝ պէտք է որ գոնէ ա-  
մէն միջոցները ՚ի գործ դնենք մեր օգնութիւնովը  
Եւետարանը անոնց խրկելու համար . յատկա-  
պէս աղօթեալով՝ որ Եստուած կամենայ ճամբան  
բանալ և յառաջ տանիլ իր ճշմարտութիւնը՝  
մինչև որ բոլոր երկիրը լցուի Եր գիտութիւնովը :  
Ճարգենք Եստուածաշունչը մեծ յարգութիւնով ,  
ուսկից կընդունինք ան մտիթարութիւնը և խա-  
ղաղութիւնը՝ որն որ հիմա կըվայելենք , ու նաև  
ան ապառնի երջանկութիւնը՝ որուն կը յուսանք :  
Եւ առատօրէն երախտագիտութիւն ու շնորհա-  
կալութիւն տանք Եստուծոյ՝ որ ինքը իր Վերա-  
գոյն ողորմութիւնովը անոնցմէ աւելի լաւ վիճա-  
կի մէջ հաստատեց զմեզ :

Օ . Ըստուած՝ նախանձոտ ըստուած մըն է .  
 Ինքը իր պատիւը ու փառքը կուռքերուն շտար .  
 Ինքը պիտի պատժէ անոնք՝ որ ասանկ ունայնու-  
 թիւնները կը պաշտեն , ու նաև իրենց անօրէնու-  
 թիւնը որդիններնուն պիտի հատուցանէ մինչև ա-  
 նոնց իրեք և չորս ցեղը . բայց ողորմութիւն պի-  
 տի ցուցընէ անոնց հազար ցեղին՝ որոնք ոք  
 զինքը կը սիրեն և իր Պատուիրանքները կը պա-  
 հեն :

Երրորդ Պատուիրանքը :

Պ Լ . ԺԹ . 11—18 :

Ն . Որն է Երրորդ Պատուիրանքը :

Պ . “Տէրոջ + ու Ըստուածոյն անունը դա-  
 րարի տեղը Բերանդ լղիտի առնես , ինչու  
 Տէրը էր անունը դարարի տեղը Բերանդ առ-  
 նոյն անձեղ լղիտի լեպէ ” :

Ն . Ի՞նչպէս պարտինք գործածել ըս-  
 տուծոյ անունը :

Պ . Ընկեղծ ու խոնարհ սրտով և միշտ  
 պատուելով :

Ն . Ի՞նչ կընշանակէ “ ըստուծոյ անունը  
 դատարկ տեղը բերանը առնելը ” :

Պ . Կընշանակէ ըստուծոյ անունը սուս՝

անարգ՝ կամ թեթեւ կերպով մը գործածել :

Ն . Երբոր մենք երդում կընենք , չէ՞ որ զՄատուած ի վկայ կըկոչենք մեր խօսքին ճշմարիտ ըլլալը հաստատելու համար :

Պ . Նրամերես :

Ն . Ուրեմն երբ որ մեր ըսածին սուտ ըլլալը գիտնանք՝ ու ան իրաւցունելու համար վկայ կոչենք զՄատուած , աս Պատուիրանքը չէ՞նք անարգեր :

Պ . Նրամերես , սոսկալի կերպով մը կանարգենք : Վ՛հա . զ . 3 :

Ն . Ես պատուիրանքը ի՞նչ կարգիլէ :

Պ . Կարգիլէ անիծելը և զուր տեղը երդում ընելը , և կեղծաւորեալ թեթեւ ու շնչին կերպով Մատուծոյ անունը գործածելը : Բ ( ) Ը՞ն . իր , 58 : Մատու . Կ . 34-37 :

Ն . Ի՞նչ կընշանակէ Մատուծոյ “անմեղ չթողուլը զանիկայ , որ իր անունը դատարկ տեղը կառնէ” :

Պ . Կընշանակէ թէ Մատուած զանիկայ պիտի պատժէ : Վ՛հա . իդ . 16 :

Լ՛ս Պատուիրանքը կըսոր/եցունէ մեզի թէ  
ինչպէս գործածելու ենք Լ՛ստուծոյ մեծ ու բարի  
անունը :

Լ՛ . Մ՛ենք Լ՛ստուծոյ վրայ խորհելու ու խօ-  
սելու , և աղօթելու ենք իրեն , անկեղծ՝ խոնարհ  
ու յարգական մտքով . յիշելով միշտ թէ ինչ-  
պէս անչափ՝ սուրբ ու բարձրացեալ է Ինքը , և  
թէ մեզի պէս ասանկ նուաստ ու անարժան ըս-  
տեղծուածներուն կըվայլէ որ վախնանք Իր փա-  
ռաւորեալ անունէն : Բ ( ) Է՛ն . իը . 58 :  
Մ՛ար՛ն . զ . 9 :

Ի՛ . Մ՛ենք կանարգենք աս Պատուիրանքը :  
‘Նախ՝ երբոր սուտ երգում կընենք , երբոր մեր  
ստու/թիւնը իրաւցունելու համար զԼ՛ստուած ՚ի  
վկայ կրկոչենք , ասկէ աւելի մեծ նախատինք  
չկրնար ըլլալ ճշմարտութեան Լ՛ստուծոյ դէմ :  
Լ՛րկրորդ՝ երբոր Լ՛ստուծոյ անունը թեթեւ ու  
չնչին կերպով մը կըգործածենք մեր հասարակ  
խօսակցութեան մէջը , զոր օրինակ՝ “ Լ՛ուշ  
Լ՛ստուած , Լ՛ստուծոյ յայտնի է , Լ՛ստուած վը-  
կայ , Լ՛ստուած գիտէ որ ” , ևայլն : Լ՛րբորդ՝ եր-  
բոր կանիծենք և երգում կընենք ու կըհայհոյենք  
Լ՛ստուծոյ սուրբ անունովը , ինչպէս որ չարագործ  
հայհոյիչները կընեն : Զորբորդ՝ երբոր երկրպա-  
գութիւն կընենք Լ՛ստուծոյ՝ թեթեւ ու անհոգ  
կերպով մը , կամ կեղծաւորութեամբ :

Կ՛ . Տէրը իր անունը դատարկ տեղը բերանը  
առնողը անմեղ պիտի չսեպէ : Ինքը՝ աս Պատուի-  
րանքին դէմ ամէն յանցանքները չմոռնար : Լ՛ր-

սեւով թէ՛ մենք պարտինք Շարաթ օրը  
 “սուրբ պահել” :

Պ . Կուզէ ըսել որ մենք բոլոր ան օրը  
 պարտինք Իրեն նուիրել սրբազան պաշտօն-  
 ներով : Եւայ . ծգ . 2 :

Ն . Շարաթը սուրբ պահելը արդեօք  
 լոկ նրէական օրէ՛նք մը համարուելու է :

Պ . Եւ մենեին չէ . քանզի Եւստուած ան  
 օրէնքը Եդամին ալ տուաւ (Ննդ . բ . 2 , 3)  
 և անոր համար չորրորդ Պատուիրանքին մէջ  
 նրէայներուն ալ կրկնելով աս օրէնքը , կը-  
 տէ թէ “ նադատութեան օրը միտքդ բե՛ր” :

Ն . Ես բանիս համար ուրիշ վկայութիւն  
 ունի՞ս :

Պ . Ես ալ ունինք որ , Շարաթը պա-  
 հելը թէ որ լոկ նրէական արարողութիւն  
 մը ըլլար նէ՛ Եստուած պիտի չգրէր ան բուն  
 իր մատովը Տասնարանեայ (Օրէնքին մէջը ,  
 ուր որ ուրիշ բան չկայ , բայց միայն բարո-  
 յական՝ ընդհանուր և հոգևոր պատուիրանք-  
 ներ : Ուստի աս Շարաթուն օրէնքը որ  
 աշխարհի սկիզբէն տրուեցաւ , պարտի հաս-  
 տատ մնալ մինչև աշխարհի վերջը :

Ն . Ուրեմն ինչո՞ւ համար Շարաթ օրը  
 չենք պահել , ու կիրակի օրը կը պահենք :



սելով թէ՛ մենք պարտինք Շարաթ օրը  
 “սուրբ պահել” :

Պ . Կուզէ ըսել որ մենք բոլոր ան օրը  
 պարտինք Իրեն նուիրել սրբազան պաշտօն-  
 ներով : Եւայ . Տղ . 2 :

Հ . Շարաթը սուրբ պահելը արդեօք  
 լոկ շրէական օրէ՛նք մը համարուելու է :

Պ . Ըմենելին չէ . քանզի Ըստուած ան  
 օրէնքը Ըդամին ալ տուաւ (Սնդ . բ . 2 , 3)  
 և անոր համար չորրորդ Պատուիրանքին մէջ  
 շրէայներուն ալ կրկնելով աս օրէնքը , կը-  
 սէ թէ “ շանդստութեան օրը միտքդ բե՛ր” :

Հ . Ըս բանիս համար ուրիշ վկայութիւն  
 ունի՞ս :

Պ . Ըս ալ ունինք որ , Շարաթը պա-  
 հելը թէ որ լոկ շրէական արարողութիւն  
 մը ըլլար նէ՛ Ըստուած պիտի չզրէր ան՝ բուն  
 իր մատովը Տասնարանեայ (Օրէնքին մէջը ,  
 ուր որ ուրիշ բան չկայ , բայց միայն բարո-  
 յական՝ ընդհանուր և հոգևոր պատուիրանք-  
 ներ : Ուստի աս Շարաթուան օրէնքը որ  
 աշխարհի սկիզբէն տրուեցաւ , պարտի հաս-  
 տատ մնալ մինչև աշխարհի վերջը :

Հ . Ուրեմն ինչո՞ւ համար Շարաթ օրը  
 չենք պահեր , ու Կիրակի օրը կը պահենք :

Պ . Ընոր համար որ մեր Տէրը Յիսուս՝  
 Աիրակի օրը յարութիւն առաւ :

Հ . Ի՞նչ վկայութիւն ունինք աս փոփո-  
 խութեանս իրաւունքով ը ըստուն համար :

Պ . Հետեւեալ վկայութիւնները ունինք :  
 'Ախս' որ Տէրն մեր Շարաթ օրը թաղուած  
 մնալով՝ անպատիւ ըրաւ զանիկայ , և Աիրա-  
 կի օրը յարութիւն առնելով՝ պատուեց ան  
 օրը : Արկրորդ՝ որ Տէրն մեր իր յարութիւն  
 առնելէն ետքը երկու անգամ՝ Աիրակի օր իր  
 աշակերտներուն երեցաւ՝ երբոր աղօթելու  
 համար մէկ տեղ հաւաքուած էին անոնք .  
 բայց շարաթ օր մը անոնց չերեցաւ : Յօհ .  
 Ի . 19 , 26 : Արրորդ՝ որ Տէրն մեր իր  
 յարութենէն ետքը՝ ճիշդ եօթներորդ շարաթ  
 օրը անցներուն պէս՝ հետեւեալ օրը՝ որ Պեն-  
 տէկոստէին Աիրակի օրն էր՝ ան մեծ խոստ-  
 մունքը , այսինքն իր Սուրբ Հոգին խրկեց  
 իր աշակերտներուն վրայ : Պարթ . ա . 4 ,  
 5 : Բ . 1 , 33 : Զորրորդ՝ որ Սուրբ Հոգւով  
 լցուած Եռաքեալները սկսեցին Աիրակի օրը  
 սուրբ պահել և աղօթքով անցունել , ինչ-  
 պէս որ ան սովորութիւնը կրմնայ մինչև ցայս-

օր քրիստոնէից մէջ ալ : Գործ . ի . 7\* :  
 ա կորնի . ժղ . 2 : Յայտ . ա . 10 :

շ . Վանի<sup>2</sup> օր պիտի աշխատինք ու մեր  
 բոլոր գործքերը ընենք :

Պ . Վեց օր պիտի աշխատինք , ու մէկ  
 օր պիտի հանգստանանք մեր բոլոր գործքե-  
 րէն : Լըւց . ժղ . 25—30 : Լա . 12—17 :  
 Լե . 1—3 : Թոոոյ . ժե . 32—36 : Գ  
 Լըւա . ժ . 31 : ժգ . 15—22 : Լըւէ .  
 ժէ . 21—27 :

շ . Աւրեմն ամենեւին մէկ գործ մը շե<sup>2</sup> նք  
 կրնար տեսնալ ան օրը :

Պ . Կրնանք տեսնալ երկու տեսակ գործ ,  
 այսինքն անոնք՝ որ հարկաւոր են , և անոնք՝  
 որ ուղորմութեան կը վերաբերին : Մաթթ . ժբ .  
 1—13 : Մարի . գ . 1—5 : Վաւի . ժգ .  
 10—17 : ժգ . 1—6 : Յօն . ե . 1—14 :

շ . Աւտի Մատուծմէ որոշուած ան մէկ  
 հանգստութեան օրէն զառ , ուրիշ օր մը  
 պարտակա<sup>2</sup> ն են քրիստոնէայնեքը սուրբ պա-  
 հելու :

Պ . Չէ . քանզի Մատուծոյ հրամանն է

\* Մտ տեղս շայերէնը շաբաթ օր կը յիշէ , իսկ  
 Յոյն բնագիրը Միաշաբաթ՝ որ կիրակի ըսել է :

որ վեց օր աշխատինք ու մէկ օր հանգստանանք :

Ինտո՞ր նորէն կրդառնաք ան տկար ու չքաւոր աշխարհի գաղափարներուն . որոնց նորէն կուզէք անձերնիդ ծառայ ընել : ()րերը կրդանազանէք , ու ամիսները , և ժամանակները ու տարիները : Արվախնամ ձեզմէ , որ գուցէ պարագտեղը ես ձեր վրայ աշխատած ըլլամ : Պատ. դ. 9—11 :

՝ . Կիրակի օրը մենք որ չենք գործեր , ուրիշ մէկու մը կրնանք գործել տալ :

Պ . Չէ . ոչ մեր տղան՝ ոչ մեր աղջիկը՝ ոչ մեր ծառան՝ ոչ մեր աղախինը՝ ոչ մեր անասունը և ոչ մեր քովը եղած օտարականը աշխատեցունելու ենք :

՝ . Ի՞նչ որ անոնք գործել ուզեն , մենք ի՞նչ պիտի ընենք :

Պ . Պիտի թող չտանք :

՝ . Յատուկ գործ գործելէն զատ , ի՞նչ ուրիշ բան կայ արդիլուած կիրակի օրուան համար :

Պ . Արդիլուած է ինքզինքնիս զուարճացունելը . զոր օրինակ , ձի հեծնալով՝ կամ որսի երթալով՝ կամ թուղթ խաղալով՝ կամ քնանալով՝ կամ ուտելով և խմելով՝ կամ իրարու հետ մարմնաւոր ու ոչինչ խօսակցութիւններ ընելով :

Թէ որ շաբաթ օրը՝ որ ինծի նուիրուած է , քու զուարճութիւնդ կատարելէն ոտքդ դարձու- նես , ու շաբաթին՝ Սուրբսութիւն , ու Եստու- ծոյ 'Նուիրուածին' Սուրբ ըսես՝ ու զանիկայ արբելով՝ քու ճամբայներուդ չճեակիս՝ քու զուարճութիւնդ չկատարես , ու դէշ խօսք չխօ- սիս նէ , Ենտենը Եստուծով պիտի ուրախա- նաս . ու քեզի երկրին բարձր տեղերը պիտի նստեցունեմ , ու քեզի քու հօրդ Հակոբին ժա- ռանգութիւնը պիտի կերցունեմ , ինչու որ Տէ- րոջը բերանը խօսեցաւ : Եւ . ծը . 13 , 14 :

Վիրակի օրուան մեր պարտաւորու- թիւնը ի՞նչ է :

Պ . Եռանձին աղօթք և մտածմունք ընե- լէն զատ՝ պարտինք մէկ տեղ հաւքուիլ Ես- տուծոյ երկրապագութիւն ընելու , աղօթելու , Սուրբ Գիրքը կարդալու ու Սուրբ Եւետա- րանին քարոզութիւնը մտիկ ընելու :

Ու եկաւ 'Վազարէթ , ուր որ ինքը մեծցած էր . և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժողովարանը : Եւ տուին անոր Եսայի մարգա- րէին գիրքը . ու ելաւ որ կարգայ : 'Վ . Գ . 16 , 17 : Եւ ինքը ան ժողովարաններուն մէկուն մէջը շաբաթ օրը կըսորվեցունէր : 'Վ . Գ . 10 : Շաբաթ օրը քաղաքէն դուրս ելանք՝ գե- տին եզերքը , ուր որ սովորութիւն ունէին ա- ղօթք ընելու . ու նստեցանք ժողովուած կնիկնե-

բուն հետ կըխօսէինք : Վարձ . Ժգ . 13 : Լ, Լ  
 շարաթ օրը՝ (յո՛ւնարե՛նէն Տէ՛ղ Տե՛շարե՛ն) երբոր ժող-  
 վուեր էինք հացը կտրելու՝ Պողոս անոնց կըքա-  
 րողէր , ինչու որ ետեի օրը պիտի երթար . և  
 խօսքը երկնցուց մինչև կէս գիշեր : Վարձ . ի .  
 7 : Ժգ . 14 : Ժէ . 2 : ա Կարնի . Ժգ . 2 :  
 Լ, ԲԵ . Ժ . 25 :

Չորրորդ Պատուիրանքը կըսորվեցունէ մեզի  
 թէ մեր ժամանակին ո՞ր մասը յատկապէս Ըստու-  
 ծոյ երկրպագութեանը ու Իրեն ծառայութեանը  
 նուիրելու ենք . այսինքն է՝ եօթը օրին մէկը ,  
 կամ թէ մեր ժամանակին Լջօթներորդ մասը :  
 շրէայները պահեցին Լջօթներորդ օրը աշխար-  
 հին ստեղծագործութեան սկիզբէն հաշուելով՝ որ  
 ատ օրը Ըստուած հանգստացաւ իր գործէն :  
 Իայց Վրիստոնեայներուն յատուկ բռնած օրը  
 շարաթին առջի օրն է . ինչու որ մեր Տէր Հի-  
 սուսը ան օրը յարութիւն առաւ մեռելներէն . և  
 մեր փրկութեան գործը լըմնցուց , ու անկէց  
 հանգստացաւ : Վարձ . ի . 7 : ա Կարնի . Ժգ .  
 1 , 2 : Հայո . ա . 10 :

Ը . Ը՛ն օրը սուրբ պահուելու է : Մ՛ ենք հան-  
 գըստանալու ենք մեր բոլոր գործքերէն բաց ՚ի  
 հարկաւոր եղած ու ողորմութեան վերաբերեալ  
 գործքերէն : Ը՛ն օրը աղօթելու ենք , Ըստուծոյ

խօսքերը ու բարի գիրքերը կարդալու ենք . մեր սիրտերը ու մեր վարքը քննելու ենք , բարեպաշտ խօսակցութիւն ունենալու ենք . Եստուծոյ մեծութիւնը և Հիսուս Վրիստոսի ձեռքովը աւոր մեղի ըրած բարերարութիւնը՝ միտքերնիս բերելու ենք . Արկիներքին հանգստութեանը ու յաւիտենական օրհնութեանը վրայով մտածելու ենք : Ըն օրը Եստուծոյ Տունը երթալու ենք ու իր Ժողովուրդին հետ մեկ տեղ իրեն երկրպագութիւն ընելու ենք : Սէկ խօսքով մեր բոլոր խորհուրդները՝ զգացումները՝ խօսքերը և գործքերը Իրեն նուիրելու ենք :

Ի . Սենք աս Պատուիրանքը կանարգենք . Ասխ՝ երբոր հասարակ ու անպիտան գործ մը ընենք Աիրակի օրը : Արկորդ՝ երբոր հեշտութիւններով՝ դատարկութիւնով և կամ մեղքով անցունենք ան օրը : Արբորդ՝ երբոր մեր խորհուրդները , խօսակցութիւնը , կարդացածները , լրածները ու մեր ընկերութիւնը աշխարհային ըլլան : Չորբորդ՝ երբոր զանց ընենք Եստուծոյ Տունը երթալը , կամ երբոր հոն երթալով՝ անկեղծութեամբ և սրտի մտօք Եստուծոյ չճառայենք , կամ Աիրակին՝ նեղութիւն մը ու բեռ մը սեպենք :

Գ . Աիրակին չպահելը շատ հասարակ բան մըն է , բայց շատ մեծ մեղք ալ է : Ըն՝ որ Աիրակին կանարդէ՝ կըզրկէ զԵստուած իր յատուկ ստացուածքէն . ինչու որ ան օրը՝ Տէրօջը օրն է : Ինքզինքը կըզրկէ նաև հոգևոր օգուտներ քաղելու՝

ան օրուան ընտիր պատեհութիւններէն . և իր օրինակին ազդու զօրութիւնովը որչափ որ կրնայ նէ , Մատուածպաշտութիւնը երկրիս վրայէն կարէ՛ կը խափանէ . քանզի Աիրակին սուրբ պահելով՝ եկեղեցի կը թաւալով՝ քարոզ մտիկ ընելով՝ ազօժք ընելով և բոլորովին հոգևոր բաներու վրայ մամտալով՝ Վրիստոնէական օրէնքը կը հաստատուի , ու նմանապէս ասոնց հակառակը ընելով՝ օրէնքը և աստուածպաշտութիւնը կը խանգարուի :

Գ . Աիրակին՝ մարդոց տրուած Մատուածոյ ամենամեծ օրհնութիւններուն մէկն է . Աօթը օրերուն մէջի ամենէն աղէկ օրն է : Մնոնք՝ որ Աիրակին չպահելով հանգստութեան օր մը չունին ու միշտ կաշխատին՝ իրենց միտքերը և մարմինները շատ յոգնած պիտի տկարանան , ինչպէս որ մեր ընտանի անասունները , թէ որ միշտ ամէն օր գործքով նեղացունենք , ու թող չտանք անոնց՝ որ Աիրակի օրը հանգստանան , անշուշտ պիտի նիհարանան ու իրենց ժամանակը չհասած՝ պիտի մեռնին : Աիրակիին հանգստութիւնը հարկաւոր է մեզ զօրացունելու ու միտքարելու համար , և թէ որ հաւատարմութեամբ պահենք անիկայ՝ Մատուածոյ օրհնութիւնը մեր աշխատութիւններուն ու մեր գործքերուն վրայ կը բերէ :

Ե . Աիրակի օրը հարկաւոր է աշխարհիս մէջ ճշմարիտ կրօնքը պահպանելու . քանզի առանց անոր՝ մարդիկ պիտի մոռնային զՄատուած՝ և անոր գիտութիւնը բոլորովին պիտի կորսնցունէ :



ին : Ըն օրն է որ՝ մարդիկ պարապ ըլլալով՝ կերթան Ընտարանի քարոզութիւնը մտիկ կընեն , և ասանկ ճշմարտութիւնը սորվելով՝ կապաշխարեն ու դարձի կուգան . ու աս ընթացքովս կաճին Վրիստոսի շնորհքովը՝ և պատրաստ կըլլան Արկինքի համար : Ի՞նչ որ քրիստոնեայ ազգ մը Աիրակիէն զրկուած՝ ըլլար , շուտով պիտի դառնար , թշուառ ու չար շեթանոսներուն պէս պիտի ըլլար :

Օ . Ուրախանանք և շնորհակալ ըլլանք Ըստուծոյ՝ հանգստութեան օրուան համար , և սուրբ պահենք ու աղէկ կերպով գործածենք անիկայ , և անանկ պատրաստութիւնք ան գալու յաւիտենական Աիրակիին համար՝ որ յաւիտեան չպիտի վերջանայ :

— Ըս չորս Պատուիրանքները , որոնք որ հիմա քննեցինք մենք՝ Ընաջին Տախտակ ալ կըկոչուին . ինտոր ալ մէկալ վեցը՝ Արկրորդ տախտակ կըսուին : Արկրորդ Տախտակի Պատուիրանքները մեզի կըսորվեցունեն մեր պարտաւորութիւնը մարդոց նայելով . բայց Ընաջին Տախտակինները՝ կըսորվեցունեն մեզի յատկապէս առ Ըստուած եղած մեր պարտաւորութիւնը . այսինքն՝ Վախ՝ Թէ մենք մի միայն կենդանի և ճշմարիտ Ըստուածը ճանչնալու ու պաշտելու ենք , չայրը , Որդին և Սուրբ Հոգին : Արկրորդ՝ Թէ մենք իրեն երկրպագութիւն ընելու ենք ան կերպով՝ ինչպէս որ կըվայլէ խիստ մեծ և փառաւորեալ ու բարի Հոգիի մը՝ որ Թէպէտ մեզ՝

անտեսանելի է , բայց ամէն տեղ ներկայ է : Արրորդ՝ թէ մեր երկրպագութեան մէջը մեր իր վրայ ունեցած բոլոր խորհուրդներուն՝ զգացումներուն և գործքերուն մէջը , խոնարհ՝ անկեղծ և երկիւղած ըլլալու ենք : Աւ չորրորդ՝ թէ զգուշութեամբ և հաւատարմութեամբ սուրբ պահելու ենք ժամանակին ատ՞ բաժինը՝ այսինքն Աիրակի օրը , որն որ Ինքը հաճեցաւ բողոքովին Իր պաշտօնին համար զատել ու սրբել :

Հինգերորդ Պատուիրանքը :

բ Սահմանել . ժը . 1—33 :

Ն . Որն է Հինգերորդ Պատուիրանքը .  
 Պ . “ Պատուի՛րանքս զայսքէս . Սայրքս . որ զայս օրերէս երկան ըլլան ան երկրին վրայ՝ որն որ Տէրը զայս Եստուծոյ հոգայ թել ” :

Ն . Սեր կեանքը որոնցմէ՞ կախում ունի աս աշխարհիս մէջ :

Պ . Ասիս Եստուծոյ կախում ունի , և ասպա մեր ծնողքներէն :

Ն . Ո՞վ են անոնք՝ որ երբ մենք տակաւին պղտի տղաքներ ըլլալով՝ ու չկրնալով ինքնիրեննուս մեզի հոգ տանիլ՝ մեզ կրհո-

դան՝ և մեր կանչուըռտելուն և յիմարու-  
թիւններուն ու չարութիւններուն ալ կը-  
համբերեն :

Պ . Մեր շայրը և Մայրը :

Ն . Եւ ո՞վ են անոնք՝ որ կըսիրեն մեզ  
խանդակաթ սիրով , կըդարմանեն մեզ՝ եր-  
բոր մենք հիւանդ ըլլանք , կըպահպանեն մեզ  
կորստեան վտանգէն , և կըպատրաստեն կե-  
րակուր ու հանդերձ մեզի համար , և բարի  
կերպով կըկրթեն մեզ՝ աղօթելով մեզի հա-  
մար և կըջանան իմաստուն ու բարի տղաքներ  
ընելու զմեզ :

Պ . Մեր շայրը ու Մայրը :

Ն . Ուրեմն ի՞նչ պէտք է որ ընենք մեր  
ճնողացը , իրենց մեզի ըրած մեծամեծ խը-  
նամքներուն փոխարէն :

Պ . Պարտինք խիստ մեծ սէր ունենալ  
անոնց վրայ : Վ՛ար . ԺԺ . 3 :

Ն . Ի՞նչ կըսէ Սուրբ Վ՛իրքը ասոր վը-  
րայով :

Պ . « Ընիծեալ է ան՝ որ կանարգէ իր  
շայրը կամ Մայրը » : Բ ( )՞ն . Իէ . 16 :

Ն . Օ՛աւկըները ամէն բանի մէջ պար-  
տի՞ն իրենց ճնողացը հնազանդիլ :

Պ . Ը՛յո՛ , անոնց ամէն հրամանին պար-

տինն հնազանդիլ բաց 'ի ան հրամաններէն՝  
սրոնք Աստուծոյ դէմ են :

Որդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղիք Տէրով ,  
որ ան է արժանը : Եփե . զ . 1 : Կռ . 7 .  
20 :

շ . Սողոմոն ի՞նչ կրսէ ծնողաց հնա-  
զանդելու վրայով :

Պ . “ Որդեակ իմ՝ քու հօրդ խրատը  
մտիկ ըրէ , ու քու մօրդ օրէնքը մէկ դի մի  
ձգեր : Եւսակ . ա . 8 : Որդեակ իմ՝ քու  
հօրդ պատուէրը պահէ , և քու մօրդ օրէնքը  
մէկ դի մի ձգեր : Եւսակ . զ . 20 : Բեզ  
Ծնանող քու հօրդ հնազանդ եղիք , և քու  
մայրդ՝ ծերացած ատենը մի անարդեր” : Եւ-  
սակ . իդ . 22 :

շ . Բնաւ մեր ծնողացը հետ արհամար-  
հանօք կամ խաբէութեամբ վարուելը՝ ենք  
մի :

Պ . Չէ , ոչ իրենց երեսէն՝ և ոչ իրենց  
ետեւէն :

շ . Աստուած շրէից ի՞նչ պատուիրեց  
ընել մէկ կամակոր ու ապստամբ զաւակի մը՝  
որ իր հօրը ու մօրը չէր հնազանդեր :

Պ . Պատուիրեց որ մինչև մեռնելը քար-  
կոծեն : Ելեց . իա . 15—17 : Վէպ . ի .  
9 : Բ ( ) ըն . իա . 18—21 : Եւսակ . ի .

20 : իր . 24 :

Հ . Եւ ի՞նչ պիտի ըլլայ անոր աչքը՝ որ ծաղը կընէ իր հայրը , և իր մօրը հնազանդիլը կանարգէ :

Պ . “Չորին Ըգուաները պիտի փորեն ու արծիւի ձագերը պիտի ուտեն զանիկայ” :  
Ըստի . Լ . 17 :

Հ . Արթուրեան ու խրատի կարօտ եղած ատեննիս որի՞ն կըթալու ենք :

Պ . Մեր Հօրը և Մօրը :

Հ . Պէտք չէ՞ մեզի որ երախտագէտ ըլլանք մեր Սոնդայը՝ մեզի համար բոլոր իրենց ըրածնուն ու քաջած նեղութիւններուն համար :

Պ . Ը, յո՛ , ու երբոր անոնք ծերանան , կամ կոյր , կամ կաղ , կամ հիւանդ ըլլան , և չկրնան ինքզինքներնին հոգալ , կամ աղքատութեան և թշուառութեան մէջ ըլլան՝ պարտինք հոգ տանիլ անոնց՝ մեր բոլոր կարողութիւնովը : Սննդ . խէ . 12 : խը . 1 : Մատթ . Ժե . 4—6 :

Հ . Ո՞ր տղան իր Հայրը և Մայրը մեծապէս կուրախացունէ :

Պ . Բարի տղան : Ըստի . Ժ . 1 , 2 :

Հ . Ո՞ր տղան Հայրը և Մայրը խիստ կը-

տրամեցունէ :

Պ . Չար տղան :

Շ . Ո՞ր տղան ատելի է բոլոր բարի մար-  
դիկներուն , ու կորսուելու ճամբուն մէջն է :

Պ . Չար տղան :

Շ . Երբոր դուք կըտեսնաք անանկ տը-  
ղաքներ՝ որոնք ո՛չ կըսիրեն իրենց ճնողքը  
ո՛չ ալ կըհնազանդին անոնց , ի՞նչ պարտիք  
ընել :

Պ . Պարտինք անոնց ընկերութենէն ետ  
կենալ :

Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կըլ-  
լայ . բայց յիմարներուն ընկերութիւն ընողը  
գէշ կըլլայ : Եւ-ի . ժգ . 20 :

Շ . Մեր Տէրը Յիսուս երբոր տղայ էր  
նէ , իր Օ՛նողքները սիրեց ու անոնց հնա-  
զանդեցա՞ւ մի :

Պ . չրամերես :

Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Վազարէթ ,  
և ինքը անոնց հնազանդ էր : Վ-ի . բ . 51 :

Շ . Ես հինգերորդ Պատուիրանքին մէջը  
Եստուած ի՞նչ խոստացաւ բոլոր բարի տը-  
ղաքներուն՝ որ կըպատուեն իրենց Օ՛նողքը :

Պ . Երկար կեանք :

Հինգերորդ Պատուիրանքը կըսորվեցունէ մեզի՝ մեր Օնողքներուն ունեցած պարաքերնիս, որ Մատուծմէ ետքը Մնոնցմէ կընդունինք՝ կեանք՝ կերակուր՝ հանդերձ՝ պահպանութիւն և կրթութիւն :

Մ. Ուրեմն պատուելու ենք մեր Հայրը և մեր Մայրը . Սախ՝ մենք սիրելու ենք անոնք անկեղծ՝ հաստատուն ու ջերմեռանդ սիրով՝ ինչպէս որ արժանի է : Արկրորդ՝ հնազանդելու ենք անոնց ուրախութեամբ, կատարելով անոնց հրամաններուն բոլորը : Արբորդ՝ յարգ՝ պատիւ ու մեծարանք ցուցընելու ենք անոնց թէ առանձին՝ և թէ հրապարակաւ : Ա. այսպէս ամէն մարդ տեսնալով՝ մեր անոնց տուած յարգը՝ դիտնան թէ անոնք մեր ծնողքն են : Մենք անոնցմէ բան մը պահելու չենք, ոչ ալ ինքզինքնիս անոնցմէ փմաստուն կարծելու ենք, հապա անոնց երթալու ենք մեր ամենալու և բարեբար բարեկամներուն պէս՝ խրատի ու խորհուրդի հաճար : Չորրորդ՝ միշտ յիշելու ենք մեր անոնց երախտապարտ ըլլալը իրենց բոլոր բարեբարութիւններուն և մեզի հաճար կրած նեղութիւններնուն փոխարէն, և բնաւ ըսելու չենք որ բաւական հատուցում ըրած ենք անոնց : Արբոր անոնք ծերանան, կամ հիւանդանան կամ տկարանան և անօգնական մնան, կամ աղքատութեան ու նեղութեան մէջ ըլլան, անատենը բնաւ անտեսութողելու չենք զանոնք, հապա աւելի ահանջ դնելու ու հոգ տանելու ենք անոնց որչափ որ

կրնանք , պաշտպանելով զանոնք ամէն նախա-  
տինքներէ ու անիրաւութիւններէ :

Բ . Սենք կանարգենք աս Պատուիրանքը՝  
երբոր չենք կատարեր աս վերը յիշուած պար-  
տաւորութիւններուն մէկը կամ ամէնը :

Ո՛վ Տղաքներ՝ աս ձեր պարտաւորութիւնները  
կատարելու հոգ կը տանի՞ք , հնազանդ տղաքներ՝  
էք : Ինչու որ անհնազանդ տղայ մը բնաւ բա-  
րեյաջողութիւն պիտի չգանայ . ինքը ամօթ ու  
սրտի ցաւ է իր ծնողացը . ինքը բուն իր համբա-  
ւոյն վրայ նախատինք կը բերէ , իր բարի անունը  
կը կորսնցունէ աշխարհի մէջ , Ըստուծոյ օրհնու-  
թենէն կը զրկուի , և գուցէ իր ունեցած օրերուն  
կէսին չափ չպիտի ապրի . բայց հնազանդ տղայ  
մը՝ որ կը պատուէ իր Հայրը ու Մայրը , միշտ  
սիրելի է : Ինքը օրհնեալ Փրկիչին օրինակին կը  
հետեւի , որ Ընկիւյ երբ Լըկրի վրայ էր՝  
պատուեց իր Հայրը ու Մայրը : Ըսանկ տղայ մը  
կատարեալ յաջողութիւն պիտի գանէ . մենք  
կրնանք յուսալ որ ինքը երջանիկ պիտի ըլլայ  
թէ աս աշխարհիս մէջ , և թէ գալու աշխար-  
հին մէջ :

Գ . Հինգերորդ Պատուիրանքը կը սորվեցու-  
նէ մեզի որ մենք պատուելու ենք մեր մեծերը ,  
նաև ան ամէնն ալ՝ որ կ'իշխեն մեր վրայ : Ըս  
Պատուիրանքը միայն Օնողաց համար կը խօսի ,  
ինչու որ յարգութեան՝ պատուոյ՝ հնազանդու-  
թեան և քաղաքավարութեան հիմը՝ ընտանեաց  
մէջէն կը սկսի : Թէ որ տղայ մը իր ծնողացը



հնազանդի՝ և իրենց հետ յարգութեամբ ու քաղաքավարութեամբ վարուի՝ ան տղան բոլոր մարդոց հետ ալ պարկեշտ ու քաղաքավար կրկնայ . բայց թէ որ իր ծնողաց տունը չսկսի հընազանդութիւն ու պարկեշտութիւն սորվիլ՝ գուցէ բնաւ ուրիշ տեղ մը պիտի չսորվի զանոնք գործածելը . և այսպէս ան տղան պիտի մեծնայ անօրէն մարդ մը պիտի ըլլայ : Ուստի ծնողքները և վարժապետները՝ պէտք չէ որ մոռնան աս բանը :

Վեցերորդ Պատուիրանքը :

Նօնք . Գ . 1—16 :

Ն . Որն է Վեցերորդ Պատուիրանքը :

Պ . “Սպանոթիւն թի՛ ընէր” :

Ն . Ըս Պատուիրանքովս ի՞նչ կը հասկընանք :

Պ . Կը հասկընանք թէ բնաւ մարդ մը սպաննելու չենք :

Ն . Կրնանք մի սպաննել անասունները ու թռչունները :

Պ . Նրամերես , Ըսաուած մեղի հրաման տուաւ զանոնք սպաննելու : Նօնք . Թ . 1—4 : ա Տի՛ճ . Գ . 3—5 , և այլն :

Հ . Բայց ինչո՞ւ համար մեռցունելու ենք անոնք, մեր դրօսանքի՞ն համար՝ թէ մեր օգուտին համար :

Պ . Միայն մեր օգուտին համար :

Հ . Հողիին փրկութենէն ետքը ի՞նչ է մարդուս խիստ պատուական բանը :

Պ . Իր կեանքը : Յու՞նի . բ . 4 :

Հ . Մենք որ չենք կրնար կեանք տալ, իրաւունք ունի՞նք տունել զանիկայ :

Պ . Չէ, ան որ չենք կրնար տալ, չենք կրնար վերցունել զանիկայ : Օ՛ննոր . Լ . 2 : 7 թատ . ե . 7 :

Հ . Բնաւ իրաւունք ունի՞ մէկը իր կեանքը կորսնցունելու :

Պ . Չէ, անձնասպանութիւնը մեծ մեղք է : ա թատ . լա . 4 : Սաղմ . իէ . 3—5 : Գործ . ա . 16—25 :

Հ . Եւ Ո՞վ միայն իրաւունք ունի կեանքը վերցունելու :

Պ . Միայն Աստուած՝ որ ինքն է կեանք տուողը : Օ՛ննոր . բ . 7 : թ . 5 , 6 : թատ . ժղ . 22 :

Հ . Թէ որ մէկ մարդ մը դիպուածով ուրիշ մէկ մը մեռցունէ, երբոր ինքը բնաւ ամենևին չէր ուզեր ընել ան մեղքը, աս

Պատուիրանքին տակը ինկած յանցաւոր է մի :

Պ . Զէ՛ , միայն ան որ դիտաւորութեամբ թշնամութեան՝ կամ նախանձու՝ կամ ուրիշ գէշ կիրքի մը գրգռելովը՝ կրմեռցունէ իրեն գոյակիցը՝ յանցաւոր է աս Պատուիրանքին : [ԹՊՊ . լե . 22—25 :

Հ . Ըստուած ի՞նչ օրէնք տուաւ Հրէից՝ մարդասպաններուն վրայով :

Պ . “Ըն՝ որ կրսպաննէ մարդ մը , անշուշտ պիտի սպաննուի” : Եւ “ան որ մարդու արիւն կը թափէ , իր արիւնն ալ մարդէ պիտի թափուի” : ՎՄ . իդ . 17 : Օճնդ . թ . 6 :

Հ . Տէրը մեր դրացին սպաննելը կարգիլէ . բայց կրնա՞նք մի իրեն բարկանալ , կամ զինքը ատել , կամ ծեծել , կամ իրեն հետ շարաշար վարուիլ և կամ զինքը մեռցունելու սիրտ մը ունենալ :

Պ . Զէ՛ , բնաւ ամենևին չենք կրնար :

Բու դրացիդ անշուշտ պիտի յանդիմանես , ու անոր համար մեղք չկրես : Արէժ չպիտի առնես , և քու ժողովուրդիդ որդւոցը ոխ չպիտի պահես , հապա քու դրացիդ քու անձիդ պէս պիտի սիրես : ՎՄ . ժթ . 13 , 18 : Եւ որ էք՝ որ առաջիններուն ըսուեցաւ՝ թէ Սպանու-

Թիւն մի ընե՛ր , քանզի ո՛վ որ սպանութիւն կընէ՛ դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ : Իսայց ես ձեզի կըսեմ թէ՛ Ո՛վ որ իբր եղբօրը պարապ տեղը սրգողի , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իբր եղբօրը անմիտ ըսէ՛ ստեանի պարտաւոր պիտի ըլլայ . և ո՛վ որ իբր եղբօրը խենթ ըսէ՛ գեհեանի կրակին պարտաւոր պիտի ըլլայ : Մատթ . Ե . 21 , 22 :

Ն . Սուրբ Գիրքին մէջը ի՞նչ կըսուի ան մարդուն վրայով , որ իբր եղբայրը կատէ :

Պ . “ Ո՛վ որ իբր եղբայրը կատէ , մարդասպան է ” : ա Յօհ . դ . 15 :

Ն . Որո՞նք գիրկը բարկութիւնը կըհանգչի :

Պ . “ Հիմարներուն գիրկը ” : Ժող . է . 9 : Յակ . ա . 19 , 20 :

Ն . Նրաման կայ մի երկար ժամանակ մեր ընկերին հետ խռով կենալու :

Պ . Չէ՛ , քանզի այսպէս կըկարգանք . “ Վերեր ձեր բարկութեանը վրայ մարը ջմանայ ” : Լւիէ . դ . 26 :

Ն . Իսայց դիցուք թէ մեր դրացին թըշնամի է մեզի և իբր բոլոր զօրութիւնովը կաշխատի մեզ վնասելու ու մինչև անգամ կուզէ մեր կեանքը վերցունելու , անոր ի՞նչ պարտինք ընել :

Պ . “ Կարտինք սիրել զանիկայ , ու բարի

ընել իրեն :

Վեշութեան փոխարէն մէկուն գեշութիւն մի ընէք , ամէն մարդու աղէկ սեպած բաները մամտացէք : Զարգ . ժբ . 17 : Արմ . իգ . 4 , 5 :

Ն . Սեր Փրկիչը ի՞նչ կրպատուիրէ մեր թշնամիները սիրելու վրայով :

Պ . “Սիրեցէ՛ք ձեր թշնամիները , օրհնեցէ՛ք ձեզ անխնայները , բարի ըրէ՛ք անոնց՝ որ կատեն ձեզ , և աղօթք ըրէ՛ք անոնց վերայ , որ ձեզ կը շարշըկեն ու կը հալածեն” : Անտ . բ . 44 : Զարգ . ժբ . 14 :

Ն . Բնէ նայիմ ի՞նչ կըսէ Պօղոս Առաքեալը վրէժխնդրութիւն ընելու վրայով :

Պ . “Սիրելիք վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձին հասնար , հապա տեղ տուէք բարկութեան . ինչու որ դրուած է . Ի՛մն է վրէժխնդրութիւնը , ու ևս սխալի հասուցանեմ” , կըսէ Տէրը : Զարգ . ժբ . 19 :

Ն . Բնէ նայիմ աս խօսքէն ետքը ի՞նչ կը հետևեցունէ :

Պ . “Նապա թէ որ քու թշնամիդ աւոթեցեր է , հաց տո՛ւր անոր , և թէ որ ծարու է ջուր տո՛ւր անոր . աս ընելով կըրտակի կայծերը անոր գլխուն վրայ կը դիպես :

Չարէն մի յաղթուիր հապա բարիով յաղթէ չարին” : Հօգ . ժբ . 20 , 21 :

Հ . Ի՞նչ կրնէր Հիսուս երբոր կը բամբասուէր :

Պ . “ Ինքը փոխարէնը չէր բամբասեր ” : ա Պէր . բ . 23 :

Հ . Ինքը որո՞նց համար մեռաւ , և որո՞նց համար աղօթեց խաչին վրայ :

Պ . Իր թշնամիներուն համար : Ղ . 1 . իգ . 34 : Պ . 1 . է . 60 : Հօգ . ե . 6—8 :

Հ . Ի՞նչ կըսուի ամէնուն հետ խաղաղութիւն ընելու վրայով :

Պ . “ Թէ որ կարելի է նէ ձեզի՝ ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէք ” : Հօգ . ժբ . 18 : Սաղ . լգ . 14 :

Հ . Սեր ընկերը ամէն վնասներէն և մահէն ազատելը , և անոր ու ուրիշներուն մէջը խոսովութիւն եղած ատենը խաղաղութիւն ընելը՝ մեր պարտքը չէ՞ մի :

Պ . Հրամարես : Ղ . 1 . ժթ . 18 : Ղ . 1 . ժ . 36 , 37 :

Հ . Ի՞նչ կըսէ մեր Փրկիչը խաղաղութիւն ընողներուն համար :

Պ . “ Այրանի խաղաղութիւն ընողներուն ,

ինչու որ անոնք Մատուցոյ որդիքը պիտի կոչուին" : Մատ. . Ե . 9 :

շ . Ո՞ղ էր առաջին մարդասպանը , որ իր եղբայրը մեռցուց :

Պ . Ապին : Ն. Գ. 1—8 :

շ . Բարկացող , սխակալ և մարդասպան մարդը երջանիկ կը լա՞յ արդեօք :

Պ . Չէ :

շ . Մարդասպանութիւնը զիւրին կերպով կը ծածկուի՞ մի :

Պ . Չէ :

Տէրօջ աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները տեսնալու վայ է : Մատ. . Ժե . 3 : Ն. Գ. 8—10 : Թ. Ու . 23 : Մատ. . Ե . 21 :

շ . Մարդասպանութիւնը խիստ սոսկալի յանցանք մը ըլլալով , անոնք՝ որ աս յանցանքը կը գործեն ո՞ւր պիտի ունենան իրենց բաժինը , թէ որ չապաշխարեն :

Պ . Արակի լիճին մէջը : Ղազ . Ե . 21 : ա Յօհ . Գ . 15 : Յայտ . Իա . 8 : Իբ : 15 :

շ . Բնականաբար տակութեամբ , բարկութեամբ , չարութեամբ և վրէժխնդրութեամբ լեցուն սիրտեր չունի՞նք մի մանա-

ւանդ անոնց վրայ՝ որ կրմնասուն մեզի :

Պ . Հրամարեա :

Ինչու որ՝ սիրտէն կեւան չար խորհուրդները , սպանութիւնները , շնութիւնները , պոռնկութիւնները , գողութիւնները , սուտ վկայութիւնները , հայհոյութիւնները : Մատթ. Ժե . 18 , 19 :

Հ . Ուրեմն աս Պատուիրանքը պահելու համար ի՞նչ տեսակ սիրտերու կրկարօթինք :

Պ . Նոր Սիրտերու : Յօհ . գ . 3—6 :



Վեցերորդ Պատուիրանքը կըսորվեցունէ մեզի մեր պարտաւորութիւնը թէ ուրիշներուն կեանքին՝ և թէ մեր կեանքին նայելով :

Ը . Մենք չէ թէ միայն մեր ընկերը պիտի չմեռցունենք , և չէ թէ բարկութեան՝ թշնամութեան՝ կամ ռիսակալութեան զգացումներ պիտի չունենանք անոր վրայ . հապա նաև սիրելու ու պաշտպանելու ենք իր անձը և կեանքը բուն մերինին պէս : Մենք անոր հետ խաղաղութիւնով վարուելու ենք , և ջանալու ենք որ ուրիշներն ալ այնպէս վարուին իրեն հետ . մինչև անգամ ինքը մեզի թշնամի ըլլայ ալ նէ : Ըս մասին պէտք կըլլայ որ Յիսուս Քրիստոսը մեզի օրինակ առնենք :

Ի . Մենք կանարդենք աս Պատուիրանքը .



'Վախ՝ երբոր կատենք մեր՝ ընկերը ծածուկ մեր  
 սրտին մէջը . քանզի ասանկ ատելութիւնը՝ սրտի  
 մէջ մարդասպանութիւն է : Արկրորդ՝ ալ աւելի  
 կանարգենք աս Պատուիրանքը , երբոր մեր  
 բարկութիւնը և ատելութիւնը յայտնի ընենք  
 իրեն հետ չխօսելով . կամ անէծքներով ու գէշ  
 անուններով զինքը նախատենք . կամ իր պատ-  
 ւոյն ու իր օգուտին վնաս ընենք , թէ ծածուկ և  
 թէ յայտնի կերպով : Արբորդ՝ աւելի մեծա-  
 գոյն աստիճանով կանարգենք աս Պատուիրան-  
 քը , երբոր այնպէս բարկանանք՝ որ անոր վրան  
 վազելով՝ ծեծենք ջախջախենք և կամ մեռցու-  
 նենք զինքը : Չորբորդ՝ երբոր մեր ընկերին բան  
 մը տանք ուտելու կամ խմելու , որն որ մենք գի-  
 տենք թէ պիտի կորսնցունէ անոր առողջութիւ-  
 նը և կեանքը , կամ թէ միայն վտանգի մէջ պի-  
 տի ձգէ զինքը : Հինգերորդ՝ երբոր զուր տեղը  
 մեր հաճութեանը կամ մեր օգուտին համար՝ մեր  
 ընկերին կեանքը վտանգի մէջ ձգենք , կամ զօ-  
 րութիւն ունենալով պահանջենք իրմէն անանկ  
 բան մը ընել՝ որն որ իր կորստեան պատճառը  
 պիտի ըլլայ : Աւեցերորդ՝ երբոր մեր զբօսանքին  
 համար գրգռենք ուրիշները իրարու դէմ բար-  
 կանալու և ծեծկուելու : Աօթներորդ՝ երբոր  
 բուն մեր կեանքը կորսնցունենք , թէ հրացանով՝  
 թէ կախուելով՝ թէ խեղդուելով՝ թէ անառա-  
 կութեամբ ուտելով և խմելով և թէ ուրիշ ան-  
 ժուժկալութեան գործքերով :

Գ . Ես Պատուիրանքը պահելու համար

պէտք է որ Վախ՝ մեծ բան սեպենք մարդկային կեանքը որ Մատուծմէ մարդուս տրուած ամենապատուական պարգևն է , բայց ՚ի հոգիին փրկութենէն : Արկրորդ՝ պէտք է որ սիրենք ամեն մարդ և դէմ՝ կենանք ու յաղթենք մեր բարկութեանը՝ երբոր սկսի բորբոքիլ : Արրորդ՝ պէտք է որ փախինք բարկասիրտ ու ռսակալ մարդոց ընկերութենէն , որոնք մեծ ու պատուական բան մը կը սեպեն նախատինքի չհամբերելով՝ վրէժ առնելը : Չորրորդ՝ պէտք է որ խոնարհ ու հանդարտ հոգի մը ստանալու ջանանք . հպարտութիւնը , բարկութիւնը և ինքնահաւանութիւնը՝ իրենցմէ ետքը հակառակութիւն ու մահ կը բերեն : Հինգերորդ՝ պէտք է որ աղօթենք Մատուծոյ որ մեզի խաղաղասէր բնաւորութիւն մը տայ , քանզի անով կընմանինք Վրիստոսի . և անանկ բնաւորութիւն մը խիստ ցանկալի ու քաղցր բան մըն է , որ նաև երջանկութիւն և հանդարտութիւն կը պատճառէ . բայց բարկութեան ու վրէժխնդրութեան հոգին՝ թշուառութիւն է ինքիրմէն , որն որ Չարին հոգին է :

Վ . Վարկացող ու վրէժխնդիր մարդիկ պարտին ապաշխարել և Մատուծմէ նոր սիրտ մը խնդրել . թէ չէ՝ բնաւ չեն կրնար պատրաստուիլ Արկնից թագաւորութեանը համար , որն որ արդարութիւն և խաղաղութիւն է : Մեր փրկիչը խաղաղութեան թագաւոր է :

Եօթներորդ Պատուիրանքը :

Եւր . 1 . է . 1—27 :

Ն . Որն է եօթներորդ Պատուիրանքը :

Պ . “Շնորհիւն մի ընէր” :

Ն . Եււաջին կարգուող մարդիկը որո՞նք էին :

Պ . Եղամ՝ ու Նւան :

Ն . Որի՞ն ձեռքովը կարգուեցան :

Պ . Տէր Եստուծոյ ձեռքովը : Նոնոր .  
ք . 18—25 :

Ն . Սարգիկի՞նչ կերպով պարտին կարգուիլ , յայտնի՞ թէ ծածուկ :

Պ . Յայտնի կերպով :

Ն . Եստուած իսկապէս ներկայ է ամուսնութեան ատենը՝ վկայ ըլլալու համար :

Պ . Նրամերես :

Ն . Կարգուելէն ետքը որ ատեն որ ուզեն նէ՝ էրիկը կամ կնիկը կրնա՞ն մի իրարմէ զատուիլ :

Պ . Չէ : Սաթի . ժթ . 9 :

Ն . Ուրիշ մէկը բնաւ զօրութիւն ունի՞ մի զանոնք իրարմէ զատելու :

Պ . Չէ . “Ուրեմն ինչ որ Եստուած միա-

ւորեց՝ մարդը թող չըստէ՛' : Սաաթ . ԺԹ . 6 :  
 շ . Ուստի բնաւ չե՞ն կրնար իրարմէ  
 զատուիլ :

Պ . Սիայն երկու կերպով կրնան զա-  
 տուիլ :

շ . Ի՞նչ է առջինը :

Պ . Երբ որ անոնցմէ մէկը շնութիւն ընէ :

Սաաթ . Ե . 32 :

շ . Ի՞նչ է երկրորդը :

Պ . Երբ որ անոնցմէ մէկը մեռնի :

Սաաթ . Է . 2 , 3 : ա կարնի . Է . 39 :

շ . Շնութիւնով բռնուած մարդիկը՝  
 լստուած ի՞նչպէս պատժելու հրաման տուաւ  
 իրէից :

Պ . Սահով :

Շնութիւն ընողն ալ պոռնիկն ալ պիտի մեռ-  
 ցունեն : ՂԼ . Ի . 10 : Թէ որ մարդ մը է-  
 րիկ ունեցող կնկան մը հետ պառկած գտնուի  
 նէ , անատենը թէ ան կնկանը հետ պառկող  
 մարդը՝ թէ ան կնիկը՝ երկուքն ալ պիտի մեռ-  
 նին : Բ ( ) ըն . Իբ . 22 :

շ . Որի՞ն կըլերաբերին մեր մարմիննե-  
 րը , և որո՞ւն համար անարատ պահելու ենք  
 զանոնք :

Պ . Լստուծոյ համար :

Չէ՞ք գիտեր դուք՝ որ Լստուծոյ տաճար էք

ու՛ր ստուծոյ շողին ձեր մէջը բնակած է : (Թէ որ մէկը Մատուծոյ տաճարը կապականէ՛ Մատուած անիկայ պիտի ապականէ . ինչու որ Մատուծոյ տաճարը սուրբ է, որ դուք էք : ա Վրն՛ . Գ . 16 , 17 : Ղ . 13 — 20 : ա (Թէ . Գ . 3—7 : Օննք . լթ . 9 :

շ . Ի՞նչ կրսուի շնացող կնկան տանը վրայով :

Պ . “Մնոր տունը Գժոխքին ճամբաներն են . անոնք մահին փոսը կիջեցունեն” : Մատ . է . 27 : Ե . 5 :

շ . Կրկնէ նայիմ՝ Սողոմոնին ըսածը :

Պ . “Մն ամէնքը՝ որ անոր ետեւն կերթան , չեն դառնար նորէն , ոչ ալ կեանքին ճանապարհը պիտի ունենան” : Մատ . Բ . 16—19 : Ե . 20—23 :

շ . Ուրեմն անկից դառնալուն վրայով ի՞նչ պատուէր կայ :

Պ . “Շեռացուր ան կնիկէն քու ճամբադ , ու անոր տանը դրանը մի մօտենար” : Մատ . Ե . 8—13 :

շ . Պա՞րտինք պատուել կամ ընկերութիւն ընել անոնց հետ՝ որ աս պատուիրանքը չեն պահեր :

Պ . Չէ :

Մտաւոր շտնեբուն ընթացքին մի հետեւիր , ու

չարերուն ճամբան մի երթար : Լնկից զգոյշ կեցիր , անոր քովէն մի անցնիր . դարձիւր անկէց՝ աւանցիր : Լնկ . դ . 14 , 15 : ա Կոլ . Ե . 9—13 :

Հ . Լատուած կրպահանջէ՞ մեղմէ աա Պատուիրանքը պահել մեր բոլոր սրտովը , և բուն մեր սրտին մէջ ալ :

Պ . Հրամարես :

Լսեր էք որ ըսուեցաւ , Շնութիւն մի ըներ . բայց ես ձեզի կըսեմ , թէ՛ ով որ կնիկ մարդու կընայի անոր ցանկանալու համար , անիկայ իր սրտին մէջն ալ շնութիւն ըրաւ անոր հետ : Սոբ . Ե . 27 , 28 : Լնկ . դ . 25 :

Հ . Լռջի ժամանակուան մարդիկը ո՞ր Պատուիրանքը անարդեցին , և շարժեցին Լատուծոյ բարկութիւնը՝ որ ջրհեղեղով կորսընցուց զանոնք :

Պ . Լօթներորդ Պատուիրանքը : Սոբ . դ . 1 , 2 , և այլն :

Հ . Լու Սողոմոնացիք ու Պոմորացիք ո՞ր Պատուիրանքը անարդեցին ու շարժեցին Լատուծոյ բարկութիւնը՝ որ այրեց զանոնք կրակով ու ծծումբով :

Պ . Լմանապէս Լօթներորդը : Սոբ . ժթ . 4—28 : Սոբ . 7 :

Հ . Լատուած ո՞րչափ Լսրայէլացիներ

կորսնցուց մէկ օրուան մէջը, աս Պատուիրանքը անարդեւնուն համար :

Պ . «Վասնըջորս հազար» : Թ. 100 . յ .  
Իե . 1 — 9 : աս կարնի . Ժ . 8 :

Հ . Եստուած գալու աշխարհին մէջ  
ինչպէս պիտի պատժէ Պոռնիկները ու Շը-  
նացողները :

Պ . Յաւիտենական կրակով :

Ինչու որ մարմինին գործքերը յայտնի են , որ  
ասոնք են՝ շուժիւն , պոռնըկութիւն , պղծու-  
թիւն , գիճութիւն , . . . որ ասանկ բաներ գոր-  
ծողները Եստուծոյ արքայութիւնը չեն ժառան-  
գեր : Վաղ . ե . 19—21 : Բայց պոռնըկու-  
թիւն և ամէն կերպ պղծութիւն՝ կամ ազահու-  
թիւն չըսուի ալ ձեր մէջը , (ինչպէս որ կը վայլէ  
սուրբերուն ) և զարչելի բաներ՝ կամ խենթու-  
մենթ խօսքեր՝ կամ խեղկատակութիւն , որ չվայ-  
լեր , հապա էվելըք գոհութիւն : Ես իմանալով  
գիտնաք սր ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ա-  
գահ՝ որ կուսպաշտ է , Վրիստոսին ու Եստու-  
ծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն մը  
չունի : Եւս . ե . 3—5 : Եւ ծոյլերուն ու  
անհաւատներուն՝ սպանողներուն ու պոռնիկնե-  
րուն և կախարդներուն ու կուսպաշտներուն՝ ու  
գեղ տուողներուն և բոլոր սուտ զրուց ամբա-  
րիշտներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով  
էրուած լիճին մէջն է , որ է երկրորդ մահը :  
Յայտ . Իա . 8 :

Եւ թանկորդ Պատուիրանքը կըսոր խցունէ մեզի մեր պարտաւորութիւնը՝ ուրիշներուն ողջախօհութեանը նայելով . ու նաև մեր մարմինները ինտոր գործածելը ու սրբելը :

Ե . Եւ մուսնութիւնը Եւստուծմէ հաստատուեցաւ . և երբոր երկու յարմար անձանց մէջ՝ յարմար կանոնով կը լլայ՝ շատ աղէկ ու երջանիկ վիճակ մըն է . և Եւստուծոյ դիտաւորութիւնը ան էր՝ որ ասանկ ըլլայ : Եւստուած կատարեց առաջին ամուսնութիւնը մեր առաջին ծնողացը մէջ . և ան ամուսնութիւնը՝ բոլոր ետքը գալու ուրիշ ամուսնութիւններուն օրինակ էր : ( ) րինաւոր ամուսնութիւնը միայն մէկ էրիկ մօրդու և մէկ կնկան մը մէջ տեղը կը կայանայ . ու հրապարակաւ կատարուելու է ան հանդէսը , անանկ մարդիկներով՝ որ օրինաւոր իշխանութիւն ունին ան բանին վրայ : Սօտ ազգականի հետ ամուսնանալը ապօրինաւոր է : Եւ մուսնանալէն ետքը երկու կերպով միայն զատուիլ կրնայ ըլլալ . մէյմը՝ երբոր Եւրիկը կամ Վիիկը շնութիւն ընելու ըլլայնէ , մէյմըն ալ՝ երբոր երկուքին մէկը մեռնելու ըլլայ :

Բ . Էրաժարելու ենք շնութիւն ու պոսնըկութիւն ընելէն , և պիղծ խորհուրդներուն կամ խօսակցութիւններուն հաճելու չենք , որ պիղծ գործքերուն արմատներն են : Մենք մեր ընկերներուն կնկանը կատարեալ սրբութիւնով պիտի նայինք . և պիտի պաշտպանենք ամէն պղծութիւններէն , ինչպէս որ կուզենք թէ բուն մերինը



պաշտպանուի : Ս'եր մարմիններն ալ պատուոյ մէջ պահելու ենք Մատուցոյ պաշտօնին համար՝ իբրև Սուրբ Հոգիին բնակելու տաճար մը :

Գ . Ս'ենք աս Պատուիրանքը կանարգենք . 'Նախ՝ երբոր շնութիւն կամ պոռնկութիւն կընենք , կամ պիղծ խորհուրդներուն ու ցանկութիւններուն և անպարկեշտ վարքերուն կամ խօսակցութիւններուն հաճութիւն կը ցուցնենք : Արկրորդ՝ երբոր ուրիշներն ալ կը քաջալերենք որ աս մեղքերը գործեն , ու չենք աշխատիր զանոնք արգիլելու :

Գ . Հնութիւնը ու պոռնկութիւնը սոսկալի մեղքեր են , և Մատուցոյ բարկութիւնը կը բերեն բոլոր ան մարդիկներուն վրայ՝ որ աս մեղքերը կը գործեն :

Ե . Եսոնք անանկ մեղքեր են՝ որ չեն կրնար պահուիլ . քանզի պոռնիկներուն ու շնացողներուն մէջը՝ հաւատք չկայ . անոնք որ ինքզինքնին կը ստեն , բնաւ չեն կրնար հաւատարիմ ըլլալ ձեզի . ու թէպէտև անոնց մեղքերը գաղտուկ մնան մարդոցմէ , բայց չկրնար ծածկուիլ Մատուցմէ , որուն առջևը ամենածածուկ մեղքերը ևս յայտնի են : Օ՛ննք . Ժբ . 17 : Ի . 2—9 : Եւս . Ե . 20 , 21 :

Օ . Եսոնք անանկ մեղքեր են՝ որ գործողներուն վրայ՝ ուրիշ մեղքերէն աւելի շուտով ու աւելի շատ ախտ՝ թշուառութիւն և կորուստ կը բերեն : Մ'ենք որ աս մեղքերը կը գործեն՝ կը կորսնցունեն բուն իրենց պատիւը և ուրիշներուն

պատիւն ալ , Աստուծոյ իշխանութիւնը ու կարգադրութիւնը , մարդուս գերերջանիկ վիճակը , ընկերութեան ամենալաւ բարիքը , իրենց զաւակին բարի համբաւը , և բուն իրենց հոգիին փրկութեան յոյսը : Անոնք իրենց ցանկութիւններուն ծառայ են , անոնց սիրտը պինդ է , անոնց միտքը խաւար է , անոնց խղճմտանքը թմրած է , անոնց բարքը անճոռնի է , անոնց բնաւորութիւնը անողորմ է : Անոնք ենթակայ են խիստ զգուելի ու տառապեցուցիչ հիւանդութիւններու՝ յանկարծահաս իջուածքներու ու մահուան . և անոնց պատժապարտ հաճութիւններուն մէջ տեղը՝ շատ անգամ կորուսար շուտով կը հասնի : Անոնց ընթացքը զանոնք Վժռիքը կը տանի :

Եւ . Աս մեղքերը արգիլուելու համար . 'Ասխ' թող տղաքները զգուշութեամբ կը թուին բոլոր մաքրութիւններով , ու պաշտպանուին գէշ ընկերներէն , վտանգաւոր տեղերէն և բարքերնին ապականող զբօսանքներէն : Արկրորդ՝ թող ամէն մէկը բարեխառն ըլլայ իր կենացը մէջ , աղէկ մարդիկներ ընտրէ իր ընկերութեանը համար , հեռու կենայ թատրոններէն , գինետուններէն ու անմաքուր գիրքերէն : Արրորդ՝ իր պառկելու ու ելլալու ատենը կանուխ ու կանոնաւոր ըլլայ : Չորրորդ՝ ամէն բանէն աւելի Աստուծոյ օգնութիւն խնդրենք և հսկենք ու աղօթենք՝ որ փորձութեան մէջ չիյնանք :



Ութերորդ Պատուիրանքը :

Հետևյալ է . 1—26 :

Ն . Որն է Ութերորդ Պատուիրանքը :

Պ . “Վարդ-Նի-ն յի՛ ընէր” :

Ն . Թէ որ բան մը առնեմ որ իմն չէ ,  
ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Վողութիւն :

Վու գրացիիդ զրկանք մի ըներ , և յափշտակութիւն մի ըներ . քեզի վարձքով բանողին վարձքը՝ մէկ գիշեր մինչև առտու քու քովդ չպիտի մնայ : Վ Լ Գ . ԺԹ . 13 :

Ն . Թէ որ բան մը գտնամ ու տէրոջը չտամ նէ , ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Վողութիւն : Վ Լ Գ . Դ . 1—7 :

Ն . Թէ որ բան մը առնեմ կամ ծախեմ՝ և շիտակ ու լման չափով ու գինով չընեմ իմ առուտուրս , ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Վողութիւն :

Վատաստանի մէջ անիրաւութիւն չպիտի ընէք , կանգունի՛ կշառքի մէջ ու չափի մէջ ալ : Չեր կշառքները լման՝ ձեր տրամները լման՝ ձեր էֆան լման ու հիմէնը լման պիտի ըլլայ , և այլն : Վ Լ Գ . ԺԹ . 35 , 36 :

Ն . Թէ որ իմ գրացիիս իրաւամբ սլարտք

ունենամ , և կարողութիւն ունենալով՝ չուզեմ հատուցանել , ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Գողութիւն : Լւբէճ . իբ . 13 :  
Հրոյճ . ժգ . 7 , 8 : ա Տիճ . ա . 10 :

Հ . Թէ որ բան մը փոխ առնեմ՝ որն որ բնաւ ետ տալու միտք չունենամ , կամ անոր ասոր սարսք ընեմ՝ որ անոնք հատուցանելու բնաւ զիտաւորութիւն մը չունենամ , կամ աղէկ գիտնամ թէ բնաւ չպիտի կրնամ հատուցանել , ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Գողութիւն :

Սեղաւորը փոխ կառնէ ու չմտաբեր . սակայն արդարը կողորմի ու կուտայ : Սուճ . լէ . 21 :  
Դ Թիճ . Դ . 1 — 7 :

Հ . Թէ որ ինչ և իցէ կերպով իմ դրացիս խօսեմ և իր ունեցածը ձեռքէն առնեմ , ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Գողութիւն : Բ ( ) Են . իէ . 17 :  
Երուճ . իբ . 8 :

Հ . Թէ որ ես գիտնամ թէ ուրիշները կուզեն իմ դրացիէս գողութիւն ընել՝ ու չիմացունեմ իրեն ան բանը , և կամ անոնց գողցածնուն բաժին առնելու համոզուիմ , գողութիւն ըրած պիտի չըլլամ :

Պ . Հրամարեա . Գողին հաղորդ ըլլողը գողին պէս գէշ է :

Եւ թէ որ անձ մը մեղանչէ , զորօրինակ երդումի ձայնը լսելով՝ վկայ ըլլայ , և կամ տեսած ըլլայ՝ կամ գիտցած՝ թէ որ չիմացունէ նէ , անոր յանցանքը ինքը պիտի կրէ : Վարդ . ե . 1 : Պող տեսնալու ըլլայիր նէ՝ անոր հետ կըմիաբանէիր , ու շնացողներուն հետ բաժին ունիս : Սուր . ճ . 18 : Պողին հաղորդ ըլլողը կատէ իր հոգին , անիկայ Երդումը կըլսէ , ու չիմացուներ : Աստ . իթ . 24 :

Վ . Ի՞նչ էր Աքաբի յանցանքը ու անոր պատիժը :

Պ . Աս էր որ ոսկի դաւաղանը ու գեղեցիկ վերարկուն գողցաւ Արիքովի մէջ , և քարկոծուեցաւ իր բոլոր ընտանիքովը : Աստ . է . 1—26 :

Վ . Ի՞նչ էր Աքաբի և Յեզաբէլի յանցանքը :

Պ . Աս էր որ Յեզաբէլ մեռցունել տուաւ Նաբովթը , ու ետքը Աքաբ անիրաւութեամբ անոր այգին իրեն առաւ : գ թատ . իա . 1—21 :

Վ . Եւ ի՞նչ եղան Աքաբ ու Յեզաբէլ :

Պ . Աորսուեցան : գ թատ . իբ . 34 , 35 :

Վ . Ո՞ր ծառան էր որ գողութիւն ըրաւ

ու պահեց իր գողցածը՝ սուտ խօսելով, և բորոտութիւնով պատժուեցաւ :

Պ . Գէեզի, Լազիսէ մարգարէին ծառան :  
Գ . Թատ . Ե . 20—27 :

Ն . Ո՞վ էր ան գողը՝ որ իր Տէրը մատնեց ու ետքը ինքզինքը խղզեց :

Պ . Յուդա Իսկարիովտացին : Մատթ .  
Իէ . 3—8 : ՅԵՆ . Ժբ . 6 : Գարժ . ա .  
18—25 :

Ն . Թէ որ մէկը բան մը գողնայ ու ետքը առտ զրուցէ իր գողցածը պահելու համար, անիկայ մէկ օգուտ մը կը լսո՞յ իրեն :

Պ . Չէ՛, անով միայն իր մեղքը կը մեծցունէ :

Ն . Որո՞նք էին Առաքելոց ատենը գողութեան ու ստախօսութեան համար մեռնողները :

Պ . Անանիա ու իր կնիկը Սափիրա :  
Գարժ . Ե . 1—10 :

Ն . Ասոր վրայով ի՞նչ կըսէ Սուրբ Գիրքը :

Պ . “Ա՛ն որ գողութիւն կընէր՝ նէ, ալ թող չգողնայ, հասկա մանաւանդ թող աշխատի իր ձեռքովը աղէկ բաներ գործելու, որ կարող ըլլայ տալ՝ որի որ պէտք է նէ” :  
Լէւ . Գ . 28 :

Տ . Քրիստոնեայները ի՞նչպէս քաղելու են աշխարհիկ մարդոց առջևը :

Պ . “Երդարութեամբ” : ա թԷ՞ . 7 . 11 , 12 :

Տ . Ի՞նչպէս ողիտի պահենք ինքզինքնիս գողութիւնն ընելէն :

Պ . Եստուծակ վախնալով ու իրեն ապաւինելով :

Տ . Գողերը և սուտղրուցները բնաւ Եստուծոյ արքայութիւնը կրնա՞ն մտնալ :

Պ . Չէ՛ :

Ո՛չ գողերը՝ ո՛չ ազահները՝ ո՛չ գինոյները՝ ո՛չ բամբասողները՝ ու ո՛չ յափշտակողները՝ Եստուծոյ թագաւորութիւնը չեն ժառանգեր : ա Վարդ . 7 . 10 : Յայտ . իա . 8 , և այլն :



Ութերորդ Պատուիրանքը մեզի կը սորվեցունէ մեր պարտաւորութիւնը , թէ՛ մեր ստացուածքին , և թէ՛ մեր ընկերին ստացուածքին նայելով :

Ե . Ես աշխարհիս մէջ մենք ու մեր ընտանիքները՝ զանազան բաներու կրկարօտինք՝ միսիթարութեան ու հանգստութեան համար . զոր օրինակ՝ տունի , հանդերձի , կերակուրի , և այլն : Ուստի ամէն մարդ պարտի ժրաջան ըլլալ որ

կարող ըլլայ օրինաւոր ապրուստ գտնել իրեն՝  
 և իր ընտանիքին համար : Ասե կըպահանջուի  
 մեզմէ՝ որ մեր ընկերը թողունք որ իր ունեցածը  
 վայելէ . ոչ իրմէն գողութիւն ընենք , ոչ ալ  
 զինքը զրկենք և ոչ ո՛ր և իցէ կերպով մըն ալ ան-  
 իրաւութիւն մը ընենք իրեն . հապա արդարու-  
 թեամբ վարուինք իր հետը , միշտ պաշտպանենք  
 իր ստացուածքը , և անոր բարգաւաճելուն ու  
 բարի վիճակին վրայ ուրախանանք , իբր թէ ան  
 ամէնը ճիշդ մեր անձին եղած համարելով :

Ի . Մենք կանարգենք աս Պատուիրանքը .  
 ‘Ախ՛ երբ որ մեր ձեռքը գողութիւն ընելու եր-  
 կընցունենք : Արկրորդ՝ երբոր ծածուկ կամ  
 յայտնի խարենք մեր ընկերը ի՛նչ և իցէ կեր-  
 պով . կամ երբոր ուրանանք կամ զանց ընենք  
 պարտքերնիս հատուցանել . կամ երբոր փոխ  
 առնենք՝ զիտնալով որ չպիտի կրնանք հատուցա-  
 նել , կամ բնաւ հատուցանելու գիտաւորութիւն  
 չունենանք . կամ երբոր պատահի բան մը զըտ-  
 նանք ու տիրոջը չտանք : Արբորդ՝ երբոր բան  
 մը գողցած ըլլանք կամ մեր ընկերը զրկած ըլ-  
 լանք , և ետ չդարձունենք ինչ որ իրմէն առեր  
 ենք : Չորրորդ՝ երբոր մեր ընկերը զրկողներուն  
 հետ բաժանորդ ըլլանք , կամ գիտնանք անոնց  
 չարութիւնը ու չիմացունենք իրեն՝ ան բանը :  
 Հինգերորդ՝ երբոր խստութեամբ ու բռնու-  
 թեամբ վարուինք անոնց հետ՝ որ մեզի համար  
 կաշխատին ու մեզմէ կախում ունին . և անոնց  
 պէտք եղածը առատապէս չհոգալէն զատ՝ իրենց



արդար վարձքն ալ չհատուցանենք , և այնպէս գլխի թէ անոնք գողութիւն ընելու ստիպենք . կամ երբոր տեսնանք աղքատը մէկէ մը չարչարուած ու զրկուած , և չօգնենք անոր : Այն երբոր՝ երբոր մենք անհոգ ըլլանք մեր գործին , գատարկակեաց կամ ծոյլ ըլլալով , և չաշխատինք ինքզինքնիս և մեր ընտանիքը կերակրելու : Ի՞նչ որ ասանկ ընենք՝ իրաւունք չունինք մեր գրքացիներէն կերակուր կամ օգնութիւն մը խնայելու : »

Վ . Ընչ մարդու պարտքն է պահել աս Պատուիրանքը՝ ինչ և իցէ վիճակի մէջ որ ըլլայ : Արբեմն կը խորհի ծառան՝ թէ մեզք չէ իր տիրոջմէն գողութիւն ընելը , աղքատը իր հարուստ գրացիէն , ազգին գլխաւորները իրենց ազգէն , զաւակը իր ծնողքէն , և այլն : Ընկառուրի մէջ ալ կը խորհին մարդիկ՝ որ կրնան գողնալ իրենց հետ առուտուր ընողներէն . բայց ասոնց ամէնն ալ գէշ են , ու Սէ՛րգիսի Պատուիրանքին գէմ : Աւստի բանի մը կարօտութիւն ունենանք նէ՛ չգողանք , հապա իր տիրոջմէն խնդրենք ինչ որ պէտք է մեզի : Ասելացութիւնը արդարութեամբ վարուիլն է : Ի՞նչ որ կուզես յաջողութիւն գանել , վարպետութիւն բանեցունելու տեղը՝ պէտք է որ կատարեալ արդարութիւն ը-

« . Ասանզի երբոր մենք ձեր քովն էինք՝ աս ձեզի կրպատուիրէինք , թէ ան որ չուզեր գործ գործել , հաց ալ թող չուտէ : Բ ի՞նչ . գ . 10 :

նեսս ամէնուն հետ :

Գ . Գողութիւնը զգուելի՝ նախատալից ու հոգեկորուստ մեղք մըն է : Գողին խղճմտանքը իրեն դէմ է . ինքը շարունակ կը վախնայ թէ գուցէ իր ըրածը իմացուի , և գրեթէ միշտ այնպէս կը լլայ , ու իր գողցած բաներէն՝ քիչ բերկրութիւն կունենայ . ամէն բարի մարդ անոր վրայ նախատինքով ու անարգութիւնով կը նայի , և ոչ ալ մէկը անոր վրայ վստահութիւն կունենայ . Ըստուած ալ կը զգուի անորմէ ու իր Արկնաւոր թագաւորութենէն դուրս կը վնասէ :

Ե . Ըս մեզքը արգիլելու համար՝ պէտք է որ գողութեան առաջին անգամին՝ տղաքները պատժուին , և աս մեղքին անարգութիւնը , ամօթը և չարութիւնը յայտնի ցուցուի անոնց : Սորվեցուր անոնց բարերար , աղնուամբտ ու ժբածան ըլլալ . իրենց ունեցած բաներով բաւականանալ , Ըստուծմէ վախնալ և Հիսուսի ոսկեղէն կանոնը յիշել , այսինքն ամէն բան՝ որ կուզէք թէ մարդիկ ձեզի ընեն , դուք ալ անոնց անանկ ըրէք : Սոր . է . 12 :

Իններորդ Պատուիրանքը :

ա Կորնթ . ժգ . 1—13 :

Զ . Ո՞րն է Իններորդ Պատուիրանքը :

Պ . “ Բնորոշեալ զէ՛ս սո՛ւրբ վայո՛ւնս ինչո՞ւն յիշել ” :

շ . Թէ որ քու վրայ ձգեմ ան յան-  
ցանքը՝ որն որ ուրիշ մէկը ըրեր է , ի՞նչ ը-  
րած կըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

շ . Թէ որ քու վրայովդ գէշ բաներ  
ըսեմ սուտ տեղը , ու ջանամ ուրիշներն  
ալ գէշ խորհել տալ քու վրայովդ , և  
այնպէս կորսնցունեմ քու բարի անունդ ու  
պատիւդ , անատենը ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

շ . Թէ որ Նստուած վկայ բռնեմ իմ  
սուտ խօսքերս հաստատելու համար , իմ  
մեղքս ալ աւելի մեծ չըլլա՞ր :

Պ . շրամերես :

շ . Թէ որ քու վրայովդ սուտ տեղը ու  
րիշներուն գէշ խօսիլը ու ամբաստանութիւն  
ընելը լսեմ՝ և գիտնամ թէ դուն անմեղ  
ես , և անոնց հետ մէկ ըլլալով՝ զերենք յօ-  
ժարեցունեմ ատ բանին մէջը յառաջանալու ,  
անատենը ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Սուտ վկայութիւն :

շ . Թէ որ գատաւորին ատենը կամ  
ուրիշ ո՞ր և իցէ տեղ մը կանչուելու ըլլանք  
մեր ընկերին համար կամ անոր գէմ վկա-  
յութիւն ընելու , ի՞նչ պարտինք խօսիլ :

Պ . Ճշմարտութիւն :

Սուտ լուր չպիտի տարածես . անօրէնի հետ ձեռքդ չպիտի դնես սուտ վկայ ըլլալու համար : Չարութիւն ընելու համար բազմութեանը չպիտի հետևիս . ու դատաստանի մէջ իրաւունքը դարձունելու համար՝ շատերուն ետևէն խոտորելու խօսք չպիտի տաս : Եւրեւ . իդ . 1 , 2 :

՝ . Ուստի ի՞նչ կարգիլէ աս Պատուիրանքը :

Պ . Կարգիլէ ամէն տեսակ բանասարկութիւնը , զրպարտութիւնը և բամբասանքը :

՝ . Եսոր վրայով ի՞նչ կրսէ Սուրբ Գիրքը :

Պ . “ Բու ժողովուրդիդ մէջը չարախօսութիւն ընելու չպտրաիս ” : ՎԼԿ . ԺԺ . 16 :

՝ . Ի՞նչ տեսակ մարդիկ են բանասարկուները , զրպարտիչները և բամբասողները :

Պ . Խռովարարու վնասակար անձինք են :

՝ . Մեր ընկերներուն ի՞նչ կերպով պարտինք խօսիլ ճշմարտութիւնը :

Պ . “ Սիրով ” :

՝ . Ի՞նչ կրսէ Սուրբ Գիրքը ասոր վրայով :

Պ . “ Ըմէն լեղիութիւն և բարկութիւն՝ ու սրտմտութիւն՝ և աղաղակ՝ ու հայհոյութեամբ ” :

Թիւն վերցուի ձեզմէ բոլոր չարութիւններով մէկ տեղ” : Եփե. . դ . 31 :

շ . Արհնէ նայիմ , ուրիշ ի՞նչ կըսէ Սուրբ Գիրքը :

Պ . “Թէ որ մէկը ուղէ կրօնաւոր ըլլալ՝ ու իր լեզուին սանձ չդնէ , հապա իր սիրտը խաբէ , անանկին կրօնաւորութիւնը փուճէ” : Յակ . ա . 26 :

շ . Ի՞նչպէս վարուելու ենք սուտղրուցներուն հետը :

Պ . Պարտինք ատել սուտղրուցները ու սուտ վկայները , և անոնց հետ ընկերութիւն ընելէն հրաժարիլ :

Իմաստուններուն հետ պտրտողը իմաստուն կը լայ . բայց յիմարներուն հաճողը գէշ կը լայ : Եփե . ժգ . 20 :

շ . Նրէայները ի՞նչ վկայութիւն ըրին մեր փրկիչին դէմ :

Պ . Սուտ վկայութիւն : Սափ . իղ . 59—61 :

շ . Շատ հարստութիւնէն մանաւանդ կեանքէն ալ ի՞նչ թանկագին բան ունի մարդ :

Պ . “Ղէկ անուն” : Եփե . իբ . 1 :

շ . Եղէկ անուն ստանալու համար ի՞նչպէս ջանալու ենք :

Պ . Բարի ըլլալով ու աղէկութիւն ընկ-  
լով :

Հ . Մենք որ մեծ բան կըսեալենք մեր ա-  
ղէկ անունը , չե՞նք պարտաւորիր պաշտպա-  
նել նաև մեր ընկերինն ալ :

Պ . Հրամարես , կըպարտաւորինք :

Հ . Սուտ խօսողները ու սուտ վկայու-  
թիւն ընողները կրնա՞ն անպատիժ մնալ :

Պ . Չէ :

Սուտ վկան՝ անմեղ չըլլար , և սուտեր խօսող  
ը՞ չազատիր : Եւրոպ . ԺԺ . 5 , 9 :

Իններորդ Պատուիրանքը մեզի կըսորվեցունէ  
մեր պարտաւորութիւնը՝ մեր ընկերին բարի անու-  
նին ու մեր բարի անունին նայելով :

Ե . Եշխարհիս մէջ մեր հանգստութիւնը ու  
երջանկութիւնը՝ մեր յաջողութիւնը և մեր օգու-  
տը՝ մեր ունեցած անունէն ու համբաւէն շատ  
կախում ունի : Ուստի մեր պարտաւորութիւնն է  
բարի գործքերով աղէկ անուն ստանալու ջանալ ,  
ու ե՛րբ որ կըստանանք՝ մեր պարտաւորութիւնն  
է պաշտպանել զանիկայ : Նաև մեր ընկերին ալ  
աղէկ անունը ու պատիւը պաշտպանելու ենք՝ իր  
վրայ ճշմարիտը խորհելով ու խօսելով , առանց

չողորորթելու , զրպարտելու , կամ անոր վրայ անիրաւ կասկած մը ունենալու , ողորմութեամբ ու գթութեամբ յանդիմանելով անոր յանցանքները , ու զանոնք ծածկելով ուրիշներէն՝ որչափ որ պէտք է ծածկել . պաշտպանելով զինքը ան թշնամիներէն՝ որոնք անոր աղէկ անունը աւրել կուզեն . և վերջապէս թէ իրեն համար է եղեր և թէ իրեն դէմ՝ ճշմարիտ վկայութիւն ընելով՝ վկայութիւն տալու կանչուած ատեննիս :

Ի . Սենք աս Պատուիրանքը կանարգենք , Վախ՝ երբոր բանսարկու , շատախօս , խռովարար կամ բամբասող ըլլանք մեր հասարակ խօսակցութեանը մէջ : Արկրորդ՝ երբոր ասոր հակառակ մեր ընկերին չունեցած աղէկութիւնները իրեն տալով՝ շողորորթութիւն ընենք : Արբորդ՝ երբոր դատաւորին առջևը մեր ընկերին համար սուտ վկայութիւն ընելով՝ իր մեղքը ծածկենք՝ որն որ պէտք է ցուցնել : Չորբորդ՝ երբոր դատաւորին առջևը մեր ընկերին դէմ սուտ վկայութիւն ընելով՝ զրպարտութիւն մը վրան դրնենք , որով գուցէ իր պատիւը կորսնցունենք , կամ իր ընտանեացը՝ իր ստացուածքին և կամ իր կեանքին ալ վնաս մը հասցունենք :

Գ . Սարդիկ չարին հակամիտեալ ըլլալով՝ ընդհանրապէս կը սիրեն իրենց ընկերին վրայով գէշ խօսիլը , նմանապէս անոնց համար ըսուած գէշ խօսքերը լսելը : Մսկէց է որ կը ծագի վիճաբանութիւն , հակառակութիւն , նախանձ , ատելութիւն , վրէժխնդրութիւն և կռիւ : Արդ-

Յ) - 4 . 1 - 18 :

Վ . Թող ամէն մէկը Մատուծմէ շնորհք ու զօրութիւն խնդրէ՝ աս Պատուիրանքը պահելու համար : Մսկէ զատ միշտ դուն քու տկարութիւնն ըրդ յիշէ . քու գործքերդ քեզի բաւական զբաղմունք թող ըլլան , որ ուրիշին գործքին խառնուելու ժամանակ չունենաս . աղէկ մտիկ ըրէ երկու կողմն ալ՝ թէ որ մէկը դատելու ըլլաս , ու նայէ որ մէկու մը վրայ՝ մարդոց վճիռը չընդունիս միշտ , բայց դուն քու խղճմտանքովդ դատէ ամէն բան . որչափ որ կրնաս , միայն աղէկը պատմէ քու ընկերիդ համար . Մատուծմէ Վրէնիացոց Լըբեդատաներոց գլխիւ շատ անգամ կարգա՛ ու մտածէ անոր վրայ . բամբասողներուն ընկերութենէն հեռու կեցիր . և թէ որ անոնց հետը գտնուիս ու ուրիշ բան մը չկրնաս ընել անոնց բանսարկութիւնները խափանելու , քու լուծիւնդ թող յանդիմանէ զանոնք : Վերջապէս Մատուծմէ խնդրէ եղբայրսիրութեան շնորհքը :

Ե . Վեշտութիւն ընելով բնաւ մի ցանկար չար մարդոց մէջը անուն ստանալու . աշխարհինչ որ ընելու ըլլայ քու վրայովդ՝ դուն անմեղ խղճմտանք մը ունեցիր Մատուծոյ ու մարդոց առջևը . համբերէ՛ երբոր քեզի զրպարտութիւն ընեն ու անիրաւութեամբ դատեն . Մատուծոյ ձգէ քու դատաստանդ . յօժարութեամբ դէպի ան դատաստանին նայէ , երբոր ամէն մարդ իր գործքին համեմատ գովութիւն պիտի առնէ Մս-



տուճմէ : Մատթ . Ե . 11 : աղարկ . Դ . 3—5 :

Օ . Վրիստոնեայները յատկապէս իրենց բարի անունը ու իրենց եղբայրներուն բարի անունը զգուշութեամբ պահելու են , որ անօգուտ չըլան աշխարհի մէջ , և փնաս չընեն Մատարանին պատուոյն ու Վրիստոսի փառքին :

Տասներորդ Պատուիրանքը :

Դ թո՛ւ . Իա . 1—16 :

Ն . Ո՞րն է Տասներորդ Պատուիրանքը :

Պ . “ Վո՞ւրայցիկդ պո՛նին Տե՛ր ցանկար ,  
 Կո՞ւրայցիկդ կնկանը՝ կամ անոր Ժառանգին՝ կամ  
 անոր աղայիկին՝ կամ անոր էղին՝ կամ անոր էշուն՝  
 և Կո՞ւրայցիկդ ասե՛նեն Տե՛ր Բանին Տե՛ր ցանկար” :

Ն . Աստուած ի՞նչպէս կրպահանջէ իզմէ  
 որ իմ ընկերս սիրեմ :

Պ . Իմ անձիս պէս : Մատթ . Իբ . 35—  
 40 : Նո՞ւփճ . Ժդ . 9 , 10 :

Ն . Ուրեմն պարտաւոր չե՞մ ուրախա-  
 նալու , երբոր տեսնամ զինքը որ ամէն բարիք-  
 ներով լեցուն է ու զանոնք կրվայելէ :

Պ . Նրամերես :

Ն . Ի՞նչ զիցուք թէ ես անոր ունեցած

պատուական բաներուն վրայ նախանձիմ ,  
ցանկալով որ անոնք իմս ըլլան , անատենը  
ի՞նչ ըրած կըլլամ :

Պ . Ըչք տնկած կըլլամ , որ աս՝ Տաս-  
ներորդ Պատուիրանքին դէմ է :

Հ . Ըս չէ՞ իմ պարտաւորութիւնս , որ  
իմ ունեցած բաներովս դո՛հ ըլլամ , առանց  
իմ ընկերիս ունեցածին նախանձելու :

Պ . Հրամարես :

Հ . Ի՞նչ կըսէ Պօղոս Ըռաքեալը իր բա-  
ւականութիւն սորվելուն վրայով :

Պ . “ Ես սորվեցայ բաւական ըլլալ ա-  
նով որ կրնամ ունենալ : Գիտեմ պակասու-  
թիւն քաշել . գիտեմ էվելօքը ըլլալ . ամէն  
ատեն ամէն կերպով աղէկ հասկըցեր եմ ,  
կշտանալն ալ , անօթենալն ալ , էվելօք ըլ-  
լալն ալ , պակասութիւն քաշելն ալ ” : Փէ՛լոյ .

դ . 12 : Գործ . ի . 33 :

Հ . Ուրիշ ի՞նչ կըսէ :

Պ . “ Ըստուած պաշտութիւնը՝ բաւակա-  
նութիւնով մէկ տեղ՝ մեծ շահելու վաճառ-  
մըն է : Ինչու որ բան մը չքերինք աշխարհ ,  
ու բան մը չենք կրնար տանիլ : Հասկա ու-  
նինք կերակուր ու հանդերձ , և անով բա-  
ւականանանք ” : ա Տէ՛ճ . զ . 6—8 :

շ . Որմէ՞ն կիջնայ ամէն բարի պարգևները և ամէն բարի շնորհքները :

Պ . Լստուած մէ : (Յակ . ա . 17 :

շ . Թե՛ որ մէկը ժրաջան ըլլայ ու աշխատի և միշտ արդարութիւն գործէ Լստուածոյ առջևը , արդեօք Լստուած թող կուտայ՞ որ ան մարդուն պէտք եղած բան մը պակսի իրմէն :

Պ . Ըէ՛ :

Ինչու որ , Տէր Լստուած արև ու վաճան է , Տէրը շնորհք ու փառք պիտի տայ . աղէկութիւնը չպիտի պակսեցունէ շիտակութիւնով քաղովներէն : Սաղ . ճգ . 11 :

շ . Լս Պատուիրանքը կարգիլէ՞ մեզ՝ մեր ընկերին գէմ՝ մինչև անգամ՝ չար խորհուրդ մը ունենալէն :

Պ . Հրամարեօ : Թուոց . Ժզ . 22 :

Եսակ . Ժզ . 2 : Իդ . 9 :

շ . Մաքուր սիրտ մը ունենալու համար ի՞նչպէս աղօթելու ենք Լստուածոյ :

Պ . “ Ո՛վ Լստուած , իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ , և ուղիղ հոգի իմ մէջս նորոգէ ” : Սաղ . ծա . 10 :

շ . Եւ ի՞նչպէս աղօթելու ենք Լստուածոյ՝ մեր սիրտերը փորձելու համար :

Պ . “ Փորձէ՛ իս՝ ո՛վ Լստուած , ու գիտ-

ցիր իմ սիրտս . իս քննէ ու դիտցիր իմ խորհուրդներս , Ու նայէ թէ որ չար ճամբուն մէջն եմ նէ , ալ իս դէպի յաւիտենական ճամբան առաջնորդէ” : Սաղ . ՃԹ . 23 , 24 :

շ . Ի՞նչ է Եւաջին չորս Պատուիրանքներուն բովանդակութիւնը :

Պ . “ Բու Տէր Եստուածդ պիտի սիրես քու բոլոր սրտէդ և քու բոլոր հոգիէդ և քու բոլոր զօրութենէդ” : Բ (Օ)՞ն . Գ . 5 : Սաղ . իբ . 37 :

շ . Եւ ի՞նչ է մնացած վեց Պատուիրանքներուն բովանդակութիւնը :

Պ . “ Բու ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս” : Սաղ . իբ . 39 :

շ . Պարտաւոր ենք բոլոր Պատուիրանքները կատարելապէս պահելու :

Պ . շրամերես , և մեր պարտաւորութեան անսխալութիւնը կանոնն են անոնք :

շ . Ի՞նչ պիտի ըլլան անոնք՝ որ աս Պատուիրանքներուն կատարելապէս չեն հնազանդիր :

Պ . Պիտի պատժուին յաւիտենական կորուստով : Վաղ . Գ . 10 :

շ . Ի՞նչ մենք որ հնազանդած չենք աս

Պատուիրանքներուն , ինչպէս ուրեմն պիտի  
փրկուինք յաւիտենական կորուստէն :

Պ . Տէր Էջիսուս Վրիստոսին հաւատա-  
լով :

Հաւատա՛ Տէր Էջիսուս Վրիստոսի , ու պիտի  
փրկուիս դուն՝ և քու բոլոր տունդ : Վարձ . Ժդ .  
31 : Սուրբ . Ժդ . 16 :

Տասներորդ Պատուիրանքը կը սորվեցունէ մեզի  
թէ մենք այնչափ սիրելու ու պատուելու ենք մեր  
ընկերը՝ որ սիրտերնու , մէջը անգամ ցանկալու  
չենք իր ունեցած բաներուն մէկին :

Ը . Ինքը ունենալու և վայելելու է բոլոր իր  
ստացուածները , ու մենք՝ թէ գործքով և թէ  
սրտով՝ անիրաւութիւն մը ընելու չենք իրեն :  
Լքբոր ինքը յաջողութիւն ունենայ , մենք ուրա-  
խանալու ենք . և իր գործքերուն հոգ տանելու  
ենք , ու երբոր բանի մը կարօտութիւն ունենայ՝  
իրեն օգնելու ենք : Մենք ալ գոհ ըլլալու ենք  
մեր վիճակէն , ինչպէս որ սահմաներ է անիկայ  
մեր Լքրկնաւոր Հայրը :

Բ . Մենք աս Պատուիրանքը կանարգենք .  
Նախ՝ երբոր տժգոհ ըլլանք Մատուծմէ գանգա-  
տելով , որ մեզ մեր ընկերին պէս իմաստուն ,  
ազէկ , զօրաւոր , հարուստ , պատուելի , կամ

անոր պէս երջանիկ չըրաւ : Արկրորդ՝ երբօր մենք նախանձինք մեր ընկերին, և ցանկանք որ ինքը զրկուի իր ստացած բանին մէկէն, և մենք ունենանք ու վայելենք անիկայ : Արբօրդ՝ երբօր զինքը՝ կամ իր կինը կամ իր զաւակները կամ իր անասունը նեղութեան մէջ տեսնանք ու չօգնենք իրեն, այլ մանաւանդ վրան խնդանք :

Գ . Ինչպէս արարած ամէն մարդ ինքզինքը իր ընկերէն աւելի աղէկ կը սիրէ . անոր համար մէկը մէկալին ունեցածին՝ կամ անոր յաջողութեանը նախանձելով՝ անոր աղէկ բաներուն ցանկացող ու անոր երջանկութեանը հոգ շտանող եղած կը լայ . բայց ասանկ անձնասիրութիւնը՝ բոլորովին գէշ բան է . ուստի անոր վրայ ապաշխարելու ենք, և նոր սիրտ մը խնդրելու ենք որ կարենանք սիրել մեր ընկերը մեր անձին պէս :

Գ . Աղօթենք որ կարող ըլլանք միշտ շնորհակալ ըլլալ ինչ որ ըլլայ նէ մեր վիճակը : “Աս աշխարհիս մեծութիւնը անցաւ որ է” : Տրտման ու ցանկացող մարդը միշտ նեղութեան մէջ է : Գաւիթ՝ ցանկացաւ Ուրիային կնոջը . Աքաբ՝ Արբօրութիւն Այգիին . Գէեզի՝ Ալեմանին արծաթին ու հանդերձին . Յուդա՝ Սարիամին ծանրագին իւղին . բայց ասոնք ամէնքն ալ իրենց ցանկութենէն թշուառ եղան : Հանկացող մարդը ոչ իր ներսի գին խաղաղութիւն ունի, ոչ ալ իր ընկերներուն հետ : Ինչ որ մեզի բաժին Աստուած ունենանք՝ բաւական է :

————— Աս Վեց Պատուիրանքները՝

որոնք որ հիմա քննեցինք , Արևորդ Տ-ի-ի-ի Է  
 Է-Է-Է , և մեղի կըսորվեցունեն մեր պարտաւո-  
 րութիւնը մարդոց նայելով . այսինքն . 'Ասի' թէ  
 մենք սիրով ու յարգութիւնով հնազանդելու  
 ենք ան ամէնուն՝ որոնք որ իշխանութիւն ունին  
 մեր վրայ : Արևորդ՝ թէ մեր ընկերին կեանքին  
 փնաս մը չպիտի հասցունենք : Արբորդ՝ թէ անոր  
 ընտանեացը սրբութիւնը ու մաքրութիւնը պա-  
 հելու և պաշտպանելու ենք : Չորբորդ՝ թէ իր  
 ստացուածքը չյափշտակելու ենք : Հինգերորդ՝  
 թէ իր բարի անունը պիտի չաւրենք : Վեցերորդ՝  
 թէ իր յաջողութեանը ու հարստութեանը վրայ  
 ուրախանալու ենք , և չարութեան գաղտուկ խոր-  
 հուրդ մը անգամ սիրտերնուս մէջը ունենալու  
 չենք իրեն դէմ :

————— Ահա ասանկ են Տասը Պատուիրանք-  
 ները , որոնք տուաւ մեզի Ամենակարողն Աս-  
 տուած , մեր Ստեղծողը ու թագաւորը :

Անոնք են մեր ( )րէնքը , մեր Պարտաւորու-  
 թեան Աանոնը , որուն պարտաւոր ենք հետեւելու  
 սրտով ու գործքով կատարելապէս , ապա թէ  
 ոչ՝ դատապարտութեան տակ կկյնանք :

Սենք ամէնքս ալ աս ( )րէնքին կատարեալ  
 հնազանդութիւն ընելուս մէջ պակաս գտնուե-  
 ցանք , ինչպէս որ մեր խղճմտանքն ալ ասանկ կը  
 վկայէ . և անոր համար դատապարտուած ենք :

Սենք մեզէ բան մը չենք կրնար ընել , որ Աս-

տուժոյ հատուցումը ըլլայ՝ իրեն դէմ մեր գործած մեղքերուն համար :

Իսկ ինքը իր մեծ ողորմութեամբը մեզի համար Փրկիչ մը նախախնամեց , Հիսուս Վրիստոս Իր Որդին . որ մեզի համար ( )բէնքին անէծքը կրեց : Ուստի փրկուելու համար պարտինք անոր հաւատալ ու անոր ապաւինիլ , ապաշխարելով ու մեր մեղքերը մէկ դի ձգելով :

( )բէնքը մեզի Արժապետ կըլլայ՝ մեզ Վրիստոսին բերելու համար : Մենք մեր սիրտերը ու մեր կեանքը օրէնքին հետ բաղդատելով՝ կըսորվինք մեր անթիւ յանցանքները ու մեղքերը . կը սորվինք ան սոսկալի պատիժը որ գալու է . անատենը կը դողանք , ու կը հարցունենք թէ ի՞նչ պարտինք ընել : Չայն մը կուգայ որ մեզի կըսէ թէ՛ «Մահ Մտուժոյ Վառնուկը՝ որ աշխարհի մեղքը կը վերցունէ» . և թէ՛ «Մն որ կը հաւատայ , պիտի փրկուի . ան որ չհաւատար , պիտի դատապարտուի» : Ուստի ան երկնաւոր ձայնին հաւատալով՝ մեր հոգին կատարեալ ուրախութիւն կունենայ :

4 . Մանա-որ պարտաւորութիւններու վրայ :

1 . Էրեկներուն պարտաւորութիւնը :

Եփե . Ե . 22—33 :

2 . Երբ կը իր կեկանը վըայ ունեցած



իշխանութեանը համար ի՞նչ կըսորվեցունէ  
Եւեատարանը :

Պ . “ Լըրիկ մարդը կնկանը գլուխն է ,  
ինչպէս որ Վրիստոս եկեղեցիին գլուխն է ” :  
Լ, Գե . ե . 23 — 25 : ա Կորնթ . Ժա . 3 :  
ա Տե՛ճ . բ . 12 , 13 :

Հ . Ի՞նչ է Լըրիկանը պարտքը :

Պ . Ես է՛ իր կնիկը սիրել ու անոր հոգ  
տանիլ : ա Տե՛ճ . ե . 8 :

“ Լըրիկ մարդիկ՝ սիրեցէք ձեր կնիկները , ինչ-  
պէս Վրիստոս սիրեց եկեղեցին , ու իր անձը  
մատնեց անոր համար ” : Լ, Գե . ե . 25 :

Հ . Լըրիկը իշխանութիւն ունի՞ իր կնի-  
կը ծեծելու կամ անոր հետ չարաչար կեր-  
պով վարուելու :

Պ . Չէ . քանզի հրամայուած է Լըրիկ-  
ներուն որ իրենց կնիկներուն հետ “ լեղէ  
չվարուին ” : Կող . դ . 19 :

Հ . Պետրոս Լռաբեալը ի՞նչ կըհրամայէ  
Լըրիկներուն :

Պ . “ Եսանկ՝ էրիկ մարդիկ ալ խոհեմու-  
թիւնով անոնց հետը կենան . տկար ամանի  
պէս պատիւ ընեն կնիկներուն , և որպէս թէ  
կենաց շնորհքին ժառանգորդներու , որ ձեր  
աղօթքներուն խափանում չըլլայ ” : ա Պեպ .  
դ . 7 :

Հ . Թե որ բարեպաշտ Աշխիկ մը աշխարհասէր կնիկ ունենայ՝ ի՞նչ պիտի ընէ անոր համար :

Պ . Ընթաց ընելու է , և ձեռքէն եկածին չափ՝ Վրիստոսի դարձունելու է զանիկայ : ա կարնի . է . 14—16 :

Հ . Ընհաւատարիմ , անգութ ու իրենց կնկանը հող չտանող Աշխիկները պիտի փրկուի՞ն :

Պ . Չէ :

Ը . Ընտարանը կը սորվեցունէ որ էրիկները՝ իրենց կնիկներուն գլուխն են : Բայց անոնք թող զգուշանան իրենց իշխանութիւնը ու զօրութիւնը չարաչար գործածելէն . ու նային որ բարկացող , անգութ , դաժան կամ անհամբոյր չըլլան : Իսկ ան էրիկը որ ասանկ կերպով կը վարուի իր տկար ու անօգնական կնկանը հետ , անիկայ նուաստ ու թշուառ հոգւոյ տէր մարդ մըն է :

Բ . Աշխիկները պարտին սիրել իրենց կնիկները , երկրի վրայ ունեցած իրենց խիստ մտերիմ ու սիրելի բարեկամները սեպելով զանոնք :

Պ . Աշխիկները խնամելու են իրենց կնիկները : Պէտք է որ ժրջան , զգաստ ու խնայող ըլլան , որ կարողանան իրենց կնիկներուն պիտոյքները ու մխիթարութիւնները հոգալու :

Գ . Լքրիկները պատուելու են իրենց կնիկները : Լք պէտք է որ յարգութիւն ու պատիւ ցուցընեն անոնց՝ թէ տանը մէջ ու թէ տնէն դուրս . մանաւանդ անոնց հիւանդութեան ժամանակին քաղցրութեամբ և մարդասիրութեամբ վարուին , համբերելով անոնց տկարութեանը , հետու կենալով նախանձոտ բնութենէ , և մանաւանդ ըզգուշանալով որ պատճառ չտան կնիկներնուն՝ իրենց հաւատարմութեանը վրայ կասկածելու :

Ե . Լքրիկները հոգ տանելու են իրենց կնկանք փրկութեանը համար : Եւհա էրկանք ամենէն մեծ պարտաւորութիւնը՝ որ ունի իր կնկանք վրայ : Ուստի էրիկ մը թող միշտ միտքը բերէ որ ինքը պիտի կայնի Մատուծոյ ատեանին առջևը , ու հաշիւ պիտի տայ իր կնկանք հետ ունեցած՝ իր ամէն վարմունքին համար , և անոր վրայ ունեցած իր բոլոր ազդեցութիւններուն համար :  
ա Կրնի . է . 16 , 29—34 :

2 . Կնիկներուն պարտաւորութիւնը :

Եւհա . Լա . 10—31 :

3 . Ինչ է կնիկներուն յարուկ պարտաւորութիւնը :

Պ . Սիրելու ու հնազանդիլ իրենց էրկանք :

“Անիկներ հնազանդ եղի՛ք ձեր էրիկներուն՝ որպէս թէ Տէրոջը” : Աբե . Ե . 22 : Առ . 7 . 18 : ա Պէր . 7 . 1 : ա Տէ՛ճ . Բ . 11—15 : Տէր . Բ . 4 , 5 :

շ . Պէ՛տք է որ կնիկները զարդարանք սիրեն , աշխարհի զուարճութիւն փնտռեն , ու տնէ տուն պարտելով ամէն օր այցելութեան երթան :

Պ . Չէ՛ : ա Տէ՛ճ . Բ . 9 , 10 : ա Պէր . 7 . 3 , 4 :

շ . Ի՞նչ տեսակ հոգի ունենալու են աւոնք :

Պ . “ Հնազանդ ու հանդարտ հոգի մը” : ա Պէր . 7 . 4 :

շ . Եւ ան կնիկները՝ որոնք աստուած պաշտութեանը յանձնառու կըլլան , ինտոր կրվայէ որ զարդարուին :

Պ . Արվայէ որ բարի գործքերով զարդարուին” : ա Տէ՛ճ . Բ . 9 , 10 :

շ . Ո՞րն է կնիկներուն սեփհական տեղ , և ո՞ւր կրկայանայ իրենց գլխաւոր հոգը ու պարտաւորութիւնը :

Պ . Իրենց ընտանիքին մէջ : Առ . Լա . 10—31 :

շ . Արիկները իրենց ընտանիքին հոգ տանկը , ու ժրութեամբ և խնայողութեամբ

ամէն բան մաքուր և 'ի կարգի սլահելը՝ որոնցմէ՞ կը յուսան :

Պ . Իրենց կնիկներէն :

“ Ար խրատեն մատղաշ կնիկները՝ էրիկնին սիրող , զլաւկնին սիրող ըլլալ , խոնարհ , սուրբ , տնաշէն , բարեգործ , իրենց էրիկներուն հնազանդ . որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը ու վարդապետութիւնը հայհոյուի ” : Տե՛ր . բ . 4 , 5 :

՝ . Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին , ի՞նչպէս պիտի աշխատին զանոնք Վրիստոսին դարձունելու :

Պ . Իրենց բարի վարքովը : ա կորնի . է . 16 : ա Պէ՛ր . գ . 1 , 2 :

՝ . Լըրիկներուն և կնիկներուն ընտանեկան հոգեւոր պարտաւորութիւնը ի՞նչ է :

Պ . Իրարու համար և իրարու հետ աղօթք ընել , և իրենց ընտանիքին հետ ալ , և իրարու երջանիկ ըլլալուն աշխատիլ , թէ աս աշխարհիս և թէ հանդերձեալ աշխարհին համար :



Ը . Կնիկները՝ Աստուծմէ ետքը իրենց Լըրիկներուն վրայ սէր ունենալու են :

Բ . Փոխանակ՝ բարկացող , անձնասէր ու


Հակառակող ըլլալու, կնիկները պիտի հնազանդին իրենց էրիկներուն ամէն բանի մէջ, բաց 'ի անոնցմէ՝ որ ապօրինաւոր են :

Գ. Իրենց ամենէն մեծ հոգը ու գլխաւոր պարտաւորութիւնը կը կայանայ բուն իրենց ընտանիքին մէջ : Ուստի հարկաւոր է որ տնաշէն, ժրաջան, կանուխ արթնցող, մաքրասէր, խնայող, զգուշաւոր, խաղաղարար և ծանրաբարոյ ըլլան, ու նաև աղէկ կառավարեն իրենց զակընները ու ծառայները, առանց ստէպ տուտալու, սպանալու, ու ամէն ատեն գանգատ ընելու : Ան կընիկները՝ որ չափազանց զարդարանք կը սիրեն, ու միշտ տնէ տուն կը պտըտին, շաղակրատութիւն կընեն, ուրիշներուն բերնէն կը ջնան լուրեր առնել՝ որ ետքը բամբասանք ընեն ու խրոսովութիւն հանեն, անանկները թշուառութեան մէջ կը ձգեն իրենց էրիկները ու ընտանիքը, ու իրենց անձինքը փորձութեան ու դժբաղդութեան կը տանին :

Դ. Բարեպաշտ կնիկները՝ որ աշխարհասէր էրիկներ ունին, պարտին զգոյշ ըլլալ իրենց վարմունքին ու խօսակցութեանը մէջ, որ չըլլայ թէ նախապաշարմունքի տակ ձգեն իրենց էրիկները. այլ ընդհակառակն պէտք է որ ամէն միջոցով համոզեն զանոնք որ դարձի գան, ապաշխարեն ու հաւատան :

Ե. Լշրիկները ու կնիկները պէտք է որ միշտ միտքերնին բերեն իրենց խոստմունքները և իրենց պարտաւորութիւնները մէկզմէկու նայելով,

իրենց զաւկրներուն և ծառայներուն նայելով , ու մանաւանդ Մատուծոյ նայելով ալ . ու ամէն բանի մէջ պէտք է որ ջանան Մատուծոյ օրհնութիւնը ստանալու : Սաղմ . ճիէ . 1 :



3 . Ծնողքներուն պարտաւորութիւնը :

Հ . Ի՞նչ է բարեպաշտ ծնողաց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնը , իրենց զաւկրներուն վրայով :

Պ . Ընտնց առաջին պարտաւորութիւնը և արտօնութիւնն է՝ զանոնք Սկրտութեամբ ընծայել Տէրոջը՝ ուրկից որ ընդունեցին զանոնք : Օճնդ . Ժէ . 7—14 : Հոովմ . բ . 28 , 29 : Դ . 11 : Սաղ . բ . 9—12 : Գործ . բ . 38 , 39 : Ժզ . 14 , 15 , 26—34 : Սաղմ . ԺԹ . 13—15 : բ ( ) ըն . զ . 7 : լբ . 46 : բ Տէմ . ա . 5 : Դ . 15 : Յեռուայ . իդ . 15 : Սաղմ . հը . 4—8 : Գորդ . բ . 21 :

Հ . Ի՞նչ ըսաւ մեր Փրկիչը՝ պզտիկ տղայքը իրեն գալուն համար :

Պ . “ Թող տուէք ատ մանր տղոցը որ ինձի գան , և մի արգիլէք ատոնք . ինչու  
24           ի

որ՝ ատանկներուն է Մատուծոյ թաղաւորութիւնը՝ : Մարչ . Ժ . 14—16 : Մարչ . ԺԺ . 14 , 15 :

Ն . Չաւկըները ի՞նչպէս կրթելու հրամայուեցաւ ծնողքներուն :

Պ . “Տէրոջը խրատովը ու վարժութիւնովը” : Եփե՞ . Դ . 4 :

Ն . Օ՛նողքները ամէն բանէն աւելի՞ ի՞նչ բանի պէտք է որ փափաքին իրենց զաւկըներուն համար :

Պ . “Նողիններնուն փրկութեանը” : Մարչ . Դ . 33 :

Ն . Եւ ծնողքները ի՞նչ պարտք պիտի պահանջեն իրենց զաւկըներէն :

Պ . Շարունակ և կատարեալ հնազանդութիւն :

Ն . Ի՞նչ պէտք է որ սորվեցունեն անոնց՝ որ ամէն իրիկուն ու առաու անպատճառ կատարեն :

Պ . Եղօթք ընել Մատուծոյ :

Ն . Օ՛նողքները ի՞նչ գիրք պիտի կարդացունեն իրենց զաւկըներուն , և միշտ անոնց սորվեցունեն անոնց :

Պ . Եստուածաշունչ Գիրքը :

Ն . Օ՛նողքներուն պարտաւորութիւնն



է որ իրենց զաւկըններուն հետ՝ և իրենց զաւկըններուն համար՝ ամէն օր աղօթք ընեն :

Պ . Հրամարես :

Ն . Ի՞նչ տեսակ խօսակցութիւն պէտք է որ ընեն անոնք՝ իրենց զաւկըններուն առջևը :

Պ . Բարի և օգտակար խօսակցութիւններ :

Ն . Եւ ի՞նչ տեսակ օրինակներ տալու են անոնց :

Պ . Բարի և դովելի օրինակներ :

Ն . Երժան է որ ծնողքները բարկութեան զրդուեն իրենց զաւկընները, զքօսանքի համար :

Պ . Չէ . քանզի դրուած է . “ Հայրեր ձեր զաւկընները մի բարկացունէք” : Եփե . զ . 4 : Կող . գ . 21 :

Ն . Նոողաց պարտքն է որ զաւկըններին չար ընկերութենէ զգուշացընեն ու անկէց հեռու պահեն :

Պ . Հրամարես : Եւսի . ա . 10—15 : Ժգ . 20 : ա Կորնի . ժե . 33 :

Ն . Երբոր աղայքը չար ու կամակոր ըլլալով չհնազանդին իրենց ծնողացը՝ անատենը ի՞նչ է ծնողաց պարտքը :

Պ . Պէտք է որ պատժելով խրատեն զանոնք : Եւսի . ժգ . 24 : Ժթ . 18 :

իր . 15 : իթ . 15 , 17 :

Հ . Ի՞նչ խրատ տուաւ Լամասունը ասոր վրայով :

Պ . “Մի խնայեր զաւակդ խրատելէն . վասն զի թէ որ զանիկայ զաւաղանով ծեծես նէ՛ չմեռնիր : Դուն կըծեծես զանիկայ զաւաղանով , բայց անոր հողին կազատես ‘Վժռիքէն’ : Եւսակ . իգ . 13 , 14 :

Հ . Եւ ի՞նչ քսաւ անիկայ , զաւկի մը կրթութեանը համար :

Պ . “Սկիզբէն կրթէ տղան՝ իր բռնելու ծամբուն մէջ , որ երբոր ձերանայ նէ՛ անկից չզատուի” : Եւսակ . իբ . 6 :

Հ . Հաւատարիմ և արդար ճնողքներուն զաւկրները յատուկ պիտի օրհնուի՞ն :

Պ . Հրամարկս : Օ՞րհնոյ . ժը . 19 : Բ ( ) ըն . դ . 40 : է . 9 :

Հ . Ի՞նչ կըսէ Գաւիթ ասոր վրայով :

Պ . “Տղայ էի ու ձերացայ , բայց արդարը անտես եղած չտեսայ . կամ անոր զաւակը հաց մուրացող : Եմէն օր կողորմի ու փոխ կուտայ , և անոր զաւակը օրհնուած է : Սաղմ . լէ . 25 , 26 :

Հ . Չար ճնողաց պատիժը՝ իրենց զաւկրներուն կըհատուցանէ՞ Եստուած :

Պ . Հրամարեա : 1, 27 . Ի . 5 : 17 . 7 :  
Թ . 11 . 18 : Ս . 15 . 28 :

Ը . Բարեպաշտ ծնողաց առաջին պաշտաւորութիւնը և արտօնութիւնը՝ իրենց զաւկըները Սկրտութեան բերելն է . քանզի ասանկով իրենց զաւկըներուն համար ուխտ մը ըրած կը լլան Մատուծոյ հետ՝ որ Մատուած իրենց զաւկըներուն Մատուած ըլլայ, և ան զաւակները Մատուծոյ ծառայներ ըլլան : Աւստի ան զաւկըները հասկընալու կարող ըլլալուն պէս, պէտք է որ ծնողքները պատմեն անոնց աս ուխտը, ըսելով թէ անոնք՝ Մատուծոյ ընծայուած են, ու Իր Եկեղեցիին մէջ մկրտուած են, և թէ իրենց պարտաւորութիւնն է որ ապաշխարեն ու հաւատան Հիսուս Վրիստոսի, և ինքզինքնին Մատուծոյ յանձնեն . և թէ այնուհետև խոստովանելով զիրենք Մատուծոյ զաւակները՝ պէտք է որ ընդունին ու յանձն առնուն ան ամէնը՝ որ ծնողքները անոնց մանկութեան ատենը ըրին իրենց համար՝ Մատուծոյ հրամանին պէս :

Բ . Ծնողքները պէտք է որ հոգ տանին զաւակներնուն, համբերող ըլլան անոնց տկարութիւններուն ու պակասութիւններուն . հոգան անոնց պէտք եղածը, պահպանեն զանոնք վնասներէ, աշխատասէր ըլլալ սորվեցունեն անոնց,

ու զանոնք աղէկ վարժեցունեն զիտութեան մէջ , որ տուներէն ու կալուածքներէն աւելի աղէկ բան է : Պէտք է նաև սորվեցունեն անոնց աղօթք ընել , ու ստէպ աղօթք ընեն անոնց հետ՝ և անոնց համար : Ընտ՝ք տակաւին կարգալ չսորված՝ սորվեցունեն անոնց Սուրբ Գիրքին մէջէն : Օչանոնք պղտիկուց տանին Ըստուծոյ Տունը , ու մեծ պատիւ մատուցանել տան Ըստուծոյ սուրբ ( )-րուան՝ այսինքն Կիրակիին , զգուշացունեն ու հեռու պահեն զանոնք չար ընկերներէ . յանդիմանեն անոնց յանցանքը՝ գաւազանին ալ չինայելով : Թող Օնողքները չբարկացունեն զաւկըներնին . հապա արմատացունեն անոնց ներսը՝ հազանդ , հեզ , խաղաղ , գոհ , ողորմած և ուրախ բնաւորութիւն մը : Հոգ տանին որ անոնք սիրեն եղբայրնին ու քոյրերնին , բարերար և ակնածու ըլլան ամէն մարդու , մանաւանդ ծերերուն . միշտ անոնց միտքը ձգեն՝ որ երջանիկ ըլլալու համար , անոնք պարտին օգտակար գործի մը մէջ ըլլալ . մանաւանդ պարտին նոր սիրտ մը ունենալ , սիրել զԸստուած ամէն բանէն աւելի , և իրենց դրացին ալ իրենց անձին պէս : Ալ թող Օնողքները միշտ յիշեն՝ որ անօգուտ կըլլան իրենց բոլոր խրատները , քանի որ բարի օրինակ չտան իրենց զաւկըներուն :

Գ . Ըստուած՝ մասնաւոր խոստմունքներ կընէ՝ հաւատարիմ ու բարեպաշտ Օնողքներուն , թէ անոնց սերունդը պիտի օրհնուի : Իայց ասանկ խոստմունքներ չկան՝ անհաւատարիմ ու

անբարեպաշտ Օնոդրներուն . ասոնք Մատուճոյ  
անէծքը պիտի բերեն իրենց զաւկըներուն վրայ :  
Իւստի պէտք է որ՝ առաջ իրենք սկսին Մատու-  
ճոյ ծառայել , ու անատեն Մատուած անոնց՝ և  
զաւկըներնուն Մատուած պիտի ըլլայ :

4 . Տղայոց պարտաւորութիւնը :

(Տէ՛ս շինգերոց Պատուիրանքը : )

5 . Տէրերուն պարտաւորութիւնը :

Պ 7-1 . է . 1—10 :

2 . Մատուած ի՞նչ պատուէր տուաւ  
Տէրերուն :

Պ . “ Դուք ալ Տէրեր՝ նոյնը ըրէք ա-  
նոնց , պատիժը համբերութեամբ ընելով ,  
դիտցէ՛ք որ անոնց ալ՝ ձեր ալ Տէրը երկինքն  
է . ու անոր առջևը աչառութիւն չկայ :  
Եփէ՛ս . զ . 9 : Տէ՛րեր՝ ձեր ծառայներուն  
իրաւունքը ու հաւասարութիւնը տուէ՛ք .  
դիտցէ՛ք որ դուք ալ Տէր ունիք Երկինքը” :  
Կող . դ . 1 :

շ . Ո՞վ է մեր ամէննուս Տէրը Արկինքին մէջ :

Պ . Աստուած է :

շ . Ուստի Տէրերը ու ծառայները ամէնքն ալ հաւասար են Աստուծոյ առջևը :

Պ . Այո՛ , քանզի անիկայ աչառութիւն չընկր : (Եփ . լա . 13—15 :

շ . Ի՞նչպէս պիտի վարուին Տէրերը իրենց ծառայներուն հետ :

Պ . Արդար ու մարդասէր վարմունքով :

շ . Ի՞նչպէս կրնան Տէրերը անիրաւութիւն ընել իրենց ծառայներուն :

Պ . Անոնց բաւական ու աղէկ կերակուր տալը՝ զանց ընելով , կամ անոնցմէ չափազանց աշխատութիւն պահանջելով , կամ իրենց ծառայութեանը փոխարէն արժանաւոր վարձք չտալով , կամ իրենց խոստացած վարձքին մէկ մասը կտրելով , կամ վճարումը երկնցունելով՝ և ուշ հատուցանելով :

շ . Ի՞նչ պատուէր տուաւ Սովսէսին օրէնքը , ծառայներուն վարձքը ժամանակին վճարելու համար :

Պ . “Բեզի վարձքով աշխատողին վարձքը թող չմնայ քովդ գիշեր մը մինչև առտու” : (Եփ . ժթ . 13 :

Հ . Արեմիա մարգարէին բերնովը՝ Աստուած որո՞ւ գէմ կըզըուցէ :

Պ . Անոր գէմ՝ որ կըշինէ իր տունը անարդարութեամբ , ու իր վերնայարկը անիրաւութեամբ . իր դրացին ձրի կաշխատցունէ , ու անոր վարձքը չհատուցաներ : Արե՛մ . իբ . 13 :

Հ . Որո՞ւ գէմ Աստուած պիտի գայ դատաստան ընէ , կըսէ Մաղաքիա մարգարէն :

Պ . Անոնց գէմ՝ որոնք կը շարչըրկեն վարձկանները իրենց վարձուցը համար : Մաղաք . գ . 5 :

Հ . Ի՞նչպէս կրնան Տէրերը անմարգասէր ըլլալ իրենց ծառայներուն :

Պ . Խիստ և դաժան կամ տառապող վարմունք մը ունենալով անոնց հետ :

Հ . Տէրերը իրենց ծառայներուն հողիներուն համար պարտաւորութիւն մը ունի՞ն :

Պ . Հրամերես . պարտական են կրթել իրենց ծառայները , Սուրբ Վիլքը անոնց սորվեցունելով , և ամէն պատահութիւն ու քաջալերութիւնը տալով՝ որ իրենց հողիններուն փրկութեանը հոգ տանին :

Ըստուած արդար Ըստուած մըն է , ու վերջին  
որը պիտի պատժէ ան ամէն անիրաւութիւնը՝ որ  
մարդիկ տկար և անօգնական անձանց կընեն :  
Ըն ատենը ամէնուն Տէրը ճշդիւ պիտի քննէ բո-  
լոր մեր ունեցած վարմունքները ան մարդոց հետ՝  
որ Ինքը դրաւ մեր իշխանութեան տակը : Ընդ-  
հանրապէս ծառայներուն վիճակը անարդ ու  
թշուառ է : Իարի Տէր մը՝ բոլոր իր ջանքը պի-  
տի թափէ , արդար ու քաղցր վարմունքով հա-  
ճելի ընելու անոնց վիճակը՝ աս կեանքին մէջ .  
նաև իր կրցածին չափ պիտի աշխատի խրատով  
ու օրինակով անա՛նկ ը՛լ թացք մը բունել տալ ա-  
նոնց՝ որ երջանիկ ու կատարեալ ըլլան հան-  
դերձեալ կեանքին մէջ :

6 . Ծառաներուն պարտաւորութիւնը :

Օ՛ննդ . իդ . 1—67 :

2 . Օ՛տառաներուն ի՞նչ պատուէր տուաւ  
Ըստուած՝ իրենց Տէրերուն հնազանդելու  
վրայով :

Պ . “Օ՛տառաներ՝ ամէն բանի մէջ հնա-  
զանդ եղիք ձեր Տէրերուն . չէ՛ թէ աչքի  
առջև ծառայելով՝ մարդահաճոյներու պէս .



հասլա միամիտ սրտով Տէրոջմէն վախնա-  
լով” : Կող . 7 . 22 :

՝ . “ Եջքի առջև ծառայելը” ի՞նչ ը-  
սել է :

Պ . Ես խօսքը կը վերաբերի ան ծառանե-  
րուն վարմունքին՝ որոնք միայն իրենց Տիրոջը  
աչքին առջևը աղէկ կը ծառայեն :

՝ . Են ծառան՝ որ իր երկրաւոր Տիրոջը  
աչքին առջևը միայն կը ծառայէ , իր երկնա-  
ւոր Տէրոջը առջևն ալ նոյնպէս պիտի վա-  
րուի :

Պ . շրամերես :

՝ . Ուրեմն ծառայները ի՞նչպէս պիտի  
ծառայեն իրենց Տէրերուն :

Պ . “ Սրտանց պիտի ծառայեն որպէս թէ  
Տէրոջը , ու չէ թէ մարդոց” : Եփե . 4 . 7 :

՝ . Իրենց Տէրերուն ի՞նչ բանի մէջ հա-  
ճելի ըլլալու պիտի ջանան :

Պ . “ Եմէն բանի մէջ հաճելի պիտի ըլ-  
լան , ոչ հակառակողներ” : Տեք . բ . 9 :

ա Պեք . բ . 18—21 :

՝ . “ Ոչ հակառակող ըսելով ի՞նչ ը-  
սել կուզէ :

Պ . Ըսել կուզէ որ՝ պէտք չէ անխոհեմու-  
թեամբ դիմադարձութիւն ընել՝ երբոր կը

յանդիմանուի յանցանքի մը համար :

Հ . Օտառայի մը ներուած է որ իր Տէրոջմէն գողութիւն ընէ , սուտ խօսի անոր , կամ խտրէութիւն բանեցունէ՝ անոր համար բան մը ծախու առած ատենը :

Պ . Չէ . վասն զի իր պարտաւորութիւնն է , “ աղէկութիւնով բողբոլին հաւատարմութիւն ցուցնել ” : Տէր . բ . 10 :

Հ . Թէ որ ծառաները իրենց պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կատարեն , ու իրենց ծառայական վիճակին մէջ Աստուծոյ ծառայեն , ան ատենը յարգելի պիտի չըլլան մարդոց քով , ու օրհնեալ և պատուելի Աստուծոյ առջևը ուրիշներուն պէս :

Պ . Այո՛ պիտի ըլլան . “ Արովհետեւ ամէն մէկը ինչ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի , թէ ծառայ ըլլայ և թէ՛ ազատ ” : Ա՛՛՛ . զ . 8 :

Ա . Թո՛ղ ծառաները հաւատարմութեամբ ծառայեն իրենց Տէրերուն՝ նաև անոնց ետեէն ալ , ինչպէս որ անոնց առջևը : Աստուած միշտ կըրտանայ , թէ և Տէրերը հոն չըլլան :

Ի . Նառաները երբեմն անանկ կըկարծեն , որ առանց ՂՄստուած բարկացունելու՝ կրնան իրենց Տիրոջը սուտ խօսիլ ու խարէութիւն ընել , և անկից գողնալ . բայց ասանկ չէ . ինչու որ ՂՄստուած չհաճիր ասանկ բանին . Մնիկայ կըպահանջէ արդարութիւն ու հաւատարմութիւն ամէն մարդոցմէ և ամէն պարագայի մէջ :

7 . Իշխաններուն պարտաւորութիւնը :

7 . ԹՎԻ . 7 . 1—28 : ԳՆԻԿԷԼ . 7 . 1—37 .

Ն . Պէ՞տք է որ ամէն երկիր և ամէն ժողովուրդ օրէնք ունենայ , և հասարակութիւնը ան օրէնքին հնազանդեցունելու համար ալ՝ իշխաններ և կառավարիչներ ըլլան :

Պ . Հրամներես :

Ն . ԹՎԷ որ քաղաքիս մէջը ոչ օրէնք ունենանք ու ոչ ալ կառավարիչ , կրնանք ապահով կամ երջանիկ ըլլալ :

Պ . Չէ . քանզի ան ատենը ամէն մարդ իր ուղածը կրնէ : Դաս . Ժէ . 6 : ՏԷ՞նանք ժը և ժթ գլուխները :

Ն . Պէ՞տք է որ ամէն կառավարիչ Եստուծամէ կարգուած՝ և Մնով մեզ կառավար-

բերու գրուած սեպենք :

Պ . Հրամարեա . “Ինչու որ իշխանութիւնը մէկ տեղէ մը չէ , միայն թէ Մատուծմէ . և անոնք որ կան՝ Մատուծմէ կարգուած են” : Հռոմ . ԺԳ . 1 :

Հ . Իշխանները ի՞նչպէս մարդիկ ըլլալու են :

Պ . “Կարող մարդիկ՝ Մատուծմէ վախցող՝ ազահոթիւնը ատող և իրաւարար մարդիկ” : Եբր . ԺԲ . 21 :

Հ . Ենոնք որո՞ւն վախովը ժողովուրդը կառավարելու են :

Պ . Մատուծոյ վախովը : Բ ( ) ըն . ԺԷ . 14—20 : Յեռուայ . ա . 8 : Բ Թադ . իԳ . 3 : Բ Սնայ . ԺԹ . 4—11 :

Հ . Իշխանները երկու մարդոց դատը ի՞նչպէս պիտի տեսնեն :

Պ . Երդար դատաստանով : Բ ( ) ըն . ԺԸ . 18 , 19 : ԺԷ . 6 : Եսայ . իԹ . 12—14 : Եբր . իԲ . 2—4 :



Մ . Ի՞նչոք երկրիս վրայ եղած ամէն ազգի և ժողովրդոց անշուշտ հարկաւոր է օրէնքներ և իշ-

խաններ ունենալ : Սարգս բնականաբար անօրէն էակ մըն է . ուստի պէտք է որ միշտ իշխանութեան տակ ըլլայ :

Բ . Երբոր մէկը իշխան կըլլայ , Մտուծոյ ձեռքովը կըլլայ , այսինքն՝ Մտուած կրկանչէ զանիկայ ան պաշտօնին : Մտուած՝ իր նախահինամութեամբը թող կուտայ որ կառավարէ : Անանիկայ Մտուծոյ սպասաւորն է , և պէտք է որ ան պաշտօնովը ծառայէ Մտուծոյ : Եւ ժողովուրդն ալ պէտք է որ իրբև “ Մտուծոյ սպասաւոր ” համարին զանիկայ : Զոր . Ժգ . 4 :

Գ . Իշխանները բարձր պաշտօնի կանչուած են , և որովհետև կրնան ժողովուրդին շատ բարիք կամ չարիք ընել , անոր համար պէտք է որ “ կարող մարդիկ՝ Մտուծմէ վախցող՝ ազահութիւնը ատող և իրաւարար մարդիկ ” ըլլան . բարեմիտ և բարեսիրտ մարդիկ . որ մէկուն՝ մէկալէն աւելի աչառութիւն չընեն , որ մէկու մը երեսպաշտութիւն չընեն , որ ծուռ դատաստան կրտսելու համար կաշառք չուտեն :

Դ . Անոնք պէտք է վարձատրեն արդարները և պատժեն չարերը , ամէն մարդոց իրաւունքը և ապրանքը պաշտպանելով , անանկ որ չարութիւն ընողները իրենցմէ վախնան , և բարիները քաջալերութիւն առնեն . որ այսպէս իրենց երկիրը բարեհամբաւ ըլլայ ու յաջողութեամբ յառաջ երթայ , և ժողովուրդը հանգիստ և ուրախ ըլլայ :

8 • Ժողովուրդին պարտաւորութիւնը :

Հօովհ . Ժգ . 1—14 :

Հ • Արովհեաւե իշխանները մեր աղէկութեանը համար դրուած Մտուծոյ պաշտօնեաներն են , ուստի պէտք չէ՞ որ պատուենք և յարգենք զանոնք :

Պ • Հրամարես : ա Պէպ . բ . 17 :  
Եւսակ . իդ . 21 :

Հ • Հրաման ունինք մեր իշխանները վար զարնելու կամ անոնց դէմ խօսելու :

Պ • Չէ . ինչու որ դրուած է , թէ “Պատաւորներու մի՛ հայհոյեր , ու քու ժողովուրդիդ իշխանին անէծք մի՛ կարդար : Եւ լէցիր . 28 : Եւ դարձեալ՝ “Ընանկ է՛նէ՛ հատուցէ՛ք ձեր պարտքը ամէնուն . որուն որ տուրք տալու է՛ տուրքը . որուն որ մաքս՝ մաքսը . որուն որ վախ՝ վախնալը . որուն որ պատիւ՝ պատիւը” : Հօովհ . Ժգ . 7 : Սարգի . իբ . 21 : Ժէ . 24—26 :

Հ • Բարի քաղաքացին ի՞նչով կը ճանչցուի :

Պ • Իշխաններուն հնազանդելովը ու քաղաքին ամէն օրէնքները բռնելովը :

Հ . Մենք օրէնքին հնազանդելէն ՚ի զառ ուրիշներն ալ համոզելու պարտաւոր ենք :

Պ . Հրամարես :

Հ . Ըն որ օրէնքը կաւրէ՛ չհնազանդիր՝ մարդասպանութիւն ու գողութիւն կրնէ, արժան չէ՞ որ բռնուի և օրէնքին հրամայածին պէս պատժուի :

Պ . Հրամարես : բ ( ) ըն . ին . 1—3 :

Հ . Ուստի աղէ՛կ բան է որ գող մը կամ մարդասպան մը ազատենք , ծածկելով իր եղած տեղը և իր փախչելուն օգնելով :

Պ . Չէ՛ . քանզի այսպէս՝ քաղաքին սպահովութեանը կրմնասենք :

Հ . Մեր իշխաններուն համար աղօթելու յատուկ հրաման մը եղած կայ մեզի :

Պ . Հրամարես : “ Ուստի կաղաչեմ ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել , խնդրուածք , աղաչանք , գոհութիւն ամէն մարդոց համար , մանաւանդ թագաւորներուն և բոլոր իշխաններուն համար . որ խաղաղութիւնով ու հանգարտութիւնով վարենք մեր կեանքը՝ բոլորովին աստուածպաշտութիւնով ու սրբութիւնով : Ինչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջևը” : ԹԵ՛՛ . բ . 1—3 :

Ը . Ժողովուրդին պարտաւորութիւնն է իրենց իշխանները պատուել և յարգել : Ընոնք ըստուծոյ սպասաւորներն են . ուստի պէտք է որ ժողովուրդը իշխաններուն պատիւը ու յարգը ճանչնայ , արժանաւոր գովութիւն տալով իրենց պաշտօնին մէջ ցըցուցած աղէկ վարքերնուն համար . ու իրենց երբեմն ըրած պակասութիւննին և մոռացկոտութիւննին ալ ծածկելով : Ընոնց վրայով նախապաշարմունքներ ունենալէն և դէշ լուրեր լսելէն՝ պէտք է փախչին , և ամէնինչ որ կընեն կամ կըսեն , զգուշանան իրենց իշխաններուն պատուոյն դպչելէն :

Թ . Պէտք է որ ժողովուրդը երկիւղածութիւնով և կատարելապէս հնազանդի քաղաքին օրէնքին և իշխաններուն : Ըն՝ որ իշխանները վարկըղարնէ և օրէնքը կանարդէ , բոլոր իր քաղաքակից ժողովուրդին դէմ կը մեղանչէ . նաև կը մեղանչէ մեր Տէր Հիսուսին կրօնքին դէմ՝ որ կը սորվեցունէ մեզի հնազանդ ըլլալ ամէն անոնց՝ որոնք մեզ կառավարելու իշխանութիւն ունին :

Պ . Ընք չէ թէ միայն օրէնքին հնազանդելու ենք , հապա նաև ջանք ընելու ենք բոլոր մեր քաղաքակիցներն ալ մեզի պէս հնազանդեցունելու : Ու երբոր մէկը օրէնքը անարդէ՝ գողութիւն , սպանութիւն կամ ինչ և իցէ չարագործութիւն ընելով , պէտք չէ որ մենք մեր օգնութիւնովք անիկայ պաշտպանենք կամ փախցունենք , քանզի ասանկով քաղաքին ապահովութիւնը և համբաւը կաւրուի :



Գ . Ըստուած կուզէ մեզմէ որ , չէ թէ միայն յարգութիւն տանք և հնազանդինք իշխաններուն , հապա նաև աղօթք ընենք անոնց համար . որ Ըստուած օրհնէ զանոնք , և անոնց ընտանիքները . որ բարի իշխաններ ըլլան , աստուածաւիտիս , իրենց պաշտօնը հաւատարմութիւնով կատարող , ժողովոցոց ազէկութիւնը փընտող , անանկ որ՝ ամէն խաղաղութիւնով մենք ալ մարդոց ու Ըստուծոյ մեր ունեցած պարտաւորութիւննիս ազէկ կատարենք :

ՄԱՍՆ Ե . ԵԿԵՂԵՑԻՒՆ ՎՐԱՅ

ա . Ըստուծոյ Եկեղեցին ԻՆՆ ԱՆՄԸ :

Օ՛ննք . ժէ : Գ-ը . Գ :

Հ . Ո՛վ էր ան մարդը՝ որ ամէն հաւատացեալներուն “Հայրը” կոչուեցաւ :

Պ . Երբահամ հահապեալ : Հ-ով . Գ . 11 , 12 , 16 :

Հ . Քրիստոսի գալուստէն քանի՞ տարի առաջ՝ անոր տրուեցաւ աս անունը :

Պ . Արիւ հազար տարիի չափ առաջ :

Հ . Արբոր Ըստուած Երբահամին հետ ուխտ ըրաւ ու զանիկայ “Հայր հաւատացե-

լոց՝ անուանեց՝ անոր ի՞նչ խոստմունք ըրաւ :

Պ . «Ես քուկին ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուածը պիտի ըլլամ » :

Ն . Ննդ . ժէ . 7—19 : իը . 13 , 14 :

Եղեց . ժթ . 3—6 : ՂԼ . իղ . 1—12 :

Գ Թափ . ժը . 36 : Մեհայ . է . 18—

20 : Մարէ . ժ . 14 : Ղարթ . բ . 38 ,

39 :

Ն . Վանի՞ մասերէ կը բաղկանար ան խոստմունքը :

Պ . Երկու . մէկը Վամանակաւոր և մէկաւը Հոգևոր : Եբ . ժա . 8—16 : Ղաղ .

գ . 6—29 :

Ն . Ո՞րն էր խոստմունքին Վամանակաւոր մասը :

Պ . Նազմաթիւ զաւակներ ունենալը , և Վանանու երկիրը ժառանգելը :

Ն . Ո՞րն էր խոստմունքին Հոգևոր մասը :

Պ . Աստուած՝ Նարայէլն ժողովուրդին ուխտով Աստուածը ըլլալը , և Աբրահամի սերունդէն Փրկիչ մը ծնանիլը , որով երկրի ամէն ազգերը օրհնուին :

Ն . Եւ աս ուխտը՝ որ Աստուած Աբրահամին հետ ըրաւ , յաւիտենական ուխտ մը պիտի ըլլար Աստուծոյ եկեղեցիին հետ :

Պ . Այո՛ , անոր հողերը մասին նայելով յաւիտենական էր : Նոնի . Ժէ . 5—7 : Հոսի . 7 . 9—17 : Ղազ . 7 . 6—29 :

Հ . Երբոր Աբրահամ հաւատաց Աստուծոյ և Անոր հետ ուխտ ըրաւ , անատենը Աստուած ի՛նչ ընել հրամայեց Աբրահամին՝ իբրև մէկ նշան մը և կնիք մը աս ուխտին :

Պ . Հրամայեց անոր՝ թըխատութիւն ընել իր մարմնին ու իր զաւկըններուն մարմնին վրայ : Նոնի . Ժէ . 10—14 : Հոսի . 7 . 11 :

Հ . Ան ատենը որ Աստուծոյ եկեղեցին հաստատուեցաւ , Աբրահամէն ու անոր սերունդէն զաս՝ ուրիշներն ալ կրնային ընդունուիլ ան եկեղեցին մէջ :

Պ . Հրամարես . հաւատացեալ Հեթանոսներն ալ կրնային ընդունուիլ : Նոնի . Ժէ . 12—14 : Եսայ . Ժա . 1—10 : Կ . 1—22 : Կղ . 12 : Ղազ . 7 . 38 , 39 : Ես . 7 . 12—22 : Հոսի . Ժե . 8—12 :

Հ . Անոնք ի՛նչ կերպով կրնային եկեղեցին մէջ մտնելու :

Պ . Իրենց՝ ու զաւկըններն թըխա-

տուեցովը : Լույս . ժբ . 48 , 49 : Թոմաս .  
Ժե . 14—16 :

Ն . Ուրեմն ի՞նչ էր թլիատութիւնը :

Պ . Թլիատութիւնը՝ եկեղեցիին մէջ  
ընդունուելու և անոր անդամը ըլլալու նշան  
մըն էր :

Ն . Եկեղեցիին մէջ ընդունուելու նշան  
նը հիմա ալ անիկայ է :

Պ . Չէ . հիմա Մկրտութիւնն է ան  
նշանը : Մատթ . իը . 19 , 20 :

Ն . Թլիատուող տղայքն ալ եկեղեցիին  
անդամները կըսեպուէի՞ն մի :

Պ . Նրամերես : Գնչ . ժէ . 14 :

Ն . Ըստուծոյ եկեղեցիին՝ որ ասանկ հաս-  
տատուեցաւ , արդեօք Մովսէսի և ուրիշ մար-  
դարէներուն բոլոր ժամանակը և մինչև Վր-  
թիստոսի ժամանակը շարունակ տեւեց մի :

Պ . Նրամերես : Գործ . է . 37 , 38 : ա  
Կորնթ . ժ . 1—11 : Մաղտ . դ . 1—4 :

Ն . Վրթիստոս՝ իր աշխարհք գալուն իս-  
փանեց արդեօք իրեն հաստատած եկեղեցին :

Պ . Չէ . հապա շարունակեց և աւելի  
կատարեալ ըրաւ զանիկայ : Մատթ . իա . 43 :  
Նաւ . դ . 11—17 : ժա . 16—29 : Գաղ .  
դ . 17—29 : Եփես . դ . 6 :

Հ . Ուստի քրիստոնէական եկեղեցին՝ ան նոյն Աստուծոյ տեսանելի եկեղեցին է, որ Աբրահամին օրերէն մինչև Հիմա երկրիս վերայ կրկենայ :

Պ . Հրամարես, և մի և նոյնը պիտի ըլլայ մինչև աշխարհիս վերջը : Եփե. գ. 21 :

Հ . Ի՞նչ կիմանանք Տե՛սանէ՞ք եկեղեցի ըսելով :

Պ . Կիմանանք երկրի վրայ եզող ամէն ազգաց մէջ գտնուած ան անձինքը՝ որ Վրրիստոսի կրօնքը կրդաւանին :

Հ . Վրրիստոսի կրօնքը դուրսէն դաւանողներուն ամէնքն ալ ճշմարիտ քրիստոնեայ են :

Պ . Ընէ :

Ո՛չ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէ՛ր Տէր կըսէ, պիտի մօնայ երկինքին թագաւորութիւնը . հասպա ան՝ որ իմ երկնաւոր Հօրս կամքը կրկատարէ : Եւ ատերը ան օրը ինծի պիտի ըսեն, Ո՛վ Տէր Տէր՝ չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն քրինք, ու քու անունովդ դէեր հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք : Այս ան ատենը անոնց պիտի ըսեմ, Այս բնաւ ձեզ չէի ճանչնար . մէկ դի՛ գացէք քովէս ամէնքդ՝ որ անօրէնութիւն կրգործէիք : Սաղմ. է. 21 — 23 : Իսայց գուք մարմինով չէ՛ք, հասպա հոգիով, թէ որ Աստուծոյ հոգին ձեր մէջը բնակած է . հասպա թէ

որ մէկը Վրիստոսի Հոգին չունի նե՛ անիկայ անորը չէ : Հռոմ . Ը . 9 : Կարելի չէ որ Եստուծոյ խօսքը գետինը իյնայ . ինչու որ չէ թէ սմէն Խորայէլէն եղողները Խորայէլացի են : Հռոմ . Թ . 6 :

Հ . Մենք կրնա՞նք մարդոց սիրտերը քննել , և այնպէս դիտնալ թէ որո՞նք ճշմարիտ քրիստոնեայ են , և որո՞նք չեն :

Պ . Չէ . միայն Եստուած է որ Եկեղեցիին ճշմարիտ ու սուտ անդամները կրնայ մէկզմէկէ որոշել : Գ թԿ . ԺԹ . 18 :

Հ . Ուրեմն կրնա՞նք ըսել թէ Վրիստոս Լ՛նտեսանէլէ եկեղեցի մըն ալ ունի երկրիս վրայ :

Պ . Հրամերես . Վրիստոս եկեղեցի մը ունի երկրիս վրայ՝ որ իր մէջը կը պարունակէ բոլոր ճշմարիտ հաւատացեալները , և ոչ թւրիշները . և քանզի մենք չենք կրնար հաստատ որոշել թէ որոնք են անոր ճշմարիտ անդամները , անոր համար կրկոչենք զանիկայ Լ՛նտեսանէլէ եկեղեցի :

Հ . Իայց ճշմարիտ հաւատացեալները յայտնի չե՞ն ըլլար իրենց վարքէն , ինտոր որ ծառը կը ճանչցուի իր պտուղէն :

Պ . Լ՛նշուշտ . մէկը չկրնար ճշմարիտ հաւատացեալ ըլլալ , առանց յայտնի ընելու

զանիկայ իր վարքովը . բայց կեղծաւորները կրնան իրենց վարքին մէջ վարպետութեամբ մը ինքզինքնին ճշմարիտ հաւատացեալներուն պէս ցուցընել , անանկ որ՝ մարդիկ չեն իմանար անոնց կեղծաւոր ըլլալը :

Հ . Արկրիս վրայ ու իցէ մասնաւոր եկեղեցի մը կրնայ պահանջել թէ ինքն է մի միայն Աստուծոյ Նկեղեցին :

Պ . Չէ . քանզի Աստուծոյ (καθολική) բառը կընշանակէ Ընդհանուր . և հետեւապէս անշուշտ տեսանելի Աթուղիկէ Ակեղեցին կը պարունակէ ամէն ազգի մէջ բոլոր Վրիստոնէական կրօնքը դաւանողները :

Հ . Աւրեմն ո՞րն է ան մէկ ճշմարիտ , Սուրբ՝ Աթուղիկէ և Առաքելական Ակեղեցին :

Պ . Ընդհանրէն եկեղեցին է . քանզի միայն անիկայ սուտ անդամ՝ մըն ալ չընդունելէն՝ իզատ՝ կը պարունակէ իր մէջը Վրիստոսի մարմինին բոլոր ճշմարիտ անդամները՝ որոնք իր Հոգիովը սրբուած են և մէկզմէկու հետ մէկ եղած են , Վրիստոսի իրենց Վլխոյն հետ մէկ եղած ըլլալուն համար :

Հ . Աստուած իր եկեղեցիին բարւոք կառավարութեանը համար ի՞նչ կանոն տուաւ :

Պ . Սուրբ Գիրքը տուաւ , որ մի միայն  
և ամենաբաւական կանոն է հաւատոյ և վա-  
րուց համար :

Լ . Լստուածոյ եկեղեցին թէ շին և թէ՛ չ, որ  
կտակարանին ժամանակը մի և նոյն եկեղեցին է ,  
միայն թէ Վրիստոսի ժամանակը աւելի ծաղկե-  
ցաւ ( Եկեղեցին՝ Լստուածոյ կամքին զիտուածեամբը  
և ամէն տեսակ շնորհքովը : Վրիստոս իր եկե-  
ղեցին բոլորովին կատարելագործեց վարդապե-  
տութեամբ և կանոններով :

Բ . Ճշմարիտ կրօնքը դաւանողներուն չէ թէ  
ամէնը ճշմարիտ քրիստոնեաներ են , ոչ ալ կրօ-  
նան մարդիկ ճշմարիտ և սուտ աշակերտները  
ստուգութեամբ մէկզմէկէ որոշել : Լստուած միայն  
գիտէ ամէն մարդու սրտին խորհուրդը , և պիտի  
յայտնէ զանիկայ վերջին օրը :

Գ . Երբոր մենք երկրիս վրայ Վրիստոսի ե-  
կեղեցին փնտրուենք , կըտեսնենք մեծ բազմու-  
թիւն զանազան աղգերու մէջ , որ կըդաւանին թէ  
Վրիստոսի վարդապետութիւնները կընդունին և  
անոր հրամաններուն հնազանդ են : Լս բազմու-  
թիւնը որեւէնէ եկեղեցի կըկոչուի , քանզի  
յայտնի կերևնայ մարգոց աչքին առջևը , բայց  
անիկայ կըպարունակէ նաև շատ անձինք ալ ,



որ ճշմարտապէս քրիստոնեայ չեն :

Իսկ Վրիստոս երբոր երկինքէն վար կընայի մարդոց որդիներուն վրայ՝ իսկոյն կըտեսնէ ան ամէնը որ սրտով կըհաւատան և փրկուելու են : Եւ զայն աս բոլոր հաւատացեալներէն՝ և արդէն փրկուած սուրբերէն կըբաղկանայ Վրիստոսի ճշմարիտ եկեղեցին : Աւստի՝ որովհետև անհնարին է մարդոց՝ որոշել աս եկեղեցին , անոր համար կըսուի Եւրոպայէն եկեղեցի :

Գ . Կըհաւատանք Մէկ , Սուրբ ու Կաթուղիկէ և Եւաքելական Եկեղեցիին , որ է մարմին և հարսն Վրիստոսի , որ փրկուած է բուն Վրիստոսի անձին արիւնովը (Վործ . Ի . 28 : Հայտ . Ե . 9) , որ է սին և հաստատութիւն ճշմարտութեան (ա Տէ՛՛ . Գ . 15) , և գոխքին գոները երբէք պիտի չյաղթեն զանիկայ . բայց աս եկեղեցին (Վառ . Գ . 7) կազմուած է միայն անոնցմէ , որոնք որ Վրիստոսի աշակերտներն են ճըշմարտապէս , սրտով , և ոչ լոկ անունով :

Ե . Եկեղեցին մէկ է , և սակայն շատ մասեր ունի՝ ինտոր որ մարմինը շատ անդամներ ունի . անիկայ կըբաղկանայ զանազան ժողովուրդներէ կամ մասնաւոր եկեղեցիներէ , և կըպարունակէ իր մէջը զանազան ամբողջ ազգեր : Եւ մասնաւոր եկեղեցիներէն մէկ քանին ճշմարտութեան ճամբուն մէջ շիտակ կըբալեն , ոմանք քիչ մը հեռացած են անկից , և ուրիշներն ալ գրեթէ բոլորովին ապականած և կործանած են զճշմարտութիւնը . ինչպէս որ ըրին Սարգիսցոց եկեղեց-

ցին, Լաոդիկէի եկեղեցին և Վաղատացոց եկեղեցիները առաքելոց ժամանակը: Յոթ . 7 . 1 , 16 , 17 : Վաղ . ա . 6—9 : Եկեղեցի մը ճշմարիտ և սուրբ ու կենդանի Եկեղեցի ըլլալու համար՝ հարկաւ աս չորս յատկութիւնները պիտի ունենայ . Վասն՝ ճշմարիտ հաւատացելոց ժողով մը . Երկրորդ՝ Լստուծոյ Բանին հաւատարիմ քարոզութիւնը . Երրորդ՝ Սրբազան խորհրդոց ուղիղ մատակարարութիւնը . և Զորրորդ՝ Քրիստոսի տանը կառավարութեան վայելուչ գործադրութիւնը: Սէկ եկեղեցիի մը՝ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին ըլլալուն՝ ասոնցմէ զատ ուրիշ հարկաւոր նշաններ չկան:

Օ. Ուստի պարտինք գովարանել զԼստուած՝ որ իր եկեղեցին երկրիս վրայ հաստատեց ու միշտ կրնանամէ զանիկայ, որ է երկրիս աղք, աշխարհիս լոյսը, և ան խմորը որ ըտոր զանգուածը պիտի խմորէ. Լստուած՝ միայն իր եկեղեցիին համար կրնանայէ աս ապականեալ աշխարհիս, ու անոր երկայնամիտ կըլլայ: Օհնդ . ժը . 23—33 : ա Կորնթ . 7 . 21 , 22 : ր Կորնթ . 7 . 15 :



Բ . Լճի շէջոյ գալու ճիւղերն շէջ :

Գ . Բ . 13—38 :

Ն . Երբոր Տէրն մեր ճիսուս Քրիստոս երկինքը համարձաւ , ինչպէս հոգ տարաւ “սուրբերուն հաստատութեանը համար , պաշտամունքին գործին համար , և իր մարմինին՝ այսինքն և կեղեցիին շինութեանը համար” :

Պ . “Ինքը մէկ քանին տուաւ Ընաքեալներ , մէկ քանին Վարդարէներ , մէկ քանին Ըւետարանիչներ , մէկ քանին Հովիւներ ու վարդապետներ” : Լճի . Գ . 11 , 12 :

Ն . Ըստնք ամէն ալ տեղողական պաշտօններ են :

Պ . Ըէ . առջի երկուքը տեղողական չեն :

Ն . Ինչէն յայտնի է թէ առաքելական և մարդարէական պաշտօնները տեղողական չեն :

Պ . Այսան զի Ընաքելոց դարէն ի վեր քնաւ մէկը “առաքելի նշաններ” չըներ , ոչ ալ սպասոյց մը կուտայ Ըստուածային յայտնութեամբ սորվեցունելու , ինչպէս որ մարդարէները սորվեցուցին :

Իայց առաքեալի նշաններ ձեր մէջը գործուեցան ամէն համբերութիւնով, նշաններով, և սքանչելիքներով, ու զօրութիւններով: Բարձր. Ժր. 12: ա Կորն. Ժգ. 29, 30, 32, 33:

Հ. Որո՞նք են Աւետարանիչները:

Պ. Անոնք կրտսելին Աւետարանիչ՝ որ Վրբիստոս չգիտցուած տեղուանքը Աւետարանը քարոզելու և նոր եկեղեցիներ հաստատելու համար՝ քաղաքէ քաղաք կրպարտին: Գործ. Ը. 5, 35, 40: Իա. 8:

Հ. Աւետարանին մէջ ի՞նչ կանուանին անոնք՝ որոնց յանձնուած է առաքեալներուն և աւետարանիչներուն աշխատութեամբը հաստատուած եկեղեցիներուն հոգը:

Պ. Անոնք զանազան անուններով կանուանին, իրենց զանազան պաշտօններուն համեմատ:

(ա) Որովհետև անոնք Վրբիստոսի հօտին վերատեսուչներն են, կրկոչուին Ապոստոլոսներ:

Օգուչացէ՛ք ինքզինքներնուդ և բոլոր հօտին, որ Հոգին Սուրբ ձեզ անոնց վրայ նայող \* Դը-

\* Հոյն բնագիրը աս տեղ (ἐπισκόπους) կըսէ, որ կընշանակէ՝ եպիսկոպոսներ, այսինքն՝ վերատեսուչներ. վասն զի (ἐπί) կընշանակէ վրայ, և (σκοπέω) կընշանակէ՝ նայլ:

թաւ՝ Տէրոջը ժողովուրդը հովուելու, որ իր արիւնովը խալսեց : Պարձ . ի . 28 :

(բ) Արովհետեւ անոնց պարտաւորութիւնն է ծանրաբարոյ, խոհեմ և բարի օրինակ ըլլալ հօտին, և աղէկ կառավարել Վրիստօսի եկեղեցին, կրկոչուին Արեցներ :

Եւ Սելեստոսէն Ափեսոս խրկեց՝ եկեղեցիին երէցները \* կանչեց : Պարձ . ի . 17 : Ժե . 23 : ա Պէր . ե . 1 :

(դ) Արովհետեւ անոնք կրկերակրեն ժողովուրդը հոգևոր կերակուրով, կրկոչուին Հովիւներ :

Ըստուծոյ հօտը որ ձեր մէջն է՝ արածեցէք, վերակացու ըլլալով չէ թէ ահամոյ՝ հասպա կամաւ Ըստուծոյ ուղածին պէս . չէ թէ կաշառակրծու թեամբ, հասպա յօժարութիւնով . չէ թէ վիճակներուն վրայ տիրելով, հասպա հօտին օրինակ ըլլալով . որ Հովուապետին երեցած ատենը անթառամ փառքին պօսակը ընդունիք : ա Պէր . ե . 2 , 3 , 4 : Արի . դ . 11 :

(ե) Արովհետեւ անոնք կը ծառայեն Վր-

\* Յոյն բնագիրը աս տեղ (πρεσβυτέρους) կըսէ, որ կընչանակէ ձերեր, այսինքն՝ ծանրաբարոյ կամ յարգելիներ : Կարդացողը կրնայ աս քսաներորդ գլուխը բանալ, ու կարդալով իմանալ՝ թէ եպիսկոպոս և երէց անունները մի և նոյն ճարգոց կը արուի :

բխտոսի իր եկեղեցիին մէջ, կրկոչուին Պաշտօնեայներ :

Ընանկ է նէ ո՞վ է Պօղոսը՝ կամ ո՞վ է Մարտիրոսը . պաշտօնեաներ են, որոնցմով հաւատացիք, և ինտոր որ Տէրը տուաւ անոնց ամէն մէկուն : Եւ Կորնթ . 7 . 5 :

(ն) Արովհետեւ անոնք Մատուծոյ պատգամաւորներն են, կրկոչուին եկեղեցիին շնորհշտակները :

Եւթը աստղերուն խորհուրդը՝ որ իմ աջ ձեռքիս մէջը տեսար, և եօթը ոսկիէ աշտանակները . ան եօթը աստղերը՝ եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են . և եօթը ճրագարանները՝ եօթը եկեղեցիներն են : Հայտ . ա . 20 :

(չ) Արովհետեւ անոնք խրկուած են Մատուծոյ կամքը մեղաւորներուն յայտնելու, և աղաչելու անոնց՝ որ Քրիստոսի միջնորդութիւնովը Մատուծոյ հետ հաշտուին, կրկոչուին Ղեսպաններ :

Արեմն Քրիստոսի կողմանէ զեսպանութիւն կընենք, իրր'է թէ Մատուած կըբարեխօսէր մեզմով . կողաչենք ձեզի Քրիստոսի կողմանէ, հաշտուեցէք Մատուծոյ հետ : Եւ Կորնթ . ե . 20 :

շ . Աւրիշ ի՞նչ եկեղեցական պաշտօնեայներու կարգ յիշուած է Սուրբ Գրոց մէջ՝ Ապխսիոպոսներուն հետը :

Պ . Սարկաւազներուն կարգը :

Պօղոս և Տիմոթէոս Հիսուս Վրիստոսի ծառայները , Վրիստոս Հիսուսով բոլոր սուրբերուն որ Փիլիպեցոց կողմերն են՝ եպիսկոպոսներով ու սարկաւաղներով : Փիլիպ . ա . 1 : ա Տիմ . դ . 2 , 8 :

Հ . Ընտնք ինչ բանի համար ընտրուեցան :

Պ . Եղբաաներուն հոգ տանելու և ժողովուած ողորմութիւնները անոնց բաժնելու :

Եւ ան օրերը աշակերտները որ շատցան՝ Հոյներուն կողմէն տրտունջ մը ելաւ Աբրայեցիներուն վրայ . ինչու որ իրենց որբւարիները ամէն օրուան կերակորի ծառայութեան մէջ բանի տեղ չէին սեպուեր : Տասներկուքները կանչեցին աշակերտներուն բաղմութիւնը՝ և ըսին . Եղէկ բան չէ որ մենք Եստուծոյ խօսքը ձգենք , ու սեղաններուն ծառայենք : Ա՛ղբայրներ՝ ձեր մէջէն եօթը հոգի ընտրեցէք՝ բարի վկայուած՝ Հոգւով Սրբով և իմաստութիւնով լեցուն , որ անոնք աս գործին վրայ գնենք . ու մենք աղօթքի և պաշտամունքի ու խօսելու ետեւէն ըլլանք : Եւ ան խօսքը բոլոր բաղմութեան առջևը աղէկ երեցաւ , ու ընտրեցին Ստեփանոսը՝ հաւատքով և Հոգւով Սրբով լեցուն մարդ մը , ու Փիլիպպոսը , և Պրոքորոսը , ու Նիկանովրան , և Տիմոթէան , ու Պարմենան , և Նիկողայոս նորահաւատ Ընտիրեցին : Ըստնք առաքեալներուն առջևը կայնեցուցին , և աղօթք ընելով ձեռվրին անոնց վրայ դրին : Գործ . դ . 1—6 :

շ . Որ և իցէ մէջը որ փափաքի՛նէ՛ կրնա՞յ իր վրայ առնուլ շոփուական պաշտօնը :

Պ . Չէ : Բ Կարնի . Ե . 18—20 : ա Տէ՛ճ . ա . 12 :

ձ . Ո՞վ պիտի կանչէ զանիկայ աս պաշտօնին :

Պ . Աստուած :

Արբոր ասոնք Տէրոջը պաշտամունքին մէջ էին՝ և ծով կըրռնէին , շողին Սուրբ ըսաւ . Օջատեցէք ինձի Նառնարասը և Սողոսը ան դործին համար , որուն ես կանչեր եմ ասոնք : Գարձ . ԺԴ . 2 : Օգուշացէք ինքզինքներնուդ և բոլոր հօտին , որ շողին Սուրբ ձեզ անոնց վրայ նայող դրաւ՝ Տէրոջը Ժողովուրդը հովուելու , որ իր արիւնովը խալըսեց : Գարձ . Ի . 28 : Թ . 15 : Ավետ . Գ . 7 , 8 : շոփու . ա . 1 :

ձ . Մէկ մարդ մը ի՞նչպէս պիտի զխանայ թէ ինքը Աստուծակէ կըկանչուի աս պաշտօնին :

Պ . Ի . Արբոր ներքին փորձառութեամբ կիմանայ իր սրտին նորոգուիլը Աստուծոյ շնորհօքը , և իր մտքին լուսաւորիլը Վրիտաոսի զխաութեանը մէջ :

Բ . Արբոր ջերմեռանդ փափաք մը կունենայ աս պաշտօնին , չէ՛ թէ իր աշխարհային կամ մարմնաւոր օգուտին համար , հապա Աստուծոյ փառքին և հոգիներուն փրկու-



Թեանը համար :

դ . Արքոր ամբողջ կունենայ հարկ եղած հանգամանքները . ինչպէս՝ մարմնոյ և մտաց առողջութիւն , սորվեցունելու կողմանէ յաջողակութիւն , դուրսէն եղողներէն բարի վրկայութիւն , և իր քրիստոնեայ եղբայրներուն հաւանութիւնը : Վաղ . ա . 15 , 16 : Վարժ . Ժգ . 1—3 : ա Տէ՛ճ . գ . 1 , 2 :

ւ . Ի՞նչ է հողևոր շովիւներուն մեծ պարտաւորութիւնը :

Պ . Արթուն մնալ հողիններուն համար :

Ձեր առաջնորդներուն մտիկ դրէք , ու անոնց հնազանդ կեցէք , ինչու որ անոնք ձեր հողիններուն համար արթուն կըմնան , որպէս թէ իրենք ձեզի համար հաշիւ տալու են , որ խնդութիւնով ընեն անիկայ , և չէ թէ հառաչանք ընելով , որ ան ձեզի օգտակար չէր : Աբբ . Ժգ . 17 : Աղէ՛կ . գ . 17—21 :

ւ . Անանկ է նէ՛ խիստ երևելի և հարկաւոր չէ՞ անոնց կատարելու գործը :

Պ . Արկրիս վրայ բնաւ մէկը անոնց ունեցած գործին պէս հարկաւոր գործ մը չունի կատարելու :

Ինչու որ մենք Աստուծոյ առջև Վրիստոսի անուշ հոտն ենք՝ փրկուածներուն մէջ և կորսուածներուն մէջ . ոմանց մահուան հոտ դէպ ՚ի մահ , և ոմանց կենդանութեան հոտ դէպ ՚ի

կեանս . և ասոր ո՞վ բաւական կըլայ : Բ Կ-ընթ .  
բ . 15 , 16 :

Հ . Որովհետև անոնց գործը այնքան մեծ է , և անոնց հաշիւը որ պիտի տան Աստուծոյ՝ այնքան ահեղ , ուրեմն ի՞նչ հանդամանքներու տէր ըլլալու են անոնք :

Պ . Պէտք է որ անոնք ըլլան սուրբ՝ բարենախանձ և հաւատարիմ իրենց պաշտօնին մէջ . և պէտք է որ գիտութիւն ունենան , և կարող ըլլան ողջամիտ վարդապետութիւնը սորվեցունելու և քարոզելու :

Հ . Ի՞նչպէս կարգուելու է մէկը աս պաշտօնին :

Պ . Աղօթքով՝ ու երէցներուն ձեռնադրութեամբը :

Մի անհոգ ըլլար քու վրադ եղած շնորհքնե-  
րուն վրայով , որ մարդարէութիւնով քեզի տրուեցաւ՝ երէցներէն որ ձեռնադրուեցար : ա  
Տէ՛՛ . Դ . 14 : Բ Տէ՛՛ . ա . 6 :

Հ . Իսկ մէկը որ ձեռնադրուած է , ի՞նչպէս մէկ մասնաւոր եկեղեցիի մը վրայ կրնայ հովիւ կարգուիլ :

Պ . Պէտք է որ ան եկեղեցիին ազատ կամքովը ընտրուի , ու պէտք է որ քովի եկեղեցիներուն հովիւներն ալ հաւանութիւն տան :

Հ . Սուրբ Գրոց մէջ առ երկու բաներուն վրայով յատուկ կանոն մը կան :

Պ . Չէ . բայց կրնան յայանի խնացուիլ Սուրբ Գրոց մէջի Լսուած բաներէն : 'Ա,ա|ս' Ազկեղեցիին աղատ ընտրութեանը կարևոր ըլլալը անկէջ յայանի է՝ որ առաքելութեան պաշտօնին համար ընտրուած երկու անձինքը, (Պարթ . ա . 15 , 23) նմանագէս եօթը սարկաւազները (Պարթ . զ . 3 , ) եղբայրներուն բովանդակ ժողովէն ընտրուեցան : Արհարորդ՝ քովի եկեղեցիներուն Հովիւներուն հաւանութիւնը պէտք ըլլալը անկէջ յայանի է՝ որ թէպէտ ժողովուրդը ընտրեց ան սարկաւազները , բայց առաքելներուն կիցնար զանոնք կարգելը (Պարթ . զ . 6 ) . և առ յայանի է նաև ան պատուէրներէն որ Տիմոթէոսի և Տիտոսի տրուեցան , աղէկ նայելու իրենց ձեռնադրելու անձանց հանդամանքներուն : ա Տե՛ . զ . 1—11 : ե . 22 : Տե՛ր . ա . 5—9 :

Հ . Ազկեղեցիին ի՞նչպէս վարուելու է իր հողևոր Հովիւին հետ :

Պ . Ս' ե՛ծ սէր և պատիւ ցուցընելու է անոր :

Աղաչեմք ձեզի եղբայրներ , որ քանչևոք ձեր

աշխատաւորները ու վերակացուները Տէրոջմով ,  
 ու ձեռի խրատ տուողները . և անոնք էվելոք սի-  
 բելու արժանի սեպեցէք՝ իրենց գործքին համար :  
 ա թԷ . և . 12 , 13 : Ըն երեցները որ ա-  
 զէկ վերակացու կը ըսն՝ կրկին պատիւի արժանի  
 թող ըլսն . մասաւանդ անոնք՝ որ կաշխատին  
 խօսքով ու վորդպետութիւն ընելով : ա ՏԷ .  
 Ե . 17 :

Հ . Ակեղեցին պարտաւոր չէ՞ մի անոր  
 իշխանութեանը հնազանդելու :

Պ . Հրամարես . սրչափ որ անիկայ Ե-  
 ւեատարանին համեմատ կը սորվեցունէ :

Յիշեցէք ձեր առաջնորդները՝ որ Եւստուծոյ  
 խօսքը ձեզի խօսեցան . անոնց վորմունքին վերջ  
 նայելով՝ իրենց հաւատքին նմանող եղեք : ԱԷ .  
 Ժգ . 7 : Չեր առաջնորդներուն մօտիկ զրէք , ու  
 անոնց հնազանդ կեցէք . ինչու որ անոնք ձեր  
 հոգիներուն համար արթուն կը մնան , որպէ՛ս թէ  
 իրենք ձեզի համար հաշիւ տալու են . որ խնդու-  
 թիւնով ընեն անիկայ , և չէ թէ հատաչանք ը-  
 նելով , որ ան ձեզի օգտակար չէր : ԱԷ . Ժգ .  
 17 : Թէ որ մէկը ձեզի գայ՝ ու ա , վորդպետ-  
 աութիւնը չունենայ՝ անիկայ տուներնիդ մի ըն-  
 դունիք , և բարև մի տաք անոր : Բ ՅԷ . 10 :  
 Միտե՛քներ՝ ամէն հոգիի մի հաւտար . հապա հո-  
 գիները փորձեցէք թէ Եւստուծու են մի . ինչու  
 որ աշխարհիս վրայ շատ սուտ մարդարէներ ելած  
 են : ա ՅԷ . Դ . 1 : ՓԷԼ . Բ . 29 : ա

ԹԻՒՆ . Ե . 12 , 13 :

Հ . Հովելին գործին մեծութեանը նայելով՝ Եկեղեցին յատկապէս ինչ պարտի ընկանոր համար :

Պ . Պէտք է որ շարունակ ազօթք ընկանոր համար , և կրցածին չափ ջանք ընկանոր օգնելու :

Չեղի կաղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս Վրիստոսի ձեռքովը , ու Հոգւոյն սիրովը , որ ինծի հետ պատերազմակից ըլլաք ձեր աւօթքներուն մէջ առ Մատուած ինծի համար : Հովել . ԺԵ . 30 : Բ Կորնթ . ա . 11 : Եփես . Գ . 18 , 19 : Կռ . Գ . 3 : ա ԹԻՒՆ . Ե . 25 : Բ ԹԻՒՆ . Գ . 1 , 2 : Եփես . ԺԳ . 18 , 19 :

Հ . Եկեղեցին պարտաւորութիւնը և արտօնութիւնն է հոգւոր Հովելին պէտք եղածը հոգալու և նայելու որ անիկայ բանի մը կարօտ չըլլայ :

Պ . Հրամեքե՛ս , որ այնպէս անիկայ կարող ըլլայ իր բոլոր ժամանակը և ուշադրութիւնը իր ժողովուրդին տալու , իրրեանոնց հովիւը :

Վրիստոնէական Եկեղեցւոյ հաստատութեա-

նը համար՝ երկու տեսակ արտաքոյ կարգի քարոզիչներ եղան, որոնք «Սուրբ Հոգիէն շարժուած խօսեցան», այսինքն՝ Մաքեալները և Մորգարէնները. և իրենց սրբազան վարդապետութեանցը վրայ եկեղեցին հաստատուեցաւ, Հիսուս Վրիստոս ինքը ըլլալով անկիւնին գլուխը : Մաշտօնները տեղական շնացին եկեղեցիին մէջ, քանզի առաքելոյ դարէն ՚ի վեր՝ բնաւ մէկը առաքեալի նշան ըրած չէ, ոչ ալ մարդարէի մը պէս Հոգւոյն Սրբոյ ներշնչութեան ապացոյց մը տուած է : Այլ յիրաւի Վրիստոսի բովանդակ վարդապետութիւնը՝ անգամ մը կատարելապէս յայտնուելէն ու հաստատուելէն և ՚ի դիր անցնելէն ետեւ՝ այլ ևս հարկ չէր որ ասա պաշտօնները շարունակուին :

Մաքեալներուն հետ ուրիշ աշխատողներ ալ կային Մեստարանիչ բնուած, որոնք առաքեալներուն պէս մէկ տեղէն մէկսլը կերթային կրպորտրտէին Մեստարանը քարոզելով և եկեղեցիներ հաստատելով : Մտնք տեղական են և պիտի մնան մինչև որ բոլոր ալքերը Վրիստոսի վարդապետութիւնը իմանան ու սորվին :

Մայր եկեղեցիին շինութեանը և հաւատացելոց հաստատութեանը համար, Մաքեալները առէն եկեղեցւոյ մէջ մարդիկ կարգեցին, որ Մատուոյ հօտին վրայ հսկեն և հօդուոր կերակուրով սնուցանեն զանիկայ : Մտ անձինքը՝ որոնց պաշտօնը տեղական պիտի ըլլար, իրենց կատարելու զանազան պաշտօններուն համեմատ՝ զանա-

զան անուններ ընդունեցին . ինչպէս՝ Երէցներ ,  
Եպիսկոպոսներ , Էպիսկոպոսներ , Էպիսկոպոսներ : Եւ աս անուններէս կիմացուի թէ անոնք օրինակ ըլլալու  
են հօտին և միանդամոյն իրաաւելու և կառաւար-  
րելու են զանիկայ . և թէ անոնք հոգևորապէս  
արթուն մնալու են , խնամք տանելու են անոր  
վրայ , և կերակրելու ու սնուցանելու են զանիկայ  
ողջամիտ վարդապետութեամբ :

Սարկաւաղներ ալ սահմանուեցան որ ազգա-  
ներուն հոգ տանին և եկեղեցոյ աշխարհային  
գործքերուն նային :

Էպիսկոպոսները՝ որ Սուրբ Գրոց մէջ կանուանին  
նաև երէցներ , եպիսկոպոսներ , պաշտօնեաներ ,  
ևայլն , շատ ծանր՝ երկելի և հարկաւոր պաշտօն  
մը ունին :

Ե . Եստուած է որ նախ իր շնորհօքը՝ և երկ-  
րորդ իր նախախնամութեամբը կրկանէ զանոնք  
աս բարձրագոյն և սուրբ պաշտօնին : Իր շնորհօք  
կրկանէ զանոնք՝ երբոր կընտրողէ անոնց սիրտերը  
և կը յօժարեցնէ զանոնք ամէն բանէն աւելի աս  
պաշտօնիս ցանկալու : Իր նախախնամութեամբը կրկանէ  
զանոնք՝ երբոր կուտայ անոնց՝ մտքմտոյ և մտաց  
առողջութիւն , բարեպաշտ և խելացի բարեկամ-  
ներու հաճութիւն և հաւանութիւն իրենց ձեռ-  
նադրութեամբը համար , ապրուստի միջոցներ , և  
աս պաշտօնին համար հակաւոր զիտութիւններ  
սորվելու պատեհութիւններ : Եւ երբոր անոնք  
այսպէս պատրոստ կը ըլլան , անատները հքապա-  
րակաւ և հանդէսով կրկարդուին իրենց պաշտօ-

նին մէջ՝ աղշմբով և ձեռնադրութեամբ :

Բ . Ընոնց մեծ պարտաւորութիւնը ան է որ լանան իրենց մեղակից եղբարցը հողիները փրկելու : Ըսիկայ սլոխ հանելու համար պէտք է որ անոնք՝ թէ հրսպարակաւ և թէ առանձին , ողջմտութեամբ Ըստուծոյ Ըւետարանը քարոզեն և սորվեցունեն ամէն տեսակ և ամէն աստիճանի մարդոց , ամէն ասին , ամէն պարագայի մէջ և աշխարհի ամէն քաղաքներուն մէջ :

Գ . Պէտք է որ անոնք ըլլան ճշմարտապէս բարեպաշտ մարդիկ , աղօթաւեր , ուսումնասէր , ողջամիտ վարդապետութիւն ունեցող , անբատ , խաղաղ սրտ և ծանր սրբայ . անձնուրաց , ողորմած , հեղահողի , իրենց տուններուն ազէկ վերակացու եղող և ամէն բանի մէջ ինքզինքնին բարի գործքերու օրինակ ընող :

Դ . Այկեղեցւոյ պաշտօնեաները թաղաւորաց լազաւորին գեսպաններն են . իրենց գործը ոչ միայն ժամանակի՝ այլ և յախանականութեան կը վերաբերի : Ընոնք Ըստուծոյ գործիքներն են զաշխարհս լուսաւորելու և փրկելու : Ըհաւաշխարհիս բոլոր երեւելի գործքերէն գերազանցը աս է :

Ա . Այկեղեցին՝ տյսինքն հաւատացեալները պէտք է որ սիրեն և պատուեն իրենց հովիւները , հնաշանդին անոնց իրաւօին և իշխանութեանը՝ քան՝ որ անոնք Տէրոյձով խօսին . աղօթք ընեն անոնց համար , անոնց ծանր պաշտօնեւուն մէջ



ձեռնառու ըղան անոնց , և անոնց բաւական ապ-  
բուսաք իրենք հոգան :

Գ . Երբեք չի մտնուի ինչ որ :

1 . Թէ երբ մէկ մարդ մը յարմար է եկեղեցին մը  
ընդունուելու :

Գ . Ե . 16—26 :

2 . Երբ մէկ մարդ մը յարմար կըլլայ  
եկեղեցին մէջ ընդունուելու :

Պ . Երբ որ հաւատայ 'Քրիստոսի' իր  
բոլոր սրտովը :

Եւ ան ըսաւ անոր . [Թէ որ քու բոլոր սրտ-  
տովը կը հաւատաս նէ , կարելի է . անիկայ պա-  
տասխան տուաւ և ըսաւ . Արհաւիրք որ Հի-  
սուս 'Քրիստոսը Որդի Աստուծոյ է : Գ . Ե . Ը .  
37 : Ս . Ե . Ժ . 16 :

3 . Ինչպէս յայտնի կըլլայ , երբ որ մէ-  
կը աս հաւատաքը կունենայ :

Պ . Հաւատացեալին դաղափարներուն ,  
զգացումներուն և գործքերուն վրայ տես-  
նուած հաւատքին ներդրածութենէն :

Հապա ալ ըլլայ մէկը որ ըսէ [Թէ՛] 'Կունհա-  
ւատք ունիս , ես ալ գործք ունիմ' . դուն քու

Հաւատքդ ցըցուր ինձի առանց գործքերու, ու  
ես քեզի ցուցընեմ իմ Հաւատքս իմ գործքե-  
րէս : Յ-ի . բ . 18 :

Հ . Արբոր մէկ մարդ մը իր բոլոր սրբ-  
տովը Հաւատայ Վրիստոսի, անասններ ինչ  
փոփոխութիւն կը լայ անոր վրայ :

Պ . Իր սիրտը կը մտաւորուի, և ինքը մէկ  
նոր արարած մը կը լայ :

Հողին սուրբը ասելով անոնց, ինչպէս որ մե-  
զի . ու մէկ տարրերու թիւն մը չըբաւ անոնց և  
մեր մէջը, Հաւատքով մաքրելով անոնց սիրտը :  
Պ-ի . ժ . 9 : Աւստի թէ որ մէկը Վրիստո-  
սի մէջ է, անիկայ նոր սակղճուած մէն է . ինչու  
որ Հինը անցաւ, ու Հիմա ամէն բան ներ կըսու  
բ . կ-ի . Ե . 17 : ա . Յ-ի . գ . 3 : Վ-ը .  
Ե . 6 : զ . 15 : Ա-ի . գ . 20—24 :

Հ . Ինչ էր Վրիստոսի դիտաւորութիւ-  
նը իր եկեղեցիին ունենալու Հանգամանայը  
վրայով :

Պ . Վրիստոսի կամքն ան էր որ անիկայ  
սուրբ ու անարատ եկեղեցի մը բլայ :

Այրիկ մարդիկ՝ սիրեցէք ձեր կիկնները . ինչ-  
պէս որ Վրիստոս սիրեց եկեղեցին, ու իր անձը  
մասնեց անոր Համար . որ անիկայ սուրբ ընէ աւ-  
ազանին մաքրութեամբ՝ խօսքով . որ ինքը իր  
զիմացը փառաւոր կեցունէ եկեղեցին՝ որ մէկ ա-  
րատ մը կամ ազատութիւն կամ ուրիշ ասոր

պէս բաներ շունենայ . հասցա որ սուրբ ու անա-  
բատ ըլլայ : Եւրեւ . ե . 25 - 27 : Որ մեզ բո-  
լոր անօրէնութիւններէն ազատէ , ու մտքէ իրեն  
յատուկ ժողովուրդ ընէ՝ բարի դորձքերու նա-  
խանձար : Տէր . բ . 14 : Գործ . բ . 47 :

Ն . Քրիստոս ի՞նչ կը պահանջէ երկրիս  
վրայի իր եկեղեցիին բոլոր անդամներէն :

Պ . Այսպահանջէ որ անոնք իր փառքը ու  
պատիւը ցուցնեն և լուսաւորեն իւր պէս  
երևնան աշխարհիս մէջը :

Որ ըլլաք ամբի՛ւ ու անարատ Լուսուծոյ որդի-  
քը , առանց մեղադրանքի՝ կամ սպաշտ ու մոլո-  
րեալ աղօթի մէջ , որոնց մէջք դուք լուսաւորներու  
պէս երևնաք աշխարհիս մէջը : Փիլիպ . բ . 15 :  
Ի՞նչ դուք մէկ այնիւ ցեղ մէջն էք . լնազաւո-  
րութիւն , քահանայութիւն , սուրբ աղօթ , սեպ-  
հական ժողովուրդ մը , որ ձեր առաքիներութիւն-  
ները անոր ընծայեցիք , որ ձեզ խաւարէն իր  
սքանչելի յօյսին կանչեց : ա Պէր . բ . 9 :

Ն . Լուսուած կը հաճի՞ որ իր եկեղեցիին  
անդամ ընդունուի անանկ մէկը՝ որ անկեղ-  
ծութեամբ զգջացած չէ՝ և սրտով հաւա-  
տացած չէ արդարութեան :

Պ . Չէ :

Սակայն Լուսուած մեղաւորին կըսէ թէ , Քե-  
զի ի՞նչ՝ որ գուն կը պատենս իմ օրէնքներս ու  
բերանդ կանենս իմ ուխտս : Այսան զի գու՛

խրատը ատեցիր , ու ետիզ կըձգես իմ խօսքերս :  
 Սուրբ . ծ . 16 , 17 :

Հ . Եւ չա՛հ մը կունենա՞յ մէկը հաւատա-  
 ցելոց ընկերութեանը մէջ մանեւէն և Տէրոջը  
 Անդանին հաղորդ ըլլալէն , քանի որ իր  
 սիրտը ուղիղ չէ Մատուծոյ առջևը :

Պ . Ըէ :

Դուն առ բանին մէջը մասն ու բաժին չունիս .  
 Ինչու որ քու սիրտդ Մատուծոյ առջև շիտակ չէ :  
 Դուն առ քուկին չարութենէդ զեղջի եկուր , ու  
 Տէրոջը աղօջէ . գուցէ թողութիւն ըլլայ քեզի  
 քու սրտիդ գէշ խորհորդներէն : Ինչու որ ես  
 քեզ մաղչի լեղութեան մէջ՝ և անիրաւութեան  
 կապերու մէջ կը տեսնամ : Վարձ . ք . 21—23 .  
 Այսն զի ան որ անարժանութեամբ կուտէ ու  
 կը խմէ , իր անձին դատապարտութիւնը կուտէ՝  
 ու կը խմէ . Ինչու որ Տէրոջը մարմինը չորոշիբ .  
 ա Վարձ . ժա . 29 : Վարձ . ե . 1—5 :

Հ . Ի՞նչպէս կրնայ խմանալ մէկը թէ իր  
 սիրտը նորոգուած և մաքրուած է հաւաա-  
 քով :

Պ . Իր նորոգուած ու մաքրուած գա-  
 զափարներէն , զգացումներէն և շարժմունք-  
 ներէն :

Ի՞սով գիտենք որ մենք անոր մէջ բնակած ենք .  
 ու ան մեր մէջ՝ որ իր Հոգիէն մեզի տուաւ : ա  
 Յուդէ . 7 . 13 : Հուդէ . ք . 14—16 : ա Վարձ .  
 ա . 22 :

Հ . Ըսանկ մէկը ի՞նչ զգացում կունենանայ առ Հիսուս մեղաւորաց Ֆրկիչը :

Պ . Կըսիրէ զանիկայ ամէն բանէն աւելի , և կըվատահի անոր՝ իր բոլոր սրտովը :

Ըն որ դուք չաեսաք՝ ու սիրեցիք . որ անիկայ Հիմա չէք տեսնար , բայց հաւատացիք , և ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խնդուածիւնով : ա Պէր . ա . 8 : Սենք Ըստուած սիրենք . ինչու որ առաջ անիկայ մեզ սիրեց : ա Հ-Է . դ . 19 :

Հ . Ընիկայ ի՞նչ զգացում կունենայ իր մեղքերուն վրայ :

Պ . Կըտրտմի անոնց վրայ , կըխոստովանի և մէկ զի կըձգէ զանոնք :

Սրեմն ան ժամանակը ի՞նչ պտուղ ունէիք ան բաներովը՝ որոնցմով Հիմա կամընար . ինչու որ ան բաներուն վերջը՝ մահ է : Հ-Է . դ . 21 : Ըմէն ո՞վ որ Ըստուածէ ծնած է՝ մեղք չընէր . ինչու որ անոր սերմը իր մէջը կըմնայ , ու չկրնար մեղք դործել . պաաճառն որ Ըստուածէ ծնած է : ա Հ-Է . դ . 9 : Բ Կ-Է . է . 10 : Ս-Չ . ԼԲ . 5 :

Հ . Լու իր բոլոր կենացը մէջ ի՞նչ բան ընելու փափաղ ու զիտաւորութիւն կունենայ :

Պ . զԸստուած սիրելու ու անոր ծա-

ուայեղու : Բ Կ՝ընթ . Ե . 14, 15 : Փն՛ւղ .  
 ա . 21 :

Հ . Լսանկ մէկու մը ամենասիրելին ո՛վ  
 պիտի ըլլայ :

Պ . Լստուած :

Ո՛վ ունիմ ես Եր'իւնքը . երկրի վրայ ալ քեզ  
 մէ ուրիշը չեմ ուզէր : Իմ մարմինս ու սիրտս  
 կըմտջին . բայց Լստուած իմ սրտիս զօրութիւնը  
 ու իմ բաժինս է յաւիտեան : Սող . 57 . 25,  
 26 :

Հ . Ուրեմն անի'այ պիտի սիրէ՞ աղօթք  
 ընելը , Լստուած աշունչ կարգսլէ և եկեղե-  
 ցի երթալը . պիտի սիրէ՞ նաև Լստուծոյ  
 բըլըր ժողովուրդը :

Պ . Հրամարես :

Լսով ամենը պիտի գիանան՝ թէ իմ աշակերտ  
 ներս էք , թէ որ մեկզմէկ սիրէք : ՅԻ՛Ք . Ժգ .  
 35 : Թէ որ մէկը զրուցէ թէ ես Լստուած կը  
 սիրեմ , ու իր եղչայրը առէ՝ անիկայ սուտ է .  
 ան որ իր եղչայրը չսիրեր՝ որ կըտեսնայ . Լս-  
 տուած որ չտեսնար՝ ինտո՞ր կրնայ սիրել : ա ՅԻ՛Ք .  
 Դ . 20 : Հապտ անոր կամքը Լստուծոյ օրէնքին  
 մէջն է . ու գիշեր ցորեկ անոր օրէնքին վրայ կը  
 մտածէ : Սող . ա . 2 : Պարթ . Թ . 11 :  
 Սող . 27 . 1—4 :

Հ . Թէ որ մէկը ըսէ թէ ինքը առ բարի  
 գղացումները և սրտի նորագութիւնը ունի ,

ինչէ՞ն պիտի խմացուի թէ անիկայ խկապէս  
անանկ նոր սիրտ մը ունի :

Պ . Ընոր սուրբ վարք մը ունենալովը :

Եւ զբայրենք ես իմ անձս չեմ սեպեր որ հա-  
սեր եմ . բայց մէկ բան մը կայ, որ ետևի եղած-  
ները մոռցած եմ, ու առջևի եղածներուն ետևէն  
կերթամ . միտք զնե լով կը վազեմ դէպ 'ի Մ.Ս.  
ատուծոյ կոչման կէտին հասնելու (Յիսուս Վրիս-  
տոսով : Փիլիպ. գ . 13, 14 : Եբ . Ժբ . 1, 2 :

Ն . Երբ որ ասանկ մէկը մեղքի մէջ իյ-  
նայ նե՞ ի՞նչ զգայութիւն կուեննայ :

Պ . Կամչնայ և կը տրտմի Մատուծոյ առ-  
ջիւր :

Եւ Պետրոս Յիսուսի ըսած խօսքը միտքը  
բերաւ, թէ՛ Վեռ հաւը չխօսած՝ իրեք անգամ  
պիտի ուրանաս իս . ու դուրս ելաւ՝ դառնար-  
ցունք լացաւ : Սաղ . իզ . 75 . Սաղ , ծա :

Ն . Ինչէ՞ն կը ճանչցուի մէկ ծառի մը  
աղէկ կամ դէշ ըլլալը :

Պ . Իր պտուղէն : Սաղ . է . 18—  
20 : Յեհ . Ժդ . 15 , 21—23 :

Ը . Ընոնք որ կուգան Վրիստոսի եկեղեցիին  
անգամ ըլլալու կը փափագին, պէտք է որ ամէնքն  
ալ վերստին ծնած և ճշմարտապէս Մատուծոյ  
դարձած ըլլան :

Ի . Ղշմարտապէս նորոգուածները երկու և զանակաւ կրնան զիտնալ իրենց սյնպէս ըլլալը , իրենց զգացումներէն և իրենց գործքերէն : Թէ որ անկեղծութեամբ կը արտամիս քու մեղքերուդ համար , և կատես ու կը լսոստովանիս և մէկ դի կը ձգես զանոնք , թէ որ զգալով քու կորսուած ըլլալդ՝ փրկութեան համար քու բոլոր յոյսդ ամենօրհնեալ Ֆրկչին քաւութեանը և արդարութեանը վրայ կը դնես , թէ որ քու բոլոր սրտովդ կը սիրես զՄատուած , և կը փափագիս յաւիտեան Մնոր ծառայելու , թէ որ կը սիրես աղօթք ընել և Մատուծոյ խօսքը կարդալ և լսել , թէ որ կուզես ամէն մարդու հետ խաղաղութեամբ ապրիլ և մանաւանդ Մատուծոյ ժողովուրդին հետ ընկեր ըլլալ , ամէն բանէն 'ի վեր թէ որ կը ջանաս ամէն օր յառաջ երթալ և ածիլ աս ամէնուն մէջ և կը արտամիս երբոր չես յառաջ երթար , անատենը կրնաս աղէկ յոյս մը ունենալ թէ դուն մէկ նոր սիրտ մը ունիս , և անատենը կրնաս քու անձդ մատուցանել եկեղեցիին՝ որ քեզ ընդունի իրեն անդամներուն կարգը :

Գ . Մնիրանները , պսինքն՝ պոռնիկները , կռապաշտները , շնացողները , իգացեալները , արուագէտները , գողերը , ազահները , դինովները , բամբասողները և յափշտակողները ու ամէն ասանկները , Մատուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն :

Էտեապէս ասանկ անձինքը վայելուչ չէ քրիստոնէական եկեղեցիի մը մէջ անդամ ըն-



դունիլ , մինչև որ անոնք չլուացուին , չարքութիւն  
ու չարդարանան մեր Տէր Հիսուս Վրիստոսի  
անունովը , ու մեր Աստուծոյ Հոգւովը : ա  
կորնք . զ . 9—11 :

Դ . Եկեղեցւոյ վերատեսուչները պարտին  
մեծ փութով և ուշադրութեամբ քննել և փոր-  
ձել ան անձինքը՝ որոնք եկեղեցւոյ անդամ ըն-  
դունուիլ կուզեն : Եկեղեցիին խաղաղութիւնը՝  
երջանկութիւնը և զօրութիւնը՝ անոր սուրբ և  
անարատ ըլլալէն կախում ունի :

2 . Թէ ինչու ճշմարիտ քրիստոնեայ մը կրցանկայ Աստուծոյ  
տեսանելի եկեղեցիին մէջ մտնելու :

Պ . 1 . Ժդ . 16—35 : Ս . 2 . Ճիր . 1—9 :

2 . Երբոր մէկը ճշմարիտ հաւատաւ-  
ցեալ մը կըլլայ , ինչու համար կրցանկայ  
Աստուծոյ տեսանելի եկեղեցիին մէջ մտնելու :

Պ . (ա) Ենոր համար որ Վրիստոս այն-  
պէս հրամայեց :

Ու անհաւատներուն հետ լուծի ընկեր մի ըլ-  
լաք . ինչու որ ի՞նչ հաղորդութիւն ունի արդա-  
րութիւնը անօրէնութեան հետ . կամ թէ՛ ի՞նչ  
հաւատարութիւն ունի լոյսը՝ խաւարին հետ . և  
կամ ի՞նչ միաբանութիւն ունի Վրիստոս բե-

լիարին հետ : Կամ թէ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ . կամ թէ ի՞նչ նմանութիւն ունի Մատուծոյ տաճարը կոատուններուն հետ : Իրացունէ դուք կենդանի Մատուծոյ տաճարն էք . ինչպէս որ Մատուած ըսաւ , թէ անոնց մէջը պիտի բնակիմ , ու անոնց մէջ պիտի քալեմ , և անոնց Մատուած պիտի ըլլամ , ու անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան : Մտոր համար ելէք անոնց մէջէն , ու զատուեցէք , կըսէ Տէրը . և պիղծ բաներու մի մտիկնաք . ու ես ձեզ պիտի ընդունիմ , և ես ձեզի Հայր պիտի ըլլամ , ու դուք ինձի աղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կըսէ ամենակալ Տէրը : Բ Կորնթ . Գ . 14—18 : Սուր . իը . 19 , 20 : Գործ . Բ . 33 , 41 , 47 :

(բ) Ենոր համար որ կըցանկայ Մատուծոյ ժողովուրդին վայլած օրհնութիւններուն հաղորդ ըլլալու :

Յիշէ ինձի ո՛վ Տէր , քու ժողովուրդիդ հաճութեանը պէս , ինձի տես եկուր քու փրկութիւնովդ : Ար քու ընտրուածներուդ աղէկութիւնը տեսնամ , քու ազգիդ ուրախութիւնովը ուրախանամ . քու ժառանգութիւնովդ պարծենամ : Սուր . ճգ . 4 , 5 :

(գ) Ենոր համար որ կըցանկայ նաև յայտնի ընել աշխարհի թէ ինքը՝ Տէրը իրեն Մատուած ընդունած է , և թէ զանկայ կը պաշտէ :

Բոլոր սրտով Տէրոջմէն պիտի դոհանամ ուղիղներուն ժողովքին ու ժողովուրդին մէջը : Սուրբ . ճԺա . 1 : Ու քու վկայութիւններդ թագաւորներուն առջին պիտի խօսիմ , ու չպիտի ամչնամ : Սուրբ . ճԺԹ . 46 : Յեսայ . իգ . 15 :

Հ . Թե՛ որ մենք ամօթ սեպնը մարդոց առջևը Յիսուս Քրիստոսը դաւանելու , ասկից ի՞նչ պիտի հետևի :

Պ . Ընկիսց ալ ամօթ պիտի սեպէ զմեզ՝ իր Հօրը և սուրբ Հրեշտակներուն առջևը խոստովանիլը :

Ուստի ո՞վ որ իս՝ և իմ խօսքերս ամօթ կըսեպէ աս շնացող ու մեղաւոր ազգիս մէջ , Որդին մարդոց ալ անկիսց ամօթով պիտի ընէ՝ երբոր իր Հօրը փառքովը և սուրբ Հրեշտակներով գայ : Սուրբ . ը . 38 : Ղուի . ժբ . 8 , 9 : ԲՆ . բ . 12 :

Հ . Եւ թէ՛ որ մէկը զՄատուած կըսիրէ , պիտի չսիրէ՞ նաև անոր ժողովուրդը և պիտի չփափազի՞ անոնց ընկեր ըլլալու :

Պ . Հրամարես :

Ես ընկեր եմ ան ամէնուն հետ՝ որ կը վախնան քեզմէ , ու քու պատուիրանքներդ կը պահեն : Սուրբ . ճԺԹ . 63 : ա Յուէ . դ . 20 :

Հ . Կը հաւատաս՞ թէ՛ եկեղեցիին մէջ մտնելդ պիտի փրկէ զքեզ :

Պ . Չէ :

Չեմ ուզեր որ չզիտցող ըլլաք եղբայրներ , որ մեր հայրերը ամէնքն ալ ամպին տակն էին , ու ամէնքն ալ ծովէն անցան , և ամէնքն ալ Սովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջը : Այլ ամէնքն ալ նոյն հոգևոր կերակուրը կերան , ու ամէնքն ալ նոյն հոգևոր խմելիքը խմեցին . (ինչու որ կրխմէին ան հոգևոր քարէն որ անոնց հետը կերթար , ու ան քարը Քրիստոս ինքն էր . ) Ըսյց չէ թէ անոնցմէ շատերուն հաւնեցաւ Մատուած . ինչու որ անապատին մէջ գետինը ինկած մեռան : ա Վորնն . Ժ . 1—5 : Վորն . Ե . 1—5 : Սորն . Է . 21—23 :

Ն . Արբոր անդամ մը Ակեղեցիին մէջ կրմաննք , կրնա՞նք հանդարտ նստիլ՝ կարծելով թէ եկեղեցւոյն մէջը ըլլալովնիս անշուշտ պիտի փրկուինք :

Պ . Չէ , վասն զի եկեղեցի մանելնիս՝ մեր քրիստոնէական պատերազմին միայն սկզբնաւորութիւնն է :

Մն որ կը յաղթէ՝ անոր կուտամ որ իմ հետս իմ աթոռս նստի . ինտոր որ ես ալ յաղթեցի՝ ու իմ շօրս աթոռը նստայ : Հայր . գ . 21 : Այլ ասկէ ետև իմ սիրելիներս՝ ինչպէս ամէն կերպով հնազանդ եղաք՝ չէ թէ մինակ իմ ձեզի եկած ատենս , հապա ալ էլիւօք հիմա երբոր ձեզմէ հեռու եմ . ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք . ինչու որ Մատուած է՝ որ ձեր մէջը կը յաջողէ կամելը ու ընելը իր հա-

Ճուրթեանը համար : Փիլիպ . Բ . 12, 13 : Ղ . 1 .  
 Ժգ . 24 : Ս . 13, 14 : Յ . 33 : ա Կորնթ . Թ . 24—27 : Փիլիպ . Գ .  
 7—21 : Եբր . ԺԲ . 1 : Բ Տիմ . Գ . 12 : Յ . 1 .  
 ա . 2 :

Լ . Լնոնք որ կըսիրեն զՄատուած՝ պարտա-  
 ւոր են Լնոր եկեղեցիին յարելու . քանզի ինքը  
 այնպէս կըհրամայէ : Եւ այնպիսի անձինք մեծ  
 ուրախութիւն ունին զՄ. րիստոս դաւանելով  
 մարդոց առջևը , անոր աշակերտներուն կարգը  
 մանելով և անոնց հետ մէկ տեղ պահելով ան  
 ամէն բաները որ Լնքը պատուիրեր է :

Բ . Հատ ահաւոր բան մըն է Եկեղեցւոյ  
 անդամ ըլլալը . շատ մեծ ու դժուարին բան մըն  
 է քրիստոնէական կեանք մը վարելը : Աւտի ով  
 որ Մ. րիստոսի եկեղեցիին անդամ ըլլալ կուզէ ,  
 պէտք է որ փորձէ իր անձը երկիւղով՝ զգուշու-  
 թեամբ և աղօթքով , որ չըլլայ թէ եկեղեցիին  
 մէջ մտնէ անարժան պատճառներէ շարժուած և  
 առանց ուղիղ զգացումներ ունենալու , և այնպէս՝  
 թէ իր անձը և թէ ուրիշներունը խարէ , սե-  
 պելով թէ ինքը մէկ բան մըն է , երբ որ չէ :  
 Ղ . 3 :

Գ . Օգոյշ կեցիր որ շկարծես թէ եկեղե-  
 ցիին մէջ ըլլալէ պիտի փրկէ զքեզ : Սինչ և ան-

դամ թէ որ եկեղեցւոյ Հովիւները և բոլոր անդամները աղէկ կարծիք ունենան քու բարեպաշտութեանդ վրայօք, մի վտահիր ան բանին, քանզի անոնք կարող չեն հաստատ ըսել՝ թէ դուն իսկապէս բրիտանոնեայ մըն ես : Միայն Աստուած գիտէ ապիկայ, անանկ է նէ՛ մարդոց դատողութեանը մի կապուիր մնար :

Գ . Օգոյշ կեցիր նաև՝ որ շըլայ թէ եկեղեցիին մէջ ընդունուած ըլլալուդ համար խորհիս թէ՛ քու մեծ գործդ կատարեր ես, և այնպէս՝ հանդիսա ու անհոգ ըլլաս : Գուն մէկ ասպարէզ մը ունիս վազելու, որ միայն մահը՝ և ի՛նչ ուրիշ բան պիտի վերջացունէ զանիկայ : Թէ աշխարհիս և թէ Աստուծոյ եկեղեցիին աչքերը քու վրայ դարձած են, շատ բան կը յուսացուի քեզմէ : Ֆրկչին փառքը՝ քու վարելու կեանքէդ կախում ունի, ուրեմն առ քու վարելու կեանքդ թող սուրբ կեանք մը ըլլայ :

դ . Սիրտ-խեան վրայ :

1 . Չախահաս անձանց մկրտութեանը վրայ :

Գործ . ը . 1—2/4 :

2 . Կոր հաւատացեալ մը ի՞նչ խորհարդով կրնդունուի եկեղեցիին մէջը :

Պ . Մկրտութեան խորհուրդովը :

Ոմանք սրտանց ընդունելով անոր խօսքերը՝ մկրտուեցան , և ան օրը իրեք հազար հոգիի չափ աւելցան : Պարժ . Բ . 41 :

Ն . Մկրտութիւնը որո՞ւն անունովը մատակարարուելու է :

Պ . Յանունն շօր և Որդւոյ և շողւոյն Սրբոյ : Սաաթ . իր . 19 :

Ն . Չափահաս մէկու մը մկրտուելովը ի՞նչ կիմանանք :

Պ . Կիմանանք թէ անիկայ կրդաւանի որ քրիստոնեայ մըն է , և թէ եկեղեցին անոր դաւանութեանը հաւատալով՝ կընդունի զանիկայ իր անդամներուն կարգը :

Ն . Վու մկրտութիւնդ ի՞նչ կըսորվեցունէ քեզի քու սրտիդ վրայով :

Պ . Արսորվեցունէ թէ իմ սիրտս բնականաբար ապականեալ և չար սիրտ մըն է :

Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ . Ղը շմարիտ ճշմարիտ կըսեմ քեզի , թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու շողիէն չծնանի , չկրնար Մատուծոյ թագաւորութիւնը մտնալ : Ինչու որ մարմինէն ծնածը մարմին է , ու շողիէն ծնածը հոգի : Յոէ . Դ . 5 , 6 : Նոէ . Գ . 3 , 4 : Բ . 5—8 :

Ն . Ի՞նչ քու մկրտութիւնդ ի՞նչ տեսակ

սիրտ մը քեզի հարկաւոր ըլլալը կը ցուցնէ որ ճշմարիտ քրիստոնեայ ըլլաս :

Պ . Կոր սիրտ մը : Գործ . ԺԳ . 15 :  
Կոր . Բ . 11—13 : Տեք . Դ . 5 :

Հ . Աւ փրկուելու համար որո՞ւն հաւատալ կը սորվեցունէ քեզի քու մկրտութիւնդ :

Պ . Սէր Տէրոջը Հիսուսի Վրիստոսի :  
Ըպաշխարեցէք՝ ու ձեզմէ ամէն մէկերնիդ թող մկրտուի Տէր Հիսուս Վրիստոսի անունովը՝ մեզաց թողութեան համար , և Հոգւոյն Արքայ աւետիսը պիտի ընդունիք : Գործ . Բ . 38 : Ը . 36—38 : Ժ . 47 , 48 : ԺԳ . 30—34 : Գոր . Դ . 24—27 :

Հ . Ուստի երբոր մէկը մկրտուի նէ՛ ի՞նչ կը դաւանի :

Պ . Արդաւանի թէ բնականաբար տպահանեալ՝ անօգնական և կորսուած է . և թէ սրտի փոփոխութիւն մը ստացեր է , և փրկութեան համար Հիսուս Վրիստոսի հաւատացեր է :

Հ . Աւ անիկայ ի՞նչ խոստմունք կընէ մկրտութիւնով :

Պ . Արխոստանայ թէ զՆստուած՝ այսինքն Հայրը՝ Արդին և Հոգին Սուրբը՝ իրեն Նստուած կընդունի , և թէ իր բոլոր սրտովը պիտի սիրէ զանիկայ ու պիտի ծառայէ ա-



նոր յաւիտեան : Սորձ . իր . 19 : Հարգ .  
 զ . 4 :

Հ . Արդ՝ դիցուք թէ ան անձը չէ խնացեր իր ապականեալ և կորսուած ըլլալը . չէ ստացեր սրտի փոփոխութիւն մը . բոլոր սրտով չէ հաւատացեր Յիսուս Վրիստոսի . և անկեղծութեամբ չէ ընդուներ թէ Աստուած՝ իրեն Աստուածն է . անատենը մկրտութիւնը օգուտ մը պիտի ընէ՞ անոր :

Պ . Չէ :

Ինչու որ Վրիստոս Յիսուսով ոչ թլփատութիւնը բան մըն է , ոչ ալ անթլփատութիւնը . հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը : Վարդ . զ . 15 : Արբոր իրենց ճամբան կերթային՝ ջուրի մը քով եկան , ու ըսաւ ներքինին . Ահա ջուր՝ ալ ի՞նչ բան զիս կարգիլէ մկրտուելէն : Այլ ան ըսաւ անոր . թէ որ քու բոլոր սրտովդ կը հաւատաս նէ կարելի՛ է . անիկայ պատասխան տուաւ . և ըսաւ . Արհաւանձ որ Յիսուս Վրիստոսը Որդի Աստուծոյ է : Վարդ . ը . 36 , 37 : Սորձ . թզ . 16 :

Հ . Անանկ է նէ՞ ջուրով մկրտուած ըլլալդ քեզ կը իրկէ՞ մի :

Պ . Չէ . քանզի մկրտութիւնը վերստին ծնունդ չէ :

Ինչու որ՝ Հրէայ չէ ան՝ որ դրսուանց է , և թլփատութիւն չէ ան՝ որ դրսուանց մարմինով

է . Հապա շրէայ ան է՝ որ ներսուանց է , և թլիատութիւն սրտինը՝ հոգիով , ու չէ թէ գիրով . որ անոր գովութիւնը չէ թէ մարդիկներէն է , հապա՝ Աստուծմէ՝ : Նորից . Բ . 28 , 29 : Կու . Բ . 11 , 12 : Փիլիպ . Գ . 3 :

Ն . Չկա՞ն անանկ անձինք որ թէպէտև մկրտուած են և եկեղեցիին մէջ մտած , բայց տակաւին ճշմարիտ քրիստոնեայ չեն :

Պ . Նրամերես կան :

Հատերը ան օրը ինծի պիտի ըսեն , ով Տէր Տէր՝ չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք , ու քու անունովդ դեբր հանեցինք , ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք : Այլ անատենը անոնց պիտի ըսեմ , Այս բնաւ ձեզ չէի ճանչնար . մէկ դի գացէք քովէս ամէնքդ՝ որ անօրէնութիւն կը գործէիք : Մատթ . է . 22 , 23 : Փիլիպ . Գ . 18 , 19 :

Ն . Ո՞վ էր ան մարդը որ Փիլիպպոսը խաբելով մկրտուեցաւ՝ թէև քրիստոնեայ չէր :

Պ . Սիմոն մոգը : Գալթ . Ը . 13 : Ե . 1—11 :

Ն . Տղէտ և խաբուած չե՞ն մի անոնք որ կրկարծեն թէ մարմինը մկրտութեան ջրովը լուացուելով՝ սրտի փոփոխութիւն կը լայ :

Պ . Այո՛ , տղէտ ու խաբուած են անոնք :

Որ ձեզ ալ ան օրինակին պէս մկրտութիւնը

պիտի ապրեցունէ՛ չէ թէ մարմինին աղտը մէկ դի-  
րնելով , հապա բարի խղճմտանքին վկայութիւ-  
նը առ Աստուած՝ Հիսուս Վրիստոսի յարութիւ-  
նովը : ա ՊԵՊ . Դ . 21 :

Հ . Ի՞նչ պիտի ըլլայ անոնց որ վրկու-  
թեան համար իրենց յոյսը մկրտութեան վը-  
րայ կը դնեն :

Պ . Անոնք պիտի կորսուին : ՓԻՆՊ . Դ .  
4—9 :

Սկրտութիւն կը սուի՛ երբոր ջուրը մկրտուելու  
եկող անձին վրայ կը թափուի յանուն Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Ա . Սկրտութիւնը Աստուծոյ Ակեղեցիին  
մէջ մտնելու հանդիսաւոր արարողութիւնն է  
հիմակուան ատենս , ինտոր որ հին ատենը թըլ-  
փատութիւնն էր ան արարողութիւնը : Աս եր-  
կուքը մի և նոյն խորհուրդ է տարբեր արարո-  
ղութեամբ : Արբոր մէկը կը մկրտուի՛ ամէն մարդ  
կը գիտնայ և կը հասկընայ թէ անիկայ Վրիստո-  
սի աշակերտ է և անոր Ակեղեցիին անդամ :

Բ . Սկրտութիւնը կը սորվեցունէ մեզի՛ թէ  
մենք ապականած ու կորսուած ենք , թէ կարօտ  
ենք Հոգւոյն Սրբոյ մեզ նորոգելուն , և Վրիս-  
տոսի արեանը մեր վրայ թափուելուն . նաև կը

նշանակէ թէ մենք անձերնիս կընուիրենք Մատուծոյ և անոր ծառայութեանը :

Գ . Այսն որոյ երբոր մէկը կուգայ և կըմըկըրտուի , ան գործողութեամբը կըճանուցանէ թէ ինքը սրտի փոփոխութիւն մը արդէն ստանալով , և փրկութեան համար արդէն Վրիստոսի հաւատալով՝ հիմա յայտնի կըգաւանի անոր կրօնքը , ինքզինքը Մատուծոյ կընուիրէ ուխտընելով և խօսք տալով որ ինքը իր բոլոր սրտովը պիտի սիրէ զՄատուծոյ՝ Հայրը՝ Որդին ու Սուրբ Հոգին , ու պիտի ծառայէ Մոր մշտնջենաւորապէս :

Դ . Ուրեմն սորվէ թէ ի՞նչ կընշանակէ քու մկրտութիւնդ : Սե՛ծ զգուշութեամբ քննէ քու սիրտդ որ չըլլայ թէ խաբուիս , կարծելով թէ մկրտութեան յարմար եղած ես , որ ատեն չես : Մենեւին մէկ վայրկեան մըն ալ մի յուսար թէ մկրտութիւնը ըստ ինքեան քեզ պիտի փրկէ : Հա՛տ մկրտուածներ կան որ երբէք փրկուած չեն : Վրիստոսի և Մաքելոց օրերը կեղծաւորներ և անձերնին խաբողներ կային , և անտարաւ կոյս աս օրերս ալ կըգտնուին անանկներ :

Ե . Ա երջտպէս մկրտուած ըլլալով՝ ջանք բերէ անանկ կեանք վարել աշխարհիս վրայ՝ ինտոր որ մկրտուած անձանց կըվայլէ :



2 . Պղտիկ աղայոց Պրատութեանը վրայ :

Պ . 1—17 :

Ն . Մատուցոյ Եկեղեցին՝ Վրխատոսի աշխարհ դալէն առաջ կամ ետքը , մի և նոյն եկեղեցին է մի :

Պ . Հրամարես :

Թէ որ ան ճուղերէն մէկ քանին կոտորեցան , ու դուն որ վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուասեցար , ու ձիթենիին արմատին և պարտութեանը հաղորդ եղար , ճուղերուն դէմ մի պարծենար . հապա թէ որ պարծենաս՝ չէ թէ դուն արմատը վեր բռնեիր ես , հապա արմատը քեզ . Նորմ . Ժա . 17 , 18 , Կէն Եւ 15—32 համարը : Վորք . է . 37 , 38 : ա կորնի . Ժ . 1—11 : Նորմ . Ժե . 8—12 : Եւ Եւ . Բ . 11—22 : Վորք . Գ . 15—29 :

Ն . Վրխատոսի աշխարհ դալէն առաջ՝ Մատուած հրամանն ըրե՞ր էր որ պղտիկ տրղայքն ալ եկեղեցիին մէջը ընդունուին :

Պ . Հրամարես :

Եւ ձեր ցեղերուն մէջ ամէն ութ օրուան աւրու դաւակնիդ՝ կամ տունը ծնածը՝ կամ քու սերունդէդ չեղած բոլոր օտարականներէն ստակով ծախու առնուածը՝ թլփատուի : Վանդ . Ժէ . 21 : Կէն Եւ 9—13 , 22—27 համարները :

Հ . Ի՞նչ կերպով ու ի՞նչ սահմանադրութեամբ ընդունուելու էին անոնք Նկեղեցիին մէջ :

Պ . Օճանոնք թլփատելով : Օճնդ . ժէ . 11 :

Հ . Թէ որ Աստուած անատենը յատուկ հրաման ըրաւ որ պղտիկ տղայքը իր Նկեղեցիին մէջ ընդունուին , արդեօք հիմայ ալ պէ՞տք է զանոնք իր Նկեղեցիին մէջ ընդունիլ :

Պ . Հրամարեա , քանզի Աստուած երբէք ան հրամանը ետ չառաւ :

Հ . Ի՞այց հիմա ի՞նչ կերպով զանոնք ընդունիլ պէտք է Նկեղեցիին մէջ :

Պ . Օճանոնք մկրտելով :

Հ . Ալ ինչո՞ւ անոնց մարմինները մկրտակալ պէտք է , ու չէ թէ թլփատել :

Պ . Վանդի Մկրտութիւնը՝ թլփատութեան տեղը անցած է :

Հ . Ի՞նչպէս կրնաս հաստատել թէ Մկրտութիւնը և թլփատութիւնը մի և նոյն սահմանադրութիւնը սեպուելու են :

Պ . Վանդի նախ՝ երկուքն ալ կը ցուցնեն սրտի փոփոխութեան մը հարկաւորութիւնը :

Ուստի ձեր սրտերուն անթլիատութիւնը  
 թլիատեցէք , ու ձեր պարանոցները ալ մի՛ խըս-  
 տացունէք : Բ ( ) ր և . Ժ . 16 : Ու քու Տէր Մ. ս-  
 տուածդ քու սիրտդ ու զաւկըներուդ սիրտը պիտի  
 թլիատէ , որպէս զի քու Տէր Մ. ստուածդ բոլոր  
 սրտովդ ու բոլոր հոգիովդ սիրես որ ապրիս : Բ  
 ( ) ր և . Լ . 6 : Հապա Հըրէայ ան է՝ որ ներ-  
 սուանց է , և թլիատութիւն սրտինը՝ հոգիով ,  
 ու չէ թէ դիրով . որ անոր գովութիւնը չէ՛ թէ  
 մարդիկներէն է , հասպա Մ. ստուածմէ՛ : Հ ր և . Բ .  
 29 : Մնոր հետ թաղուեցանք մկրտութիւնով  
 մահուան համար , որ ինչպէս Քրիստոս Հօրը  
 փառքովը յարութիւն առաւ մեռելներէն , անանկ  
 մերք ալ կենաց նորոգութեան մէջ պտըտինք :  
 Հ ր և . Գ . 4 : Տէր . Դ . 5 : Երեմ . Դ . 4 .  
 Փիլեմ . Դ . 3 : Յով . Դ . 3 — 8 :

Երկրորդ՝ երկուքն ալ՝ չափահաս անձանց  
 համար , Քրիստոսի վրայ անոնց ունեցած  
 հաւատքը կը յայտնեն :

Ուստի աս երանութիւնը թլիատութեան  
 վրայ է , թէ անթլիատութեան վրայ . ան որ  
 կըսենք թէ՛ Հաւատքը Մորահամին արգարու-  
 թիւն սեպուեցաւ : Մնանկ է նէ՛ ինտո՞ր սեպուե-  
 ցաւ . երբոր թլիատութեան մէջ էր , թէ ան-  
 թլիատութեան մէջ . չէ թէ թլիատութեան  
 մէջ , հասպա անթլիատութեան : Ալ թլիատու-  
 թիւնը ետքէն յշան առաւ՝ անթլիատութեան  
 առննէն ունեցած հաւատքին արգարութեանը

մէկ կնիք մը , որ ինքը հայր ըլլայ բոլոր հաւատացողներուն՝ որ անթլիատութենէ կրլան , (անոնց ալ արդարութիւն սեպուելու համար) և հայր թլիատութեան՝ չէ թէ մինակ թլիատութենէ եղողներուն , հապա անոնց ալ որ մեր Աբրահամ հօրը անթլիատութեան ատենին հաւատքին ճամբովը կերթան : Լուս . Գ . 9—12 : Երբոր իրենց ճամբան կերթային՝ ջուրի մը քով եկան , ու ըսաւ ներքինին . Ահա ջուր՝ ալ ի՞նչ բան իս կարգիլէ մկրտուելէն : Աւ ան ըսաւ անոր . Թէ որ քու բոլոր սրտովը կը հաւատաս նէ , կարելի՛ է . անիկայ պատասխան տուաւ՝ և ըսաւ . կը հաւատամ որ Յիսուս Արիստոսը Որդի Աստուծոյ է : Գործ . ք . 36 , 37 : Գալ . ք . 26—29 : Յե . ք . 56 : Եբ . Ժա . 13 :

Աւ երբորդ՝ երկուքին ալ հողեոր իմաստը մի է նոյն են : Կող . ք . 11 , 12 : Գործ . ք . 38 : Ժղ . 31—34 : Գալ . ք . 24—27 :

Ն . Ի՞նչ կրսէ մեր Ֆրկիչը պղտիկ տըղայոց համար :

Պ . “Ի՛այց Յիսուս անոնք իրեն կանչելով ըսաւ . Թո՛ղ տուէք աս տղոցը որ ինձի գան , ու մի արդիւլէք ատոնք . ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը ատանկներուն է” :

Պ . Ժղ . 16 :

Ն . Երբոր Առաքեալները մէկ նորահաւ-



ւատ մը մկրտելու ըլլային , անոր բոլոր ընտանիքն ալ կը մկրտէին :

Պ . Հրամարես :

Եւ Լիզիա անուն կնիկ մը ծիրանի բան ծախող՝ Թիււատի քաղաքէն Մատուծմէ վախոցող մէկ մը , մտիկ կընէր . որ անոր սիրտը Տէրը բացաւ՝ Պօղոսին ըսածներուն խելքը պառկելու , Եւ երբոր ինքը՝ և իր տունը մկրտուեցաւ , կաղաչէր ու կըսէր . Թէ որ իս Տէրոջը հաւատացնալը կըսեպէք նէ՝ իմ տունս մտէք բնակեցէք . և բոնեց տարաւ մեզ : Պարծ . Ժզ . 14 , 15 , 26—34 : ա Կորնթ . ա . 16 : Ղուկ . ԺԹ . 9 բողոքարկ՝ Պարծ . Ժզ . 31ին հետ :

Հ . Հաւատացեալ ծնողքները պարտաւոր են իրենց զաւկըները մկրտութեամբ Մատուծոյ նուիրելու :

Պ . Հրամարես . վասն զի ասանկ չընելով Մատուծոյ պատուիրանքը կանարգեն և անոր ուխտը կաւրեն :

Եւ անթլիսա աբուն՝ որուն անթլիատութեան մարմինը թլիատած չէ , պիտի սատկի անանձը իր Ժողովուրդէն . անիկայ իմ ուխտս անարդած է . Մանդ . Ժէ . 14 :

Հ . Մանողքները երբոր իրենց զաւակները մկրտութեամբ Մատուծոյ կընուիրեն , անոնց համար ի՞նչ ընելու կը պարտաւորին :

Պ . Կը պարտաւորին Տէրոջը խրատովը

ու վարժութիւնովը մեծցունել զանոնք :

Քանզի գիտեմ անիկայ , որ իր որդիներուն ու իրմէն ետքը իր տունին պիտի պատուիրէ , և անոնք արդարութիւն ու դատաստան ընելու համար՝ Տէրոջը ճամբան պիտի պահեն . որ Տէրը Արրահամին վոյս բերէ՝ ինչ որ խօսեցաւ : Օհնդ . ժը . 19 : Եփես . զ . 4 : Յեսայ . իդ . 15 :

շ . Եւ ուրիշ ինչ պարտաւորութիւն ունին :

Պ . Ընոնց պարտաւորութիւնն է զաւերներնուն միտքը ձգել անոնց մկրտուած ըլլալը , մկրտութեան նշանակութիւնը անոնց մեկնել , և սիրով յորդորել զանոնք որ ինքզինքնին Աստուծոյ յանձնեն ու Աստուծոյ եկեղեցիին արժանաւոր անդամները ըլլան : Եփե . ժբ . 26 , 27 : ԲՏԺ . դ . 14 , 15 :

շ . Ընթարեպաշտ ճնողքներուն կամ Աստուծոյ ուխտէն բաժին չունեցող ճնողքներուն զաւերները մկրտել պէ՞տք է :

Պ . Ըէ :

Ուստի դուք ալ միտքերնիդ բերէք , որ ասն մը մարմնով հեթանոսներ էիք . ( որոնք որ շիջեցատուած կըսուին անկէց՝ որ թլիստութիւն կըսուի մարմնի մէջ ձեռքով եղած . ) որ ան

ատենը դուք առանց Վրիստոսի էիք , ու օտարացած էիք Իսրայելի ընկերութենէն , և դուրս ձգուած ան խոստմունքին ուխտէն , ու յոյս մըն ալ չունէիք , և աշխարհի մէջ անաստուած էիք : Եփե . ք . 11 , 12 :

Ն . Իսկ եթէ պատահի որ մէկ մարդ մը եկեղեցիին անդամ եղած ըլլայ , ու անոր կինը անբարեպաշտ ըլլայ՝ կամ կինը եկեղեցւոյ անդամ եղած ըլլայ , ու անոր էրիկը անբարեպաշտ ըլլայ , անատենը անոնցմէ հաւատացեալ եղողը կը պարտաւորի՞ իր զաւկէնէրը մկրտել տալու :

Պ . Նրամերես :

Ինչու որ անհաւատ էրիկը սրբուած է կնիկովը . և անհաւատ կնիկը սրբուած է էրիկովը . հապա թէ չէ՝ ձեր որդիքը պիղծ են . բայց հիմա սուրբ են : ա Կորնթ . է . 14 :

Ն . Վրու մկրտութիւնդ՝ բնականաբար ի՞նչ տեսակ սիրտ մը ունենալը կը սորվեցունէ քեզի :

Պ . Կը սորվեցունէ թէ ապականած և Մատուծմէ հեռացած սիրտ մը ունիմ :

Ն . Վրու մկրտութիւնդ ի՞նչ տեսակ սիրտ մը ունենալու կարօտութիւնդ կիմացունէ քեզի որ Մատուծոյ առջևը ընդունելի ըլլաս :

Պ . 'Նոր սիրտ մը :

Հ . Եւ փրկուելու համար որո՞ւն հաւատալ կըսորվեցունէ քեզի քու մկրտութիւնդ :

Պ . Յիսուս Քրիստոսի : Գործ . Ը . 37 :

Հ . Ուստի երբոր միաքչ կըբերես թէ քու ճնողքդ Աստուծոյ հրամանովը քեզ մկրտել տուած են , անատենը ի՞նչ պարտաւորութիւն ունենալդ կըզգաս :

Պ . Կըզգամ թէ պարտաւոր եմ անոնց իրատին և վարժութեանը ականջ կախել , ու ջանք ընել նոր սիրտ մը ստանալու , և փրկչին հաւատալու :

Հ . Այլեղեցին ի՞նչ ընել կըպարտաւորի մկրտուած տղայոց համար :

Պ . Ենոր պարտքն է միշտ յորդորել ճշնողքները որ իրենց զաւկրներուն վրայ ունեցած պարտաւորութիւննին ամբողջ կատարեն , նաև մկրտուած տղայոց վրայ հրակել , անոնց համար աղօթք ընել և զանոնք բոլոր ջանքով կրթել Աստուածպաշտութեան մէջ :

Հ . Մկրտուած տղայ մը ե՞րբ կրնայ հաղորդութիւն առնել :

Պ . Երբոր կարող կըլայ Տէրօջը մար-

մինը որոշելու , ու երբոր Վրիստոսի վրայ  
հաւատք ունենալու , ու Սուրբ Հոգիէն  
նորոգուած ըլլալու նշանները կըցուցնէ :  
ա կորնի . ժա . 27—29 : ե . 7 , 8 :

Մատուցոյ կեղեցին՝ թէ Վրիստոսի աշխարհ  
դալէն առաջ և թէ անկէց ետքը , նոյն եկեղե-  
ցին եղած է և նոյնը պիտի ըլլայ մինչև աշխար-  
հիս վերջը , Մատուած՝ իր եկեղեցիին հետ յաւի-  
տենական ուխտ մը ըրաւ , որ կըզարունակէ ա-  
մէն հոգեւոր օրհնութիւնները Վրիստոս Հիսու-  
սով : Ինչու որ կըսէ՝ «Վեղի ու քեզմէ ետքը  
քու սերունդիդ Մատուածը պիտի ըլլամ» :

Մատուած՝ Մորահամին հետ ուխտ ըրած ժա-  
մանակը՝ թշխատութիւնը տուաւ անոր , իբրև  
մէկ նշան մը և կնիք մը ան ուխտին , և հրաման  
ըրաւ որ հաւատացելոց նոր ծնած զաւակները  
թշխատութիւն ու եկեղեցիին անդամ ընդունուին :

Մրդ՝ Մատուած երբէք չխափանեց աս իր հը-  
րամանը , անոր զօրութիւնը դեռ կըմնայ : Այսն  
որոյ ուխտին ու եկեղեցւոյ անդամ ըլլալու կնի-  
քը՝ տրուելու է ան նոյն անձանց՝ որոնց որ ա-  
ռաջ կըտրուէր , այսինքն՝ հաւատացելոց և ա-  
նոնց զաւակներուն :

Ուխտին կնիքը միայն ձեռով փոխուած է , բայց

նչ զօրութեամբ : Մկրտութիւնը Վրիստոսի հրամանովը թլփատութեան տեղը տրուած է , բայց երկուքին զօրութիւնը մի և նոյն է , և երկուքն ալ մի և նոյն բաները կը ցուցնեն ու կը նշանակեն :

Մեր Տէրը Հիսուս Վրիստոս իմացուց թէ պղտիկ տղայքը ևս իր թագաւորութեանը անգամներն են :

Ընաբեալներուն սովորութիւնն էր հաւատացեալներուն ամբողջ ընտանիքը մկրտել :

Ը . Հաւատացելոց հետ Ըստուծոյ ըրած ուխտը՝ իր մէջը կը պարունակէ նաև անոնց զաւկընները (Օւնի . Ժէ . 7 : Գործ . ք . 39) , և աս պատճառով անոնց զաւկըններուն ալ տրուելու է ան ուխտին կնիքը՝ որ Նոր ( ) րէնքին մէջ Մկրտութիւնն է :

Բ . Ըս կարգադրութիւնը Ըստուծոյ կողմանէ կը ցուցնէ Իր ներողամտութիւնը , Իր սէրը և Իր ողորմութիւնը որ ունի իր ժողովուրդին ու նաև անոնց զաւկըններուն վրայ : Վանդի այսպէս՝ Ըստուած տարբերութիւն մը կընէ հաւատացելոց ու անհաւատից զաւկըններուն մէջ : Ըստուած ինքնակալ Տէր է թէ իր շնորհաց թագաւորութեանը մէջ և թէ իր նախախնամութեան թագաւորութեանը մէջ :

Գ . Հաւատացեալ ծնողքները չէ թէ միայն կը պարտաւորին Ըստուծոյ հրամանովը իրենց զաւկընները մկրտել տալու , այլ նաև իրենց մեծ արտօնութիւնն է աս բանս : Ինչ սքանչելի

խորհուրդ մըն է մկրտութիւնը , որ իր մէջը ունի ամէն միտիթարութիւն և խրատ . և ծնողաց սրտին ամէն զգացումները կրնայ շարժել : Ահա անոնք Տէրոջը ժողովուրդին մէջը կայնելով՝ իրենց զաւակը մկրտուելու կը մատուցանեն , և ինչ է ան պղտիկ զաւակը , մարմին է մարմինե ծնած , և իր բնութիւնը բոլորովին ապահանեալ է : Ուստի անոնք աս բանը զգալով՝ իրենց սրտին մէջ ասանկ կըխօսին . «Շնորհակալ ենք Աստուծոյ՝ իր ուխտին համար , ով Աստուած , դուն եղի՛ր աս մեր զաւկին Աստուածը : Այլ հիմա որ քու ուխտիդ կեիքը կը արուի աս մեր զաւկին , կը խնդրենք որ ան ուխտին ամէն հոգևոր օրհնութիւններովը օրհնես զանիկայ : Փոխէ անոր ապահանեալ սիրտը , և մաքրէ զանիկայ Վրիստասի արիւնովը , և անկործանելի սիւն մը ըրէ զանիկայ քու եկեղեցիիդ մէջ յաւիտեան : Ո՛վ Տէր , մեզի ալ շնորհք տուր որ կարող ըլլանք զանիկայ մեծցունելու Վեզի համազ» :

Անատենը անոնք իրենց Աստուծոյ նուիրած զաւակը ետ կընդունին շնորհակալու և ուրախ սրտով , աւելի եռանդ մը ու սէր մը ունենալով առ Աստուած , քանզի Անիկայ իրենց ընտանիքին Աստուածն է : «Վմանապէս անոնք նոր սիրով մը կը կապուին իրենց մկրտուած զաւկին հետ , և կը սկսին ալ աւելի սիրել զանիկայ , քանզի ան իրենց անմահ զաւակն է աւանդի մը պէս իրենց յանձնուած Աստուծոյ ու Արկիմքին համար պահելու :

Սրբեմն անոնք իրենց սրտի զգացումներէն ըստիպուելով աս հանգիստաւոր ուխտը ընելու Աստուծոյ ու մարդոց առջևը , և այսպէս երդում ըրած ըլլալով որ ամէն կերպով հոգ տանին իրենց զաւկին բարեկրթութեանը , զանիկոյ վարժեն աղօթքի ու հոգևոր բաներու մէջ , ու շարունակ աշխատին անոր հոգիին փրկութեանը համար , կը յուսացուի թէ անոնք Աստուծոյ շնորհքովը հաւատարիմ՝ պիտի ըլլան ան զաւկին՝ մինչև ցմահ : Աւ ահա այսպէս աս խորհուրդիս մէջ՝ մարդոց որդիներուն յառաջադիմութեան և փրկութեան մեծ հիմը կը ձգուի :

Գ . Արդիներ միտքերնիդ բերէք թէ ինչ է ձեր մկրտութիւնը , ինչ է անոր նշանակութիւնը , և անոր միջոցովը ինչ կը պահանջուի ձեզմէ : Բնականաբար ապականած՝ անօգնական և կորսուած էք . պէտք է ձեզի նոր սիրտ մը , առ Աստուած ապաշխարութիւն , և հաւատք Տէր Զննուս Քրիստոսի վրայ : Դուք հիմա Ակեղեցիին անդամներն էք , բուն Աստուծոյ շնորհալի սահմանագրութեամբը . ուստի պարտիք կենդանի և ճշմարիտ անդամներ ըլլալ : Ձեր ամէն սրտովը ակննջ դրէք ձեր ծնողացը , վարժապետներուն ու Ակեղեցիին վարժութեանը ու խրատին , և հանապաղ աղօթք ընելով Աստուծոյ , ջանացէք օգուտ քաղել ան խրատներէն : Ամենեկն ձեր անձին մի վստահիք , ամենեկն հանդարտ մի կենաք որ ատեն ձեր մեղքերուն մէջը կը մնաք , դուք Աստուծոյ նուիրուած էք , դուք ձեր անձին տէրը չէք :



Օչարհուրելի դատապարտութիւն պիտի կրէ ան զաւակը՝ որ անարգելով իր մկրտութիւնը , Լստուծոյ Եկեղեցիին իր անդամ ըլլալու իրաւունքը , իր բարեպաշտ ծնողացը խրատները՝ հառաչանքները՝ ազօթքները և պաղատանքները՝ անարգելով նաև եկեղեցիին բարի խնամքը և հոգը , ու սարին տակը կոտորակով ամէն կերպ սանձերը , մեղաց մէջ կըթաղուի և կընտրէ ան շաւիղը որ մահուան կրտանի :

Ե . Եկեղեցիին վերատեսուէները պէտք է որ արթնութեամբ դիտեն նային թէ ծնողքները հաւատարմութեամբ կրկատարեն իրենց պարտաւորութիւնը՝ զակըններնին կրթելով , ու անոնց հետ և անոնց համար ազօթք ընելով : Ենոնք նաև պարտին որոշեալ ժամանակ՝ մէկ տեղ ժողովել եկեղեցիին մկրտուած տղայքը , անոնց վարժութիւն ապու և խրատելու համար , և պարտին միշտ քննել և ուղղել անոնց վարքը ու բարքը :

Օ . Երբոր ծնողքները ու եկեղեցիները աղէկ հոգ կըտանին մկրտուած տղայոց վրայ , և իրենց ամէն պարտաւորութիւնը հաւատարմութեամբ կրկատարեն , մեծապէս կօզնեն ան տղայոցը հոգևոր օգտին : Վանդի Լստուած պիտի վարձատրէ անոնց հաւատարմութիւնը ան զաւակները լուսաւորելով ու դարձի բերելով :



Ե . Հարգութեան լրաց :

ա Արշն . Ժա . 23—32 :

Հ . Ո՞վ սահմանադրեց Տէրունական Նխթրիքը :

Պ . Տէրն մեր Յիսուս Վրիստոս :

Հ . Ե՞րբ սահմանադրեց զանիկայ :

Պ . Ի՞ր մասնուած գիշերը : ա Արշն . Ժա . 23 :

Հ . Յիսուս Վրիստոս ինչու սահմանադրեց Տէրունական Նխթրիքը :

Պ . Օ՛րինքը յիշելու և իր մահը ու չարչարանքները ցուցնելու համար :

Եսիկայ բռեք քանի հեղ որ խմելու ըլլաք՝ զիս յիշելու համար : Վանի անգամ՝ որ աս հացը ուտէք , ու աս գաւաթը խմէք , Տէրոջը մահը պատմեցէ՛ք , մինչև որ ինքը դայ : ա Արշն . Ժա . 25 , 26 :

Հ . Աւրիշ ի՞նչ անուններով կը կոչուի Տէրունական Նխթրիքը :

Պ . Արսուի նաև , “Վեկումն հացի” և “Հաղորդութիւն մարմնոյ և արեան Վրիստոսի” :

Օրհնութեան գաւաթը որ մենք կօրհնենք՝

չէ՞ մի որ Վրբխատու արիւնին հաղորդութիւնն է . հացը՝ որ մենք կը կտրենք՝ չէ՞ մի որ Վրբխատու մարմինին հաղորդութիւնն է : ա Աբդի . Ժ . 16 : Պարթ . բ . 46 : ի . 7 , 11 :

Հ . Հաղորդութեան ստեղծման մեր կերածը ու խմածը ի՞նչ է :

Պ . Եթէ հաց ու զինի :

Ու առաւ հացը՝ դոհացաւ , կտրեց և տուաւ անոնց՝ ու ըսաւ . Ես է իմ մարմինս , որ շատուորներուն համար կը ըտրուի . ասիկայ իս յիշելու համար ըրէք : Ես անկ ալ դաւաթը տուաւ ընթրիքէն ետե՛ւ և ըսաւ . Ես դաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս , որ ձեզի համար կը թափուի : Պարթ . իբ . 19 , 20 :

Հ . Ինչպէ՞ս հացը ի՞նչ բան կը կրկնակայացունէ մեզի և ի՞նչ կը նշանակէ :

Պ . Կը նշանակէ Վրբխատու մարմինը խաչին վրայ մեղքի համար բեկած :

Գոհացաւ , կտրեց՝ ու ըսաւ , Ես էք՝ ու կերէք . աս է իմ մարմինս՝ որ ձեզի համար կը ըրաշտի . ասիկայ ըրէք իս յիշելու համար : ա Աբդի . Ժա . 24 :

Հ . Գինին ի՞նչ բան կը կրկնակայացունէ մեզի :

Պ . Կը կրկնակայացունէ Վրբխատու արիւնը խաչին վրայ մեղքի համար թափուած :

Ես մենք ալ խմեցէք ատկեց . ինչու որ ասիկայ

է իմ արիւնս նոր ուխտի , որ շատերուն համար  
կըթափուի՝ մեղքերու թողութեան համար :  
Սորին . իզ . 28 : ա կորնի . ժա . 25 :

Ն . Տէրունական Մեթրիքին մեր կերու-  
ծը ու խմածը իսկապէս հաց ու դինի՞ է ,  
թէ հացի ու դինիի երևոյթով իսկապէս  
Քրիստոսի մարմինը ու արիւնն է :

Պ . Իսկապէս հաց ու դինի է և ոչ ու-  
րիշ բան մը :

Վանի անգամ որ աս հացը ուտէք , ու աս  
դուրսը խմէք , Տէրոջը մահը պատմեցէք , մին-  
չև որ ինքը դայ : ա կորնի . ժա . 26 :

Ն . Իսկ որովհետեւ Քրիստոս կրսէ  
Հացին համար , Ասիկայ իմ մարմինս է , և  
Գաւաթին համար , Ասիկայ իմ արիւնս է .  
վասն որոյ պարտաւոր չե՞նք մի Տէրունա-  
կան Մեթրիքին ժամանակը դորձածուած  
հացի ու դինին՝ իսկապէս իր մարմինը ու  
արիւնը սեպելու :

Պ . Չէ . քանզի մեր տեսածը՝ շօշա-  
փածը՝ հոտոտածը և ճաշկածը յայանա-  
պէս կըրցուցնեն մեզի թէ անոնք իսկապէս  
հաց ու դինի են . ասկէց դատ Ազոդոս առա-  
քեալը Տէրունական Մեթրիքին հացին վրայ  
խօսելով՝ կրսէ թէ ան կերուածը հաց է :

Վանի անգամ որ աս հացը ուտէք , ու աս

գաւաթը խմէք , Տէրոջը մահը պատմեցէք , մինչև որ ինքը գայ : Ուստի ան որ աս հացը կուտէ՝ կամ Տէրոջը գաւաթը կը խմէ անարժանութեամբ , պարտըկան պիտի ըլլայ Տէրոջը մարմինն ու արիւնին : (Թո՛ղ փորձէ՛ մարդ իր անձը՝ ու ետքը ան հացէն թող ուտէ , և ան գաւաթէն իրմէ : ա կորնի՛ . ժա . 26—28 :

Վարձեալ մեր Փրկիչը գաւաթը առնելէն ու դոհուածիւն տալէն ետե՛ տակաւին որթին պտուղը կը կոտէ՛ զանիկայ :

Սակայն ձեզի կըսեմ , որ ալ տակէ ետե որթին պտուղէն չպիտի խմեմ , մինչև ան օրը՝ երբոր ձեր հեղը անիկայ նորէն խմեմ իմ Հօրս թաղաւորութեան մէջը : Մատի՛ . իզ . 29 :

Հ . Աւրիմն ի՛նչպէս հասկընալու ենք Փրկչին մերոյ ան խօսքը երբոր կըսէ թէ , «Լա իմ մարմինս է» , և այլն :

Պ . Ըտիկայ այլարանօրէն հասկընալու է , ինտոր որ Քրիստոսի ուրիշ շատ խօսքերը ու Սուրբ Գրոց մէջ գտնուած ուրիշ շատ համարները անանկ են . զորօրինակ՝ ա կորնի՛ . ժ . 4 : Ելեց . ժբ . 11 : Յայտ . ա . 20 : Յովն . ժ . 7 , 15 : ա կորնի՛ . ժ . 17 : Յովն . դ . 10 , 13 , 14 , 32 , 33 : Գանի . բ . 38 : դ . 20—22 : Կոննդ . խա . 26 , 27 : Մատի՛ . ժդ . 38 : ե . 13 , 14 : Յովն . ա . 8 , 9 : է . 38 ,

39 : ժա . 25 : ա կորնը . ժբ . 27 :  
 Ուստի ան խօսքը ասանկ հասկերնալու է ,  
 “Մսիկայ կընշանակէ կամ կընեբկայացունէ  
 իմ մարմինս” , և այլն :

Հ . Բայց չէ՞ որ Քրիստոս կըսէ . “Ի՞նչ  
 որ Արդւոյ մարդոյ մարմինը չուտէք և անոր  
 արիւնը չխմէք՝ ձեր անձերուն մէջը կեանք  
 չէք ունենար” : Յովն . Է . 54 :

Պ . Հրամարեա , բայց աս խօսքն ալ  
 կըսէ . “Աս եմ կենդանի հացը՝ որ Արիկին-  
 քէն իջայ . թէ որ մէկը աս հացէն ուտէ՝  
 յաւիտեան սլիտի տպրի” : Յովն . Է . 51 :  
 Աւ ուրիշ տեղ մըն ալ կըսէ . “Ո՞վ որ խըմէ  
 ան ջուրէն՝ որ ես անոր կուտամ , յաւի-  
 տեան չծարաւիր” : Յովն . Դ . 13 : Այ-  
 սու ամենայնիւ աս խօսքերովը ինքը ըսել  
 չուղեց մարմնաւոր և նիւթաւոր մտօք ու-  
 տել խմելը , ինտոր որ բուն ինքը կըբացա-  
 տրէ ըսելով՝ “Ան որ ինձի կուղայ՝ չանօթե-  
 նար . և ան որ ինձի կըհաւտայ ամենեւին  
 չծարաւնար” , (Յովն . Է . 35) և դար-  
 ձեալ կըսէ . “Մարմինը շահ մը չընէր . ան  
 խօսքը որ ես ձեզի խօսեցայ՝ հոգի ու կեանք  
 է” : Յովն . Է . 64 :

Հ . Արբոր Քրիստոս կըսէ , (Յովն .

Ղ . 54 ) “Թէ որ Որդւոյ մօրդոյ մարմինը չուտէք և անոր արիւնը չխմէք՝ ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար” , արդեօք աս խօսքը Տէրունական Բնթրիքի՞ն համար էր :

Պ . Չէ . քանզի աս խօսքերը ըսուելէն շատ ժամանակ ետքը Հաղորդութեան խորհուրդը հաստատուեցաւ , և այնքան միջոցին մէջ դուցէ շատերը մեռան . և թէ որ Հաղորդութիւն առնելը անհրաժեշտ հարկաւոր եղած ըլլար փրկութեան , ան մեռնող անձինքը փրկուելու հնարք մը պիտի չունենային :

Հ . Ուստի ի՞նչ ըսել կուզէ Վրիստոս աս խօսքով , “Իմ մարմինս ճշմարիտ կերակուր է ու իմ արիւնս ճշմարիտ խմելիք է” :  
Յովհ . Ղ . 56 :

Պ . Ըսել կուզէ թէ՛ ինտոր որ մարմինը կենդանի կրմնայ ու կըսնանի կերակուրով ու խմելիքով , անանկ ալ մեղքի թողութիւնը՝ և հողէոր կեանքը ու խաղաղութիւնը կուգայ մեղի Վրիստոսի մահուամբէ՛ իր մարմնոյն վերաւորուելովը և իր արեանը թափուելովը :

Իայց անիկայ վերաւորուեցաւ մեր մեղքերուն

Համար , ու մեր անօրէնութիւններուն Համար պատժուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ . ու իր վերքերովը մենք բժշկուեցանք : Ասայ . ծգ . 5 :

Հ . Այլ թէ Սրբուհի մարդոյ մարմինը կերած ու անոր արիւնը խմած կըլլանք :

Պ . Արբոր ճշմարտապէս Հաւատանք թէ «Մնիկայ մեր մեղքերուն Համար վերաւորեցաւ ու մեր անօրէնութիւններուն Համար պատժեցաւ» , և թէ իրմով միայն թողութիւն կայ , իր արիւնին միջնորդութիւնովը . երբոր ճշմարտապէս իրեն կարօտ ըլլանիս կըզգանք , և խիստ շատ արտամելով մեր մեղքերուն Համար , միայն իրմէն կը յուսանք թողութիւն ընդունելու , իր շնորհաց մեծութեան չափովը :

Հ . Հաղորդութեան Ժամանակ ի՞նչ բանի ուղղելու ենք մեր միտքերը :

Պ . Չէ թէ մեր կերած հացին և մեր խմած զինինն ուղղելու ենք միտքերնիս , հասկա Յիսուս Քրիստոսի ան քաւչական մահուանը՝ որ հացն ու զինինն զանիկայ կը ներկայացունեն : ա Ապրիլ . ժա . 25 , 26 :

Հ . Աւրեմն ի՞նչ բանի համար են հացն ու զինինն որ մենք կուտենք ու կըլլանք :



Պ . Ընտնք Վրիստոսի մահուան սէրը մեզի կը յիշեցունեն և իր մարմինը ու արիւնը մեզի կը ներկայացունեն , և այսպէս՝ միտքերնիս կը բերեն Վրիստոսի մահը , իբրև մեր փրկութեան միջոցը . դարձեալ՝ անոնք Վրիստոսի՝ մեզի ցուցըցած սիրոյն ու մեր յաւիտենական կեանք ունենալնուս գրաւ մըն են :

Հ . Հաղորդութեան խորհուրդին մէջ Վրիստոս կրկին կը պատարագուի՝ մեղաց թողութեան համար :

Պ . Չէ . քանզի Վրիստոս իր անձը մէկ անգամ մը պատարագ մատուց , և ան պատարագը այլ ևս կրկնուելու հարկաւոր չէ :

Չէ թէ որ շատ անգամ իր անձը պատարագ մատուցանէ , ինչպէս քահանայապետը որ տարուէ տարի սրբութիւն սրբութեանցը կը մտնար օտար արինոյ՝ . հապա թէ չէ՝ պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն հետէ շատ անգամ շարձարուիլ . բայց ահա հիմա մէկ անգամ մը ան դարերուն վերջը իր անձին պատարագոյնը յայտնուեցաւ՝ մեղքը մէկ դի ձգելու համար : Այլ ինչպէս որ մարդոց սահմանուած է մէկ անգամ մը մեռնիլ , ու անկէ ետքը դատաստան . անանկ ալ Վրիստոս մէկ անգամ մը պատարագ մատուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցունելու համար . բայց երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայանուի անոնք փրկելու համար՝ որոնք հա-

ւատքով անոր կըստասեն : Եբր . թ . 25—28 :  
 Եւ ան կամբովք մենք ալ սրբուեցանք՝ Հիսուս  
 Վրիստոսի մարմինին մէկ անգամ պատարա-  
 ֆութելովք : Եբր . Ժ . 10 , 12 , 14 , 18 :

Հ . Երբոր ան հացը կուտենք ու ան  
 դաւաթը կըլսմենք, ի՞նչ կիմանանք ան բանը  
 ընելովէիս :

Պ . Կիմանանք թէ մենք Հիսուս Վրիս-  
 տոսը մեզի փրկիչ կընդունինք ու կըյուսանք  
 որ իր արիւնովք կըմաքրուինք մեղքէն : ա  
 Հովհ . ա . 7 :

Հ . Ի՞նչ ընելու ենք երբոր Տէրունա-  
 կան Ընթրիքին հաղորդելու ըլլանք :

Պ . Պէտք է որ առաջ մեր անձերը ա-  
 ղէկ մը փորձենք , և մեր մեղքերուն վրայ  
 զղջալով՝ Հաղորդութեան սեղանին մօտե-  
 նանք խոնարհ՝ երախտագէտ ու հաւատա-  
 ցեալ սրտով մը :

Ի՞նչ փորձէ մարդ իր անձը՝ ու ետքը ան հա-  
 ցէն թող ուտէ , և ան գաւաթէ խըմէ : ա  
 Կորնթ . Ժա . 28 :

Հ . Ի՞նչ պիտի ըլլայ մեզի , երբոր չար  
 ու անզեղջ սրտով մը Հաղորդութեան մօ-  
 տենանք :

Պ . Ըստուած պիտի բարկանայ մեր վրայ  
 և պիտի դատապարտէ զմեզ :

Վասն զի ան որ անարժանութեամբ կուտէ ու կըխմէ, իր անձին դատապարտութիւնը կուտէ՝ ու կըխմէ. ինչու որ Տէրոջը մարմինը չորոշեր : ա Վարդ. ժա . 29 :

Հ . Եկեղեցւոյ անդամներէն մէկը պէ՞տք է որ շաղորդութիւն առնելէն ետ մնայ :

Պ . Հէ՛ք . քանզի հրաման ունին միշտ ան հացը ուտելով ու տն գաւաթը խմելով Տէրոջը մահը պատմելու՝ մինչև որ ինքը դայ : ա Վարդ. ժա . 26 :

Հ . Բայց զիցուք թէ ան անձը մէկ յանցանք մը ըրած է և իր խղճմտանքէն կըչարչարի, ան ատենը ի՞նչ պիտի ընէ :

Պ . Պէտք է որ զղջայ ու այնպէս ուտէ ան հացէն ու խըմէ ան գաւաթէն : ա Վարդ. ժա . 28 :

Հ . Տէրունական Ընթրիքը մէկ ապացոյց մը չէ՞ մի ամէն մարդոց՝ որ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ և մեռաւ զանոնք վերկելու համար :

Պ . Հրամարես . ինչու որ Քրիստոսի ժամանակէն մինչև ջայսօր առ բանս անդադար կըկատարուի :

Ե . Տէր Հիսուս Վրիստոս իր մատնուած գիշերը սահմանեց աս Ռնթրիքը՝ ՚ի յիշատակ իր մահուանը՝ աշխարհի մեղքերուն համար : Ըն նոյն ատենէն մինչև հիմա շարունակ Տէրունական Ռնթրիքը կրկատարուի Վրիստոնէից մէջ , և Վրիստոնէական կրօնին ճշմարիտ ըլլալուն՝ մընայուն և հաստատուն ապացոյց մըն է :

Բ . Ըս Ռնթրիքիս մէջ մեր գործածելու բաները միայն հաց ու գինի ըլլալու են . հացը՝ Վրիստոսի Մարմինը կը ներկայացունէ մեզի , ու գինին՝ անոր Ըրիւնը :

Գ . Հաղորդութեան ատեն գործածուած հացն ու գինին իբրև Վրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւնը համարուելու չեն , հապա անոր մարմինին ու արիւնին նշանակները : Հաղորդութեան մէջ հացն ու գինին անոր համար սահմանուած են՝ որ անոնք իսկոյն մեր միտքը ձգեն Վրիստոսի կրած չարչարանքները մեզի համար , և որ մեր աչքին առջևը ներկայացունեն ան մեծ ճշմարտութիւնը՝ թէ միայն ան չարչարանքներուն միջոցովը՝ օրէնքին անէծքէն ազատութիւն կը գտնենք : Եւ ինտոր որ հացն ու գինին մարմինը կը սնուցանեն և կենդանի կը պահեն , նմանապէս Վրիստոս իր 'մահուամբը՝ որով իր անձը պատարագ մատուց մեղքի համար , հաշտութիւն և հոգևոր կեանք ու խաղաղութիւն կը շնորհէ զղջացող մեղաւորներուն :

Դ . Երբոր կընդունինք զՎրիստոս իբրև մեր միակ փրկիչը , ու մեր մեղքերուն թողութեանը

Համար՝ մեր մի միայն յոյսը Իր քաւչական արեան արժանաւորութեանը վրայ կը դնենք , խորունկ զգալով մեր մեղքերը ու բոլոր սրտով ապաշխարելով ու հաւատալով որ Անիկայ կարող ու կամեցող է զանոնք ջնջելու , անատենը իր մահուանը արգիւնքներուն հաղորդ կը լանք , անատենը իր մարմինը և արիւնը ճշմարիտ կերակուր ու ճշմարիտ ըմպելիք կը լայ մեզի :

Եւ Տէրունական Անթրիքը իբրև Վրիստոսի մարմնոյ և արեան պատարագը Համարելու չենք , այլ մէկ յիշատակ մը ան մի միայն ամենաբաւական պատարագին՝ որն որ Վրիստոս իր անձովը մատուց խաչին վրայ , և ան պատարագը բնաւ երբէք նորէն կրկնուիլ պէտք չէ :

Օ՛ , Վանի անգամ որ ան հացը կուտենք ու ան գուաթը կըխմենք՝ Տէրոջը մահը կը պատմենք , մինչև որ ինքը դայ : Եւ Աստուծոյ՝ հրեշտակաց ու մարդոց առջևը յայտնապէս կը դաւանինք թէ Վրիստոս մեզի Փրկիչ կընդունինք , և թէ մեր բոլոր կենացը մէջ ամէն բանէն աւելի պիտի սիրենք զանիկայ ու պիտի ծառայենք անոր :

Եւ Քայց ամենեւին չմտնենանք Հաղորդութեան Սեղանին՝ անհոգ կամ բարկացող կամ անհաւատ սրտով մը , որ ատեն գիտութեամբ ինչ և իցէ մեղքի մէջ ենք և տակաւին անոր մէջը մնալու հաստատ կամք ունինք . թէ որ այնպէս սրտով մը մտնենանք ալ նէ՝ մեր անձին դատապարտութիւնը կուտենք ու կըխմենք՝ Տէրոջը մարմինը չորոշելու համար : ա Վրի՛ն , ժա .

29—31 : Իսկ ընդհակառակն՝ զգուշութեամբ և աղօթքով մեր անձերը փորձենք, ամէն մեղքէն հեռանանք փախչինք, յետոյ զզջացող՝ խոնարհ՝ հաւատացող և շնորհակալու սրտով մը յառաջ երթանք մօտենանք Տէրօջը Բնթրիքին, և հոն տեղ Վրիստոս մեզ պիտի բարևէ, մեզ պիտի ընդունի սիրով, և մեզնի հետ հաղորդ պիտի ըլլայ; և մեզ պիտի արձակէ իր Բնթրիքէն, նոր քաջալերութիւն և ուրախութիւն պարգևելով : Տէրօջը Անդանը նստիլը ոչ միայն մեր պարտաւորութիւնն է, հապա նաև մեր ամենամեծ արածութիւններէն մէկն է :

Բ. Չըլլայ որ մէկը այնպիսի կարծիք մը ունենայ թէ աս Սրբազան Անդանէն հաց ուտելը ու գինի խմելը զինքը կրփրկէ : Անդաւորներուն փրկութեանը համար խաչին վրայ մեռնողը հացն ու գինին չէր, հասցա Յիսուս Վրիստոս էր, որ հացն ու գինին մեզնի կրնե՞րկայացունեն. և մինչև որ անկեղծ սրտով չսիրենք զանիկայ ու անոր չտպաւինինք՝ չենք կրնար փրկուիլ :



դ . Այնքանքէն ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս ինչպէս :

ա կրնի . ե . 1—13 :

չ . Վրիստոսնեաները ի՞նչ կանոնով պիտի քալին :

Պ . Վրիստոսի Լեւտարանին կանոնովը :

Միայն թէ Վրիստոսի աւետարանին ինտոր կը վայլէ նէ՛ անանկ գացէք , որ թէ գամ ու ձեղ տեսնամ , և կամ հեռու ըլլամ , ալ ձեր վրայ յով պիտի լսեմ , որ դուք հաստատուն կը կենաք մէկ հողիով՝ ու մէկ շունչով կը պատերազմիք աւետարանին հաւատքին համար : Փիլէո . ա . 27 : Լուի . 7 . 1 : ա թի . բ . 12 : 7 . 1 , 2 : Յո . Ժե . 1—14 :

Ն . Թի որ եկեղեցիին անդամներէն մէկը ան եկեղեցիին ուրիշ մէկ անդամին դէմ դանդատ ընելու պատճառ մը ունենայ , նախ և առաջ Վրիստոս ի՞նչ ընել կը հրամայէ անոր :

Պ . Արհրամայէ որ երթայ առանձին տեղ մը և քաղցրութեամբ իր եղբօրը յանցանքը ցուցնէ անոր , ու ջանայ համոզել զանիկայ որ իր յանցանքը խոստովանի :

Ն . Թի որ անիկայ խոստովանի իր յանցանքը , և իր վարքը ուղղէ կամ զրկանք մը ըրած է նէ հատուցանէ , անատենը ի՞նչ ընելու է ան դանդատ ունեցող եղբայրը :

Պ . Պէտք է որ ներէ անոր և այնպէս բանը վերջանայ :

Ընատենը Պետրոս եկաւ իրեն՝ և ըսաւ , Տէր՝ քանի՞ անգամ թէ որ եղբայրս ինծի մեղանչէ նէ՛ ներեմ անոր , մինչև եթէ անգամ : Յիսուս ա-

նոր ըսաւ , Վեղի չեմ ըսեր թէ՛ մինչև եօթը անգամ , հապա եօթանասուն անգամ եօթը :  
Մատթ . Ժը . 21 , 22 :

շ . Բայց թէ որ անիկայ տակաւին իր յանցանքին մէջ կենայ , չուղէ խոստովանիլ կամ թողութիւն խնդրել , անատենը ի՞նչ ընել պէտք է :

Պ . Ընատենը զրկանք կրողը պէտք է որ մէկ կամ երկու ուրիշ անձինք ալ իր հետը առնէ , և նորէն ջանայ սիրով խրատել զանիկայ : Մատթ . Ժը . 16 :

Չ . Բայց թէ որ ան անգամին ալ մտիկ չընէ , ուրիշ ի՞նչ միջոց բանեցունելու է :

Պ . Ընատենը բանը խմացունել պէտք է ան եկեղեցիին՝ որուն որ յանցաւորը անգամ է . և եկեղեցին աղէկ քննութիւն ընելով՝ թէ որ յանցանքը ստուգուի անոր վրայ , պէտք է որ յանդիմանէ զանիկայ , և զզջացունէ իր անվայել դործին համար : Մատթ . Ժը . 17 :

Չ . Բայց թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ , ի՞նչ ընելու է :

Պ . Ընատենը ան անձը եկեղեցիէն դուրս եղած մէկու մը պէս համարուելու է , և այլ ևս քրիստոնեայ կղբայր սեպուելու չէ , մինչ



չև որ ան չգղջայ և իր յանցանքը չխոստովանի : Մատթ . Ժբ . 17 :

Հ . Իսկ թէ որ խմանանք թէ Նիկեղեցին անդամներէն մէկը ծածկարար դէշ վարմունք մը ունի , որ թէպէտ մեր անձին վնասակար չէ , բայց Մեկտարանին դէմ է , անատենը ի՞նչ ընելու ենք :

Պ . Պէտք է որ ան նոյն միջոցը բանեցունենք՝ ինչպէս որ մեր անձին դէմ՝ զրկանք մը ըլլար նէ պիտի բանեցունէինք . այսինքն՝ պէտք է որ աշխատինք իր բռնած ճամբուն սխալմունքը իրեն ճանչցունելու , և իր վարքը ուղղելու :

Աղբայրդ քու սրտիդ մէջը չպիտի տեսս . քու դրացիդ յանդիմանելով պիտի յանդիմանես , ու չթողուս որ անիկայ մեղքի մէջ մնայ : ՂԼ . Ժբ . 17 :

Հ . Իսկ թէ որ իր յանցանքը յայտնի գիտցուած ըլլայ նէ՝ անատենը ի՞նչ ընելու է :

Պ . Անատենը պէտք է որ Նիկեղեցին հրապարակաւ հող տանի ան անձին վրայ , և ինտոր որ բանը կը պահանջէ՝ նէ՝ անանկ ընէ : ա ՏԺԺ . Ե . 20 :

Հ . Ինչպէս վարուելու ենք անանկ մեկու մը հետ , որ քրիստոնէութեան անվայել եղած վարմունքի մէջ շարունակելուն հա-

մար՝ Ակեղեցիին հաղորդակցութենէն կրարուած է :

Պ . Պէտք է որ հեռու կենանք անանկ անձէն , որ այնպէս՝ թէ՛ իրեն և թէ՛ աշխարհի յայանենք մեր տհաճութիւնը անոր վարմունքին վրայ , և որ այնպէս ինքը զգայ իր յանցանքը ու զղջայ :

Սիսիս թէ ձեզի գրեցի չխառնուիլ . այսինքն , թէ որ մէկը եղբայր ըստւած՝ կամ պոռնիկ ըլլայ , կամ կռասպշտ , կամ ագահ , կամ բամբասող , կամ զինով , կամ յափշտակող , անանկին հետ հաց ալ ուտելու չէ : ա Վրդ . ե . 11 : Զոր . Ժղ . 17 : բ թե . գ . 6 , 14 :

Ն . Բայ ՚ի ասկէց՝ Ակեղեցիին իշխանութիւն ունի՞ իր հաղորդակցութենէն կարուած մէկ անդամին մարմնաւոր պատիժ տալու կամ անոր ինչ և իցէ վնաս մը հասցունելու :

Պ . Չէ :

Բայց չըլլայ թէ թշնամիի պէս սեպէք անիկայ . հապա եղբոր պէս խրատեցէք : բ թե . գ . 15 : Աղբայրներ՝ թէ որ ձեզմէ մէկը պատահամբ ինչ և իցէ յանցանքով բռնուելու որ ըլլայ , դուք որ հոգեոր էք՝ անանկը հեղութեան հոգիով հաստատեցէք . զգոյշ կեցէք ինքզինքնուդ , որ չըլլայ թէ դուք ալ փորձութեան մէջ լինաք : Պառ . զ . 1 : Հիսուս պատասխան տուաւ , իմ թագաւորութիւնս աս աշխարհէս չէ : Հե . Ժր . 36 :

Հ . Ուրեմն ի՞նչ է Յովհաննէս առաքեալին միտքը՝ երբոր կրսէ . «Թէ որ մէկը ձեզի դայ՝ ու աս վարդապետութիւնը չունենայ՝ անիկայ տուներնիդ մի ընդունիք , և բարև մի տաք անոր” : Ո՛վ որ անոր բարև կրսէ՝ անոր չար գործքերուն հաղորդ կըլայ” : Բ Յովհ . 10 , 11 :

Պ . Միայն ան կուզէ ըսել՝ ի՞նչ որ Պօղոս առաքեալն ալ կուզէ ըսել ա Աորնթ . և , գլուխ 11 համարին մէջ . «Միայն թէ ձեզնի դրեցի չխառնուիլ . այսինքն՝ թէ որ մէկը եղբայր ըսուած՝ կամ պոռնիկ ըլլայ , կամ կռատաշտ , կամ ազահ , կամ բամբասող , կամ դինով , կամ յափշտակող , անանկին հետ հաց ալ ուտելու չէ” . այսինքրն՝ Յովհաննէս Առաքեալը միայն ան ըսել կուզէ թէ՝ պէտք է կորենք անկից ամէն տեսակ բարեհաճական և ընտանեկան հաղորդակցութիւնները՝ որ չըլլայ թէ անոր վարքին ու վարդապետութեանը հաստատութիւն ու հաւանութիւն տուած ըլլանք :

Հ . Եւ ի՞նչ ըսել կուզէ Պօղոս՝ երբոր կրսէ ա Աորնթ . և , գլուխ 5 համարին մէջ . «Մնանկը Յառանային մասնէք մարմինը սատկուելու համար , որ հոգին փրկուի մեր Տէր

Յիսուս Վրիստոսի օրը” .

Պ . Ի՞նչ կուղէր թէ՛ Լիկեղեցիին հաղորդակցութենէն կտրեն և աշխարհային մէկը համարին զանիկայ . որովհետև Լիկեղեցին Վրիստոսի թաղաւորութիւնը ըլլալով ու աշխարհս Սատանային թաղաւորութիւնը , անտարակոյս Վրիստոսի թաղաւորութենէն դուրս ձգուողը Սատանային իշխանութեան տակը պիտի մտնէ , և այնպէս Սատանային մատնուած կըլլայ . իսկ “մարմինին սատկուելը” կրնշանակէ թէ՛ Լիկեղեցիէն դուրս ձգուած անձը տեսնելով որ ինքը Վրիստոսի թաղաւորութենէն դուրս եղած է , պիտի խոնարհի և այնպէս իր ներսի դին եղած մարմնաւոր սկզբունքները սպանուելով՝ զղջումի դայ ու փրկուի :

Ձ . Լիկեղեցիին հաղորդակցութենէն կրտուած մէկը՝ առտուածային սլաշտօնի ատեն Եկեղեցի դալէն արգիլել պէ՞տք է :

Պ . Չէ՛ . պէտք է զգուշացունել զանիկայ Տէրոջը Սեղանին մօտենալէն , բայց պէտք է քաջալերութիւն տալ անոր՝ Լսաուծոյ Բանին քարոզութիւնը մտիկ ընելու , ան յոյսով որ դուցէ զղջումի դայ ան միջոցով :

Ձ . Ի՞նչ տեսակ յանցանքները Լիկեղեցին

կրնայ դատել և անոնց պատճառովք իր անդամը մերժել :

Պ . Մեկն տեսակ կուսակաշտութիւնն նաև անհաւատութիւնն կամ Մ. Ե. տարանին ինչ և իցէ էական վարդապետութեան ուրացութիւնը . նմանապէս ամէն տեսակ անառակութիւնն . ինչպէս՝ Մ. ստուծոյ Սուրբ անունը պղծել , Արիակին չպահել , իշխանաւոր անձանց դէմ ապստամբիլ , ուրիշին անձին կամ ընչիցը մնաս հասցունել , ամէն տեսակ անմաքրութիւններ , անպարկեշտութիւն , սըտախօսութիւն , նախանձ , աղահալութիւն , անբարեխառնութիւն , և ուրիշ այսպիսի բաներ : Տէ՛ս Գրանգրանեայ պատգոմքանք : Եւրեյ . ի . 1—17 :

Հ . Թէ որ բանադրուած անձ մը զղջայ և նորէն եկեղեցիին մէջ մտնել ուղէ , պէ՛տք է ընդունիլ զանիկայ :

Պ . Հրամարես :

Հերիք է անանկ մտրդուն ան պատիժը , որ շատերէն պատժուեցաւ : Մտկէ ետև անոր հակառակը՝ էվելօք դուք ներեցէք անոր , ու միթարեցէք , որ չըլլայ թէ անանկը աւելի տրամոթենէն ընկղմի : Աւստի կաղաչեմ ձեզի , որ անոր վրայ ձեր սէրը հաստատէք : Բ Արմ . Բ . 6—8 : Գալ . Գ . 1 :

Հ . Ինչո՞ւ համար իրենց յանցանքը չըզգացող յամառեալ յանցաւորները եկեղեցիէն դուրս ձգուելու են :

Պ . Որ անանկով եկեղեցին աղատ ըլլայ անոնց չար օրինակովը ազականուելէն , և որ ան յանցաւորներն ալ զղջումի դան :

Ընանկը Սատանային մատնէք մարմինը սատակուելու համար , որ հոգին փրկուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը : Ըստ ձեր պարծանքը աղէկ չէ . չէ՞ք մի գիտեր՝ որ քիչ մը խմորը բոլոր շաղուած գունտը կըխմորէ : Սաքրեցէք ան հին խմորը մէկ դի , որ ըլլաք նոր շաղուած գունտ , ինտոք որ անխմոր էք նէ . ինչու որ Քրիստոս մեր զատիկը մորթուեցաւ : ա Արեւ . ե . 5—7 :

Հ . Եկեղեցւոյ Հովիւները թէ որ յանցանք մը ընեն , անոնք ալ յանդիմանուելո՞ւ են :

Պ . Հրամայեա :

Բայց երբոր Անփասը Ընտիրք եկաւ նէ՛ ես անոր երեսին գէմկեցայ . որովհետեւ ինքը իբրթէ՞ մեղադրուելու էր : Գաղ . բ . 11 : Այրէցի վրայ ամբաստանութիւն մի ընդունիր , միայն թէ երկու ու իրեք վկայներով : ա Տէ . ե . 19 :

Հ . Եկեղեցին ի՞նչ զգացում՝ ունենալու

\* Յունարէն ընադրին մէջ սա "փրկութե" բառը չկայ :

է իր հաղորդակցութենէն կտրուած անձե-  
րուն վրայօք :

Պ . Մեծ տրամուխիւն :

Ինծի նմանող եղիք եղբայրներ , ու գիտնաք  
անանկները որ ան ճամբուիլը կերթան , ինչպէս որ  
մեզ ձեզի օրինակ ունիք : Ինչու որ շատերը կը  
քալին , որ անոնց համար շատ անգամ ձեզի կը-  
սեի . և հիմա լալով կը զրուցեմ Քրիստոսի  
խաչին թշնամիներուն համար . որ անոնց վերջի  
կորուստ է . որոնց աստուածը իրենց փորն է ,  
ու անոնց փառքը իրենց ամօթն է . որոնք միայն  
երկրաւոր բաները կը մտմտան : Փէլէո . Գ .  
17—19 :

Լ . Լձէն եկեղեցի պարտաւոր է իր անդամ-  
ներէն պահանջելու որ Լեւտարանին համեմատ  
քալին . և թէ որ անոնցմէ որ և իցէ մէկը Լեւ-  
տարանին հակառակ վարմունք մը ունենայ՝  
պէտք է որ յանդիմանէ զանիկայ , և հարկը պա-  
հանջէ նէ՝ Եկեղեցիէն դուրս ընէ :

Բ . Լն եկեղեցին՝ որ երկիւղ ունենալով՝ կամ  
աչառութիւն ընելով կամ անհոգ ըլլալով ,  
չբանեցուններ իր կառավարութիւնը և իշխանու-  
թիւնը իր անդամներուն վրայ , Լստուծոյ երե-  
սէն պիտի իյնայ և ուրիշ հաւատարիմ եկեղե-  
ցիներուն ցաւ և նեղութիւն մը պիտի ըլլայ և  
աշխարհային մարդոց ալ գայթակղութիւն , և  
գուցէ պատճառ կորստեան : Թէ որ չար մար-  
դիկը Եկեղեցիին մէջ մնան , եկեղեցին շուտով

պիտի կործանի . քանզի եկեղեցիին ամենէն վնասակար թշնամիները իր անարժան անդամներն են :

Գ . Արդոր եկեղեցւոյ անդամներէն մէկը Վրիստոնէութեան անվայել վարմունք մը ունենայ , պէտք է առանձին յանդիմանել և խրատել զանիկայ . թէ որ ան չխոստովանի իր յանցանքը , թող մէջ կամ երկու ուրիշներն ալ մէկ տեղ յանդիմանեն զանիկայ . թէ որ անոնց ալ մտիկ չընէ , թող անիկայ Ակեղեցիին առջւռ բերուի ու հոն տեղ պէտք եղածը իրեն ըսուի . իսկ թէ որ անիկայ տակաւին յամառեալ մնայ ու եկեղեցիին ալ մտիկ չընէ , անատենը պէտք է որ իր անունը եկեղեցիին անդամներուն ցուցակէն աւրուի և հեթանոսի մը պէս սեպուի , կամ այնպիսի մէկը համարուի՝ որ Վրիստոսի հետ մասն ու բաժին չունի . հոգ չէ անոր ո՛վ կամ ինչ աստիճանի մարդ ըլլալը :

Գ . Ակեղեցին ամենեւին իշխանութիւն չունի իր անդամները հալածելու , ո՛չ ալ անոնց մարմնաւոր պատիժ տալու : Ակեղեցին իր հաղորդակցութենէն զանոնք կտրելը անոր համար չէ՝ որ յանցաւոր անդամը կորսուի , հասցա որ անիկայ իմանալով իր սոսկալի վիճակը թէ Վրիստոսի թագաւորութենէն դուրս ձգուած է , դարձի գայ ու փրկուի : Այլ թէ որ ան յանցաւոր անդամը խոնարհութեամբ զղջայ և խոստովանի իր յանցանքը , պէտք է նորէն ընդունիլ զանիկայ Ակեղեցիին մէջ :



Ըստուած իր շնորհօքը զօրացունէ ամէնքս որ  
 վայլածին պէս ապրինք , ու բնաւ երբէք զէշ  
 վարձունքներով նախատինք ու ամօթ չբերենք  
 մեր ամենօրհնեալ Փրկչին անունին վրայ , ոչ  
 ալ յաւիտենական կորուստ մեր հոգիներուն  
 վրայ :

Վ Ե Ր Պ





# Յ Ե Ն Կ

## Մ Ա Ս Ն Ա : Ա Ս Տ Ա Ռ Ի Ծ Ո Յ Վ Ր Ա Յ

Ե Ր Ե Ս

ա .	Աստուծոյ ինչ ըլլալուն , և Տէնի ինչպէս	
բ	Իրեն երկրպագութեան ընկերս զբայ . . . . .	1
բ	Աստուծոյ յարկութեաններուն զբայ . . . . .	4
	1 . Աստուած անմահ է . . . . .	..
	2 . Աստուած ամեն տեղ ներկայ է , ու ամեն	
բան	դիակ . . . . .	7
	3 . Աստուած ամենակարող է . . . . .	10
	4 . Աստուած սուրբ է . . . . .	12
	5 . Աստուած բարի ու ողորմած է . . . . .	15
	6 . Աստուած արդար է . . . . .	19
	7 . Աստուած ճշմարտութեան Աստուած է . . . . .	25
դ	Սուրբ Արարչութեան զբայ . . . . .	29

## Մ Ա Ս Ն Բ : Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Ն Վ Ա Ս Ե

ա .	Ինչպէս հրեւրութեան զբայ . . . . .	33
բ .	Չոր հրեւրութեան զբայ . . . . .	38

## Մ Ա Ս Ն Գ : Մ Ա Ր Դ Ո Ւ Ն Վ Ր Ա Յ

ա .	Աստուծոյ ստեղծագործութեանը զբայ . . . . .	44
բ .	Գրեթէպէն զբայ . . . . .	48
դ .	Մարդուն գոյութեանը զբայ . . . . .	51
դ .	Մարդուն առաջին Տէրի ստեղծութեանը . . . . .	56
ե .	Մեր առաջին ծննդացը ինչպէս զբայ . . . . .	61
	1 . Անոնք անիծուեցան ու Գրախառն դուրս	
	չգուցան . . . . .	..
	2 . Մեր առաջին ծննդաց բոլոր սերունդը	
	կորսուեցաւ իրենց մէկ մեղքովը . . . . .	68
զ .	Փրկութեան ճամբան զբայ . . . . .	74

# ՅԵՆԿ

1 .	Աստուած կրպարաստե մեզի համար կա-	74
ա .	Ինչու փրկուի ինձ . . . . .	79
2 .	Յիսուս Քրիստոսի մեր Փրկիչին ս՛վ ըլլալը . . . . .	85
ա .	Ինչը Աստուած է . . . . .	85
բ .	Ինչը Տարբ է . . . . .	91
3 .	Ինչու՞ Քրիստոս մարդ կղաւ . . . . .	90
4 .	Քրիստոս մեզ պատիժէն կազատե . . . . .	102
5 .	Յիսուս Քրիստոս շարչարուեցաւ ու մեռաւ . . . . .	110
մեզի համար իսպին վրայ . . . . .	113	
6 .	Տէր Յիսուս մեռաւ ամենուն համար . . . . .	117
7 .	Անոնք միայն կրփրկուին՝ որ Յիսուսի կը հաւատան . . . . .	124
8 .	Ի՞նչ է Յիսուս Քրիստոսի հաւատալը . . . . .	124
է .	Մեր՝ Քրիստոսի բաւան՝ ու Արիւնի	124
կամար պարարտութեան շրջան . . . . .	132	
1 .	Մենք կամք չունինք Քրիստոսի դալու մեր փրկուի թեանք համար . հապա Աստուած է որ կը փոխե մեր սիրտերը ու իր Հոգիովը Քրիստոսի կառաջնորդէ զմեզ . . . . .	132
2 .	Մենք պարտինք սրտի փոփոխուի ինձ ու նեկալ . առ սրտի փոփոխուի ինձը ի՞նչ է , և ի՞նչ պէտք ուրբ Հոգին իր դործը կը կատարէ ու Արիւնի թին համար կրպարաստե զմեզ . . . . .	139
3 .	Սուրբ Հոգին կրթոսի մեզի Աստուածաշունչով . . . . .	170
4 .	Սուրբ Հոգին կը խօսի մեզի Աստուածաշունչով . . . . .	155
ը .	Սոհոսան շրջան . . . . .	155
1 .	Մարմինին մեռնելուն շրջան . . . . .	162
2 .	Հոգին ի՞նչ կըլլայ երբոր մարմինը մեռնի . . . . .	165
թ .	Տարբութեան շրջան . . . . .	173
ժ .	Ղարարութեան շրջան . . . . .	180
ժա .	Արիւնի շրջան . . . . .	188
ժբ .	Ղափտութեան շրջան . . . . .	

## ՄԱՍՆ Դ : ԱՍՏՈՒԾԱՅ ՕՐԷՆՔԻՆ ՎՐԱՅ


ա .	( ) Ենչը սրտեան շրջան . . . . .	194
բ .	Տարբ Պարարութեան շրջան . . . . .	199

Առաջին Պատուիրանքը . . . . .	199
Երկրորդ Պատուիրանքը . . . . .	201
Երրորդ Պատուիրանքը . . . . .	211
Չորրորդ Պատուիրանքը . . . . .	214
Հինգերորդ Պատուիրանքը . . . . .	231
Վեցերորդ Պատուիրանքը . . . . .	231
Եօթներորդ Պատուիրանքը . . . . .	241
Ութերորդ Պատուիրանքը . . . . .	249
Իններորդ Պատուիրանքը . . . . .	258
Տասներորդ Պատուիրանքը . . . . .	263
<b>դ . Սանատար պարտաւորութիւններու վրայ . . . . .</b>	<b>270</b>
1 . Էրիկներուն պարտաւորութիւնը . . . . .	..
2 . Կնիկներուն պարտաւորութիւնը . . . . .	273
3 . Ծնողքներուն պարտաւորութիւնը . . . . .	277
4 . Տղայաց պարտաւորութիւնը . . . . .	283
5 . Տէրերուն պարտաւորութիւնը . . . . .	283
6 . Ծառաներուն պարտաւորութիւնը . . . . .	286
7 . Իշխաններուն պարտաւորութիւնը . . . . .	289
8 . Ժաշտփուրդին պարտաւորութիւնը . . . . .	292

Մ Ա Ս Ն Ե : Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ի Ն Վ Ր Ա Յ

ա . Ըստուծոյ Եփեղեմիին ի՛նչ շԼԸԼԸ . . . . .	295
բ . Եփեղեցոյ պաշտօնէաներուն վրայ . . . . .	305
դ . Եփեղեցոյ անդամներուն վրայ . . . . .	319
1 . Թեւ ե՞րբ մէկ մարդ մը յարմար է եկեղեցիին մէջ բնդունուելու . . . . .	319
2 . Թեւ ինչո՞ւ ճշմարիտ քրիստոնէայ մը կը ցանկաց Աստուծոյ տեսանելի եկեղեցիին մէջ մտնելու . . . . .	327
դ . Սկիզբութեան վրայ . . . . .	332
1 . Չարիահաս անձանց մկրտութեանը վրայ . . . . .	332
2 . Պղտիկ աղայաց մկրտութեանը վրայ . . . . .	339
ե . Հաղորդութեան վրայ . . . . .	352
զ . Եփեղեմիին իշխանութիւնը իր անդամներուն վրայ : . . . . .	364





## Ս Ր Ի Պ Ա Ն Կ \*

Եջիւ	Տող	Սխալ	Ուղղիչ
47 .	19 .	ու ըսաւ	ու տեսաւ
62 .	15 .	աւելի	(ու բարե տէլորդ է)
67 .	3 .	մեղանչելէն	մեղանչելէն
76 .	20 .	91—4	9—14
76 .	27 .	24,24	24,25
83 .	19 .	ամենիմաստ ,	ամենիմաստ է ,
85 .	13 .	ստուածորդին	Մստուածորդին
100 .	11 .	դուրս	դուրս



\* Առաջինայ վրէպիւններէն զի Կանկերը թեպէտև  
բոլոր օրինակներուն զի զին քանոնի , բայց սմանց զի  
քանոնելուն համար՝ իսկելուլ դարեղին անոն ար զի  
ընթերցողներուն թանուցանելու զանց չընէ :







Handwritten text in a cursive script, possibly a signature or name, located at the top of the page.

Handwritten text in a cursive script, possibly a signature or name, located below the first line.

Handwritten text in a cursive script, possibly a signature or name, located in the middle of the page.





2/2

2/2

